



Վերականգնման հիմունքները ուսուցչի ձեռնարկ

Ուսուցչի նյութ

Հրատարակված է

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից

Սոլթ Լեյք Սիթի, Յուտա

Ընդունվում են դիտողություններ և ուղղումներ: Խնդրում ենք ուղարկել նկատառումները հետևյալ հասցեով.

Seminaries and Institutes of Religion Curriculum Services

50 East North Temple Street, Floor 8

Salt Lake City, Utah 84150-0008

USA

Է-փոստ. ces-manuals@ChurchofJesusChrist.org

Խնդրում ենք նշել ձեր անունը, հասցեն, ծովսը կամ ճյուղը և ցիցը կամ շրջանը: Ձեր մեկնաբանության հետ մեկտեղ, չմոռանաք ընդգրկել ձեր Ս&Ի ձեռնարկի տարբերակը:

Ս&Ի տարբերակ 4, 12/19

Անհատները կարող են տպել այս նյութը իրենց անձնական, ոչ առևտրային օգտագործման համար (օգտագործումը կարող է կապված լինել Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում նրանց կոչման կամ հանձնարարության հետ): Ցանկացած այլ նպատակով օգտագործելու համար խնդրում ենք թույլտվություն խնդրել [permissions.ChurchofJesusChrist.org](https://www.churchofjesuschrist.org/permissions) կայքում:

© 2020 by Intellectual Reserve, Inc.

Բոլոր իրավունքները վերապահված են:

Տարբերակ. 5/19

Վերականգնման հիմունքները. Ուսուցչի նյութ

Armenian

PD60008956

Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում

Բովանդակություն

Տիտղոսաթերթ	1
Վերականգնման հիմունքները. Ուսուցչի նյութ (Կրոն 225) ձեռնարկի նախաբանը	5
Դաս 1. Վերականգնմանը նախորդող իրադարձությունները.	13
Դաս 2. Առաջին Տեսիլքը	20
Դաս 3. Ձեռք բերել հոգևոր գիտելիք	28
Դաս 4. Հայտնության վարդապետությունը.	35
Դաս 5. Մորմոնի Գրքի ստեղծումը	43
Դաս 6. Մորմոնի Գիրքը՝ մեր կրոնի պորտաքարը.	51
Դաս 7. Քահանայության վերականգնումը	59
Դաս 8. Եկեղեցու կազմավորումը.	67
Դաս 9. Հիսուս Քրիստոսը՝ մեր Աստվածային Քավիչը.	75
Դաս 10. Հետևել Տիրոջ մարգարեներին	83
Դաս 11. Իսրայելի հավաքումը	91
Դաս 12. Միոնի հիմքի հաստատումը	99
Դաս 13. Աստծո օրենքները.	106
Դաս 14. Տերը հայտնում է ևս մեկ սուրբ գրություն.	115
Դաս 15. Երկնային Հոր ծրագիրը և մեր աստվածային ներուժը.	123
Դաս 16. Կիրթլենդի տաճարը և քահանայության բանալիները	131
Դաս 17. Մնալ հավատարիմ ընդդիմության և տառապանքի ժամանակ.	139
Դաս 18. Վերջին Օրերի Մրբերի կինը և Սփոփող Միությունը	147
Դաս 19. Մահացածների փրկությունը.	154
Դաս 20. Տաճարային արարողություններ և երկրպագություն	164
Դաս 21. Հավերժական ամուսնության և ընտանիքի վարդապետությունը.	172
Դաս 22. Բազմամուսնություն	181
Դաս 23. Ջոզեֆ Սմիթի մարգարեական առաքելությունը և նահատակությունը.	188
Դաս 24. Մարգարե Ջոզեֆ Սմիթը՝ ընտրյալ տեսանող	196
Դաս 25. Իրավահաջորդությունը նախագահությունում և գաղթը դեպի արևմուտք.	204
Դաս 26. Եկեղեցին արևմուտքում.	213
Դաս 27. Հայտնություն քահանայության վերաբերյալ.	221
Դաս 28. Տերն արագացնում է Իր աշխատանքը.	230

ՎԵՐԱԿԱՆԳՆԱՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ. ՈՒՍՈՒՑՁԻ ՆՅՈՒԹ (ԿՐՈՆ 225) ՁԵՌՆԱՐԿԻ ՆԱԽԱԲԱՆԸ

Վերականգնման հիմունքները. Ուսուցչի նյութ (Կրոն 225) ձեռնարկի նախաբանը

Ողջունո՞ւմ ենք Վերականգնման հիմունքների դասընթացին: Շնորհակալություն, որ ընդունեցիք ձեր ուսանողներին օգնելու հնարավորությունը՝ ամրապնդելու իրենց դարձն առ Հիսուս Քրիստոսը և Նրա վերականգնված ավետարանը:

Մեմինարիաների և կրոնի ինստիտուտների նպատակը հետևյալն է.

Մեր նպատակն է օգնել երիտասարդների և չափահաս երիտասարդներին հասկանալ Հիսուս Քրիստոսի Քավությունն ու ուսմունքները և ապավինել դրանց, արժանի լինել տաճարային օրհնությունների և պատրաստել իրենց, իրենց ընտանիքները և ուրիշներին հավերժական կյանքին՝ իրենց Երկնային Հոր հետ: *(Ավետարանի ուսուցում և ուսումնասիրություն. Ձեռնարկ Մեմինարիաների և Կրոնի Ինստիտուտների ուսուցիչների և դեկավարների համար [2012], 1):*

Որո՞նք են այս դասընթացի նպատակները:

Այս դասընթացը նախատեսված է օգնել ուսանողներին.

- Ամրապնդել Հիսուս Քրիստոսի և Նրա քավիչ զոհաբերության մասին իրենց վկայությունը:
- Մեծացնել Ավետարանի սկզբունքներով ու վարդապետությամբ ապրելու նրանց ցանկությունն ու ջանքերը և ավելի շատ նմանվել Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին:
- Կիրառել «ձեռք բերել հոգևոր գիտելիք» բաժնի սկզբունքները և փորձառություն ձեռք բերել՝ գնահատելով տեղեկությունների աղբյուրները:
- Բացահայտել և բացատրել Վերականգնման հիմնարար վարդապետությունը, հայտնությունը և պատմական իրադարձությունները:

Ինչպե՞ս է կազմված այս ձեռնարկը:

Այս ձեռնարկի բովանդակությունը ստեղծված է այնպես, որ օգնի ուսանողներին խմաստալից, կրթող փորձառություններ ունենալ՝ ինչպես դասից դուրս, այնպես էլ՝ դասարանում: Յուրաքանչյուր դաս բաղկացած է նախապատրաստական նյութից և ուսուցչի նյութից:

Նախապատրաստական նյութ

Նախապատրաստական նյութը պետք է ուսումնասիրվի ինչպես ձեր կողմից, այնպես էլ ձեր ուսանողների կողմից՝ դասի նախապատրաստման ժամանակ: Այն ներառում է պատմական համապատասխան համատեքստ և պատկերներ, սուրբ գրությունների և Եկեղեցու ղեկավարների ուսմունքներ և «Ցանկանո՞ւմ ես ավելին» բաժինը, որը բացահայտում է դասի հետ կապված լրացուցիչ աղբյուրները:

Նախապատրաստական նյութը պարունակում է նաև հարցեր և վարժություններ, որոնք ուղղված են դասարանում ուսանողների ուսման փորձի ամրապնդմանը: Օրինակ, 6-րդ դասի՝ «Մորմոնի Գիրքը՝ մեր կրոնի պորտաբարը», նախապատրաստական նյութում ձեզ և ձեր ուսանողներին հնարավորություն է տրվում ուսումնասիրել Եկեղեցու ղեկավարների ուսմունքներն այն մասին, թե Մորմոնի Գիրքն ինչպես է օգնում, որ ավելի մոտենանք Աստծուն և ինչպես է լրացուցիչ եղանակներով օրհնում մեր կյանքը:

Ինչպե՞ս է Մորմոնի Գրքում գտնվող ուսմունքների ուսումնասիրությունն ու դրանցով ապրելն օգնել ձեզ մոտենալ Աստծուն: Որո՞նք են Մորմոնի Գրքից այն մի քանի հատվածները, որոնք օգնել են ձեզ ավելի նմանվել Նրան: Հատկացված տողերում գրի առեք այս հարցերի ձեր պատասխանները: Դասարան եկեք պատրաստված՝ ձեր մտքերով կիսվելու համար:

Յոթանասունից Երեց Քիմ Բ. Քլարկն ուսուցանել է նախապատրաստության և ավելի մանրամասն սովորելու համար անհրաժեշտ անկեղծ ջանքերի մասին:



Եթե իսկապես ցանկանում եք ավելի մանրամասն սովորել, եթե ձեր սիրտը և միտքը բաց են սովորելու համար, և եթե գործեր ըստ այդ ցանկության, Տերը կօրհնի ձեզ: Երբ կատարեք ձեր մասը՝ հավատքով աղոթեք, նախապատրաստվեք, ուսումնասիրեք, ակտիվորեն մասնակցեք և ամեն ինչ անեք, ապա Սուրբ Հոգին կսովորեցնի ձեզ, կմեծացնի սովորած նյութը կիրառելու ձեր կարողությունը և կօգնի ձեզ դառնալու այն, ինչ Տերն ուզում է, որ դառնաք: (“Learning for the Whole Soul,” *Ensign or Liahona*, Aug. 2017, 27)

Ուսուցչի նյութ

Ուսուցչի նյութը նախատեսված է, որ օգնի ուսուցիչներին հրավիրել ուսանողներին քննարկում անցկացնել այն մասին, թե ինչ են սովորել նախապատրաստության ժամանակ և ամրապնդի Տիրոջ և Նրա վերականգնված ավետարանի մասին ուսանողների հասկացողությունն ու վկայությունը: Յուրաքանչյուր դասի նախաբանում կգտնեք դասի նախատեսված ուսումնառության նկարագրությունը: Դրան հաջորդում են դասավանդման առաջարկվող գաղափարները, որոնք կազմավորում են դասի կառուցվածքը, բովանդակությունը, քննարկման համար անհրաժեշտ օգտակար նյութերը և կիրառման գաղափարները:

Հետևյալը օրինակ է այն մասին, թե ինչպես է ուսուցչի նյութը հիմնվում ուսանողների պատրաստվածության վրա, կրկին՝ դաս 6-ից.

Ուսանողներին բաժանեք փոքր խմբերի և հրավիրեք նրանց կիսվել և բացատրել Մորմոնի Գրքի այն հատվածները, որոնք օգնել են նրանց ավելի մոտենալ Աստծուն: (Ուսանողները, ովքեր ուսումնասիրել են

նախապատրաստական նյութը, կարող են անդրադառնալ իրենց գրածին, երբ ավարտեն 4-րդ բաժինը): Կարող եք նաև հրավիրել, որ ուսանողներն իրենց խմբերում քննարկեն, թե իրենց ընտրած հատվածներում արձանագրված ուսմունքների կիրառությունն ինչպես է օգնում նրանց ավելի շատ նմանվել Հիսուս Քրիստոսին:

Երբ կարդաք այս ձեռնարկի դասերը, ուշադրություն դարձրեք, թե ինչպես է ուսուցչի նյութը պարբերաբար հիմնվում ուսանողների պատրաստության վրա: Անընդհատ խրախուսելով, որ ուսանողները պատրաստ ներկայանան դասին, կօգնի նրանց զգալ յուրաքանչյուր դասին պատրաստված լինելու կարևորությունը:

Ուսուցչի նյութը նաև նախատիպ է հանդիսանում ավետարանի ուսուցման և ուսումնասիրության հիմունքների համար (տես *Ավետարանի ուսուցում և ուսումնասիրություն*, 10, 23–31, 38–41): Դա օգնում է ուսանողներին ճանաչել, հասկանալ և զգալ Հիսուս Քրիստոսի ավետարանի վարդապետության և սկզբունքների ճշմարտությունն ու կարևորությունը, ինչպես նաև հրավիրում է նրանց բացատրել, կիսվել և վկայել:



Մտածեք՝ այս դասընթացի ուսուցմանը նախապատրաստվելիս

Մի թույլ ետ հատկացրեք՝ մեկ կամ երկու դաս կարդալու համար, որպեսզի ծանոթանաք, թե ինչպես կարող եք միասին օգտագործել նախապատրաստական նյութը և ուսուցչի նյութը, երբ պատրաստվում եք ուսուցանել: Որո՞նք են այն եղանակները, որոնցով դուք կարող եք օգնել ուսանողներին պատրաստվել, որպեսզի նրանք կարողանան ավելի հարուստ փորձ ունենալ դասարանում:

Ինչպե՞ս կարող եմ կենտրոնանալ ուսանողների վրա և օգնել նրանց, որ իմաստավոր փորձ ունենան այս դասընթացի ժամանակ:

Դուք կօրհնեք ձեր ուսանողներին, երբ ակնկալեք և խրախուսեք նրանց կատարել իրենց ուսանողի դերը՝ ինչպես դասից դուրս, այնպես էլ դասի ժամանակ: Հետևյալ եղանակներով կարող եք հասնել դրան՝ ակնկալելով ուսանողների պատրաստվածությունը, նրանց հորդորելով հարցեր տալ նախապատրաստական նյութի կամ դասի վերաբերյալ, նրանց հնարավորություն տալով իրենց բառերով բացատրել վարդապետությունն ու սկզբունքները և կիսվել համապատասխան փորձով ու վկայությամբ և հորդորելով նրանց ավելի լիարժեք կերպով ապրել վերականգնված ավետարանի ճշմարտություններով:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Զեֆրի Ռ. Հոլլանդն ուսուցանել է.



Մենք կարող ենք լինել ավելի հզոր ուսուցիչներ, քան երբեմն լինում ենք: Այդպիսի վախճանող խնդրի առնչվելիս, խնդրում ենք հիշել, որ ուսանողը տարա չէ, որը պիտի լցվի, ուսանողը կրակ է, որը պետք է բոցավառել: (Jeffrey R. Holland, “Angels and Astonishment” [Church Educational System Training Broadcast, June 12, 2019], ChurchofJesusChrist.org/broadcasts/article/article/2019/06/14holland)

Ուսուցչի նյութում առաջարկվող դասի կառուցվածքը կօգնի ձեզ դասի ժամանակ բավականաչափ ժամանակ տրամադրել, որպեսզի ուսանողները ճանաչեն և հետևեն հոգևոր հուշումներին: Նյութերը նաև կօգնեն ձեզ, որ հորդորեք ուսանողներին կիրառել իրենց սովորածը և ավելի նմանվել մեր Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին: Մտածեք 19-րդ դասի այս օրինակի մասին՝ «Մահացածների փրկությունը»:

Կարող եք հրավիրել ուսանողներին մատնել այն մարդու մասին, ով կարող է լինել նրանց մենթորը՝ օգնելով կատարել ընտանեկան պատմության աշխատանք: Եթե որոշ ուսանողներ արդեն փորձառու են ընտանեկան պատմություն կատարելու մեջ, հրավիրեք նրանց լինել դասարանի որևէ անդամի մենթորը: Եթե ժամանակը թույլ է տալիս, կարող եք նաև ուսանողներին ցույց տալ ընտանեկան պատմության կայքէջը ChurchofJesusChrist.org/family-history և խրախուսեք նրանց լրացուցիչ գաղափարների համար ուսումնասիրել այդ կայքը, որ իմանան, թե ինչպես ավելի շատ մասնակցեն ընտանեկան պատմության աշխատանքին:

Կիսվեք Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ հայտարարությամբ.



Ես հրավիրում եմ ձեզ աղոթքով խորհել, թե ինչ տեսակ զոհաբերություն, և ցանկալի է ժամանակի զոհաբերություն, դուք կարող եք անել այս տարի, որպեսզի ընտանեկան պատմության և տաճարային ավելի շատ աշխատանք կատարեք: (Russell M. Nelson, RootsTech Family Discovery Day—Opening Session 2017, ChurchofJesusChrist.org)

Դասն ավարտեք՝ հրավիրելով ուսանողներին աղոթքով խորհել, ապա գրի առնեն, թե ինչ հատուկ զոհաբերություններ են անելու, կամ ինչպիսի հատուկ քայլեր են ձեռնարկելու՝ ընտանիքի պատմության և տաճարային ծառայությանն ավելի լիարժեք մասնակցելու համար:

Այս դասընթացը նախատեսված է մեկ կիսամյակի համար, և բաղկացած է 28 դասից՝ գրված 50-րոպեանոց դասաժամերի համար: Եթե ձեր դասարանը հանդիպում է շաբաթը մեկ անգամ 90-100 րոպեով, յուրաքանչյուր դասաժամի համար միացրեք և ուսուցանեք երկու դաս: Մի մտահոգվեք ուսուցչի նյութի ամբողջ բովանդակությունը լուսաբանելու համար, փոխարենը կենտրոնացեք ուսանողների վրա՝ օգնելով ամրապնդել նրանց պատկերացումները վարդապետության կամ սկզբունքների մասին, որոնք հատկապես կարևոր են իրենց համար և օգնեք նրանց ավելի լիարժեք ապրել այդ ճշմարտություններով:



Մտածե՛ք՝ այս դասընթացի ուսուցմանը նախապատրաստվելիս

Որո՞նք են այն եղանակները, որոնցով դուք կարող եք խրախուսել ուսանողներին դասարանի հետ կիսվել դասի ընթացքում իրենց սովորածով: Ի՞նչ կարող եք անել, որ ընդգրկեք այն ուսանողներին, ովքեր չեն ուսումնասիրել նախապատրաստական նյութը:

Ինչպե՞ս կարող եմ արդյունավետ կերպով նախապատրաստվել ուսուցմանը:

Երկնային Հայրը կօգնի ձեզ, երբ դուք նախապատրաստվեք և ուսուցանեք Իր զավակներին: Ավետարանով ջանասիրաբար ապրելու ձեր ջանքերը կօգնեն ձեզ արժանի մնալ Հոգուն՝ ուսուցմանը պատրաստվելիս:

Նախապատրաստության ժամանակ կարող եք մտածել, թե ինչպես կարող եք հարմարեցնել ուսուցչի նյութը՝ բավարարելու համար ձեր ուսանողների կարիքները և հանգամանքները: Հարմարեցնելու ժամանակ հետևեք Առաջին նախազահությունից Նախազահ Դավիթի Հ. Օուքսի խորհուրդներին:



Նախազահ [Բոյդ Զ.] Փաքերը հաճախ է իմ ներկայությամբ ուսուցանել, որ մենք նախ ընդունում ենք, ապա հարմարեցնում: Եթե մենք խորապես ուսումնասիրում ենք տվյալ դասը, որը պետք է մատուցենք, ուրեմն կարող ենք հետևել Հոգուն այն հարմարեցնելու համար: Երբ մենք խոսում ենք այս ճկունության մասին, երբեմն ցանկանում ենք սկսել հարմարեցնելուց և ոչ թե ընդունելուց: Սա հավասարակշռություն է: Սա մշտական խնդիր է: Սակայն նախ ընդունելու և ապա հարմարեցնելու մոտեցումը լավ եղանակ է ամուր հիմքի վրա կանգնելու համար: (Dallin H. Oaks,

“A Panel Discussion with Elder Dallin H. Oaks” [Seminaries and Institutes of Religion satellite broadcast, Aug. 7, 2012], broadcasts .ChurchofJesusChrist.org)

Միգուցե օգտակար լինի, եթե ուսուցանելու պատրաստվելիս հետևյալ հարցերը տաք ինքներդ ձեզ:

- Արդյո՞ք աղոթել եմ Սուրբ Հոգու առաջնորդությունը ստանալու համար:
- Արդյո՞ք ուսումնասիրել եմ նախապատրաստական նյութը:
- Արդյո՞ք ես բանիմաց եմ ուսուցչի նյութի հիմունքների մասին: Արդյո՞ք կան բաներ, որոնք պետք է հարմարեցնեմ իմ ուսանողների կարիքներին:
- Ինչպե՞ս կարող եմ դասարանում արդյունավետորեն սովորել սուրբ գրություններից:
- Ինչպե՞ս կարող եմ այս դասի ժամանակ օգնել ուսանողներին կենտրոնանալ Փրկչի վրա և սովորել Սուրբ Հոգուց:
- Ինչպե՞ս կարող եմ առավել արդյունավետորեն օգնել իմ ուսանողներին սովորել, հասկանալ և աճել իրենց վկայությամբ՝ ավետարանի այս ոլորտներին վերաբերող սկզբունքների վերաբերյալ:
- Ի՞նչ կարող եմ անել, որպեսզի իմաստալից կերպով կիրառեմ այն, ինչ ուսանողները սովորել են դասի նախապատրաստումից և իրենց կյանքի փորձից:
- Ինչպե՞ս կարող եմ օգնել իմ ուսանողներից յուրաքանչյուրին լիարժեք ընդգրկվել դասին:
- Ինչպե՞ս կարող եմ տարբերակել յուրաքանչյուր դասի ուսումնական վարժությունները և մոտեցումները:
- Ինչպե՞ս կարող եմ ստեղծել ուսանելու մթնոլորտ, որը կիրավի ձգվի և որտեղ ուսանողները միմյանց սովորեցնելու և իրարից սովորելու հնարավորություն և պատասխանատվություն կունենան: (Տես Վարդապետություն և Ուխտեր 88.78, 122):

Ինչպե՞ս կարող եմ հարմարեցնել դասերը սահմանափակ կարողություն ունեցող ուսանողների համար:

Ուսուցմանը պատրաստվելիս հաշվի առեք
հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:
Հարմարեցրեք միջոցառումները և ակնկա-
լիքները, որպեսզի ընդգրկեք նրանց և օգնեք,
որ նրանք հաջողության հասնեն disabilities
(.ChurchofJesusChrist.org):



Գրի առեք ձեր մտքերը

Մտածեք, թե ձեր ուսանողներ ինչ փորձառու-
թյուն կունենան այս դասընթացի արդյուն-
քում: Թվարկեք ձեր մտքերից մի քանիսն
այն մասին, թե ինչպես եք նախատեսում
օգնել նրանց՝ իմաստալից ուսումնառության
փորձ ունենալ:

Ի՞նչ է ակնկալվում ուսանողներից՝ միավորներ ստանալու համար:

Ինստիտուտի ավարտականին բավարար միավոր-
ներ հավաքելու համար, ուսանողները պարտա-
վոր են՝

1. ուսումնասիրել նախապատրաստական նյութը՝
դասերի առնվազն 75 տոկոսի համար:
2. մասնակցել անցկացվող դասերի 75 տոկոսին:
3. ավարտել ուսումնական երեք
փորձառություններից մեկը. պահել
ուսումնասիրության օրագիր, գրել
պատասխաններ երեք շարադրությունների
հարցերին կամ ինքնուրույն ծրագրել և

ավարտին հասցնել ուսումնառության որևէ
առաջարկ (ուսուցչի հաստատմամբ), որը
կապված է դասընթացի բովանդակության
հետ: Մանրամասների համար այցելեք՝
ChurchofJesusChrist.org/si/institute/
learning-experiences:

Եթե ուսանողները գրեն նախապատրաստա-
կան նյութի բոլոր հարցերի և վարժությունների
պատասխանները, դա նույնպես կբավարարի
ուսումնական փորձառության պահանջը: Անհրա-
ժեշտություն չկա, որ ուսանողներն իրենց իրենց
պատասխանները հանձնեն ձեզ: Կիսամյակի վեր-
ջում նրանք պարզապես պետք է ձեզ ցույց տան
իրենց կատարած աշխատանքը:

Ցանկանո՞ւմ ես ավելին: (Ոչ պարտադիր)

Լրացուցիչ ի՞նչ նյութեր կարող են օգնել, որ ես դառնամ այն ուսուցիչը, ինչպիսին Տերը ցանկանում է ինձ տեսնել:

Նոր ուսուցչի վերապատրաստման նյութեր
կօգնի ձեզ հասկանալ Սեմինարիաների և
Ինստիտուտների նպատակը և ուսուցման
փիլիսոփայությունը, ինչպես նաև կօգնի ձեզ
վարժվել ուսուցման մի քանի հմտություններում:

Ավետարանի ուսուցում և ուսանում ձեռնարկը
կարևոր աղբյուր է ուսուցման գործընթացը
հասկանալու և հաջողությամբ դասավանդելու
համար:

Ուսուցանել Փրկիչի ձևով նյութը պարունակում
է սկզբունքներ, որոնք օգնում են ավետարանի
ուսուցիչներին ուսուցանել Փրկիչի նման:

Որտե՞ղ կարող եմ գաղափարներ և նյութեր գտնել դասերը հարմարեցնելու վերաբերյալ, որպեսզի բավարարեմ սահմանափակ կարողություններ ունեցող անձանց կարիքները:

Տեղեկացեք սահմանափակ կարողություններ
ունեցող անձանց նյութերի կայքէջում disabilities
(.ChurchofJesusChrist.org):



ԴԱՍ 1. ԴԱՍԱՐՆՈՒ ՆԱԽԱԳԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Վերականգնմանը նախորդող իրադարձությունները

Բարի գալուստ *Վերականգնման հիմունքները* դասընթացին: Այս դասընթացի ընթացքում դուք կուսումնասիրեք Հիսուս Քրիստոսի եկեղեցու վերջին օրերի վերականգնմանն ամենվող հիմնարար հայտնությունները, վարդապետությունը, մարդկանց և պատմական իրադարձությունները: Աղոթքով ուսումնասիրելով այդ ամենը, դուք կկարողանաք գտնել այդ սկզբունքների և մարդկանց կապը ձեր կյանքի և հանգամանքների հետ: Դուք նաև կկարողանաք ավելի լավ ձեռք բերել հոգևոր գիտելիքներ և տարբերել ճիշտը սխալից:

Այս նախապատրաստական նյութը կդնի ձեր դասարանի փորձառության հիմքը: Ուսումնասիրելով նախապատրաստական նյութը յուրաքանչյուր դասից առաջ, դուք ավելի խորը, ավելի իմաստավոր ուսման փորձառություն կունենաք:

Երբ աղոթքով ուսումնասիրեք այս դասընթացը, դուք կտեսնեք Տիրոջ ձեռքը Վերականգնման պատմության մեջ և կլսեք Նրա ձայնը՝ Վերականգնման հայտնությունների մեջ (տես Վարդապետություն և Ուխտեր 18.34–36): Այս առաջին դասի ավարտին դուք պետք է կարողանաք բացատրել, թե ինչու էր անհրաժեշտ վերականգնել եկեղեցին: Դուք նաև պետք է գիտակցեք, թե ինչպես Տերը պատրաստեց նոր տնտեսության ուղին մեր օրերում:

ԲԱԺԻՆ 1

Ի՞նչը հանգեցրեց Մեծ Ուրացությանը:

Հիսուս Քրիստոսի մահից և Հարությունից հետո, նրա առաքյալները շարունակեցին ղեկավարել եկեղեցին, երբ այն ընդլայնվեց: Տասներկու Առաքյալների Քվդրումի Նախագահ Մ. Ռասսել

Բալարդը բացատրել է, թե ինչպես, ի վերջո, Հիսուս Քրիստոսի եկեղեցին ընկավ ուրացության մեջ:



Նոր Կտակարանում նշվում է, որ վաղ շրջանի Առաքյալները շատ ջանք թափեցին, որ պահպանեն այն եկեղեցին, որը Հիսուս Քրիստոսը թողել էր իրենց խնամքի և պահպանման ներքո, բայց նրանք գիտեին, որ իրենց ջանքերն, ի վերջո, ապարդյուն կլինեն: Պողոսը գրել է Թեսալոնիկեի սրբերին, ովքեր անհամբեր

սպասում էին քրիստոսի երկրորդ գալուստին, որ «այդ օրը չի գա, եթե առաջ չգայ ապստամբությունը» (2 Թեսաղոնիկեցիս 2.3): . . .

Ի վերջո, բացի սիրելի առաքյալ Հովհաննեսից, Պետրոսը և Նրա ընկերակից առաքյալները նահատակվեցին: Հովհաննես առաքյալը և Եկեղեցու անդամները պայքարում էին գոյատևման համար՝ ի դեմս սարսափելի ճնշման: Նրանց հավերժական երախտիքի շնորհիվ քրիստոնեությունը գոյատևեց և իսկապես մեծ ուժ էր ներկայացնում մեր թվարկության երկրորդ դարի վերջին: Բազմաթիվ քաջարի սրբեր գործիք էին հանդիսանում քրիստոնեությունը փրկելու գործում:

Չնայած այդ հրաշալի ծառայությանը, նրանք չունեին նույն առաքելական իշխանությունը, որոնք ստացել էին Պետրոսն ու մյուս առաքյալները՝ Տեր Հիսուս քրիստոսի ձեռնադրման կարգման ներքո: Երբ այդ իշխանությունը կորավ, մարդիկ սկսեցին վարդապետական հասկացողության այլ աղբյուրներ որոնել: Արդյունքում՝ շատ պարզ ու արժեքավոր ճշմարտություններ կորսվեցին: (M. Russell Ballard, “Restored Truth,” *Ensign*, Nov. 1994, 65–66):

Նեփի մարգարեն տեսիլքում տեսավ Մեծ Ուրացությունը: Նա տեսավ, որ ուրացության ժամանակ ամբարիշտ մարդիկ «Գառի ավետարանից հանել են շատ մասեր, որոնք շատ պարզ ու արժեքավոր են. և նրանք հանել են նաև Տիրոջ բազմաթիվ ուխտեր» (1 Նեփի 13.26): Նա նաև տեսավ, որ «շատ պարզ ու արժեքավոր բաներ [կհանվեն] Աստվածաշնչից Մեծ Ուրացության ժամանակ (1 Նեփի 13.28): Հրեշտակն ասաց Նեփիին. «Այդ բաների պատճառով, որոնք հանվել են Գառի ավետարանից, շատ-շատերը սայթաքում են, այո, այնպես որ Սատանան մեծ գործություն ունի նրանց վրա» (1 Նեփի 13.29):



Մտածեք դասին Նախապատրաստվելիս

Ինչո՞ւ էր անհրաժեշտ վերականգնել Հիսուս քրիստոսի ավետարանի լրիվությունը:

ԲԱԺԻՆ 2

Տերն ինչպե՞ս ուղի Նախապատրաստեց Վերականգնման համար:

Ուրացության հարյուրամյակների ընթացքում, որի ժամանակ շատ քչերն էին սուրբ գրություններ կարդում, ոգեշնչված տղամարդիկ և կանայք հաճախ իրենց վտանգելով անում էին ամեն բան, որպեսզի օգնեին ուրիշներին գտնել ճշմարտությունը: 1300-ականների վերջին Ջոն Ուիքլիֆը սկսեց Աստվածաշունչն անգլերեն թարգմանել և, հետևաբար, դատապարտվեց որպես հերետիկոս իր ժամանակի կրոնական իշխանությունների կողմից: 1400-ականների կեսերին տպարանի գյուտն Աստվածաշնչի օրինակները մատչելի դարձրեց ավելի շատ մարդկանց համար: 1500-ականներին Տիրոջ Հոգին իջավ Մարտին Լյութերի, Հուդրիխ Ցվինգլի, Ջոն Բալվինի, Ջոն Նոքսի, Էն Էքվյուի և շատ ուրիշների վրա, ովքեր սկսեցին բարձրաձայնել իրենց օրերի գերիշխող եկեղեցիների սխալների դեմ: Ուիլյամ Թինդեյլը և մյուսները նույնպես Աստվածաշնչի նոր թարգմանություններ կատարեցին: Այդ բարեփոխիչներից շատերն իրենց կյանքի գնով վճարեցին իրենց արարքների համար: Նրանց ջանքերը հանգեցրին բողոքական նոր եկեղեցիների կազմավորմանը: Քանի որ Եվրոպայում բացակայում էր կրոնական ազատությունը, այդ նոր եկեղեցիների ստեղծումն առաջ բերեց մեծ ընդհարումներ:

Կրոնական հետապնդումներն այդ և շատ այլ անհատների դրդեցին գտնել նոր տուն, որտեղ նրանք կարող էին ազատորեն երկրպագել, ներառյալ՝ գաղութականներին, որոնք 1600-ականների սկզբին Անգլիայից ուղևորվեցին Ամերիկա: Նեփի մարգարեն տեսիլքում տեսավ նման կրոնական բարեփոխիչների, որոնք, ի վերջո, բնակություն հաստատեցին Ամերիկայում:



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացե՛ք 1 Նեփի 13.13–16, 19:

Գաղութականների և այլ ներգաղթյալների հետնորդները, որոնք լրացուցիչ ազատություն

Էին փնտրում, առանձնացան Մեծ Բրիտանիայից՝ հանգեցնելով Ամերիկյան հեղափոխական պատերազմի: Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը, ով կոչվում էր Ամերիկայի անվան տակ, Ասաել Սմիթն էր: Ասաելը, ով մարգարե Ջոզեֆ Սմիթի հայրական պապն էր, մի առիթով ասել է. «Հոգուս մեջ ծնունդ է առել, որ իմ ժառանգներից մեկը կիրապարակի մի աշխատանք՝ կրոնական հավատքի աշխարհը հեղափոխելու համար» (Joseph Fielding Smith, *Church History and Modern Revelation*, 2 vols. [1953], 1:4): Ասաելն ականատես եղավ նոր ազգի հիմնադրմանը, որն իր հիմքում ուներ կրոնական ազատություն:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռոբերտ Դ. Հեյլսն ուսուցանել է, որ Ամերիկայի Միացյալ Նահանգների հիմնադրումը մի քայլ էր, որն աշխարհը պատրաստում էր ավետարանի վերականգնմանը:



Կրոնի նկատմամբ հավատարմությունն առաջնորդեց այդ նոր ազգին Ամերիկյան մայրցամաքի վրա: Աստծո ձեռքի ներքո Նրանք ձեռք բերեցին կրոնական ազատություն յուրաքանչյուր քաղաքացու համար՝ ոգեշնչված Իրավունքի օրինագծի շնորհիվ: Տասնչորս տարի անց, 1805 թվականի դեկտեմբերի 23-ին, ծնվեց Մարգարե Ջոզեֆ Սմիթը: Վերականգնման Նախապատրաստությունը մոտ էր ավարտին:

... Ես վկայում եմ, որ [Հիսուս Քրիստոսի] ձեռքը վերահսկել է Վերականգնման աշխատանքն այս աշխարհի հիմնադրումից առաջ: (Robert D. Hales, "Preparations for the Restoration and the Second Coming: 'My Hand Shall Be over Thee,'" *Ensign or Liahona*, Nov. 2005, 90, 92):

Նախագահ Մ. Ռասսել Բալլարդն ուսուցանել է հետևյալը.



Մարգարեի հայրը՝ Ջոզեֆ Սմիթ Ավագը, ֆինանսական դժվարություններ է ունեցել: ... [Նա] գործ է հիմնադրել գործընկերոջ հետ: Գործընկերը վերցրել է փողը և կորցրել այն: Նրանք գնեցին մի ագարակ, որն անհաջողության մատնվեց: Նրանք գնեցին ևս մեկը, և դա անհաջողության մատնվեց. գնեցին ևս մեկը, և դա նույնպես անհաջողության մատնվեց: Ի վերջո, Ջոզեֆ Սմիթ Ավագը տեղափոխվեց Պալմիրա: Տիրոջ ձեռքը վերահսկում էր աշխատանքը՝ տեղափոխելով Սմիթի ընտանիքին մի վայր, որտեղ

Նա ցանկանում էր, որ Նրանք գտնվեին: (M. Russell Ballard, "The Tapestry of God's Hand" [Joseph Smith Memorial Fireside, Feb. 13, 2011, Logan Institute of Religion, Utah State University]):

Աստվածային ծրագրի համաձայն, Ջոզեֆ Սմիթը ծնվել է ճիշտ ժամանակին, ճիշտ վայրում և ճիշտ պայմաններում՝ Վերականգնման հիմնարար իրադարձությունները նախաձեռնելու համար: Նախագահ Բրիգամ Յանգը վկայել է.



[Ջոզեֆ Սմիթը] նախակարգվել է հավերժության մեջ, որպեսզի նախագահի վերջին տնտեսության վրա: (*Teachings of Presidents of the Church: Brigham Young* [1997], 96):



Մտածեք դասին Նախապատրաստվելիս

Ի՞նչ կարող եք սովորել Տիրոջ մասին, թե Նա ինչպես ուղի նախապատրաստեց Ջոզեֆ Սմիթի և Վերականգնման համար:

Ցանկանում ես ավելին: (Ոչ պարտադիր)

Ի՞նչ պետք է տեղի ունենար Նախքան ավետարանի վերականգնումը:



Կարդացեք «Preparations for the Restoration and the Second Coming: 'My Hand Shall Be over Thee», ըստ Երեց Հեյլսի (*Ensign or Liahona*, Nov.

2005, 88–92): Այս ուղերձում Երեց Հեյլսը խոսում է վերականգնման ընթացքում Տիրոջ շարունակական ներգործության մասին:

Արդյո՞ք Ջոզեֆի օրոք մարդիկ գիտեին, որ վերականգնման անհրաժեշտություն կա:

«Ճշմարտության որոնումը» (15:43) տեսանյութում պատմվում է, թե ինչպես է Վիլֆրիդ Վուդրոֆը որոնում Փրկիչի Եկեղեցին:

ԴԱՍ 1. ՈՒՍՈՒՑՁԻ ՆՅՈՒԹ

Վերականգնմանը նախորդող իրադարձությունները

Տեր Հիսուս Քրիստոսը վերջ դրեց Մեծ Ուրացությանը, երբ Նա վերականգնեց Իր ավետարանը և Իր Եկեղեցին կրկին կազմավորեց երկրի վրա: Այս դասին մասնակցելուց հետո ուսանողները կկարողանան ճանաչել Տիրոջ ձեռքը Վերականգնմանը նախորդող իրադարձություններում և կկարողանան բացատրել Մատծո զավակներին ճշմարտությունը կրկին տարածելու անհրաժեշտությունը մեր օրերում:

Նշում. Հնարավորության դեպքում, նախքան դասի առաջին օրը, կապվեք այն ուսանողների հետ, ովքեր գրանցվել են այս դասընթացին և հրավիրեք նրանց նախքան դասի գալը կարդալ դաս 1-ի նախապատրաստական նյութը: Եթե դուք դաս 1 և 2 միասին եք ուսուցանելու, հրավիրեք ուսանողներին նաև սովորել դաս 2-ի նյութը:

Ուսուցման առաջարկներ

Ուսանողներին, ովքեր ծանոթ չեն նախապատրաստական նյութի հետ, ցույց տվեք՝ ինչպես մուտք գործել այնտեղ էլեկտրոնային եղանակով: Կարող եք նաև թղթային օրինակներ տրամադրել այն ուսանողներին, ովքեր չունեն էլեկտրոնային սարքեր:

ԲԱՐԵԼԱՎԵԼ ՄԵՐ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Պատրաստվելիս մտածեք ուսանողների մասին: Երբ պատրաստվում եք ուսուցանել, մտածեք, թե ինչ եք ակնկալում, որ ուսանողները կզգան և կանեն, և նրանց կյանքն ինչպես կփոխվի տվյալ դասի և դասընթացի շնորհիվ: Աղոթքով մտածեք ձեր ուսանողների կարիքների մասին և պատրաստվելիս լսեք Հոգու առաջնորդությունը: Տասներկու Առաքյալների Քվիրոմից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդն ուսուցանել է ուսուցիչներին, որ «ուսանողը տարա չէ, որը պետք է լցնել. ուսանողը կրակ է, որ պետք է բոցավառել» (“Angels and Astonishment,” Church Educational System training broadcast, June 12, 2019):

Մեծ Ուրացության պատճառով ավետարանի Վերականգնումն անհրաժեշտություն դարձավ:

Որևէ ուսանողի հրավիրեք բարձրաձայն կարդալ նախապատրաստական նյութի դաս 1-ի նախաբանը:

Ցուցադրեք կենդանի բույս և մահացած կամ մահացող որևէ բույս (կամ հողոտ մեռած ճյուղ): Կամ ցուցադրեք ուղեկցող պատկերները, եթե իրական բույսերն առկա չեն:





- Ձեր կարծիքով, ինչո՞ւ են այդ բույսերն իրարից տարբերվում: Այդ բույսերի օրինակով ինչպիսի՞ համանմանություն կարող ենք կատարել մեր հոգևոր վիճակի մասին:

Բացատրեք, որ Հին Կտակարանի Ամովս մարգարեն զգուշացրեց Իսրայելի ամբարիշտ մարդկանց, որ նրանք սովի կմատնվեն: Հրավիրեք ուսանողներին կարդալ Ամովս 8.11–12 հատվածները և ուշադրություն դարձնել, թե ինչպիսի սովի մասին էր զգուշացնում Ամովսը:

Հանձնարարեք ուսանողներին ուսումնասիրել նախապատրաստական նյութի բաժին 1-ը և ուշադրություն դարձնել, թե ինչը կորսվեց Մեծ Ուրացության ժամանակ: Թող ուսանողները զեկուցեն՝ ինչ գտան:

Ուսանողներին ցույց տվեք «Տնտեսություններ՝ Ուրացության և Վերականգնման օրինաչափությունը» տեսանյութը (6:52): Դիտելուց հետո հրավիրեք ուսանողներին մտածել, թե տեսանյութում պատկերված ուրացության և վերականգնման օրինաչափությունն ինչ է մեզ սովորեցնում Երկնային Հոր մասին:

- Ի՞նչ էք կարծում, ուրացության և վերականգնման այս օրինաչափությունը մեզ ինչ է սովորեցնում Երկնային Հոր մասին:
- Ինչո՞ւ է ժամանակների լրության տնտեսությունը տարբերվում այլ տնտեսություններից: Ինչպիսի՞ մտքեր և զգացումներ եք ունենում,

երբ մտածում եք այս ժամանակահատվածում ապրելու մասին:

Տերն ուղի նախապատրաստեց ավետարանի Վերականգնման համար:

Ցուցադրեք հետևյալ ճշմարտությունը. **Տերն ուղի նախապատրաստեց ավետարանի Վերականգնման համար:**

Ուսանողներին հրավիրեք փոքր խմբեր կազմել, իսկ հետո հերթով կարդալ նախապատրաստական նյութի բաժին 2-ից և ուշադրություն դարձնել, թե ո՞ր իրադարձություններն ուղի նախապատրաստեցին ավետարանի Վերականգնման համար: (Եթե ձեր ուսանողների մեծ մասը կարողացել է կարդալ նախապատրաստման նյութը դասից առաջ, գուցե դուք հրավիրեք նրանց ամփոփել բաժին 2-ի բովանդակությունը): Ցուցադրեք հետևյալ հարցերը և ժամանակ տրամադրեք, որ յուրաքանչյուր խումբ միասին քննարկի դրանք:

- Տերն ինչպե՞ս ուղի նախապատրաստեց Վերականգնումն իրականացնելու համար:
- Ի՞նչ կարող ենք սովորել Տիրոջ մասին այն փաստից, թե Նա ինչպես ուղի նախապատրաստեց Ջոզեֆ Սմիթի և Վերականգնման համար:

Ուսանողները կարող են ակտիվ դերակատարում ունենալ ավետարանի իրենց ուսումնասիրության մեջ:

Դասընթացի համար ցուցադրեք դասերի վերնագրերի ցուցակը (դրանք կարող եք գտնել բովանդակության ցանկում): Բացատրեք, որ այս դասընթացը կկենտրոնանա Վերականգնման հիմնարար իրադարձությունների, վարդապետության և սուրբ գրությունների վրա, ինչպես նաև կանդիդատական դժվար թեմաների, որոնք երբեմն հանդիպում ենք Եկեղեցու պատմության մեջ: Կարող եք ուսանողներին հրավիրել կարդալ առաջիկա դասերի ցանկը և դասարանի հետ կիսվել, թե որ թեմաների մասին նրանք ավելի կցանկանային սովորել: Նշեք նրանց պատասխանները, որպեսզի դուք իմանաք, թե որ դասերին կարող եք մի փոքր ավելի շատ ուշադրություն դարձնել դասընթացի ընթացքում:

Բացատրեք, որ նախապատրաստական նյութն այս դասընթացի բաղկացուցիչ մասն է և կարող է օգնել, որ ուսանողները լավացնեն ավետարանի իրենց ուսումնասիրությունը և կնախապատրաստի, որ նրանք իմաստալից մասնակցություն ունենան դասի ընթացքում:

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ այն օրինությունները, որոնք կարող են ստանալ, եթե նախապատրաստվեն յուրաքանչյուր դասի համար, ցուցադրեք Յոթանասունից Երեց Քիմ Բ. Քլարկի հետևյալ հայտարարությունը.



Եթե իսկապես ցանկանում եք խորապես ուսումնասիրել, եթե ձեր սիրտը և միտքը բաց են սովորելու համար, և եթե գործեք ըստ այդ ցանկության, Տերը կօրհնի ձեզ: Երբ կատարեք ձեր բաժինը՝ հավատքով աղոթեք, նախապատրաստվեք, ուսումնասիրեք, ակտիվորեն մասնակցեք և ամեն ինչ անեք, ապա Սուրբ Հոգին կսովորեցնի ձեզ, կմեծացնի սովորած նյութը կիրառելու ձեր կարողությունը և կօգնի ձեզ դառնալ այն, ինչ Տերն ուզում է, որ դառնաք: (Kim B. Clark, "Learning for the Whole Soul," *Ensign*, Aug. 2017, 27):

Հրավիրեք ուսանողներին ուշադիր խորհել, թե ինչպես կպատասխանեն հետևյալ հարցերին.

- Իմ անկեղծ մասնակցությունն այս դասընթացին ինչպե՞ս կօգնի իմ հոգևոր աճին:
- Պատրա՞ստ եմ արդյոք ինքնուրույն ուսումնասիրել յուրաքանչյուր դասից առաջ,

որպեսզի կարողանամ պատրաստ լինել ավելի խորը ուսումնասիրության: Իմ ժամացուցակի սահմաններում արդյո՞ք ես կպարտավորվեմ առաջնահերթություն դարձնել իմ անձնական ուսումնասիրությունը և նախապատրաստությունը:

Կարող եք խրախուսել ուսանողներին գրի առնել այս հարցերի հետ կապված իրենց նպատակները: Կարող եք նաև դասարանով քննարկել, թե նրանք ինչպես կարող են միմյանց օգնել և զալ պատրաստ՝ ավելի շատ սովորելու համար: (Գաղափարները կարող են ներառել՝ դասարանի տեքստային հաղորդագրությունների խմբերի ստեղծում, ուսումնական խմբերի ստեղծում, միմյանց նպատակները հիշեցնելու եղանակներ կամ քննարկումների ֆորումներ, որտեղ նրանք կարող են կիսվել իրենց ուսումնասիրած նյութի մասին մտքերով):

Հաջորդ անգամ

Բացատրեք ուսանողներին, որ հաջորդ դասի նախապատրաստական նյութը ներառում է մասեր Մարգարե Զոգեֆ Սմիթի Առաջին Տեսիլքի մասին իր առաջին պատմությունից: Հրավիրեք ուսանողներին մտածել, թե ինչ կարող ենք սովորել տարբեր պատմություններից, ինչպես նաև այն մասին, թե ինչ առանձնահատուկ նշանակություն ունի մեզ համար Առաջին Տեսիլքի իրականության վերաբերյալ մեր անձնական վկայությունները:



ԴԱՍ 2. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԱՆՏԱՍԿԱՆ ՆՅՈՒԹ

Առաջին Տեսիլքը

Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթն Առաջին Տեսիլքը նկարագրել է որպես «ամենամեծ իրադարձությունը. . . Սատոն Որդու հարությունից ի վեր» (*Եկեղեցու նախագահների ուսմունքները*. Ջոզեֆ Ֆ. Սմիթ [1998], 14): Երբ ուսումնասիրեք Առաջին Տեսիլքը, մտածեք այս սրբազան իրադարձության նշանակության և այն ազդեցության մասին, որը այն ունեցել է ձեր կյանքի և աշխարհի վրա:

ԲԱԺԻՆ 1

Ի՞նչ ճշմարտություններ կարող ենք սովորել Ջոզեֆ Սմիթի Առաջին Տեսիլքից:

Ջոզեֆ Սմիթի Առաջին Տեսիլքի մասին խոսելիս, Յոթանասունից Երեց Ռիչարդ Ջ. Մեյնզն ուսուցանել է.



Ջարմանալի և ուսանելի է, երբ մենք մտորում ենք այն մասին, թե ինչ ենք սովորում այս սրբազան և հիացմունքի արժանի փորձառությունից. . . մեր Երկնային Հոր և Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի հավերժական բնույթի վերաբերյալ, սատանայի իրական լինելու, բարի ու չարի պայքարի և փրկության մեծ ծրագրի այլ կարևոր կողմերի մասին: . . .

Ջոզեֆ Սմիթի Առաջին Տեսիլքը բանալին է այն ճշմարտությունների, որոնք թաքցրած են եղել դարերի ընթացքում: Եկեք չմոռանալ և ըստ արժանվույն գնահատենք բազմաթիվ թանկ ճշմարտություններ, որոնք սովորել ենք Առաջին Տեսիլքից: (Richard J. Maynes, "The First Vision: Key to Truth," *Ensign*, June 2017, 64, 65):

Ջոզեֆ Սմիթը մեծացել է կրոնական մեծ խառնաշփոթի ժամանակ: Նրա համայնքի տարբեր քրիստոնեական եկեղեցիներ պայքարում էին նորադարձների համար և եռանդուն վիճում էին միմյանց հետ վարդապետության և կրոնական սովորույթների շուրջ: Երբ ուսումնասիրեք 1838 թվականին գրված Առաջին Տեսիլքի հետևյալ պատմությունը, որն այժմ ներառված է կանոնիկ աշխատություններում Ջոզեֆ Սմիթ - Պատմություն վերնագրով, գրի առեք այն գաղափարները, որոնք կստանաք, և նշեք ավետարանի այն ճշմարտությունները, որոնք ձեզ համար իմաստալից են:




Ուսումնասիրեք դասին նախապատրաստվելիս

Կարդացեք Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.8,
11–19:



ԲԱԺԻՆ 2

Առաջին Տեսիլքի մասին
Ջոզեֆ Սմիթի տարբեր
պատմություններն ինչպե՞ս
են լրացուցիչ գաղափարներ
ավելացնում այս սրբազան
իրադարձությանը:



1832 թվականի Առաջին Տեսիլքի մասին Ջոզեֆ Սմիթի ձեռագրերը:

Ջոզեֆ Սմիթ—Պատմության մեջ գրված 1838
թվականի Առաջին Տեսիլքի պատմությունը, որը
թելադրվել է Ջոզեֆ Սմիթի կողմից ընդդիմու-
թյան ժամանակ, որպեսզի «բոլոր ճշմարտություն
փնտրողներին տեղեկացնի փաստերին» (Ջոզեֆ
Սմիթ—Պատմություն 1.1): Դա Առաջին Տեսիլքի
նշանավոր պատմությունն է և գրվել է որպես
Ջոզեֆ Սմիթի եկեղեցու պաշտոնական պատմու-
թյան մաս: Այն կանոնիկ աշխատություն է դարձել
Թանկագին Մարգարիտ գրքի հետ մասին 1880
թվականին և այդ ժամանակ դարձել է եկեղեցու
կանոնիկ աշխատությունների մաս:

Բացի 1838 թվականի պատմությունից, Մարգարե
Ջոզեֆ Սմիթը գրել կամ թելադրել է իր փորձառու-
թյան երեք այլ պատմություններ: Նաև կան երրորդ
անձանց կողմից գրված Առաջին Տեսիլքի պատմու-
թյուններ, որոնք գրվել են Ջոզեֆ Սմիթի ժամանա-
կակիցների կողմից:

Առաջին տեսիլքի տարբեր արձանագ-
րությունների պատմությունները ներ-
դաշնակ են, չնայած որ, բնականաբար,
իրականում դրանք տարբերվում են
շեշտադրումներով և մանրամասնե-
րով: Պատմաբաններն ակնկալում են,
որ երբ անհատը վերապատմում է մի



Գրի առեք ձեր մտքերը

Օրագրում կամ ստորև տրամադրած տողե-
րում գրի առեք այն ճշմարտությունները,
որոնք դուք կարողացաք բացահայտել
Առաջին Տեսիլքի մասին Ջոզեֆ Սմիթի 1838
թվականի պատմությունից: Գրեք նաև, թե
ձեր կարծիքով ինչու է կարևոր հասկանալ
այդ ճշմարտությունները: Դասարան եկեք
պատրաստ՝ ձեր գրածով կիսվելու համար:

փորձառություն բազմաթիվ միջավայրերում տարբեր ունկնդիրների համար երկար տարիների ընթացքում, յուրաքանչյուր պատմություն պետք է շեշտադրի փորձառության տարբեր կողմերը և պարունակի առանձնահատուկ մանրամասներ: Իսկապես, այնպիսի տարբերություններ, ինչպիսիք առկա են Առաջին Տեսիլքում, գոյություն ունեն սուրբ գրքերի բազմաթիվ պատմություններում, ինչպես օրինակ Դամասկոսի ճանապարհի Պողոսի տեսիլքում և Այլակերպության Սարի վրա՝ Առաքյալների փորձառության մեջ: Չնայած տարբերություններին՝ Առաջին Տեսիլքի բոլոր զեկույցներում պահպանվում է հիմնական հետևողականությունը: Ոմանք սխալ կարծիք կազմելով՝ վիճաբանում են, թե պատմությունը վերապատմելիս ցանկացած տարբերություն փաստում է կեղծիքի մասին: Սակայն հակառակը, հարուստ պատմական զեկույցները մեզ թույլ են տալիս ավելին սովորել այս նշանակալից իրադարձության մասին, քան մենք կկարողանայինք, եթե այն ավելի քիչ փաստագրված լիներ: ("First Vision Accounts," Gospel Topics, topics.ChurchofJesusChrist.org):

Երբ կարդաք հետևյալ հատվածները Ջոզեֆ Սմիթի Առաջին Տեսիլքի լրացուցիչ պատմություններից, կարող եք նշել այն մանրամասներն ու ճշմարտությունները, որոնք կարևորվեցին ձեզ համար: Հնարավոր է նաև ցանկանաք գրանցել ձեր ունեցած հարցերը և դրանք բարձրացնել դասարանում:

Նշում. Յուրաքանչյուր պատմության ամբողջական գրառումը հասանելի է «Առաջին Տեսիլքի մասին Ջոզեֆ Սմիթի պատմությունները» josephsmithpapers.org կայքում:

1832 թվականի պատմությունը

Այս պատմությունը գրվել է Ջոզեֆ Սմիթի նամակների գրքի սկզբում և միակ պատմությունն է, որը պարունակում է իր ձեռագրի մի մասը: Դրա մի մասը նաև գրված էր Ջոզեֆի դպիրի ձեռագրով:

Մոտ տասներկու տարեկան հասակում ես [սկսեցի] լրջորեն մտածել այն ամենի մասին, ինչը կարևոր էր իմ անմահ հոգու բարօրության համար: . . .

. . . Միտքս չափազանց դառնացած էր էր, քանի որ ես սկսում էի գիտակցել իմ մեղքերը: . . . Ես վշտացած էի թե՛ իմ մեղքերի համար և թե՛ աշխարհի մեղքերի համար: . . .

Հետևաբար, ես դիմեցի Տիրոջը ողորմության համար, քանի որ չկար մեկը, որին կարող էի դիմել և ողորմություն ստանալ: Եվ Տերը լսեց իմ աղաղակն անապատում, և երբ ես իմ տասնվեցերորդ տարում կանչեցի Տիրոջը՝ ցերեկվա արևից ավելի լուսավոր մի սյուն ցած իջավ վերևից և ընկավ ինձ վրա: Ես լցված էի Աստծո Հոգով, և Տերը բացեց երկինքներն ինձ համար, և ես տեսա Տիրոջը:

Եվ նա խոսեց ինձ հետ՝ ասելով. «Ջոզեֆ, որդի՛ս, քո մեղքերը ներված են քեզ: Պահպանապարհով, քայլիր իմ կանոններով և պահիր իմ պատվիրանները: Սիա, ես եմ փառավոր Աստվածը: Ես խաչվեցի աշխարհի համար, որպեսզի բոլոր նրանք, ովքեր հավատում են իմ անվանը, կարողանան ունենալ հավերժական կյանք: Աշխարհն ընկած է մեղքի մեջ այս պահին, և ոչ ոք բարիք չի անում, այդ՝ ոչ-ոք: Նրանք շեղվել են ավետարանից և չեն պահում իմ պատվիրանները: Նրանք դեպի ինձ են հակված իրենց շուրթերով, մինչդեռ նրանց սրտերը հեռու են ինձանից: Եվ իմ զայրույթը բորբոքվում է երկրի բնակիչների դեմ և պետք է այցելել նրանց ըստ նրանց անօրենության և ի կատար ածեմ այն, ինչը խոսվել է մարգարեների և առաքյալների բերանով: Սիա ես գալիս եմ արագ, ինչպես գրված է իմ մասին, ամպի մեջ՝ հագած իմ Հոր փառքը»:

Իմ հոգին լցվեց սիրով և երկար ժամանակ ես շատ ուրախ էի: Տերն ինձ հետ էր, բայց ես չէի կարողանում գտնել որևէ մեկին, ով կհավատար երկնային տեսիլքին: Այնուամենայնիվ, ես խորհում էի այս բաների մասին իմ սրտում:

1835 թվականի պատմությունը

Այս պատմությունը մի գրառում է, որտեղ Ջոզեֆն Առաջին Տեսիլքը նկարագրում է մեկին, ով այցելել էր իր տուն: Այն գրվել է Ջոզեֆի օրագրում իր դպիրի կողմից:

Ես կանչեցի Տիրոջը հզոր աղոթքով:
Իմ գլխավերևում հայտնվեց կրակի մի
սյուն: Այդ պահին այն ընկավ ինձ վրա և
սիրտս լցրեց անասելի ուրախությամբ:
Մի անձնավորություն հայտնվեց կրակի
սյան մեջտեղում, որը տարածվում էր
ամենուր, բայց այնուամենայնիվ ոչինչ չէր
վառում: Շուտով ևս մեկ անձնավորություն
հայտնվեց, ինչպես առաջինը: Նա ասաց
ինձ. «Քո մեղքերը ներված են քեզ»: Նա
վկայեց ինձ, որ Հիսուս Քրիստոսն Աստծո
Որդին է: Եվ ես տեսա շատ հրեշտակ-
ներ այս տեսիլքում: Ես մոտ տասնչորս
տարեկան էի, երբ ստացա այս առաջին
հաղորդակցումը:

1842 թվականի պատմությունը

Այս պատմությունը մի հատված է նամակից, որը
գրվել է ի պատասխան Չիկագոյի թերթի խմբագիր
Ջոն Ուենթվորթի պատասխանների:

Ես առանձնացա պուրակի մի մեկուսաց-
ված վայրում սկսեցի աղաղակել առ Տերը:
Մինչ տարված էի բուռն աղերսանքով,
միտքս հեռու քշվեց շրջապատող առար-
կաներից, և ես պարուրվեցի երկնային
տեսիլքի մեջ ու տեսա երկու փառահեղ
անձնավորությունների, ովքեր ճշգրտորեն
նման էին միմյանց հատկություններով և
տեսքով և շրջապատված էին պայծառ
լույսով, որը խավարեցնում էր կեսօրվա
արևը: Նրանք ինձ ասացին, որ բոլոր
կրոնական դավանանքները հարում
էին սխալ վարդապետությունների, և
որ դրանցից ոչ մեկն Աստծո կողմից չի
ճանաչվում որպես Նրա եկեղեցին և
թագավորությունը: Եվ ինձ հստակ հրա-
մայվեց, որ «չիտնեմ նրանց» և միևնույն
ժամանակ խոստացան, որ ժամանակի
ընթացքում Ավետարանի լրիվությունը
կբացահայտվի ինձ համար:

մասին ձեր հասկացողությունն ու երախ-
տագիտությունը: Ի՞նչ լրացուցիչ ճշմարտու-
թյուններ կարող եք ավելացնել ձեր ցանկին,
այս նյութի բաժին 1-ից: Ինչպե՞ս է այդ սուրբ
իրադարձության մասին ձեր վկայությունը
փոխել ձեր կյանքը:

Ցանկանում ես ավելին: (Ոչ պարտադիր)

Ինչպե՞ս կարող եմ ավելին սովորել Ջոզեֆ Սմիթի Առաջին Տեսիլքի տարբեր պատմությունների մասին:

Կարդացեք «Առաջին Տեսիլքի պատմություն-
ները», որոնք հասանելի են ChurchofJesusChrist
.org-ում:

Դիտեք «Հարցրեք Աստծուն. Ջոզեֆ Սմիթի Առա-
ջին Տեսիլքը» տեսանյութը (6:35): Այս տեսա-
նյութը պատկերում է Առաջին Տեսիլքը՝ Ջոզեֆի
պատմությունների հետ միասին:

Կարդացեք The First Vision: A Narrative
from Joseph Smith's Accounts (history
.ChurchofJesusChrist.org), որը նույնպես միա-
վորում է պատմությունները մեկ պատմու-
թյան մեջ:

Ուրիշ ի՞նչ ճշմարտություններ կարող ենք սովորել Ջոզեֆ Սմիթի Առաջին Տեսիլքից:



Կարդացեք The First Vision: Key to
Truth (Ensign, June 2017, 60–65) ըստ՝
Յոթանասունից երեք Ռիչարդ Ջ. Մեյն-
զի, ով կիսվում է մի քանի ուշագրավ
ճշմարտություններով, որոնք մենք կարող ենք
սովորել Առաջին տեսիլքից:



Մտածեք դասին Նախապատրաստվելիս

Ինչպե՞ս են այդ լրացուցիչ պատմությունները
մեծացնում Ջոզեֆ Սմիթի Առաջին Տեսիլքի

ԴԱՍ 2. ՈՒՍՈՒՑՉԻ ՆՅՈՒԹ

Առաջին Տեսիլքը

Հայր Աստվածը և Նրա Որդին՝ Հիսուս Քրիստոսը, հայտնվեցին Ջոզեֆ Սմիթին 1820 թվականին: Այս դասը նախատեսված է, որ օգնի ուսանողներին ծանոթանալ Առաջին Տեսիլքի մասին Ջոզեֆի պատմություններին, բացահայտել այն վարդապետություններն ու սկզբունքները, որոնք նրանք կարող են սովորել նրա տեսիլքից և ամրապնդել իրենց վկայություններն այն մասին, որ Ջոզեֆ Սմիթը տեսավ Հորը և Որդուն:

Նշում. Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.5–13 հատվածներում պատմվող Ջոզեֆ Սմիթի ճշմարտության որոնման պատմությունն ավելի մանրամասն կանցնենք այս դասընթացի 3-րդ դասի ընթացքում:

Ուսուցման առաջարկներ

Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը հայտնվում են Ջոզեֆ Սմիթին:

Ցուցադրեք հետևյալ խոսքերը Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.21-ից.

«Այս օրերին տեսիլքներ կամ հայտնություններ չկան»

- Ի՞նչ եք մտածում այս արտահայտության մասին:
- Ինչպիսի՞ն կլինենք ձեր կյանքը, եթե դուք հավատալիք այս հայտարարությանը:

Բացատրեք, որ այս հայտարարությունն արվել է մեթոդիստ քարոզիչի կողմից, երբ երիտասարդ Ջոզեֆ Սմիթը պատմեց նրան իր Առաջին Տեսիլքի մասին: Հանձնարարեք ուսանողներին կարդալ Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1:15-19 հատվածները և հորդորեք նրանց մտածել այն մասին, թե իր տեսածի մասին Ջոզեֆի նկարագրությունը ինչպե՞ս է հերքում այդ քարոզիչի պնդումը: Կարդալուց հետո հրավիրեք ուսանողներին կիսվել իրենց մտքերով:

ԲԱՐԵԼԱՎԵԼ ՄԵՐ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Հրավիրեք ուսանողներին կարդալ դասարանում: Դասարանային ընթերցանությունը կարող է իրականացվել տարբեր ձևերով, օրինակ՝ ուսանողները լուռ ընթերցում են

իրենց սուրբ գրությունները, մի ուսանող բարձրաձայն կարդում է, ուսանողները հերթով բարձրաձայն կարդում են հատվածները, ուսանողները միասին բարձրաձայն կարդում են և այլն:

Հետևյալ ճշմարտությունը գրեք գրատախտակին.

Հայր Աստված և Հիսուս Քրիստոսը հայտնվեցին Ջոզեֆ Սմիթին և խոսեցին նրա հետ:

Հրավիրեք մի քանի ուսանողների, ովքեր կցանկանան բերել իրենց վկայությունը Ջոզեֆի Առաջին տեսիլքի մասին՝ պատասխանել հետևյալ հարցին.

- Ինչպե՞ս եք ստացել Առաջին Տեսիլքի մասին ձեր վկայությունը:

Մենք սովորում ենք կարևոր ճշմարտություններ Առաջին Տեսիլքի պատմություններից:

Հիշեցրեք ուսանողներին, որ Ջոզեֆ Սմիթը պատմեց Առաջին Տեսիլքի մասին չորս տարբեր պատմություններ, որոնք հայտնի են մեզ: Մենք ունենք նաև այդ տեսիլքի մասին հինգ լրացուցիչ պատմություններ, որոնք գրվել են նրանց կողմից, ովքեր լսել են այն Ջոզեֆից: Ճիշտ այնպես, ինչպես առկա են Մատթեոսի, Մարկոսի, Դուկասի և Հովհաննեսի կողմից Փրկիչի կյանքի մասին գրված պատմությունների տարբերություններ, Առաջին Տեսիլքի Ջոզեֆի յուրաքանչյուր պատմություն ընդգծում է այդ դրվագի տարբեր կողմերը: Մակայն դրանք բոլորն էլ պատմում են Ջոզեֆի տեսածի և լսածի կարևոր տարբերի մասին: Որոշ մարդիկ փորձում են հերքել Առաջին Տեսիլքը՝

տարբեր պատմությունների տարբերությունների պատճառով: (Օրինակ, 1832 թվականի պատմությունն ընդգծում է, որ Ջոզեֆը ներում էր փնտրում իր մեղքերի համար և օգտագործում էր նաև «Տեր» տիտղոսը՝ Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին առանձին-առանձին անդրադառնալու փոխարեն: 1835 թվականի պատմությունը նկարագրում է, որ Երկնային Հայրը երևում է առաջին հերթին, որին հաջորդում է Փրկիչը):

Որպեսզի բացատրեք, թե ինչու այս պատմություններում կան տարբերություններ, ուսանողներին խնդրեք վերհիշել կյանքի ընթացքում իրենց հետ կատարված նշանակալի կամ իմաստալից որևէ դեպք:

- Ինչպե՞ս կարող է փոխվել ձեր պատմելաձևը՝ ելնելով այն հանգամանքից, թե ով է ձեր ունկնդիրը: Ինչպե՞ս կարող է այն փոխվել՝ ելնելով այն հանգամանքից, թե երբ և ինչու եք դուք պատմում այդ փորձառության մասին:
- Ինչպե՞ս կպատասխանեիք որևէ մեկին, ով վիճում է, որ Առաջին Տեսիլքի տարբեր պատմությունների տարբերությունները կասկածի տակ են դնում Ջոզեֆի հետ կատարվածի իսկությունը: (Անհրաժեշտության դեպքում կարող եք խրախուսել ուսանողներին մտածել այն մասին, նրանք ինչ են սովորել նախապատրաստական նյութի բաժին 2-ից):

Ցուցադրեք հետևյալ անավարտ նախադասությունը. *Առաջին Տեսիլքից մենք սովորում ենք, որ . . .*

Բացատրեք, որ մենք կարող ենք հրաշալի ճշմարտություններ սովորել Առաջին Տեսիլքի մասին Ջոզեֆի բոլոր պատմություններից: Հիշեցրեք ուսանողներին, որ նրանց հրավիրել են նախապատրաստվել այս դասին՝ կազմելով այնպիսի ճշմարտությունների մի ցուցակ, որոնք նրանք սովորել են Առաջին Տեսիլքի այս պատմություններից: Անհրաժեշտության դեպքում ուսանողներին ժամանակ հատկացրեք՝ վերանայելու իրենց նշածը և այն ճշմարտությունները, որոնք նկատել են: (Միգուցե ուսանողներին ժամանակ հատկացնեք, որ ուսումնասիրեն պատմությունները դասարանում, եթե համատեղում եք առաջին երկու դասերը և ուսանողները չեն կարողացել պատրաստվել դասին):

Հրավիրեք ուսանողներին կիսվել իրենց գտած մի քանի ճշմարտություններով, ինչպես նաև այդ ճշմարտությունների մասին ուսուցանող հատվածով, հատվածներով կամ մասով: Ուսանողների պատասխանները գրեք ձեր ցուցադրած անավարտ նախադասության տակ:

Նշում. Ճշմարտությունների օրինակներ, որոնք մենք կարող ենք սովորել Ջոզեֆ Սմիթի առաջին տեսիլքից, կարող ենք կարդալ “The First Vision: Key to Truth” (*Ensign*, June 2017, 60–65) Երեք Ռիչարդ Ջ. Մեյնզի հոդվածում, որի հղումը մեջբերված է նախապատրաստական նյութի «Ցանկանո՞ւմ ես ավելին» բաժնում:

Մինչ ուսանողները կիսվում են իրենց գտած ճշմարտություններով, կարող եք նրանց ուղղել այս ստուգիչ հարցերից մեկը կամ մի քանիսը.

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր իմանալ և հասկանալ այս ճշմարտությունը:
- Այդ ճշմարտության մասին գիտելիքն ինչպե՞ս է օրհնել ձեզ:
- Ի՞նչ եք սովորում Առաջին Տեսիլքի ձեր ուսումնասիրությունից Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի մասին:

Մենք կարող ենք խորացնել Առաջին Տեսիլքի մասին մեր վկայությունը:

Բացատրեք, որ Ջոզեֆի համայնքի բազմաթիվ մարդիկ մերժեցին նրա վկայությունն այն մասին, ինչ նա տեսել և լսել էր, իսկ շատերը նրան հետապնդեցին դրա համար (տես Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.21–23):

Հանձնարարեք ուսանողներին կարդալ Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1:24-25 հատվածները և ուշադրություն դարձնել, թե Մարգարե Ջոզեֆ Սմիթն ինչպես պատասխանեց այն մարդկանց, ովքեր ծաղրեցին տեսիլքի մասին նրա վկայությունը:

- Ջոզեֆ Սմիթի վկայության ո՞ր արտահայտություններն առանձնացան ձեզ համար: Ինչո՞ւ:
- Ինչպե՞ս կարող է Ջոզեֆ Սմիթի օրինակն օգնել ձեզ, երբ Առաջին Տեսիլքի և Հիսուս Քրիստոսի

վերականգնված ավետարանի ձեր վկայությամբ
ենթարկվի ծաղրի կամ մարտահրավերների:

Ցուցադրեք կամ բաժանեք Նախագահ Գորդոն Բ.
Հինքլիի հետևյալ խոսքերը և հանձնարարեք մի
ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



Ավելի քան մեկ դար ու կես թշնամիներ,
քննադատներ և որոշ ինքնակոչ գիտ-
նականներ վատնել են իրենց կյանքը՝
փորձելով հերքել այդ տեսիլքի վավերու-
թյունը: Իհարկե, սրանք չեն կարող հաս-
կանալ դա: Աստծո բաները հասկացվում
են միայն Աստծո Հոգու միջոցով: Համեմա-
տական մեծության ոչինչ չի եղել սրանից
հետո, երբ Աստծո Որդին մահկանացու
կյանքում քայլեց Երկրի վրա: Լինելով մեր
հավատքի և կազմակերպության հիմ-
նաքար, առանց դրա մենք ոչինչ չունենք:
Դրա հետ միասին մենք ունենք ամեն ինչ:

Շատ բան է գրվել, շատ բան է գրվե-
լու՝ այն մեկ ուրիշ կերպ ձևակերպելու
համար: Բայց Սուրբ Հոգու վկայությու-
նը, որը բազմաթիվ մարդիկ զգացել են
տարիներ շարունակ, վկայում է, որ դա
ճշմարիտ է, որ դա պատահել է այն-
պես, ինչպես Ջոզեֆ Սմիթն է պատմել:
(Gordon B. Hinckley, "Four Cornerstones of
Faith," *Ensign*, Feb. 2004, 5):

Խրախուսեք ուսանողներին, ովքեր ցանկանում են
ավելի խորը վկայություն ունենալ Ջոզեֆ Սմիթի և
Առաջին Տեսիլքի մասին, հետևել ճշմարտությունը
որոնելու Ջոզեֆի օրինակին՝ շարունակելով ուսում-
նասիրել այս պատմությունները և խնդրելով, որ
Աստված Սուրբ Հոգու միջոցով հաստատի Առաջին
Տեսիլքի իսկությունը: Կարող եք ավարտել դասը և
կիսվել Առաջին Տեսիլքի և Մարգարե Ջոզեֆ Սմիթի
միջոցով ավետարանի Վերականգնման մասին
ձեր վկայությամբ:

Հաջորդ անգամ

Հորդորեք ուսանողներին մտածել այն դժվարին
հարցերի մասին, որոնք նրանք կամ ուրիշներն
ունեցել են Եկեղեցու ուսմունքների, սովորույթների
կամ պատմության մասին: Բացատրեք, որ հաջորդ
դասի ժամանակ նրանք կսովորեն՝ ինչ անել, երբ
դժվար հարցեր կամ խնդիրներ են առաջանում:
Խրախուսեք ուսանողներին ուսումնասիրել 3-րդ
դասի նախապատրաստական նյութը, որ նրանք
պատրաստ լինեն քննարկելու սկզբունքներ, որոնք
կօգնեն նրանց ավելի մեծ հոգևոր գիտելիքներ
ձեռք բերել:



ԴԱՍ 3. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱՊԱՏԱՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Ձեռք բերել հոգևոր գիտելիքներ

Երբեմն մենք բացահայտում ենք նոր տեղեկություններ, որոնք զարմացնում են մեզ կամ հարցեր են առաջանում Եկեղեցու վարդապետության, սովորությունների և պատմության վերաբերյալ: Ձեր հավատը կարող է ամրապնդվել կամ թուլանալ՝ կախված նրանից, թե ինչպես եք կազմում ձեր հարցերը և ում եք դիմում պատասխանների համար: Երբ ուսումնասիրեք, թե ինչպես ձեռք բերել հոգևոր գիտելիքներ, հստակեցրեք այնպիսի սկզբունքներ, որոնք կարող են օգնել, երբ Տիրոջ ձևով պատասխաններ եք փնտրում:

ԲԱԺԻՆ 1

Արդյո՞ք նորմալ է Եկեղեցու մասին հարցեր ունենալը:

Մուրբ գրությունները բազմիցս խրախուսում են մեզ հարցեր տալ Աստծուն (տես Հակոբոս 1.5, Վարդապետություն և Ուխտեր 88.63): Առաջին Նախագահությունում ծառայելիս Նախագահ Դիտեր Ֆ. Ուլստորֆն ուսուցանել է.



Իմ սիրելի՝ երիտասարդ ընկերներ, մենք հարցադրումներ կատարող ժողովուրդ ենք: Մենք միշտ էլ այդպիսին ենք եղել, քանի որ գիտենք, որ հարցերը տանում են ճշմարտության իմացությանը: Այդպես է դրվել Եկեղեցու սկիզբը, մի երիտասարդ տղամարդու կողմից, ով հարցեր ուներ: Իրականում ես վստահ չեմ, թե ինչպես կարող է մեկը բացահայտել ճշմարտությունը՝ առանց հարցեր տալու: . . .

Հարցաքննությունը վկայության ծագման վայրն է: . . . Հարցեր տալը թույլության նշան չէ, այն աճի նշան է: Այն նախորդում է աճին: (“The Reflection in the Water,” Church Educational System devotional [Nov. 1, 2009], broadcasts.ChurchofJesusChrist.org)

Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսն ուրախությամբ ուզում են մեզ գիտելիք և հասկացողություն տալ: Մենք հոգևորապես աճում ենք, երբ հարցեր ենք տալիս և անկեղծորեն ու հավատքով պատասխաններ ենք փնտրում: Հիշեք, որ քանի որ Տերն օգնում է մեզ սովորել հավատ ունենալ Նրա հանդեպ, միգուցե Նա չտա բոլոր հարցերի պատասխանները, որոնք մենք ունենք այս կյանքում: Իրականում, պարտադիր չէ, որ մենք գտնենք բոլոր հարցերի պատասխանները, որպեսզի վկայություն ստանանք և կանգնենք որպես ճշմարտության վկաներ: Բայց անկեղծ հարցերը կօգնեն, որ մենք շարունակենք սովորել և աճել:



Գրի առեք ձեր մտքերը

Հատկացված տողերում գրեք մի քանի հարց, որոնք դուք լսել եք կամ ունեք՝ կրոնի, հոգևոր վիճակի, ավետարանի կամ Եկեղեցու վերաբերյալ:

Ուսանողներ. Այս հարցերից մեկը կամ երկուսը տեքստային հաղորդագրության կամ էլ-նամակի միջոցով ուղարկեք ձեր ինստիտուտի ուսուցիչին: Նա կպահի ձեր հարցերը անանուն, բայց կարող է դրանք օգտագործել դասի մեջ՝ փորձելով պատասխաններ գտնել Տիրոջ ձևով: Այդ հարցերը կօգնեն նաև ձեր ուսուցիչին ավելի լավ հասկանալ ձեր մտահոգությունները, և թե ինչպես դրանք կարող են քննարկվել դասընթացի ընթացքում: Երբ դուք շարունակեք ուսումնասիրել, փնտրեք սկզբունքներ, որոնք կարող են սովորեցնել ձեզ, թե ինչպես դժվարին հարցերի պատասխաններ փնտրեք:

ԲԱԺԻՆ 2

Տերն ինչպե՞ս կուզենար, որ ես հարցերի պատասխաններ փնտրեի և հոգևոր գիտելիքներ ձեռք բերեի:

Հետևյալ սկզբունքները կօգնեն հարցերի պատասխաններ փնտրել և մտահոգությունները հարթել Տիրոջ ձևով:

1. **Գործեր հավատքով:**
2. **Քննեք հասկացությունները և հարցերը հավերժության հեռանկարից:**
3. **Չգտեք մեծացնել հասկացողությունը աստվածային աղբյուրների միջոցով:**

Երբ ուսումնասիրեք ներքևում բերված հոգևոր գիտելիք ձեռք բերելու այս սկզբունքները, կարող եք նշել այն նշանակալի հայտարարությունները կամ կետերը, որոնք առանձնանում են ձեզ համար, որ կարողանաք կիսվել դասարանում և հետագայում անդրադառնալ դրանց:

Գործեր հավատքով

Հավատքը սկիզբ է առնում այն համոզմունքից, որ Աստված ապրում է և գիտի բոլոր բաները և բոլոր ճշմարտությունների աղբյուրն է: Մենք գործում ենք հավատքով, երբ ընտրում ենք վստահել Աստծուն և դառնալ դեպի Նա՝ անկեղծ աղոթքի, Նրա ուսմունքներն ուսումնասիրելու և Նրա պատվիրաններին հնազանդվելու միջոցով: Տերը հրավիրում է մեզ «չկասկածել, այլ [իհնել] հավատացող» (Մորմոն 9.27): Երբ հավատքով ապրելու սովորույթ ձևավորենք մեր կյանքում, մենք ամուր հիմք կկառուցենք Հիսուս Քրիստոսի վրա, որը երաշխիք կհանդիսանա, որ մենք ամուր կանգնենք, նույնիսկ այն ժամանակ, երբ հանդիպենք դժվարին հարցերի և մարտահրավերների (տես Հելաման 5.12):

Երբ հանդիպում եք որևէ նյութի կամ պնդման, որը դուք չեք հասկանում կամ կասկածի տակ է դնում ձեր հավատքը, հարկավոր չէ կասկածի տակ դնել ձեր վկայությունը կամ հոգևոր նախկին փորձառությունները: Այդպիսի պահերի համար Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը խորհուրդ է տվել. «Խուճապի մի մատնվեք ու մի նահանջեք: Մի կորցրեք ձեր վստահությունը: Մի մոռացեք, թե մի ժամանակ ինչ զգացումներ եք ունեցել: Անվստահության մի մատնեք ձեր ունեցած [հոգևոր] փորձառություն[ները]» («Remember How You Felt,” *New Era*, Aug. 2004, 6): Փոխարենը՝ «ամուր բռնվեք արդեն ունեցած գիտելիքից և ամուր կանգնեք, մինչև որ լրացուցիչ գիտելիք կգա» (Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Հաւատում եմ, Տէր», *Ensign* կամ *Liahon*, մայիս 2013, 94):

Երբ դուք «ամուր եք բռնվում արդեն ունեցած գիտելիքից», հիշեք, որ հարցեր տալիս և պատասխաններ որոնելիս ձեր վերաբերմունքը և միտումը մեծ չափով կազդեն Սուրբ Հոգու միջոցով սովորելու ձեր ունակության վրա: Այդ գործընթացը պահանջում է խոնարհություն, անկեղծություն և անկեղծ միտում՝ գործելու համաձայն այն ճշմարտության, որը մենք ստանում ենք Տիրոջից:



Երբ Ջոզեֆ Սմիթը հայտնվեց մի մթնոլորտում, որը լի էր «տարբեր դավանանքների միջև եղած տարաձայնություններով ու վիճաբանություններով» (Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.8), նա կարող էր հեշտությամբ հուսահատվել, թողնել, որ կասկածը լցնի իր սիրտը և «[մնալ] խավարի ու անորոշության մեջ» (հատված 13): Փոխարենը՝ նա քննեց սուրբ գրությունները և խորապես տպավորվեց Հակոբոս 1.5 հատվածի «խնդրե Աստուածանից» ուղերձից: Հավատքով գործելով, նա զնաց անտառ և «ծնկի իջավ» և սկսեց [սրտի] ցանկությունները հայտնել Աստծուն» (Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.15): Նրա անկեղծ աղոթքին պատասխան տրվեց երկնային տեսիլքով: Նա դուրս եկավ անտառից «[իր] համար [պարզելով]» իր հարցերի պատասխանները (հատված 20):



Մտածեք դասին Նախապատրաստվելիս

Մտածեք ավելի վաղ ձեր գրած հարցերից մեկի մասին: Ինչպե՞ս կարող եք դուք կամ այս հարցի մասին մտածող այլ անձինք գործել հավատքով, երբ պատասխաններ ու հետագա առաջնորդություն եք փնտրում:

Քննեք հասկացությունները և հարցերը հավերժության հեռանկարից

Վարդապետական հասկացությունները, հարցերը և հասարակական խնդիրները հավերժության

տեսանկյունից քննելու համար մենք խորհում ենք դրանց մասին փրկության ծրագրի և Փրկիչի ուսմունքների համատեքստում: Մենք փնտրում ենք Սուրբ Հոգու օգնությունը, որպեսզի տեսնենք իրերն այնպես, ինչպես Տերն է տեսնում (տես Ա Կորնթացիա 2.5, 9–11): Այս մոտեցումն օգնում է մեզ իրերը տեսնել Տիրոջ տեսանկյունից, այլ ոչ թե աշխարհիկ տեսանկյունից: Մենք կարող ենք դա անել նմանատիպ հարցեր տալով. «Ես ի՞նչ գիտեմ Երկնային Հոր, Նրա ծրագրի և Իր զավակների հետ Նրա հարաբերությունների մասին» և «Ավետարանի ո՞ր ուսմունքներն են վերաբերում կամ պարզաբանում այդ հասկացությունը կամ խնդիրը»:

Հարցերը, որոնք վերաբերում են պատմական իրադարձություններին, նույնպես պետք է քննվեն հավերժական տեսանկյունից: Դա կարող է օգնել նաև քննել պատմական հարցերը պատմական համապատասխան համատեքստում, խորհելով տվյալ ժամանակաշրջանի մշակույթի և վարքագծի կանոնների մասին, ոչ թե պարտադրելով ներկայիս հեռանկարներն ու դիրքորոշումները: Օրինակ, եթե գտել եք 1800-ականներից մի նախնու, ով ամուսնացել է 14 կամ 15 տարեկան հասակում, գուցե դուք դա համարեք ծայրահեղ վաղ ամուսնություն, եթե չհասկանաք, որ այդ ժամանակահատվածում դա արտասովոր չէր:

Կարևոր է հիշել, որ պատմական մանրամասները չեն կրում արարողությունների, ուխտերի և վարդապետության փրկարար գործությունը: Քիչ նշանակալից մանրուքներով շեղվելու արդյունքում Վերականգնման հրաշքն անտեսելը նման է հրաշալի նվերն անտեսելուն՝ նվերի տուփն ուսումնասիրելու վրա ժամանակ ծախսելու հետևանքով:



Գրի առեք ձեր մտքերը

Մտածեք ավելի վաղ ձեր գրած հարցերից մեկի մասին: Այդ հարցն ինչպե՞ս կարող եք դիտել հավերժության տեսանկյունից: _____

Ձգտեք մեծացնել ձեր հասկացողությունը աստվածայնորեն սահմանված աղբյուրների միջոցով

Պատկերացրեք, որ մի անծանոթ ձեր սիրելիներից մեկին մեղադրում է սխալ գործելու մեջ: Ինչպե՞ս կհասկանաք, արդյոք նրանք ճշմարտությունն են ասում, թե մոլորության մեջ են գցում: Ի՞նչ վտանգ է պարունակում անծանոթին հավատալը՝ առանց խնդրի հետազա ուսումնասիրման:



Ինտերնետի միջոցով մենք աննախադեպ հասանելիություն ունենք դեպի լավ տեղեկատվություն: Միևնույն ժամանակ, համացանցը մեզ ենթարկում է ոչ հուսալի տեղեկատվության հարձակման: Քանի որ համացանցն ինքնաբերաբար չի գտում մեզ համար ապակողմնորոշող, խաբուսիկ կամ կեղծ տեղեկությունները, մենք այն պետք է ինքներս գտենք: Առաջին Նախագահությունից Նախագահ Դալլին Հ. Օուքսը նախագգույնացրել է. «Մենք պետք է զգույշ լինենք ճշմարտությունը փնտրելիս և դա գտնելու համար անհրաժեշտ աղբյուրներն ընտրելիս» («Ճշմարտությունը և ծրագիրը», *Ensign* կամ *Liahonuu*, նոյեմբեր 2018, 25):

Հոգևոր գիտելիքներ ձեռք բերելու ընթացքում Տերը սահմանել է աղբյուրներ, որոնց միջոցով Նա Իր զավակներին հայտնում է ճշմարտությունը և առաջնորդում է նրանց: Այդ աստվածայնորեն նշանակված աղբյուրներն են՝ Քրիստոսի լույսը, Մուրբ Հոգին, սուրբ գրությունները, Եկեղեցու ղեկավարները և ընտանիքի հավատարիմ անդամները: Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Քվորումը՝ այսօր երկրի վրա Տիրոջ մարգարեները, ճշմարտության կենսական աղբյուր են հանդիսանում: Տերն ընտրել է կարգել է այդ անհատներին որպես Իր խոսնակներ:

Մենք կարող ենք սովորել ճշմարտությունը նաև այլ վստահելի աղբյուրներից: Այնուամենայնիվ, անկեղծորեն ճշմարտություն փնտրողները պետք է զգուշանան տեղեկությունների ոչ հավաստի աղբյուրներից: Անհուսալի աղբյուրները զանազանելը և դրանցից խուսափելը կարող են պաշտպանել մեզ ապատեղեկատվությունից և նրանցից, ովքեր փորձում են ոչնչացնել հավատքը: Հետևյալ հարցերն ու ցուցումները կարող են օգնել, երբ դուք որոշեք աղբյուրների հուսալիությունը.

Աղբյուրները գնահատելու հարցեր

1. Որո՞նք են հեղինակի որակավորումները, մտադրությունները և հնարավոր կողմնակալությունը:

Առաջին Նախագահությունից Նախագահ Դալլին Հ. Օուքսն ուսուցանել է, որ պետք է «նաև զգուշանալ, թե որն է տեղեկությունը տրամադրողի շարժառիթը: . . . Մեր անձնական որոշումները պետք է հիմնված լինեն այն աղբյուրների տվյալների վրա, որոնք առնչվում են թեմային և գերծ են եսասեր շարժառիթներից» (Դալլին Հ. Օուքս, «Ճշմարտությունը և ծրագիրը» *Ensign* կամ *Liahonuu*, նոյեմբեր 2018, 25):

2. Հեղինակը որքա՞ն սերտորեն է կապված նկարագրվող իրադարձություններին:

Երբ աղբյուրը եկեղեցու պատմությունից ինչ-որ բան է մեջբերում, հարցրեք ինքներդ ձեզ, թե որքան հեռու է աղբյուրը գտնվում քննարկվող իրադարձությունից: Երկրորդ կամ երրորդ կողմի պատմությունները հաճախ քիչ վստահելի են:

3. Արդյո՞ք հեղինակն ապակողմնորոշելու համար միտումնավոր է անտեսել առկա ապացույցները:

Որոշ հեղինակներ միտումնավոր բաց են թողնում կարևոր փաստերը և անտեսում են կարևոր ապացույցները՝ իրենց հատուկ տեսակետն առաջ տանելու համար:

4. Արդյո՞ք այս աղբյուրում հասցեագրված ուսմունքներն ու իրադարձությունները ներկայացվում են իրենց ժամանակի, վայրի և հանգամանքի պատշաճ համատեքստում:

Որոշ ուսմունքներ և պատմական իրադարձություններ կարող են շփոթեցնող

լինել, երբ դրանք դուրս են բերվում իրենց ժամանակի և վայրի համատեքստից: Պատմական համատեքստում նաև ներառվում են նույն ժամանակաշրջանում տեղի ունեցող այլ իրադարձություններ (ինչպիսիք են՝ պատերազմները, տնտեսական ճգնաժամերը և հասարակական-քաղաքական շարժումները) և տվյալ ժամանակի և վայրի մշակույթն ու ժողովրդագրությունը:

5. Արդյո՞ք այդ ուսմունքներն ու իրադարձությունները աջակցվում են լրացուցիչ հուսալի աղբյուրների կողմից:

Այլ հուսալի աղբյուրներից աջակցությունը կօգնի հաստատել վարդապետության և պատմական իրադարձությունների ճշգրտությունը:



Մտածեք դասին Նախապատրաստվելիս

Մի քանի րոպե հատկացրեք և Եկեղեցու կայքէջում, Ավետարանի գրադարան հավելվածում կամ սուրբ գրություններում փնտրեք այնպիսի նյութեր, որոնք կարող են օգնել ձեզ կամ ձեր ծանոթին ավելի լավ հասկանալ ավելի վաղ ձեր գրանցած հարցերը: Խորհեք, թե ինչ դեր է ունեցել Սուրբ Հոգին ձեր անձնական կյանքում, երբ գնահատել եք աղբյուրները և որոնել ճշմարտություն:

Ցանկանում ես ավելին: (Ոչ պարտադիր)

**Որտեղի՞ց կարող եմ ավելին սովորել
հոգևոր գիտելիքներ ձեռք բերելու
սկզբունքների մասին:**

Վարդապետության սերտման հիմնարար փաստաթուղթը (ChurchofJesusChrist.org)

պարունակում է լրացուցիչ տեղեկություն
հոգևոր գիտելիքներ ձեռք բերելու մասին:

Որտեղի՞ց կարող եմ սովորել այն մարդկանց հետ տեղի ունեցած փորձառությունների մասին, ովքեր դժվար հարցեր են ունեցել:

Երեց Թոդ Դ. Քրիսթոֆերսոնն իր «Կայուն և հաստատուն Քրիստոսի հավատքում» (*Ensign* կամ *Liahona*, նոյեմբեր 2018, 30–33) ելույթում պատմում է մի մարդու մասին, ում հավատքը փորձվել է ընտանիքի որոշ անդամների կողմից (տեսանյութը դիտեք 9:40 - 11:00 ժամանակահատվածում):

Նմանատիպ ելույթները նույնպես կարող են օգնել, որ դուք ավելի լավ հասկանաք և կիրառեք հոգևոր գիտելիքներ ձեռք բերելու սկզբունքները:

- Դեյվիդ Ֆ. Էվանս, «Ճշմարտությունը բոլոր բաների մասին», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2017, 68–70:
- Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Հաւատում եմ, Տէր», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2013, 93-95:
- Sheri L. Dew, “Will You Engage in the Wrestle?” (Brigham Young University–Idaho devotional, May 17, 2016), byui.edu/devotionals
- Lawrence E. Corbridge, “Stand Forever” (Brigham Young University devotional, Jan. 22, 2019), speeches.byu.edu

Ինչպե՞ս կարող եմ վերաձևակերպել հարցերը, որպեսզի պատասխանեմ դրանց հավերժության տեսանկյունից:

«Քննել հասկացությունները և հարցերը հավերժության տեսանկյունից» տեսանյութը (ChurchofJesusChrist.org) օրինակ է հանդիսանում նրա, թե ինչպես կարող ենք վերաձևակերպել հարցերը և խնդիրները, որպեսզի պատասխանենք դրանց հավերժության տեսանկյունից:

ԴԱՍ 3. ՈՒՍՈՒՑԶԻ ՆՅՈՒԹ

Ձեռք բերել հոգևոր գիտելիքներ

Տերը հայտնել է սկզբունքներ, որոնք կարող են առաջնորդել մեզ ճշմարտության մեր որոնումներում (տես «Ձեռք բերել հոգևոր գիտելիքներ», *Հայրապետության սերունդներ հիմնադրար փաստաթուղթ* [2018]): Այս դասը կբարձրացնի ուսանողների կարողությունը՝ կիրառելու հոգևոր գիտելիքներ ձեռք բերելու սկզբունքները և գնահատելու աղբյուրների հուսալիությունը:

ԲԱՐԵԼԱԿԵԼ ՄԵՐ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Ուսանողներին տեղեկացրեք ուսման արդյունքների մասին: Ուսման արդյունքները հայտարարություններ են, որոնք սահմանում են, թե ուսանողները ինչ գիտելիքներ և հմտություններ պետք է կարողանան սովորել ուսումնական փորձից: Այս դասընթացի յուրաքանչյուր դասի արդյունքները նշված են դասի նախաբանում: Կարող եք ուսանողներին տեղեկացնել այդ արդյունքների մասին: Թող որ դասի արդյունքներն առաջնորդեն ձեզ, երբ հարմարեցնում եք դասի նյութը և գնահատում ուսանողների ուսումնական փորձի հաջողությունը:

Գրատախտակի վրա գրեք հետևյալ նախադասությունը. *Ես կսլոտի եմ հոգևոր գիտելիքներ ձեռք բերել, երբ . . .*

Խնդրեք ուսանողներին նախապատրաստական նյութից գտնել այն երեք սկզբունքները, որոնք լրացնում են այդ նախադասությունը: (Երբ ուսանողները պատասխանեն, համոզվեք, որ հետևյալ սկզբունքներն են բացահայտվել և ցուցադրվել.

1. **Գործեն հավատքով:**
2. **Քննեն հասկացությունները և հարցերը հավերժության հեռանկարից:**
3. **Ձգտեն մեծացնել հասկացողությունը աստվածային աղբյուրների միջոցով:**

Խնդրեք ուսանողներին բացատրել, թե ինչ են նրանք հասկանում այդ սկզբունքներից յուրաքանչյուրի դեպքում: Անհրաժեշտության դեպքում մի փոքր ժամանակ տրամադրեք, որպեսզի նրանք վերանայեն նախապատրաստման նյութը:

Հանձնարարեք ուսանողներին կարդալ Զոգեֆ Սմիթ - Պատմություն 1:11–14 հատվածները և ուշադրություն դարձնել, թե ինչպես են Զոգեֆ Սմիթի գործողությունները լուսաբանում հոգևոր գիտելիքներ ձեռք բերելու այդ սկզբունքները, երբ նա իր հարցերի և մտահոգությունների պատասխանն էր փնտրում: Խնդրեք մի քանի ուսանողների կիսվել իրենց կարծիքներով:

Ընտրեք և ցուցադրեք ուսանողների կողմից ստացված մեկ կամ մի քանի հարցեր, որոնց ժամանակ նրանք կարող են կիրառել հոգևոր գիտելիքներ ձեռք բերելու սկզբունքները (տես նախապատրաստական նյութի «Գրեք ձեր մտքերը» վարժությունը բաժին 1-ում): Բացատրեք, որ թեև այս դասի ընթացքում դուք կկարողանաք օգտագործել

Ուսուցման առաջարկներ

Տերն օրինակ է տրամադրել հոգևոր գիտելիքներ ձեռք բերելու համար:

Ցուցադրեք հետևյալ հարցերը. *Հայրո՞ւ եմք Եկեղեցու մասին հարցեր ունենալ: Ինչո՞ւ այդ, կամ ինչո՞ւ ոչ:* Երկու կամ երեք ուսանողների հրավիրեք կիսվել իրենց մտքերով:

Դասարանով կարդացեք Զոգեֆ Սմիթ - Պատմություն 1.8-10 և ուշադրություն դարձրեք այն բառերին և արտահայտություններին, որոնց օգնությամբ Զոգեֆը նկարագրեց իր կրոնական հարցերը և մտահոգությունները: Հրավիրեք ուսանողներին կիսվել, թե Զոգեֆի պատմությունից ինչ հասկացան և ինչ սովորեցին հարցեր տալու վերաբերյալ:

ներկայացված հարցերից միայն մի քանիսը, հետագայում դասընթացի ուսումնական ծրագրում հնարավորություններ կփնտրեք ստացված մյուս հարցերին անդրադառնալու համար:

Նշում. Այս վարժության նպատակն է ուսանողներին հնարավորություն ընձեռել խոսել այն մասին, թե նրանք ինչպես կիրառեն «Ձեռք բերել հոգևոր գիտելիքներ» բաժնի սկզբունքները տարբեր հարցերի ժամանակ: Այն նախատեսված չէ որոշակի հարցերի պատասխաններ տրամադրելու համար: Զգուշացեք, որ ամբողջ ժամանակը չվատնեք մեկ հարցի կամ խնդրի վրա:

Քննարկեք, թե ուսանողներն ինչպես կօգտագործեն գրատախտակին ցուցադրված սկզբունքները՝ նշված հարցի կամ հարցերի պատասխանները գտնելու համար: Ստորև շարադրված ստուգիչ հարցերը կարող եք ընդգրկել ձեր քննարկման մեջ.

- Ինչպե՞ս կարող ենք գործել հավատքով, երբ մենք փորձենք պատասխան գտնել այս հարցին:
- Հավերժության տեսանկյունից քննելով, ինչպե՞ս կարող ենք պատասխանել այս հարցին: Ի՞նչ գիտենք Երկնային Հոր և Փրկության Նրա ծրագրի մասին, որն օգնում է մեզ այս հարցը դիտարկել հավերժության տեսանկյունից:
- Աստվածային ի՞նչ աղբյուրներ կարող են օգնել, որ ավելի լավ հասկանանք այս թեման: Ուրի՞շ ինչ հուսալի աղբյուրներ կարող են օգտակար լինել: (**Նշում.** Օգտակար կլինի, որ ուսանողներին ցույց տաք Ավետարանի թեմաներ էջը՝ ChurchofJesusChrist.org կայքում, որպեսզի ցույց տաք մի հուսալի աղբյուր, որը նաև մատնանշում է հատվածների հղումներ և մարգարեական ելույթներ):

Երկու կամ երեք ուսանողների հրավիրեք կիսվել, թե «Ձեռք բերել հոգևոր գիտելիքներ» բաժնի երեք սկզբունքներն ինչպես են օգնել նրանց, երբ նրանք փնտրել են հոգևոր գիտելիքներ:

Մենք կարող ենք գնահատել աղբյուրների հուսալիությունը:

Ցույց տվեք «Աստվածայնորեն նշանակված աղբյուրներ» տեսանյութի մի հատված (ժամանակ՝ 0:00 - 4:19):

Հրավիրեք ուսանողներին ուշադրություն դարձնել, թե տեղեկատվության ո՞ր աղբյուրներն են առավել հուսալի և որոնք են ունակ վնասելու ճշմարտության մասին մեր հասկացողությունը:

Տեսակյուրդ դադարեցնելուց հետո կարող եք նմանատիպ մի քանի հարց տալ, որոնք կօգնեն ուսանողներին քննարկել աստվածային աղբյուրների, հուսալի աղբյուրների և ոչ հուսալի կամ նույնիսկ կործանարար աղբյուրների միջև եղած տարբերությունները:

- Ի՞նչ մաքուր աղբյուրներից կարող ենք պատասխաններ փնտրել:
- Ինչպե՞ս եք հասկանում, որ տեղեկատվության աղբյուրն է հուսալի, և որը՝ ոչ:
- Ի՞նչ եք անում, երբ բախվում եք տեղեկատվության աղբյուրների, որոնք հավատքը ոչնչացնելու նպատակ ունեն:

Որպեսզի եկեղեցու պատմությունն ուսուցանելիս ցույց տաք հուսալի աղբյուրներ օգտագործելու կարևորությունը, հորդորեք ուսանողներին պատկերացնել հետևյալ իրավիճակը. *Դուք ասելի շատ տեղեկություններ եք փնտրում Մոլմոնի Գրքի երեք վկաների վերաբերյալ: Որո՞նքնու ընթացքում դուք տեսնում եք Ստեֆեն Բուռնեի հետևյալ հայտարարությունը, ով ասլորել է Մարտին Հարրիսի ժառանգակներում, և վստահ չեք՝ արդյոք հայտարարությունը ճիշտ է, թե՛ ոչ:*

Ես երկար ժամանակ և մտածված կերպով անդրադարձել եմ այս եկեղեցու պատմությանը և կշռադատել եմ այդ ապացույցը: . . . Բայց երբ ես լսեցի, որ Մարտին Հարրիսը հրապարակավ հայտարարեց, որ ինքը երբեք չէր տեսել թիթեղներն իր աչքերով, միայն տեսիլքի մեջ կամ երևակայությամբ էր տեսել դրանք, և [ոչ էլ] Օլիվերը ու Դեյվիդը . . . իմ վկայության վերջին հիմքը խարխալեց: (Stephen Burnett, in Richard Lloyd Anderson, *Investigating the Book of Mormon Witnesses* [1981], 155):

- Ի՞նչ քայլեր կարող եք ձեռնարկել նախքան որոշում կայացնելը՝ արդյո՞ք ընդունել, թե չընդունել Ստեֆեն Բուռնեի պնդումը Մարտին Հարրիսի մասին:

Հորդորեք ուսանողներին պատմել, թե նրանք ինչ սովորեցին աղբյուրների գնահատման մասին

նախապատրաստական նյութի հետևյալ բաժնից՝ «Գնահատման աղբյուրների հարցեր»:

Հաշվի առնելով աղբյուրների գնահատման այդ ցուցումները, ուսանողներին բաժանեք «Ստեֆեն Բուռնեի հայտարարության պատմական անցյալը» օժանդակ նյութը և հրավիրեք ուսանողներին (դասարանով կամ փոքր խմբերով) փնտրել տեղեկություններ, որոնք կօգնեն նրանց գնահատել Ստեֆեն Բուռնեի մեղադրանքի հավաստիությունը, որ Մարտին Հարրիսը չէր տեսել Ոսկե թիթեղները:

Ստեֆեն Բուռնեի հայտարարության պատմական անցյալը

Ստեֆեն Բուռնեն Եկեղեցուն է միացել 1830 թվականին և երեք է կարգվել 1831 թվականին: 1832-1834 թթ. նա ծառայել է Ամերիկայի Միացյալ Նահանգների միսիայում (տես «Burnett, Stephen,» The Joseph Smith Papers, միջանկյալ բովանդակություն): 1838 թվականին նա լքեց Եկեղեցին և կարծում էր, որ այն «ստախոսության և խաբեբայության մի ամբողջ տեսարան էր»:

Թեև Բուռնեն անձամբ ճանաչում էր Մարտին Հարրիսին, բայց նա երեք կամ ութ Վկաներից մեկը չէր:

1838 թվականին Բուռնեն գրեց մի նամակ, որում նա պնդում էր, որ Մարտին Հարրիսն ասել է, որ «ինքը երբեք չէր տեսել թիթեղները իր սեփական աչքերով, միայն տեսիլքի մեջ կամ երևակայությամբ էր տեսել դրանք»: Բուռնեն գրել է, որ երեք ուրիշ մարդիկ «համաձայնվել են» նրա պատմության հետ: Այդ երեք մարդիկ նույնպես հեռացան Եկեղեցուց:

Մարտին Հարրիսը կտրականապես դեմ էր այն ձևին, որով Բուռնեն նկարագրում էր իր վկայությունը, և իր ողջ կյանքի ընթացքում շարունակեց վկայել Մորմոնի Գրքի ճշմարտացիության մասին:

Ի տարբերություն Բուռնեի պատմության, «Մարտին Հարրիսի հետ տեղի ունեցած բազմաթիվ հարցազրույցներ ապացուցում են, որ նրա [Հարրիսի] ուժեղ համոզվածությունը երբեք չտատանվեց՝ 1829 թվականի հրեշտակների և թիթեղների մասին նրա

տեսիլքից սկսած՝ մինչև 1875 թվականի նրա մահվան վերջին պահը»: 1871 թվականին գրված մի անձնական նամակում Հարրիսը հայտարարել է. «Ոչ ոք երբեք ինձանից չի լսել, որ ես որևէ կերպ հերքեմ Մորմոնի Գրքի ճշմարտացիությունը, հրեշտակի սպասավորությունը, որը ցույց տվեց ինձ թիթեղները, և Հիսուս Զրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կազմավորումը» (Richard Lloyd Anderson, *Investigating the Book of Mormon Witnesses* [1981], 107–20, 155–57):

Երբ ուսանողները բավարար ժամանակ ունենան այդ օժանդակ նյութը կարդալու և քննարկելու համար, տվեք հետևյալ հարցերը.

- Այս օժանդակ նյութից ո՞ր տեղեկություններն են կասկածի տակ դնում Ստեֆեն Բուռնեի հայտարարության հուսալիությունը:
- Բացի աղբյուրների հավաստիությունը ստուգելուց, ուրիշ ինչպե՞ս կարող եք պարզել, թե արդյո՞ք երեք Վկաների վկայությունը ճշմարիտ է:

Հրավիրեք ուսանողներին կիսվել այս փորձառությունից իրենց սովորածով: Կարող եք դասն ավարտել՝ ցուցադրելով «Աստվածայնորեն նշանակված աղբյուրներ» տեսանյութի մնացած մասը (ժամանակ՝ 4:20 - 9:16) և կիսվեք ձեր վկայությամբ այն մասին, թե որքան արժեքավոր է «ձեռք բերել հոգևոր գիտելիքներ» բաժնի սկզբունքների կիրառությունը:

Հաջորդ անգամ

Հարցրեք ուսանողներին՝ արդյո՞ք նրանք երբևէ դժվարացել են հասկանալ, երբ Տերը խոսել է նրանց հետ, կամ արդյո՞ք նրանք երբևէ ցանկացել են իմանալ, թե ինչպես ավելի լավ ստանան անձնական հայտնությունն ու առաջնորդությունը իրենց կյանքում: Հրավիրեք նրանց ուշադիր ուսումնասիրել հաջորդ դասի նախապատրաստական նյութը հայտնության վարդապետության մասին և պատրաստ գալ, որպեսզի դասարանի հետ կիսվեն իրենց սովորածով:



ԴԱՍ 4. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ


Հայտնության վարդապետությունը

Խորհեք Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ մարգարեական հրավերի շուրջ. «Գալիք օրերում հնարավոր չի լինի հոգևորապես գոյատևել առանց Մուրք Հոգու առաջնորդության, ուղղորդման և մշտապես սփռվող ազդեցության: . . . Ես խնդրում եմ ձեզ բարձրացնել ձեր հոգևոր կարողությունը՝ հայտնություն ստանալու համար» («Հայտնություն Եկեղեցու համար, հայտնություն մեր կյանքի համար», *Ensign* կամ *Liahonon*, մայիս 2018, 96):

Այս նյութն ուսումնասիրելիս ուշադրություն դարձրեք ճշմարտությունների վրա, որոնք կարող են օգնել ձեզ մեծացնել հայտնությունը ստանալու և ճանաչելու ձեր հոգևոր կարողությունը:

ԲԱԺԻՆ 1

Ինչպե՞ս կարող եմ հասկանալ, թե երբ է Աստված խոսում ինձ հետ:



1828–1829 թվականների ձմռանը Օլիվեր Քաուդերի անունով 22 տարեկան դպրոցի մի ուսուցիչ Նյու Յորքի Պալմիրա քաղաքում Ջոզեֆի ծնողների հետ նավ նստելիս իմացավ Մարգարե Ջոզեֆ Մմիթի և ոսկե թիթեղների մասին: Առանձին աղոթելուց հետո, որպեսզի իմանար՝ արդյոք իր լսած լուրը ճշմարիտ էր, Օլիվերը խաղաղության համոզիչ հավաստիացում զգաց: Նա գնաց Հարմոնիա, Փենսիլվանիա, որտեղ հանդիպեց մարգարեին: Համոզված լինելով, որ վերականգնված ավետարանի ուղերձը, որով կհսկում էր Ջոզեֆը, ճշմարիտ էր, Օլիվերը որպես դպիր ծառայեց Ջոզեֆին՝ Մորմոնի Գիրքը թարգմանելու գործում: Շատ չանցած, երբ Օլիվերը սկսեց օգնել թարգմանության գործում, Մարգարեն ստացավ հայտնություններ, որոնք հրահանգներ էին տալիս Օլիվերին և անդրադառնում էին թարգմանությանն օգնելու նրա

ցանկությանը: Օլիվերին տված Տիրոջ խոսքերը, որոնք գտնվում են Վարդապետություն և Ուխտեր 6.14–15, 22–23 հատվածներում, օգնում են մեզ ավելի լավ հասկանալ, թե Նա ինչպես կարող է խոսել մեզ հետ:



Ուսումնասիրեք դասին նախապատրաստվելիս

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 6.14–15, 22–23:

Երբ Զոգեֆը ստացավ այս հայտնությունը. «Օլիվերը զարմացավ: Նա անմիջապես պատմեց Զոգեֆին իր [ավելի վաղ] աղոթքի և իր ստացած աստվածային վկայության մասին: Ոչ ոք չէր կարող իմանալ դրա մասին, բացի Աստծուց» (*Սրբեր. Հիսուս Քրիստոսի Եկեղեցու պատմությունը վերջին օրերում*, հատ. 1, *Ճշմարտության չափանիշը, 1815–1846* [2018], 62):

Երբ Օլիվերը ցանկացավ թարգմանել թիթեղների մի մասը, Տերը նրան ավելին սովորեցրեց հայտնություն ստանալու մասին:



Ուսումնասիրեք դասին նախապատրաստվելիս

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 8.2–4: Կարող եք նշել այդ հատվածները ձեր սուրբ գրություններում:

Խոսելով այն մասին, թե Սուրբ Հոգու զորությամբ ինչպես է Տերը խոսում մեր մտքի և սրտի հետ, Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռիչարդ Գ. Սքոթը բացատրել է մի տարբերակ՝ երբ դա կարող է պատահել:



Սրտի հետ հաղորդակցումն ավելի ընդհանուր տպավորություն է: Տերը հաճախ սկսում է՝ տալով տպավորություններ: Երբ դրանց կարևորությունը հասկացվում է և դրանց հնազանդվում են, մարդը

ձեռք է բերում *մտքում* ավելի մանրամասն հրահանգ ստանալու ավելի մեծ կարողություն: (Richard G. Scott, “Helping Others to Be Spiritually Led” [address to CES religious educators, Aug. 11, 1998, 4], ChurchofJesusChrist.org):

Յոթանասունից Երեց Քրեյգ Ս. Քրիսչենսենը նաև ուսուցանել է.



Բոլորս էլ փորձառություն ենք ունեցել Սուրբ Հոգու հետ, անգամ եթե միշտ չէ, որ ընկալել ենք դա: Երբ մեր գլխում ոգեշնչված մտքեր են ծագում, դրանց իսկությունը իմանում ենք մեր սիրտ թափանցող հոգևոր զգացողություններից: (Քրեյգ Ս. Քրիսչենսեն, «Սուրբ Հոգու անասելի պարզև», *Ensign* կամ *Լիահոնա*, նոյեմբեր 2012, 14):

Հնարավոր է, երբեմն մտածեք՝ արդյո՞ք տվյալ միտքը կամ զգացողությունն իրականում Աստծուց է: Տասներկու Առաքյալների Քվորումի Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը քննարկել է, թե ինչպես կարող ենք տարբերակել Սուրբ Հոգու և մեր սեփական մտքերի միջև եղած տարբերությունը՝ *Patterns of Light, Part 2: Discerning Light (2:12)* տեսանյութում:

ԲԱԺԻՆ 2

Ի՞նչ կարող եմ անել,
որպեսզի իմ կյանք հրավիրեմ
հայտնության հոգին:



Ժամանակ առ ժամանակ, զուցե դուք հիասթափված զգաք, երբ թվա, որ ձեր փնտրած հայտնությունը չի գալիս: Երբ դա տեղի ունենա, դուք կարող եք հիշել Օլիվեր Քաուդերիին տված Տիրոջ

հրահանգի մասին, երբ նա հիասթափված էր, որ չկարողացավ ստանալ թիթեղները թարգմանելու համար անհրաժեշտ հայտնությունը (տես *Մրբերը*, 1.62–64):



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք, թե Տերն ինչպես ուսուցանեց Օլիվերին, ինչպես գրված է Վարդապետություն և Ուխտեր 9.7–8-ում:

Առաջին Նախագահությունից Նախագահ Դալլին Հ. Օուքսը բացատրել է մի սկզբունք, որը կարող ենք սովորել Օլիվեր Քաուդերիին տված Տիրոջ ուսմունքներից:



Մենք հուշումներ կստանանք Հոգուց, երբ անենք այն ամենը, ինչ կարող ենք, ավելի շուտ, երբ մենք դրսում արևի տակ աշխատում ենք, քան ստվերում նստած աղոթում ենք՝ առաջին քայլն անելու վերաբերյալ ուղղորդման համար: . . .

Այսպիսով, մենք անում ենք այն ամենը, ինչ կարող ենք: Այնուհետև մենք սպասում ենք Տիրոջը՝ Նրա հայտնության համար: Նա ունի իր ժամանակացույցը:

. . . Հոգով ուսուցանվելու համար անհրաժեշտ է գործել: Հաճախ Տիրոջ խոսքը չենք ստանում, քանի դեռ մենք չենք ուսումնասիրել խնդիրները մեր մտքում: Ապա մենք ստանում ենք հաստատում: (Dallin H. Oaks, “In His Own Time, in His Own Way,” *Ensign*, Aug. 2013, 24, 26):

Նույնիսկ այն ժամանակ, երբ ձեր արժանավորության և հավատարիմ գործողությունների միջոցով պատրաստվել եք հայտնություն ստանալ, Տիրոջ պատասխանները կարող են անմիջապես չգալ:

Երեց Սքոթը խորհուրդ է տվել.



Ի՞նչ եք անում, երբ խնամքով պատրաստվել եք, ջերմեռանդ աղոթել, բավականին ժամանակ սպասել եք պատասխանի և դեռ չեք զգում պատասխան: Գուցե դուք ցանկանաք շնորհակալություն հայտնել, երբ դա տեղի է ունենում, քանի որ դա

Նրա վստահության ապացույցն է: Երբ ապրում եք արժանի և ձեր ընտրությունը Փրկիչի ուսմունքների համաձայն է, և դուք պետք է գործեք, առաջ գնացեք վստահությամբ: . . . Երբ արդար եք ապրում և գործում վստահորեն, Աստված թույլ չի տա, որ դուք շատ հեռու գնաք՝ առանց նախազգուշացնելու ձեզ, եթե դուք սխալ որոշում եք ընդունել: (Ռիչարդ Գ. Սքոթ, «Օգտագործել աղոթքի մեծագույն պարզևը», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2007, 10):



Մտածեք և քննարկեք դասին Նախապատրաստվելիս

Ձեր կարծիքով, ինչո՞ւ է Տերն ակնկալում, որ դուք հայտնություն փնտրելիս ձեր մտքում քննենք հարցերը:

Հնարավորության դեպքում, ընկերոջը կամ ընտանիքի անդամներից մեկին խնդրեք կիսվել փորձով, թե նա ինչ է արել հայտնություն ստանալու համար: Կարող եք հարցնել այդ մարդուն, թե անցյալում ինչպես է հայտնություն տրվել նրան, երբ իր համար մեծ որոշումներ է կայացրել: Դասարան եկեք պատրաստված՝ ձեր սովորածով կիսվելու համար:

ԲԱԺԻՆ 3

Սովորաբար ինչպե՞ս ենք հայտնություն ստանում:

Դիտեք *Patterns of Light: Spirit of Revelation* (3:04) տեսանյութը, կամ ուսումնասիրեք ստորև բերված Երեց Բեդնարի հայտարարությունը.



Որոշ հայտնություններ ստացվում են անմիջապես. մյուսները ճանաչվում են աստիճանաբար: . . .

Մութ սենյակում լույսը վառելը նման է Աստծուց անմիջապես և ամբողջական ստացվող ուղերձի: Մեզանից շատերն են ունեցել այս օրինակի փորձառությունը, մինչ պատասխան է տրվել մեր անկեղծ

աղոթքներին կամ տրվել է անհրաժեշտ ուղղորդում և պաշտպանություն՝ համաձայն Աստծո կամքի ու ժամանակի: . . . Սակայն հայտնության այս ձևն ավելի հազվադեպ հանդիպող երևույթ է, քան հաճախակի հանդիպող:

Ծագող արևի լույսի ճառագայթների աստիճանաբար ի հայտ գալը նման է Աստծուց «տող առ տող, ցուցում առ ցուցում» ուղերձ ստանալուն (2 Նեփի 28.30): Ավելի հաճախ հայտնությունը գալիս է ժամանակ առ ժամանակ փոքր ավելացումներով և տրվում է համաձայն մեր ցանկության, արժանավորության և պատրաստվածության: . . . Հայտնության այս ձևն ավելի հաճախ է հանդիպում, քան հազվադեպ:

Լույսի հետ կապված մեկ այլ հաճախակի հանդիպող փորձառություն մեզ օգնում է սովորել ևս մեկ ճշմարտություն հայտնության «տող առ տող, ցուցում առ ցուցում» տրվող եղանակի մասին: Երբեմն արևը ծագում է ամպամած կամ մառախլապատ առավոտյան: Ամպերով ծածկված լինելու պատճառով դժվար է լինում լույսը տեսնել և հնարավոր չի լինում նկատել ճշգրիտ պահը, երբ արևը բարձրանում է հորիզոնում: Սակայն այդպիսի առավոտյան մենք, այնուամենայնիվ, ունենում ենք բավականաչափ լույս՝ նոր օրը տեսնելու և մեր գործերը վարելու համար:

Նման ձևով շատ անգամներ մենք հայտնություն ենք ստանում՝ առանց հստակ իմացության, թե ինչպես կամ երբ ենք մենք ստանում հայտնությունը: (Դեյվիդ Ա. Բեդնար, «Հայտնության Հոգին», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2011, 88–89):



Խորհեք և գրի առեք ձեր մտքերը դասին Նախապատրաստվելիս

Հիշեք այն ժամանակների մասին, երբ դուք ստացել եք առաջնորդություն և հայտնություն: Մտածեք, թե ինչ եք սովորել

հայտնություն ստանալու ձեր փորձառությունից, ինչպես նաև, թե ինչ եք սովորել այսօրվա ձեր անձնական ուսումնասիրությունից: Այնուհետև մի քանի րոպե հատկացրեք և գրեք օրագրում կամ տրված տողերում, թե ինչպես կարող են այդ սկզբունքներն ազդել ձեր ընթացիկ հարցերի պատասխանների որոնման վրա:

Ցանկանում ես ավելին: (Ոչ պարտադիր)

Որտե՞ղ կարող են ղեկավարները լրացուցիչ տեղեկություն գտնել հայտնություն ստանալու վերաբերյալ:

Wrong Roads (3:57) տեսանյութում Տասներկու Առաքյալների Քվորումից Երեք Ջեֆրի Ռ. Հոլլանդը պատմում է մի պատմություն այն մասին, երբ նա և իր որդին հուշում են ստացել, որ իջնեն ներքև, ինչը պարզվեց՝ սխալ ճանապարհ էր:



Առաջին Նախագահությունից Նախագահ Դավիթ Հ. Օուքսը սովորեցնում է հայտնություններ ստանալու մասին լրացուցիչ սկզբունքներ “In His Own Time, In His Own Way” (*Ensign*, Aug. 2013, 22–27) հոդվածում:

Ինչպե՞ս կարող եմ հասկանալ, թե երբ է Հոգին խոսում ինձ հետ:



Քույր Լինդա Ք. Բարթոնը՝ Սփոփող Միության Նախկին գլխավոր Նախագահը, իր «Դարձնենք մեր սրտերը դեպի Սուրբ Հոգու ձայնը (Եկեղեցու կրթական համակարգի հոգևոր երեկո երիտասարդ ամուրիների համար, մար. 2, 2014, broadcasts.ChurchofJesusChrist.org) ելույթում կիսվում է Հոգու լեզուն սովորելու մասին:

ԴԱՍ 4. ՈՒՍՈՒՑԶԻ ՆՅՈՒԹ

Հայտնության վարդապետությունը

Տերը կարևոր ճշմարտություններ է հայտնել Ջոզեֆ Սմիթի և Վերականգնման վաղ օրերի այլ մարդկանց հայտնության վարդապետության մասին: Այս դասը նախատեսված է՝ օգնելու ուսանողներին մեծացնել հայտնություն ստանալու իրենց ունակությունը և ավելի լավ գիտակցելու, թե երբ է Սուրբ Հոգին խոսում իրենց հետ:

Ուսուցման առաջարկներ

Տերը հայտնության սկզբունքներն է հայտնում Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերին:

ԲԱՐԵԼԱԿԵԼ ՄԵՐ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Ջարգացնել սիրո, հարգանքի և նպատակի ուսման միջավայր: Երբ ուսանողներն իմանան, որ գնահատված ու հարգված են իրենց ուսուցչի և մյուս ուսանողների կողմից, ապա ավելի հավանական է, որ դասի ներկայանան սովորելու պատրաստ կարգավիճակում: Միմյանց կողմից ընդունված լինելու զգացողությունը կարող է փափկացնել սրտերը, հեռացնել վախը և հորդորել նրանց՝ դասարանի հետ կիսվել փորձառություններով և զգացմունքներով:

Ցուցադրեք հետևյալ հարցը. *Ներկայիս ո՞ր իրավիճակի, որոշման կամ հարցի համար առաջնությունը և հայտնությունը կցանկանայիք ստանալ ձեր երկնային Հորից:*

Հորդորեք ուսանողներին մտածել այդ հարցի շուրջ և գրի առնել իրենց մտքերը. Բավարար ժամանակ տրամադրելուց հետո կարող եք խնդրել մի քանի ուսանողի դասարանի հետ կիսվել իրենց գրածով, թե այն խիստ անձնական չի:

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ այս դասի նշանակությունն իրենց կյանքում, բացատրեք ցանկալի արդյունքները, որոնք նկարագրված են այս դասի նախաբանում:

Ցուցադրեք հետևյալ նկարը և հարցրեք.



- Ի՞նչ հանգամանքներ նպաստեցին, որ Օլիվեր Քաուդերին աջակցի Ջոզեֆ Սմիթին՝ թարգմանելու Մորմոնի Գիրքը: (Անհրաժեշտության դեպքում հորդորեք ուսանողներին նկարել այն, ինչ նրանք սովորել են նախապատրաստական նյութի բաժին 1-ից):
- Հայտնությունն ինչպե՞ս ազդեց Ջոզեֆին օգնելու Օլիվերի որոշման վրա:

Հիշեցրեք ուսանողներին, որ ի պատասխան Օլիվերի ցանկության՝ օգնել թարգմանելու Մորմոնի Գիրքը, Տերը նրան սովորեցրեց հայտնություն ստանալու մասին: Ուսանողներից մեկին հրավիրեք բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 8.1-3 հատվածները: Դասարանին խնդրեք հետևել և ուշադրություն դարձնել այն ճշմարտություններին, որոնք Օլիվերը պետք էր հասկանար՝ թարգմանելու հայտնություն ստանալու համար:

ԲԱՐԵԼԱԿԵԼ ՄԵՐ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Բացահայտեք սկզբունքները և վարդապետությունը: Հստակ սահմանված սկզբունքներն ու վարդապետությունն օգնում են ուսանողներին ճշմարտությունը տեսնել

այնպիսի ձևով, որը պարզ և համապատասխան է: Հնարավորության դեպքում խրախուսեք ուսանողներին գտնել և կիսվել իրենց ուսումնասիրած նյութի սկզբունքներով ու վարդապետություններով: Երբ ուսանողները գրեն կամ ցուցադրեն սկզբունքները կամ, երբ իրենց սուրբ գրություններում նշեն ճշմարտությունները, նրանք ավելի խորը կմտածեն դրանց մասին և կստանան հայտնություն, թե ինչպես կիրառել դրանք:

- Ի՞նչ ճշմարտություններ կարող ենք սովորել այս հատվածներից այն մասին, թե ինչպես հայտնություն փնտրել ու ստանալ: (Ուսանողները կարող են բացահայտել որոշ ճշմարտություններ, այդ թվում հետևյալը. **Տերը խոսում է մեր մտքի և սրտի հետ Սուրբ Հոգու զորության միջոցով**):
- Ելնելով ձեր անձնական ուսումնասիրությունից և փորձից, ի՞նչ եղանակներով է Տերը խոսում մեր մտքի և սրտի հետ: (Թվարկեք ուսանողների պատասխանները գրատախտակին. Անհրաժեշտության դեպքում ուսանողներին հրավիրեք վերանայել նախապատրաստական նյութի բաժին 1-ում սովորած սուրբ գրությունների հատվածները և մեկնաբանությունները):
- Ձեր կարծիքով, Տերն ինչո՞ւ է հաղորդակցվում մեզ հետ մեր մտքի ու սրտի միջոցով: (Խրախուսեք ուսանողներին գծել այն, ինչ նրանք սովորել և խորհել են իրենց անձնական ուսումնասիրության և նախապատրաստության ժամանակ):

Բացատրեք, որ երբ Օլիվերը փորձեց թարգմանել, նա դժվարացավ ստանալ այն հայտնությունը, որն անհրաժեշտ էր շարունակելու համար: Զոգեֆն ու Օլիվերը Տիրոջը հարցրեցին, թե ինչո՞ւ էր Օլիվերը դժվարանում հայտնություն ստանալ: Ուսանողներին հանձնարարեք մտքում կարդալ Վարդապետություն և Ուխտեր 9.7-9 հատվածները, ուշադրություն դարձնելով այն օրինաչափությանը, որով Տերն ուսուցանեց Օլիվերին, թե ինչպես հայտնություն ստանալ:

- Տերը ի՞նչ օրինաչափություն հայտնեց Օլիվերին, որը կարող է օգնել մեզ ստանալ և ճանաչել հայտնությունը: (Հայտնությունը հաճախ

ստանում ենք, երբ հարցերն ու խնդիրները քննում ենք մեր մտքում, գալիս ենք եզրակացության, այնուհետև հարցնում ենք Աստծուն՝ արդյո՞ք մեր եզրակացությունը ճիշտ է):

Բացատրեք, որ Առաջին Նախագահությունից Նախագահ Դալլին Հ. Օուքսն ասել է, որ «կործքն այրվելը» կարող է մեծացնել «սփոփանքի և հանդարտության զգացումները» (“Teaching and Learning by the Spirit,” *Ensign*, Mar. 1997, 13):

Հրավիրեք ուսանողներին նախապատրաստական նյութից կիսվել իրենց մտքերով՝ հետևյալ հարցերի և հրավերի մասին.

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է Տերն ակնկալում, որ մենք հայտնություն փնտրելիս մեր մտքում քննենք հարցերը:
- Ի՞նչ է ձեր ընկերը կամ ընտանիքի անդամն ուսուցանել ձեզ հայտնություն հրավիրելու և ստանալու մասին: Ի՞նչ եք դուք սովորել ձեր փորձառություններից հայտնություն հրավիրելու և ստանալու մասին:

Նշում. Հետևյալ վարժությունը նպատակ ունի բավարար ժամանակ տրամադրել ուսանողներին, որ մտածեն իրենց սովորածի մասին և գործնականում կիրառեն այն: Ըստ կարիքի հարմարեցրեք դասը, որ ուսանողներին շատ ժամանակ տրամադրեք՝ խորհելու, գրելու, կարդալու կամ աղոթելու համար:

Հրավիրեք ուսանողներին խորհել և մի քանի բոլորակ գրել այն մասին, թե ինչ են սովորել հայտնության մասին, և ինչպես է այն առնչվում դասի սկզբում իրենց գրած մտքերին: Կամ նրանք կարող են լուռ աղոթել, որ առաջնորդություն ստանան իրենց գրած նյութի վերաբերյալ: Կարող եք նաև ցուցադրել Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ հայտարարությունը և ուսանողներին հրավիրել լուռ կարդալ այն՝ փնտրելով լրացուցիչ եղանակներ, որով նրանք կարող են հայտնություն հրավիրել:



Աղոթեք Հիսուս Քրիստոսի անունով ձեր մտահոգությունների, ձեր երկյուղների, ձեր թուլությունների մասին, այո, ձեր սրտի բուն ձգտումների մասին: Իսկ հետո լսեք: Գրեք մտքերը, որոնք ձեր միտքն են գալիս: Գրի առեք ձեր զգացմունքները

և հետևեք, որ կատարեք ձեզ հուշված գործողությունները: Երբ կրկնեք այս գործընթացը օրեցօր, ամիս առ ամիս, տարեց տարի, դուք «կաճեք հայտնության սկզբունքի մեջ» (*Եկեղեցու նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* [2007], 132):

...

Ես հորդորում եմ ձեզ բարձրանալ ձեր ներկա հոգևոր ունակությունից վեր՝ անձնական վկայություն ստանալու համար: . . .

Ոչ մի բան այնպես չի բացում երկինքները, ինչպես հետևյալ քայլերի համակցությունը՝ աճող մաքրությունը ճշգրիտ հնազանդությունը, անկեղծ որոնումը, Մորմոնի Գրքում Քրիստոսի խոսքերով ամենօրյա սնուցումը և տաճարային ու ընտանեկան պատմության աշխատանքին կանոնավոր ժամանակ տրամադրելը: (Ռասսել Մ. Նելսոն, «Հայտնություն Եկեղեցու համար, հայտնություն մեր կյանքի համար», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2018, 95):

Ավետարանի վերականգնումը հանդիսանում է հայտնություն ստանալու օրինակ:

Նշեք, որ Ջոզեֆ Սմիթի և Օլիվեր Քառտերիի սովորած հայտնության սկզբունքները նրանց հայտնի են դարձվել ժամանակի ընթացքում՝ համաձայն ստեղծված հանգամանքների և առաջացած հարցերի: Դա լուսաբանում է մի կարևոր ճշմարտություն, որը Տերն ուսուցանել է հայտնություններից մի քանիստ:

Հանձնարարեք երեք ուսանողներին հերթով բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 42.61, 50.24, 98.12 հատվածները: Խնդրեք դասարանի անդամներին հետևել և ուշադրություն դարձնել, թե ինչպես է Տերն Իր ճշմարտությունն ու կամքը հայտնում մեզ:

- Ինչպե՞ս կամփոփեք այն ճշմարտությունը, որն այս հատվածները սովորեցնում են Տիրոջից

հայտնություն ստանալու մասին: (Օգտագործելով ուսանողների խոսքերը, ցուցադրեք կամ գրատախտակին գրեք մի ճշմարտություն, որը նման է հետևյալին. **Տերը ճշմարտությունը հայտնում է մեզ «տող առ տող, ցուցում առ ցուցում»:**

Հիշեցրեք ուսանողներին, որ նախապատրաստական նյութի 3-րդ բաժնում նրանք սովորել են հայտնություն ստանալու օրինաչափությունների մասին, որոնք տրվել են Տասներկու Առաքյալների Քվորումից Երեք Դեյվիդ Մ. Բեդնարի կողմից: Հրավիրեք ուսանողներին կիսվել, թե ինչը տպավորվեց նրանց մեջ այդ ուսմունքներից: Կարող եք նաև հարցնել նրանց, թե ինչպես են հայտնությանը վերաբերող նրա համանմանությունները օգնել մեզ ավելի լավ հասկանալ գրատախտակին ցուցադրված կամ գրված ճշմարտությունը:

- Ինչպե՞ս կարող է այդ ճշմարտության ըմբռնումն օգնել մեկին, ով զգում է, որ ինքը պատասխաններ կամ առաջնորդություն չի ստանում Տիրոջ կողմից:
- Ի՞նչ փորձառություն եք ունեցել այն մասին, որ պատասխաններն ու առաջնորդությունը ժամանակի ընթացքում աստիճանաբար են տրվում:

Եզրափակեք՝ վկայություն բերելով կամ հրավիրելով որևէ ուսանողի, ով կցանկանա վկայել դասի ժամանակ հայտնության մասին ուսուցանված ճշմարտությունների մասին:

Հաջորդ անգամ

Հարցրեք ուսանողներին, թե իրենց կարծիքով, որո՞նք կարող են լինել Վերականգնման մեծագույն հրաշքները: Հրավիրեք նրանց ուսումնասիրել առաջիկա դասի նախապատրաստական նյութը Մորմոնի Գրքի ի հայտ գալու մասին և մտածել Մորմոնի Գրքի պահպանման, թարգմանության և հրատարակման հետ կապված հրաշքների մասին:



ԴԱՍ 5. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱՊԱՏԱՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Մորմոնի Գրքի ստեղծումը

Երբ Մորմոնին թաքցրեց նեփիաացիների հիշատակարանը, նա մարգարեացավ, որ վերջին օրերը գալու են. «Ոչ ոք զորություն չի ունենա ի լույս բերելու այն, մինչև դա տրված չլինի Աստծո կողմից» (Մորմոն 8.15): Մտածեք, թե ինչու էր Երկնային Հայրն ընտրել մի երիտասարդի՝ կրթություն չստացած մի ֆերմեր տղայի, որ նա թարգմանի և հրատարակի մեր ժամանակների ամենաազդեցիկ գրքերը:

ԲԱԺԻՆ 1

Զոզեֆ Սմիթն ինչպե՞ս ի հայտ բերեց Մորմոնի Գիրքը Աստծո զորությամբ:

Մի քանի զարմանալի իրադարձություններ տեղի ունեցան Մորմոնի Գրքի ի հայտ գալու ժամանակ, որոնք վկայում են, որ այն թարգմանվել է Աստծո զորությամբ (տես *Մյբեր. Հիսուս Քրիստոսի Եկեղեցու պատմությունը վերջին օրերում*, հատ. 1, ճշմարտության չափանիշը, 1815–1846 [2018], 21–30, 39–64):

Հրեշտակը սպասավորեց Զոզեֆ Սմիթին և նրան պատմեց հնագույն հիշատակարանի մասին:

1823թ. սեպտեմբերի 21-ի երեկոյան Մորմոնի հրեշտակը հայտնվեց Զոզեֆ Սմիթին և նրան պատմեց, որ Աստված աշխատանք ուներ նրա համար (տես Զոզեֆ Սմիթ—Պատմություն 1.33):



**Ուսումնասիրեք դասին
Նախապատրաստվելիս**

Կարդացեք Զոզեֆ Սմիթ—Պատմություն
1.34–35:



Ջոզեֆ Սմիթը թարգմանեց գիրքը, չնայած երիտասարդ էր և լավ կրթություն չուներ:

Ջոզեֆ Սմիթը 17 տարեկան էր, երբ Մորմոնի հրեշտակն առաջին անգամ այցելեց նրան, և երբ Նա առաջին անգամ տեսավ ոսկե թիթեղները: 18-21 տարեկանում Մորմոնին այցելում էր նրան տարին մեկ անգամ և տալիս էր «ցուցումներ ու գիտելիք» (Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.54): 21 տարեկանում Ջոզեֆին թույլատրվեց վերցնել թիթեղները, որպեսզի դրանք թարգմանվեն: 22 տարեկան հասակում նա թարգմանեց թիթեղների մի մասը, իսկ Մարտին Հարրիսը հանդես էր գալիս որպես դպիր: (116 էջից բաղկացած այս ձեռագիրն այնուհետև կորել է և չի վերաթարգմանվել:) 23 տարեկան հասակում Ջոզեֆը ավարտեց թարգմանության մնացած մասը, իսկ Օլիվեր Քաուդերին և մյուսները հանդես էին գալիս որպես դպիրներ:

Մարգարե Ջոզեֆ Սմիթի կինը՝ Էմմա Սմիթը, բացատրել է. «Ջոզեֆ Սմիթը [այդ ժամանակ] . . . չէր կարող ոչ գրել, ոչ էլ թելադրել որևէ տրամաբանական նամակ, էլ չեմ ասում Մորմոնի Գիրքը

թելադրելու մասին: Եվ չնայած ես ակտիվ մասնակցում էի իրականացվող գործողություններին և ներկա էի թիթեղների թարգմանության ընթացքում . . . , ինձ համար դա նույնքան զարմանալի էր՝ «զարմանալիք և զարմանք», որքան բոլորի համար: . . . Մորմոնի Գիրքն աստվածային վավերականություն ունի, ես դրա մասին փոքրագույն կասկած անգամ չունեմ: («Last Testimony of Sister Emma,” *The Saints’ Herald*, Oct. 1, 1879, 290):

Ջոզեֆ Սմիթն ավարտեց թարգմանությունը բացառիկ կարճ ժամանակահատվածում:

Մոտավոր հաշվարկով Ջոզեֆ Սմիթն ավարտել է թարգմանությունը «վաթսունհինգ կամ ավելի քիչ աշխատանքային օրում», թարգմանելով մի գիրք, «որի ներկայիս հրատարակությունը պարունակում է 531 էջ: Ըստ այդ հաշվարկի մոտավորապես կազմում է օրական ութ էջ: Խորհեք այս մասին, երբ դուք գիրք թարգմանեք, կամ երբ նախատեսեք Մորմոնի Գրքի ձեր ընթերցանությունը» (Russell M. Nelson, “A Treasured Testament,” *Ensign*, July 1993, 61–62):

Ջոզեֆ Սմիթը թարգմանեց առանց նշումների և առանց վերանայելու ձեռագիրը:



Էմման թարգմանության գործընթացը նկարագրել է իր որդուն՝ Ջոզեֆ Սմիթ III-ին, իր մահից անմիջապես առաջ՝ 1879 թվականին:

[Ես] հավատում եմ, որ Եկեղեցին հիմ-
նադրվել է ըստ աստվածային ցուցումի:
Ես լիակատար հավատ ունեմ դրանում:
...

[Ջոզեֆը] ոչ ձեռագիր ուներ, ոչ
էլ՝ գիրք, որից կարող էր կարդալ
[թարգմանելիս]: ...

Եթե նա նման բաներ ունենար, չէր կարող
թաքցնել ինձանից»։ ...

Թիթեղները հաճախ սեղանին էին դրված,
առանց թաքցնելու որևէ փորձի, փաթաթ-
ված փոքրիկ փուշե սեղանի սփռոցի
մեջ, որը ես տվել էի նրան թիթեղները
փաթաթելու համար: Մի անգամ ես
դիպա թիթեղներին, երբ նրանք դրված
էին սեղանին, շոշափելով նրանց ուրվա-
գիծն ու ձևը: Նրանք կարծես ճկուն էին
հաստ թղթի պես և մետաղի [զևզ] ձայն
էին հանում, երբ եզրերը շարժում էի բուֆ
մատով, ինչպես երբեմն մարդը կպնում է
գրքի եզրերին: ...

Ես համոզված եմ, որ ոչ մի մարդ չէր
կարող թելադրել ձեռագրերի գրվածք-
ները, եթե ոգեշնչված չլիներ, քանզի,
երբ ես ծառայում էի որպես նրա դպիր,
քո հայրը թելադրում էր ժամերով, և երբ
ճաշելուց կամ ընդմիջումներից հետո
վերադառնում էր, նա միանգամից սկսում
էր այնտեղից, որտեղ կանգ էր առել,
անգամ առանց տեսնելու ձեռագիր էջերը
կամ լսելու որևէ մեկին այն կարդալիս: Դա
սովորական բան էր նրա համար: Անհա-
վատալի կլիներ, որ ուսյալ մարդը կարող
էր դա անել. իսկ մեկի համար, ով նրա
նման այնքան անտեղյակ և ոչ ուսյալ էր,
պարզապես անհնար էր: (Emma Smith, in
“Last Testimony of Sister Emma,” *The Saints’
Herald*, Oct. 1, 1879, 289–90):

Ջոզեֆ Սմիթին տրվել էին գործիքներ, որոնք կօգնեին նրան թարգմանել:

Ջոզեֆը սովորական ձևով չէր թարգմանել Մորմոնի
Գիրքը: Նա չգիտեր թիթեղների սկզբնական լեզուն,
որ հետո այդ լեզվից անգլերեն թարգմաներ:
Փոխարենը, նա տեքստը մի լեզվից մյուսը վերածեց

հայտնության միջոցով՝ «Աստծո պարզևոյ ու գորու-
թյամբ» (Վարդապետություն և Ուխտեր 135.3):

Ջոզեֆն ու իր դպիրները գրել են երկու գործիք-
ների մասին, որոնք օգտագործվել են Մորմոնի
Գիրքը թարգմանելու ժամանակ: Մի գործիք, որը
Մորմոնի Գրքում կոչվում էին «մեկնիչներ» (Մոսիա
8.13), և ավելի հայտնի է Վերջին Օրերի Սրբերին
որպես «Ուրիմ և Թումիմ» (Ջոզեֆ Սմիթ—Պատմու-
թյուն 1.35): Օլիվեր Քաուդերին նշել է, որ «նայելով
[Ուրիմ ու Թումիմի] միջով» Ջոզեֆը կարողանում էր
«կարդալ վերափոխված եգիպտերեն տառերը անգ-
լերեն, որոնք փորագրված էին թիթեղների վրա»
("Book of Mormon Translation," Gospel Topics, topics
.ChurchofJesusChrist.org):

Հետագայում որոշ պատմություններ ցույց են
տալիս, որ Ջոզեֆը, երբեմն, օգտագործում էր մեկ
այլ գործիք՝ Մորմոնի Գիրքը թարգմանելու համար:
Այդ գործիքը փոքրիկ օվալաձև քար էր, որը երբեմն
կոչում էին «տեսանողի քար», որը Ջոզեֆը գտել էր
ոսկե թիթեղները ձեռք բերելուց տարիներ առաջ:
Այդ պատմությունը նշում է, որ Ջոզեֆը դնում էր՝
կա՛մ մեկնիչները, կա՛մ տեսանողի քարը գլխար-
կի մեջ, որպեսզի լույսը ներս չթափանցեր, որը
թույլ էր տալիս նրան ավելի լավ տեսնել բառերը,
որոնք հայտնվում էին գործիքի վրա: (See "Book
of Mormon Translation," topics.ChurchofJesusChrist
.org; see also Richard E. Turley Jr., Robin S. Jensen, and
Mark Ashurst-McGee, "Joseph the Seer," *Ensign*, Oct.
2015, 51.)

Մորմոնի Գրքի լույս տեսնելուց ավելի քան մեկ
տարի անց, ժողովի ժամանակ Ջոզեֆին խնդրել
են պատմել Մորմոնի Գրքի ի հայտ գալու որոշ
առանձնահատկությունների մասին: Այդ ժողովի
գրառումներում նշվում է, որ նա «ասել է, որ նախա-
տեսված չի եղել աշխարհին պատմել Մորմոնի
Գրքի ի հայտ գալու բոլոր առանձնահատկու-
թյունները և որ նպատակահարմար չի եղել այդ
բաներն ասել» ("Minutes, Oct. 25–26, 1831," in *Minute
Book 2*, 13, josephsmithpapers.org):

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Ա.
Մաքսվելը բացատրել է.



Շատերը, ովքեր կարդացել են Մորմոնի
Գիրքը, հասկանալիորեն ցանկանում
են իմանալ ավելին դրա ի հայտ գալու

մասին, ներառյալ՝ թարգմանության իրական գործընթացի մասին: Այն, ինչ մենք իրականում գիտենք Մորմոնի Գրքի ի հայտ գալու մասին, բավարար է, բայց ոչ համապարփակ: . . .

. . . Հավանաբար թարգմանության մանրամասները պահվել են . . . այն պատճառով, որ նախատեսված էր, որպեսզի մենք ընկղմվեինք գրքի էության մեջ, այլ ոչ թե չափից դուրս մտահոգվեինք այն ստանալու գործընթացով: (Neal A. Maxwell, “By the Gift and Power of God,” *Ensign*, Jan. 1997, 39, 41):



Մտածեք դասին Նախապատրաստվելիս

Ձեր կարծիքով, մենք ինչո՞ւ պետք է ավելի շատ մտահոգվենք «գրքի էությամբ», այլ ոչ թե «այն ստանալու գործընթացով»:

ԲԱԺԻՆ 2

Ինչպե՞ս են Մորմոնի Գրքի վկաների ցուցմունքները լրացուցիչ ապացույցներ տրամադրում դրա ճշմարտացիության մասին:



Մորմոնի Գրքի թարգմանության ժամանակ Ջոզեֆ Սմիթն ու Օլիվեր Քաուդերին իմացան, որ Տերը ցույց կտա թիթեղները երեք հատուկ վկաների

(տես Եթեր 5.2–4): Օլիվերը, Դեյվիդ Ուիթմերը և Մարտին Հարրիսը «մղվել էին ոգեշնչված ցանկությամբ՝ լինել երեք հատուկ վկաները» (Վարդապետություն և Ուխտեր 17, բաժնի վերնագիր):

1829 թվականի հունիսին, Դեյվիդին ու Մարտինին հրաշագործ ձևով ցույց են տրվում թիթեղները: Նրանք վկայել են, «որ Աստծո մի հրեշտակ երկնքից իջավ ներքև, և նա բերեց ու դրեց մեր աչքերի առջև, որ մենք նայեցինք ու տեսանք թիթեղները և դրանց վրայի փորագրությունները» («Երեք վկաների վկայությունը», Մորմոնի Գիրքը):

Երբ երեք վկաները տեսան հրեշտակին, Ջոզեֆ Սմիթը վերադարձավ Ուիթմերների տուն և բացականչեց իր ծնողներին. «Հայրի՛կ, մայրի՛կ, դուք չեք պատկերացնի, թե [որքան] երջանիկ եմ ես. Տերն այժմ ցույց է տվել թիթեղները ևս երեք հոգու բացի ինձանից: Նրանք հրեշտակ են տեսել, որը նրանց վկայել է, և նրանք պետք է վկայություն բերեն այն ճշմարտության վերաբերյալ, որի մասին ես ասել եմ, քանի որ հիմա նրանք ինքնուրույն գիտեն, որ ես չեմ շրջում, խաբելով մարդկանց: Եվ ես այնպես եմ զգում, կարծես, բեռից ազատվել եմ, որը [սխալ] ծանր էր կրել, և սիրտս ցնծում է, որ ես այլևս ամբողջովին միայնակ չեմ աշխարհում»: (“Lucy Mack Smith, History, 1845,” 153–54, josephsmithpapers.org):

Ավելի ուշ Ջոզեֆը ցույց տվեց թիթեղները ևս ութ վկաների: Նրանք հայտարարել են, որ «մենք վերցրինք [թիթեղները] մեր ձեռքերով, և նաև տեսանք դրանց վրայի փորագրությունները, . . . և հաստատ գիտենք, որ [Ջոզեֆ Սմիթը] ունի թիթեղները, որոնց մասին մենք խոսեցինք» («Ութ վկաների վկայությունը», Մորմոնի Գիրքը):

Չնայած Ջոզեֆ Սմիթի հետ ունեցած տարաձայնություններին, որոնք երեք վկաներից յուրաքանչյուրին դրդեցին Եկեղեցու հեռանալ (Օլիվեր Քաուդերին և [Մարտին] Հարրիսը հետագայում վերադարձան), իրենց ամբողջ կյանքում նրանք շարունակում էին որպես վկա հաստատել իրենց վկայությունները: Ութ վկաներից յուրաքանչյուրը նույնպես վերահաստատեց իր վկայությունը թիթեղների գննության

վերաբերյալ, չնայած որ, ի վերջո, ոմանք հեռացան Եկեղեցուց: Տարիներ շարունակ նրանց բազմաթիվ հայտարարությունների համատեղ կշիռը, չնայած Ջոզեֆ Սմիթի և Եկեղեցու նկատմամբ նրանց փոփոխվող վերաբերմունքին, ուժեղ վկայություն է Մորմոնի Գրքում նրանց հրապարակած հայտարարությունների հուսալիության մասին: ("Witnesses of the Book of Mormon," Church History Topics, ChurchofJesusChrist.org)



Գրի առեք ձեր մտքերը

Գրեք ձեր ունեցած ունեցած փորձառությունները, որոնք օգնեցին ձեզ իմանալ Մորմոնի Գրքի ճշմարտացիությունը: Ձեզ կտրվի հնարավորություն, եթե դուք ցանկանաք, դասարանի հետ կիսվել ձեր անձնական վկայությամբ:

Ցանկանում ես ավելին: (Ոչ պարտադիր)

Ուրի՞շ ինչ գիտենք Մորմոնի Գրքի ի հայտ գալու վերաբերյալ:

- «Մորմոնի Գրքի թարգմանությունը» ուսումնասիրությունը, որը հասանելի է ChurchofJesusChrist.org կայքում, պարունակում է մանրամասներ, որոնք մեզ հայտնի են թիթեղները թարգմանելու Ջոզեֆ Սմիթի փորձառության մասին:
- «How Did Joseph Smith Translate the Book of Mormon?» տեսանյութում (8:06) Եկեղեցու պատմաբանները և Երեց Քվենտին Լ. Քուքը Տասներկու Առաքյալների Քվորումից նկարագրում են, թե մենք ինչ գիտենք թարգմանության գործընթացի մասին:
- Days of Harmony (25:01) տեսանյութում պատմվում է Մորմոնի Գրքի ի հայտ գալու վերաբերյալ Օլիվեր Քաուդերի փորձառության մասին:
- Տեղեկություն այն մասին, թե ինչպես է Մարտին Հարրիսն աջակցում Մորմոնի Գրքի ի հայտ գալուն, այդ թվում` ոսկե թիթեղների նշանների վերաբերյալ գիտնականների հետ իր հանդիպումների մասին, կարելի է գտնել այստեղ` The Contributions of Martin Harris by Matthew McBride (*Revelations in Context* [2016], ChurchofJesusChrist.org):

ԴԱՍ 5. ՈՒՍՈՒՑՁԻ ՆՅՈՒԹ

Մորմոնի Գրքի ստեղծումը

Մորմոնի Գիրքն ի հայտ եկավ հրաշքով: Այս դասի օգնությամբ ուսանողներն ավելի լավ կհասկանան, թե ինչպես Մորմոնի Գիրքը ստեղծվեց «Աստծո պարզևով ու զորությամբ» (Վարդապետություն և Ուխտեր 135.3): Ուսանողները նաև կանդրադառնան ու հնարավորություն կունենան կիսվելու Մորմոնի Գրքի ճշմարտացիության մասին իրենց վկայությամբ:

Ուսուցման առաջարկներ

ԲԱՐԵԼԱՎԵԼ ՄԵՐ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Ուսուցանեք դարձի գալու համար: Նախագահ Հենրի Բ. Սյրինգս ուսուցանել է. «Մենք պետք է բարձրացնենք մեր նշանողը: Մենք պետք է պահենք նպատակները, որոնք մենք միշտ ունեցել ենք. մասնակցությունը, կանոնավոր հաճախելիությունը, ավարտել համալսարանը, իմանալ սուրբ գրությունները, Սուրբ Հոգու կողմից ճշմարտությունը հաստատելու զգացմունքի փորձառությունը: Ի հավելումս դրանց, մենք պետք է մեր նպատակներում ունենանք միսիան ու տաճարը: Սակայն ուսանողները ավելի շատ կարիքներ ունեն այն ժամանակահատվածում, երբ նրանք մեր ուսանողներն են: . . .

Հիսուս Քրիստոսի մաքուր ավետարանը պետք է հասնի ուսանողների սրտերին Սուրբ Հոգու զորության միջոցով: . . . Նրանց հետ կապված մեր նպատակը պետք է լինի այն, որ նրանք ճշմարտապես դարձի գան առ Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանը, մինչ նրանք մեզ հետ են» (“We Must Raise Our Sights” [Church Educational System conference on the Book of Mormon, Aug. 14, 2001], 2):

Մորմոնի Գիրքն ի հայտ եկավ «Աստծո պարզևով և զորությամբ»:

Ցուցադրեք այն նկարը, որտեղ Մորմոնին թիթեղները թաղում է հողի մեջ:



Խնդրեք ուսանողներին նկարագրել, թե ինչ է տեղի ունենում այս նկարում: Կարող եք նաև հարցնել, թե նրանց կարծիքով, ինչ գիտեր Մորմոնին այն մասին, թե ինչ ազդեցություն կունենա այդ հիշատակարանն ապագա սերունդների վրա:

Հրավիրեք ուսանողներին կարդալ Մորմոն 8.12–16 հատվածները և ուշադրություն դարձնել, թե Մորմոնին ինչ ուսուցանեց Մորմոնի Գրքի ի հայտ գալու մասին:

- Մորմոնին ի՞նչ է ուզում հասկացնել Մորմոնի Գրքի ի հայտ գալու վերաբերյալ:

Ցուցադրեք Ջոզեֆ Սմիթի հետևյալ հայտարարությունը, որը նա հաճախ կրկնում էր, երբ հարցնում էին Մորմոնի Գրքի թարգմանության մասին:



Աստծո պարգևով և զորությամբ ես թարգմանեցի Մորմոնի Գիրքը: (Joseph Smith, in James Palmer, Journal, 75, Church History Library, The Church of Jesus Christ of Latter-day Saints, Salt Lake City, Utah, մեծատառերը արդիականացվել են)

Հրավիրեք ուսանողներին կիսվել, թե ինչ են կարդացել նախապատրաստական նյութում այն մասին, թե Մորմոնի Գիրքն ինչպես ի հայտ եկավ «Աստծո պարգևով և զորությամբ»: (Անհրաժեշտության դեպքում ուսանողներին խրախուսեք համառոտ վերանայել նախապատրաստական նյութի բաժին 1-ը): Նաև հնարավորություն տվեք նրանց տալ այն հարցերը, որոնք նրանց մոտ առաջացել են Մորմոնի Գրքի թարգմանության իրենց ուսումնասիրության արդյունքում:

Հրավիրեք ուսանողներին վերանայել այն, ինչ նրանք սովորել են Ջոզեֆ Սմիթի և Երեց Նիլ Ա. Մաքսվելի հայտարարություններից նախապատրաստական նյութի բաժին 1-ի վերջում: (Կարող եք հրավիրել մի ուսանողի բարձրաձայն կարդալ այս հայտարարությունները):

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ մենք պետք է ավելի շատ մտահոգվենք «գրքի էությամբ», այլ ոչ թե «այն ստանալու գործընթացով»:

Աստված խոստանում է, որ մարդիկ կարող են ստանալ Մորմոնի Գրքի մասին հաստատող վկայություն:

Հարցրեք ուսանողներին, թե նրանցից քանիսը կցանկանար անձամբ տեսնել ոսկե թիթեղները և ինչու:

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ Տերը չի ապացուցում Մորմոնի Գրքի իսկությունը՝ թույլ տալով, որ թիթեղները և այլ հնագույն նմուշները ցուցադրվեն աշխարհին:

Հանձնարարեք ուսանողներին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 5.3, 6-7 հատվածները՝ ուշադրություն դարձնելով, թե Ջոզեֆն ինչու թիթեղները ցույց չտվեց այն մարդկանց, ովքեր ապացույց էին

ուզում: Թող ուսանողները բացատրեն, թե ինչ են ուսուցանում այդ հատվածները:

Բացատրեք, որ այս հայտնությունը տրվեց Ջոզեֆին այն բանից հետո, երբ Մարտին Հարիսն ապացույց խնդրեց, որ Ջոզեֆն ունի ոսկե թիթեղները: Մարտինը Ջոզեֆի ընկերն էր և ֆինանսական հնարավորություն ուներ, որ օգներ Մորմոնի Գրքի հրատարակությանը այն թարգմանելուց հետո: Մարտինի կինը՝ Լյուսին, բողոք ներկայացրեց տեղի դատավորին՝ մեղադրելով Ջոզեֆին ֆինանսական օգուտ ստանալու նկատառումներով իր ամուսնուն և ուրիշներին խաբելու մեջ: 1829 թվականի մարտ ամսին Մարտինը գնաց Հարմոնի (Փենսիլվանիա)՝ Ջոզեֆ Սմիթին խնդրելու ապացույցներ տրամադրել թիթեղների գոյության մասին:

Ուսանողներին հանձնարարեք կարդալ Վարդապետություն և Ուխտեր 5.11-15 հատվածները՝ ուշադրություն դարձնելով, թե Տերն ինչպե՞ս է հաստատելու Մորմոնի Գրքի հիշատակարանի ճշմարտությունը: Թույլ տվեք ուսանողներին բացատրել, թե նրանք ինչ սովորեցին այս հատվածներից:

Բացատրեք, որ Տերը հայտնեց, որ Մարտին Հարիսը կարող է լինել այդ երեք Վկաներից մեկը, եթե նա «խոնարհվի» և «խոնարհեցնի իրեն զորավոր աղոթքով և հավատով» (Վարդապետություն և Ուխտեր 5.24): Երեք ամիս անց Ջոզեֆը հրավիրեց Մարտին Հարիսին միանալ Օլիվեր Քաուդերիին և Դեյվիդ Ուիթմերին՝ փնտրելու այն հատուկ վկայությունը, որը Տերը խոստացել էր:

Նախապատրաստական նյութից ցուցադրեք Ջոզեֆ Սմիթը և երեք Վկաները նկարը և հորդորեք դասարանին հիշել, թե ինչ տեղի ունեցավ, երբ այդ տղամարդիկ աղոթեցին թիթեղների մասին վկայություն ստանալու համար:

- Ի՞նչ տպավորություն ստացավ Ջոզեֆն այն մասին, որ այդ երեք Վկաները կտեսնեն թիթեղները: (Անհրաժեշտության դեպքում, ուսանողները կարող են վերանայել նախապատրաստական նյութից Լյուսի Մաք Սմիթի պատմությունը):
- Ինչպե՞ս է երեք վկաների վկայությունն ամրա-նում այն փաստից, որ նրանք երբեք չեն

հրաժարվել իրենց վկայությունից, նույնիսկ, երբ նրանցից յուրաքանչյուրը հեռացավ Մարգարեից և Եկեղեցուց:

Հանձնարարեք ուսանողներին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 5.15-16 և Մորմոնի 10.3-5 հատվածները՝ ուշադրություն դարձնելով, թե ինչպես բոլոր մարդիկ կարող են վկայություն ձեռք բերել Մորմոնի Գրքի ճշմարտացիության մասին: Երբ ուսանողները բացատրեն, թե ինչ են սովորել սուրբ գրությունների այս հատվածներից, օգնեք նրանց բացահայտել նմանատիպ մի սկզբունք:

Տերը կբացահայտի Մորմոնի Գրքի ճշմարտացիությունը Սուրբ Հոգու միջոցով բոլոր նրանց, ովքեր վկայություն են փնտրում:

- Ինչպե՞ս է Սուրբ Հոգու վկայությունը համեմատելի ֆիզիկական ապացույցների հետ, ինչպես օրինակ՝ թիթեղները տեսնելու կամ Մորմոնի Գրքի թարգմանության բոլոր մանրամասների մասին լիարժեք իմացություն ունենալու հետ:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Կիրակնօրյա դպրոցի նախկին նախագահ՝ Եղբայր Թադ Ռ. Քալիսթերի հետևյալ պատմությունը:



Իմ լավ ու լուսավոր ընկերներից մեկը մի ժամանակ լքել էր Եկեղեցին: Վերջերս նա գրել էր ինձ իր վերադարձի մասին. «Սկզբում ես ցանկանում էի, որ Մորմոնի Գիրքը պատմականորեն, աշխարհագրորեն, լեզվական և մշակութային առումներով ապացուցվեր ինձ: Բայց, երբ ուշադրությունս տեղափոխեցի այն բանի վրա, թե Գիրքը ինչ է սովորեցնում Հիսուս Քրիստոսի ավետարանի և Նրա փրկող առաքելության մասին, ես սկսեցի վկայություն ստանալ Գրքի ճշմարտացիության վերաբերյալ: Մի օր իմ սենյակում Մորմոնի Գիրքը կարդալիս ես դադար առա, ծնկի իջա և սրտանց աղոթեցի, որից հետո մի զորեղ զգացում ունեցա՝ Երկնային Հայրը շնչաց իմ հոգուն, որ Եկեղեցին ու Մորմոնի Գիրքը իսկապես ճշմարիտ են: Երեք

ու կես տարի ես կրկին ուսումնասիրում էի Եկեղեցին և այդ տարիներն ինձ հետ առաջնորդեցին դեպի Եկեղեցի, սրտից բխող խորը համոզվածությամբ վերջինիս ճշմարտացիության մեջ»:

Եթե մարդը ժամանակ հատկացնի և խոնարհաբար կարդա Մորմոնի Գիրքը և խորհի դրա մասին, ինչպես իմ ընկերն էր արել, և ականջ դնի Հոգու քաղցր պտուղներին, ապա նա, ի վերջո, կստանա ցանկալի վկայությունը:

Մորմոնի Գիրքը մեզ տրված Աստծո անգին պարգևներից մեկն է: (Թադ Ռ. Քալիսթեր, «Մորմոնի Գիրքը որպես Աստծո զորավոր վկա», *Ensign* կամ *Liahona*, նոյեմբեր 2017, 109):

- Ի՞նչ փորձառություններ են օգնել ձեզ իմանալ, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է: (Ուսանողներին հնարավորություն տվեք կիսվել, թե ինչ են գրել իրենց նախապատրաստական նյութում բաժին 2-ը վերջացնելուց):

Ավարտեք դասը և կիսվեք ձեր վկայությամբ այն մասին, որ, չնայած մենք չենք տեսել ոսկե թիթեղները, ոչ էլ ներկա ենք եղել այն ժամանակ, երբ թարգմանվել է Մորմոնի Գիրքը, մենք կարող ենք կարդալ և ուսումնասիրել Գիրքը և հոգևոր վկայություն ձեռք բերել, որ դա իսկապես Աստծու խոսքն է:

Հաջորդ անգամ

Հրավիրեք ուսանողներին մտածել, թե ինչո՞ւ են Տիրոջ Եկեղեցու քննադատներն ագրեսիվ ձևով թիրախավորում Մորմոնի Գիրքը: Դասարանի անդամներին խրախուսեք ուսումնասիրել հաջորդ դասի նախապատրաստական նյութը՝ ուշադրություն դարձնելով, թե նրանք ինչպես կարող են բարձրացնել Մորմոնի Գիրքը պաշտպանելու իրենց ունակությունը:



ՀԱՍ 6. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Մորմոնի Գիրքը՝ մեր կրոնի պորտաքարը

Ո՞րն է ձեր վկայությունը Մորմոնի Գրքի մասին: Ի՞նչ կարող եք անել, որպեսզի ամրապնդեք այն: Երբ ուսումնասիրեք հետևյալ նյութը, դուք ավելի լավ կկարողանաք բացատրել, թե ինչու է Մորմոնի Գիրքը մեր կրոնի և մեր վկայությունների պորտաքարը:

ԲԱԺԻՆ 1

Որո՞նք են Մորմոնի Գրքի ճշմարտացիության և կարևորության ապացույցները:

1830 թվականին Մորմոնի Գրքի հրատարակումից անմիջապես հետո Տերը պատվիրեց Ջոզեֆին կազմավորել Հիսուս Քրիստոսի վերականգնված եկեղեցին: Միսիոներները ճամփորդության ընթացքում սկսեցին վաճառել Մորմոնի Գրքի օրինակները: Այդ գիրքը սկսեց խորը ազդեցություն թողնել՝ հավաքելով մարդկանց եկեղեցում:

Մորմոնի Գրքի հրատարակման նույն տարում Փարլի Պ. Պրատ անունով մի երիտասարդ ոգեշնչում զգաց, որ պետք է վաճառի Օհայոյում գտնվող իր ագարակը, որպեսզի կարողանա քարոզել Աստվածաշունչը: Ագարակը վաճառելուց կարճ ժամանակ անց Փարլին և նրա կինը՝ Թանկֆուլը, ճանապարհվեցին դեպի արևելք: Երբ նրանք

մոտենում էին Պալմիրային (Նյու Յորք), Փարլին հուշում զգաց իջնել նավակից: Նա իջավ, իսկ Թանկֆուլը շարունակեց իր ճանապարհը: Այնուհետև Փարլին 10 մղոն քայլեց դեպի Մկրտական եկեղեցու մի սարկավագի տուն: Այդ սարկավագը նրան պատմեց ձեռք բերած գրքի մասին, որը թարգմանվել էր ոսկե թիթեղներից: Ավելի ուշ Փարլին գրել է հետևյալը.



«Ես բացեցի [Մորմոնի Գիրքը] և կարդացի տիտղոսաթերթը: Ապա կարդացի մի քանի վկաների վկայությունն այն մասին, թե ինչպես էր այն գտնվել և թարգմանվել: Դրանից հետո ես սկսեցի կարդալ բովանդակությունը ըստ հաջորդականության: Ես կարդացի ամբողջ օրը, ուտելը բեռ էր, ես ցանկություն չունեի ուտելու, քնելը բեռ էր, երբ եկավ գիշերը, քանի որ ես նախընտրեցի կարդալը քնելուց:

Երբ կարդում էի, Տիրոջ հոգին իջավ ինձ վրա, և ես իմացա ու ըմբռնեցի, որ գիրքը

ճշմարիտ էր՝ այնքան պարզ և բացահայտ, որքան մարդն ըմբռնում է ու գիտի, որ ինքը գոյություն ունի: (*Autobiography of Parley P. Pratt*, ed. Parley P. Pratt Jr. [1938], 37)



Եկեղեցու առաջին օրերից ի վեր միլիոնավոր մարդիկ պարզել են այն, ինչը Փարլիին ուսուցանվեց Սուրբ Հոգու կողմից այդ գիշեր, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է: Այն պարունակում է Աստծո խոսքը:

Երբ 1829 թվականի հունիսին Ջոզեֆ Սմիթն ավարտեց Մորմոնի Գրքի թարգմանությունը, Տերն ինքը վկայեց դրա ճշմարտացիության մասին:



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր
17.6:

Տերն ավելի ուշ հաստատեց Մորմոնի Գրքի ճշմարտացիությունը և բերեց այն ստեղծելու պատճառները:



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Վարդապետություն և Ուխտերի
20.8-12, 14 հատվածները:

Տարիներ անց, 1841 թվականի մի կիրակի, Մարգարե Ջոզեֆ Սմիթը օրն անցկացրեց տասներկու Առաքյալների հետ խորհրդակցության մեջ՝ նախագահ Բրիգամ Յանգի տանը, ով այդ ժամանակ ծառայում էր այդ քվորումի նախագահ: Նրանց հետ զանազան թեմաների շուրջ խոսելու ժամանակ, Ջոզեֆը սովորեցրեց Մորմոնի Գրքի կարևորության մասին:



Ես ասացի եղբայրներին, որ Մորմոնի Գիրքն ամենաճիշտն է երկրի վրա եղած բոլոր գրքերից և մեր կրոնի պորտաքարն է, և ապրելով ըստ դրա ցուցումների, մարդ ավելի շատ կմոտենա Աստծուն, քան ըստ որևէ այլ գրքի ցուցումների: (*Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* [2007], 64):

Ուսումնասիրեք հետևյալ բաժինները, որպեսզի ավելին սովորեք այս ճշմարտությունների մասին, որոնք ուսուցանվել են Մարգարե Ջոզեֆի կողմից:

ԲԱԺԻՆ 2

Ի՞նչ է նշանակում, որ Մորմոնի Գիրքն ամենաճիշտն է երկրի վրա եղած բոլոր գրքերից?

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարն ուսուցանել է.



Մորմոնի Գիրքն ամենաճիշտն է երկրի վրա եղած բոլոր գրքերից, որովհետև այն կենտրոնանում է ճշմարտության վրա (տես Հովհաննես 14.6, 1 Նեփի 13.40), նույն Հիսուս Քրիստոսի, և վերականգնում է պարզ ու արժեքավոր բաները, որոնք հանվել էին ճշմարիտ ավետարանից (տես 1 Նեփի 13.26, 28–29, 32, 34–35, 40): Այս երկու գործոնների եզակի համակցումը՝ Փրկիչի վրա կենտրոնանալն ու ուսմունքների պարզությունը, ազդեցիկ ձևով հրավիրում են Աստվածագլխի երրորդ անդամի՝ Սուրբ Հոգու, հաստատող վկայությունը: Հետևաբար, սուրբ գրության ոչ մի ուրիշ հատոր կարդացողի հոգու ու սրտի հետ չի խոսում այնպես, ինչպես Մորմոնի Գիրքը: (David A. Bednar, “Watching with All Perseverance,” *Ensign or Liahona*, May 2010, 41)




Մտածեք դասին Նախապատրաստվելիս

Որո՞նք են Մորմոնի Գրքի այն ճշմարտությունները, որոնք ուժեղացրել են ձեր հավատը Հիսուս Քրիստոսի և Նրա վերականգված ավետարանի հանդեպ:

ԲԱԺԻՆ 3

Ինչպե՞ս է Մորմոնի Գիրքը հանդիսանում մեր կրոնի պորտաքարը:

Երբ կամար է կառուցվում, երկու կողմերը կառուցվում են հենարանների օգնությամբ, որ ուղիղ պահեն կամարը: Կամարի գագաթի տարածությունը խնամքով չափվում է և պորտաքարը կտրվում է՝ ճշգրտորեն համապատասխանելու համար: Երբ պորտաքարը դրվում է իր տեղում և նրան հարող քարերը ճնշում են գործադրում պորտաքարի վրա, կամարը կանգուն է մնում առանց հենարանների:



Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոնը բացատրել է, թե ինչպես է Մորմոնի Գիրքը հանդիսանում մեր կրոնի պորտաքարը:



Կան երեք ուղիներ, որոնցով Մորմոնի Գիրքը մեր կրոնի պորտաքարն է: Այն Քրիստոսի մասին մեր վկայության պորտաքարն է: Այն մեր վարդապետության պորտաքարն է: Այն վկայության հիմնաքարն է:

Մորմոնի Գիրքը Հիսուս Քրիստոսի մասին մեր վկայության պորտաքարն է: . . .

Այսօր Քրիստոնյա աշխարհի մեծ մասը մերժում է Փրկիչի աստվածային բնույթը: Մարդիկ կասկածի տակ են դնում Նրա հրաշափառ ծնունդը, Նրա կատարյալ կյանքը և Նրա փառավոր Հարության իրականությունը: Մորմոնի Գիրքը պարզ և անսխալ արտահայտություններով մեզ ուսուցանում է բոլոր բաների ճշմարտությունը: Այն տալիս է Նաև Զավության վարդապետության առավել ամբողջական բացատրությունը: . . .

Մորմոնի Գիրքը Նաև Հարության վարդապետության պորտաքարն է: . . . Մորմոնի Գիրքն այնքան շատ բան է տալիս, որ մեծացնում է փրկության վարդապետությունների մեր հասկացողությունը: Առանց դրա, մյուս սուրբ գրություններում ուսուցանվող շատ բաներ չէին լինի գրեթե այդքան պարզ և արժեքավոր: . . .

. . . Մորմոնի Գիրքը վկայության պորտաքարն է: Ճիշտ՝ ինչպես կամարը քանդվում է, երբ պորտաքարը հեռացվում է, այնպես էլ ողջ Եկեղեցին կանգնում է կամ ընկնում է Մորմոնի Գրքի ճշմարտացիությամբ:

*. . . Եթե Մորմոնի Գիրքը ճշմարիտ է, . . . ապա մարդը պիտի ընդունի Վերականգման և դրան ուղեկցող բոլոր բաների վերաբերյալ պնդումները: (Ezra Taft Benson, "The Book of Mormon—Keystone of Our Religion," *Ensign*, Nov. 1986, 5–6; italics added)*



Մտածեք դասին Նախապատրաստվելիս

Ինչպե՞ս է Եկեղեցին կանգնում կամ ընկնում Մորմոնի Գրքի ճշմարտացիության շնորհիվ: Ինչպե՞ս է Մորմոնի Գիրքը հանդիսանում ձեր անձնական վկայության պորտաքարը:

ԲԱԺԻՆ 4

Ինչպե՞ս է Մորմոնի Գիրքն օգնում մեզ մոտենալ Աստծուն:

Կարող եք հետևյալ հայտարարություններում նշել այն բառերը կամ արտահայտությունները, որոնք սովորեցնում են, թե ինչպես է Մորմոնի Գիրքն օգնում մեզ ավելի մոտենալ Աստծուն և օրհնում է մեր կյանքը:



Նախագահ Բոնտոնն ուսուցանել է.



Գրքի մեջ մի գործություն կա, որը սկսում է թափանցել ձեր կյանք այն պահից, երբ դուք սկսում եք այդ գրքի լուրջ ուսումնասիրությունը: Դուք ավելի մեծ գործություն կգտնեք՝ փորձությանը դիմակայելու համար: Դուք գործություն կգտնեք՝ խաբեությունից խուսափելու համար: Դուք գործություն կգտնեք՝ մնալու նեղ ու անձուկ ճանապարհին: Սուրբ գրությունները կոչվում են «կյանքի խոսքեր»

(Վարդապետություն և Ուխտեր 84.85), և դա ավելի քան ճշմարիտ է Մորմոնի Գրքի վերաբերյալ: Երբ սկսում եք քաղցել կամ ծարավել այդ խոսքերից հետո, դուք ավելի մեծ առատությամբ կգտնեք կյանքը: (Ezra Taft Benson, "The Book of Mormon—Keystone of Our Religion," 7)

Առաջին Նախագահությունից Նախագահ Հենրի Բ. Այրինգը նույնպես վկայել է.



Ակնհայտ է Մորմոնի Գրքի ազդեցությունը ձեր բնավորության, զորության և ձեր խիզախության վրա՝ Աստծո վկան լինելու գործում: Այս գրքի վարդապետությունը և քաջարի օրհնակները կբարձրացնեն, կուղեկցեն և կքաջալերեն ձեզ: . . . Մորմոնի Գրքի աղոթքով ուսումնասիրությունը կկառուցի հավատը առ Հայր Աստված, Իր Սիրելի Որդին և Նրա ավետարանը: Դա հավատք կկառուցի Աստծո հին ու նոր մարգարեների հանդեպ: Այն կարող է ձեզ ավելի մոտեցնել Աստծուն, քան որևէ այլ գիրք: Այն կարող է ավելի շատ բարելավել կյանքը: . . . Ես աղերսում եմ, որ դուք ավելի խորը և հաճախ ուսումնասիրեք այն: «Հենրի Բ. Այրինգ, «Վկան», *Ensign* կամ *Liahona*, նոյեմբեր 2011, 69-71):

Իսկ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը խոստացել է.



Ես խոստանում եմ, որ եթե դուք ամեն օր աղոթքով ուսումնասիրեք Մորմոնի Գիրքը, դուք ավելի լավ որոշումներ կկայացնեք *ամեն օր*: Ես խոստանում եմ, որ մինչ դուք խորհում եք ձեր ուսումնասիրած նյութի շուրջ, երկնքի պատուհանները կբացվեն, և դուք կստանաք ձեր հարցերի պատասխանները և ուղղորդում՝ ձեր կյանքի համար: Ես խոստանում եմ, որ եթե դուք ամեն օր խորասուզվեք Մորմոնի Գրքի ընթերցանության մեջ, դուք կարող եք պաշտպանվել օրվա չարիքից, պոռնոգրաֆիայի անհաղթահարելի ժանտախտից և միտքն անզգայացնող կախվածություններից: (Ռասսել Մ. Նելսոն. «Մորմոնի Գիրքը. Ինչպիսի՞ն կլինեն ձեր կյանքն առանց նրա»: *Ensign* կամ *Liahona*, նոյեմբեր 2017, 62-63):



Գրի առեք ձեր մտքերը

Ինչպե՞ս է Մորմոնի Գրքում գտնվող ուսմունքների ուսումնասիրությունն ու դրանցով ապրելն օգնել ձեզ մոտենալ Աստծուն: Որո՞նք են Մորմոնի Գրքից այն մի քանի հատվածները, որոնք օգնել են ձեզ ավելի նմանվել Նրան: Հատկացված տողերում գրի առեք ձեր այս հարցերի ձեր պատասխանները: Դասարան եկեք պատրաստված՝ ձեր մտքերով կիսվելու համար:

Ցանկանում ես ավելին: (Ոչ պարտադիր)

Ինչպիսի՞ն կլինեն ձեր կյանքն առանց Մորմոնի Գրքի:



Իր «Մորմոնի Գիրքը. Ինչպիսի՞ն կլինեն ձեր կյանքն առանց նրա» (*Ensign* կամ *Liahona*, նոյեմբեր 2017, 60–63) ելույթում Նախագահ Նելսոնը պատասխանում է Մորմոնի Գրքի վերաբերյալ հարցերին:

Ինչո՞ւ է այդքան կարևոր ունենալ Մորմոնի Գիրքը, եթե մենք արդեն ունենք Աստվածաշունչը, որն ուսուցանում է մեզ Հիսուս Քրիստոսի մասին:



Կիրակնօրյա դպրոցի Նախկին Նախագահ՝ Եղբայր Թադ Ռ. Քալիսթերն անդրադառնում է Մորմոն Գրքի մասին քննադատություններին և հաստատում է, որ այն՝ Աստծո, Հիսուս Քրիստոսի և Եկեղեցու ճշմարտացիության առավել զորավոր վկան է: Կարդացեք «Մորմոնի Գիրքը որպես Աստծո զորավոր վկա», *Ensign* կամ *Liahona*, նոյեմբեր 2017, 107-9):

ԴԱՍ 6. ՈՒՍՈՒՑՁԻ ՆՅՈՒԹ

Մորմոնի Գիրքը՝ մեր կրոնի պորտաքարը

Մարգարե Զոգեֆ Մմիթը հայտարարել է, որ Մորմոնի Գիրքը հանդիսանում «մեր կրոնի պորտաքարը» (Մորմոնի Գրքի Նախաբանը): Այս դասը նախատեսված է, որպեսզի օգնի ուսանողներին բացատրել, թե ինչու է Մորմոնի Գիրքը մեր կրոնի պորտաքարը, և ամրապնդի դրա դեմ ուղղված քննադատություններին արձագանքելու նրանց կարողությունը:

Ուսուցման առաջարկներ

ԲԱՐԵԼԱԿԵԼ ՄԵՐ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Կենտրոնական ուսանողների վրա: Ուսուցանելիս հիշեք, որ պետք է կենտրոնական ուսանողների անհատական կարիքների վրա: Զգույշ եղեք, որ դասի նյութն ավելի կարևոր չդառնա, քան դասարանում սովորող աշակերտները: Անընդհատ գնահատեք ուսանողների ներգրավվածությունը և թույլ տվեք, որ քննարկման ընթացքում բավականաչափ ճկունություն պահպանվի՝ նրանց կարիքները բավարարելու համար:

Մորմոնի Գիրքն առանցքային դեր ունի Աստծո Եկեղեցում և մեր վկայություններում:

Կարող եք դասը սկսել՝ ցույց տալով Մորմոնի Գրքի օրինակը և կարճ քննարկում ունենալ հետևյալ հայտարարության և հարցի շուրջ.

Եկեղեցու քննադատներից եկող շատ հարձակումներ ուղղված են Մորմոնի Գրքի դեմ: Ձեր կարծիքով, ինչո՞ւ է դա այդպես:

Հրավիրեք ուսանողներին բացել կամ գտնել Մորմոնի Գրքի նախաբանի էջը: Բացատրեք, որ 1841 թվականի նոյեմբերի 28-ին Մարգարե Զոգեֆ Մմիթը օրն անցկացրեց Տասներկու Առաքյալների հետ խորհրդակցության մեջ՝ այդ քվորումի նախագահ Բրիգամ Յանգի տանը (տես History, 1838–1856 [Manuscript History of the Church], volume C-1, 1255,

josephsmithpapers.org): Հանձնարարեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մորմոնի գրքի նախաբանի վեցերորդ պարբերությունը, որպեսզի հասկանաք, թե Զոգեֆն ինչ ասաց առաքյալներին: Կարող եք առաջարկել ուսանողներին նշել Զոգեֆի ուսուցանած ճշմարտությունները:

- Ինչ-որ մեկը պատրաստ կլինի՞ կիսվել իր մտքերով կամ վկայություններով այս ուսմունքներից որևէ մեկի վերաբերյալ: (*Լշում*. Երբ ուսանողները պատասխանեն, հաշվի առեք ուսուցման հետևյալ գաղափարները, որպեսզի օգնեք նրանց հասկանալ Տասներկուսին ուսուցանած Զոգեֆի ճշմարտությունները:

Մորմոնի Գիրքն ամենաճիշտն է երկրի վրա եղած բոլոր գրքերից:

Անհրաժեշտության դեպքում օգնեք ուսանողներին հասկանալ «Մորմոնի Գիրքն ամենաճիշտն է երկրի վրա եղած բոլոր գրքերից» արտահայտությունը՝ օգտագործելով նախապատրաստական նյութի 2-րդ բաժնի տեղեկությունը:

Ուսանողներին կարող եք բացատրել նաև, որ Զոգեֆ Մմիթի հայտարարությունը չի նշանակում, որ Մորմոնի Գրքի տպագրված հրատարակությունները զերծ էին սխալներից: 1829 թվականից սկսած ուղղումներ են արվել Մորմոնի Գրքի յուրաքանչյուր հրատարակության մեջ: Ուղղումներն առնչվել են աննշան փոփոխություններին՝ բառերի, ուղղագրության, կետադրության կամ մեծատառերի հետ կապված: Այս հայտարարության մեջ *ճիշտ* բառը վերաբերում է Մորմոնի Գրքի ազդեցիկ ճշմարտություններին, բայց չի նշանակում, որ տպագրված տեքստը զերծ էր սխալներից:

Մորմոնի Գիրքը մեր կրոնի պորտաքարն է:

Երբ ուսանողները նշեն, որ Մորմոնի Գիրքը հանդիսանում է «մեր կրոնի պորտաքարը», կարող եք ցույց տալ պորտաքարի մի նկար, ինչպես այն մեկը, որը գտնվում է նախապատրաստական նյութում: Հրավիրեք ուսանողներին բացատրել, թե իրենց կարծիքով, ինչու է պորտաքարը լավ փոխաբերություն հանդիսանում Մորմոնի Գրքի համար:

Հրավիրեք որևէ ուսանողի կարդալ և ամփոփել Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոնի հետևյալ խոսքերը, որը գտնվում է նախապատրաստական նյութի 3-րդ բաժնում: (Այդ հայտարարությունը երեք եղանակներով բացատրում է, որ Մորմոնի Գիրքը «մեր կրոնի պորտաքարն է»): Կարող եք տալ հետևյալ հարցերը կամ դրանցից մի քանիսը, որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ Մորմոնի Գրքի պորտաքար լինելու մասին Նախագահ Բենսոնի ուսմունքները:

- Ինչպե՞ս է Մորմոնի Գիրքը գորացրել ձեր վկայությունը Փրկիչ Հիսուս Քրիստոսի մասին:
- Ինչպե՞ս է Եկեղեցին կանգնում կամ ընկնում Մորմոնի Գրքի ճշմարտացիության շնորհիվ:
- Ինչպե՞ս է Մորմոնի Գրքի մասին ձեր վկայությունն ամրապնդել Եկեղեցու այլ վարդապետությունների և ուսմունքների մասին ձեր վկայությունը:
- Արդյո՞ք Մորմոնի Գիրքը պորտաքար է դարձել ձեր անձնական վկայության համար: Եթե այո, ապա՝ ինչպե՞ս:

Մենք կարող ենք ավելի մոտենալ Աստծուն, երբ հետևենք Մորմոնի Գրքի ուսմունքներին:

Ուսանողներին բաժանեք փոքր խմբերի և հրավիրեք նրանց կիսվել և բացատրել Մորմոնի Գրքի այն հատվածները, որոնք օգնել են նրանց ավելի մոտենալ Աստծուն: (Ուսանողները, ովքեր ուսումնասիրել են նախապատրաստական նյութը, կարող են անդրադառնալ իրենց գրածին, երբ ավարտեն 4-րդ բաժինը): Կարող եք նաև հրավիրել, որ ուսանողներն իրենց խմբերում քննարկեն,

թե իրենց ընտրած հատվածներում արձանագրված ուսմունքների կիրառությունն ինչպես է օգնում նրանց ավելի շատ նմանվել Հիսուս Քրիստոսին:

Եկեղեցու թշնամիները փորձում են վարկաբեկել Մորմոնի Գիրքը:

Ցուցադրեք Կիրակնօրյա դպրոցի նախկին գերագույն նախագահ՝ Եղբայր Թեդ Ռ. Քալիսթերի հետևյալ խոսքերը և հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ դրանք:



[Մորմոնի Գիրքը] ճշմարտության կշեռքի նժարի վրա այնպիսի քաշ ունի, որ գերակշռում է բոլոր քննադատների փաստարկները: Ինչո՞ւ: Որովհետև, եթե այն ճիշտ է, ապա Ջոզեֆ Սմիթը մարգարե էր, և սա Հիսուս Քրիստոսի վերականգնված Եկեղեցին է, անկախ նրանից, պատմական, թե այլ բնույթի ինչ հակառակ փաստարկներ կան: Այս պատճառով քննադատները ձգտում են հերքել Մորմոնի Գիրքը, սակայն նրանց առջև կանգնող խոչընդոտները անհաղթահարելի են, քանի որ այս գիրքը ճշմարիտ է: («Մորմոնի Գիրքը որպես Աստծո գորավոր վկա», *Ensign* կամ *Liahona*, նոյեմբեր 2017, 107):

Օգնեք ուսանողներին էլեկտրոնային տարբերակով գտնել հետևյալ հուսալի աղբյուրները կամ անհրաժեշտության դեպքում նրանց տրամադրեք թղթային օրինակները: Բաժանեք նյութերն ուսանողներին և խնդրեք նրանց վերհիշել ու փնտրել Մորմոնի Գրքի դեմ քննադատների որոշ փաստարկներ և մտածել, թե մենք ինչպես կարող ենք օգտագործել հետևյալ նյութերը նման քննադատություններին արձագանքելու համար, երբ մենք ձգտում ենք ձեռք բերել հոգևոր գիտելիք և մեծացնել վկայությունը: Խնդրեք ուսանողներին կիսվել իրենց հասկացած մտքերով: Նրանք կարող են դա անել փոքր խմբերով կամ դասարանի բոլոր անդամներով:

- Մորմոն 8.14–22: Մորմոնին ավարտում է իր հոր՝ Մորմոնի գրառումը, նախագգուշացնելով նրանց, ովքեր քննադատում են Մորմոնի Գիրքը վերջին օրերին:

- Եթեր 12.23–29: Մորմոնին մտահոգություն է հայտնում, որ ոմանք կարող են քննադատել նրա գրածի թույլությունը և բաց թողնել Մորմոնի Գրքի ուղերձի զորությունը:
- Թադ Ռ. Քալիսթեր, «Մորմոնի Գիրքը որպես Աստծո զորավոր վկա», *Ensign* կամ *Liahon*, նոյեմբեր 2017, 107–9: (Կարող եք օգտվել Եղբայր Քալիսթերի ելույթի առաջին կեսից): Կամ ուսանողները կարող են դիտել “Compelling Witness” (7:46) տեսանյութը:
- “Critics of the Book of Mormon,” Church History Topics, history.ChurchofJesusChrist.org.
- “The Book of Mormon and DNA Studies,” Gospel Topics, topics.ChurchofJesusChrist.org. (Պարզապես կարող եք օգտագործել “The Ancestors of the American Indians” և “Conclusion” բաժինները):
- Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Ապահովություն հոգու համար», *Ensign* կամ *Liahon*, նոյեմբեր 2009, 88–90: (Կարող եք ուսումնասիրել Երեց Հոլլանդի ելույթի միայն երկրորդ կեսը):

Իրենց գտածի վերաբերյալ ուսանողների քննարկումներից հետո տվեք հետևյալ հարցերից մեկը կամ մի քանիսը.

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ Աստված պարզապես լիարժեք նյութական ապացույցներ չի ներկայացնում այն մասին, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է:
- Ի՞նչ խորհուրդ կտայիք ընկերոջը կամ ընտանիքի անդամին, ով ձեզ ասում է, որ ինքը խնդիրներ ունի Մորմոնի Գրքի քննադատությունների հետ կապված: Ուրիշ ի՞նչ կարող եք դուք անել օգնելու համար:
- Ի՞նչ եք անում (կամ ինչ կարող եք անել), եթե կարծես թե լավ պատասխան չեք ստանում ձեր լսած քննադատության համար:

Մի քանի րոպե տրամադրեք, որպեսզի ուսանողները մտածեն Մորմոնի Գրքի իրենց անձնական ուսումնասիրության արդյունավետության մասին

և փոփոխություններ կատարելու ծրագրեր կազմեն, ինչպես հուշում է Հոգին: Խրախուսեք ուսանողներին իրենց ծրագրերում նպատակ դնել, որ ուսումնասիրեն և աղոթեն, որքան անհրաժեշտ է, որպեսզի Մորմոնի Գիրքը հանդիսանա նրանց վկայության պորտաքարը: Մինչ նրանք մտածում են, կարող եք ցուցադրել Յոթանասունից Երեց Քեվին Վ. Փիրսոնի հետևյալ հայտարարությունը:



Եթե դուք մաքառում եք, շփոթված եք կամ հոգևորապես մոլորված եք, ես ձեզ հորդորում եմ անել այն բանը, որ ես գիտեմ ձեզ կօգնի վերադառնալ: Սկսեք նորից աղոթքով ուսումնասիրել Մորմոնի գիրքը և ապրեք նրա ուսմունքներով՝ ամեն օր, ամեն օր, ամեն օր: Ես վկայում եմ Մորմոնի գրքում եղած շատ մեծ ուժի մասին, որը կփոխի ձեր կյանքը և կուժեղացնի ձեր ցանկությունը՝ հետևել Քրիստոսին: Սուրբ Հոգին կփոխի ձեր սիրտը և կօգնի ձեզ տեսնել «իրերն այնպես, ինչպես նրանք իրականում կան» [Հակոբ 4.13]: Նա ցույց կտա ձեզ, թե դուք ինչ պետք է անեք հաջորդիվ: (Քեվին Վ. Փիրսոն, «Մնալ կենաց ծառի մոտ», *Ensign* կամ *Liahon*, մայիս 2015, 116):

Հրավիրեք մի քանի ուսանողների, ովքեր կցանկանային կիսվել Մորմոնի Գրքի մասին կարճ վկայությամբ, բերել իրենց վկայությունները: Դուք նույնպես կարող եք կիսվել ձեր վկայությամբ:

Հաջորդ անգամ

Հորդորեք ուսանողներին մտածել, թե շաբաթվա ընթացքում որքան հաճախ են նրանք զգում քահանայության իշխանության և քահանայության բանալիների օրհնությունները: Խրախուսեք նրանց ուսումնասիրել հաջորդ դասի նախապատրաստական նյութը քահանայություն վերականգնման մասին և ուշադրություն դարձնել, թե քահանայության շնորհիվ ինչպես կարող են ստանալ Հիսուս Քրիստոսի փրկարար զորությունը:



ՀԱՍ 7. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱՊԱՏԱՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Քահանայության վերականգնումը

Հիշեք, թե վերջին անգամ ե՞րբ եք մասնակցել քահանայության որևէ արարողության կամ ստացել քահանայության օրհնություն: Ի՞նչ զգացիք այդ փորձառության պահին: Ուսումնասիրելու ժամանակ մտածեք, թե քահանայության իշխանությունն ու բանալիներն ինչպես են ձեզ թույլ տվել ստանալու Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի օրհնությունները:

ԲԱԺԻՆ 1

Ինչպե՞ս Տերը վերականգնեց քահանայության իշխանությունը Երկրի վրա:

Ջոզեֆ Սմիթն ու Օլիվեր Քաուդերին հարցեր ունեին քահանայության իշխանության հետ կապված, երբ թարգմանում էին Մորմոնի Գիրքը: Ջոզեֆը և Օլիվերը 3 Նեփիում կարդացին, որ, երբ Հիսուսը սովորեցրեց Նեփիացի տասներկու աշակերտներին, որ մկրտությունն անհրաժեշտ է փրկության համար, Նա աշակերտներին քահանայության իշխանություն տվեց մկրտելու համար (տես Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.68, 3 Նեփի 11.21–27):

Ջոզեֆն ու Օլիվերը ցնցված էին այդ ուսմունքներից: . . . Ջոզեֆը երբևէ չէր մկրտվել, և նա ցանկանում էր ավելին իմանալ այդ արարողության

և այն իրականացնելու անհրաժեշտ իշխանության մասին:

1829 թվականի մայիսի 15-ին անձրևները դադարել էին և Ջոզեֆն ու Օլիվերը գնացին Սասքուեհանա գետի մոտակա անտառը: Ծնկի իջնելով՝ նրանք հարցրին Աստծուն մկրտության և մեղքերի թողության մասին: Երբ նրանք աղոթում էին, Քավիչի ձայնը խաղաղությամբ խոսեց նրանց հետ, և լույսի ամպի մեջ մի հրեշտակ հայտնվեց: Նա ներկայացավ որպես Հովհաննես Մկրտիչ և իր ձեռքերը դրեց նրանց գլխին: Ուրախությունը լցրեց նրանց սիրտը, մինչ նրանք օղակված էին Աստծո սիրով: (Սրբեր. Հիսուս Քրիստոսի Եկեղեցու պատմությունը վերջին օրերում, հատ. 1, ճշմարտության չափանիշը, 1815–1846 [2018], 66–67):



“The Restoration of the Aaronic and Melchizedek Priesthoods,” *Ensign*, Dec. 1996, 30–47.)



Տերն աստիճանաբար ավելի շատ բաներ հայտնեց քահանայության և նրա գործառույթների մասին և ուղարկեց սուրհանդակներ, որոնք քահանայության լրացուցիչ բանալիներ հանձնեցին Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին: Հետևյալ աղյուսակը ներկայացնում է այդ վերականգնումը:

Ապա Հովհաննես Մկրտիչը նրանց շնորհեց Սիարոնյան Քահանայությունը, ինչպես գրված է Ջոզեֆ Սմիթ-Պատմություն և Վարդապետություն և Ուխտեր 13-ում:



Ուսումնասիրեք դասին նախապատրաստվելիս

Կարդացեք Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.68-70, 72: (Տես նաև Վարդապետություն և Ուխտեր 13):

Որոշ ժամանակ անց Ջոզեֆ Սմիթը և Օլիվեր Քաուդերին Սիարոնյան Քահանայություն ստացան Հովհաննես Մկրտիչից, իսկ Մելքիսեդեկյան Քահանայությունը ստացան Պետրոսից, Հակոբոսից և Հովհաննեսից (տես Վարդապետություն և Ուխտեր 27.12–13): Այս իրադարձության ճշգրիտ ամսաթիվն անհայտ է: Մակայն, պատմական ապացույցները ցույց են տալիս, որ այն տեղի է ունեցել 1829 թվականի մայիսին կամ հունիսին: (See Larry C. Porter,

Քահանայության իշխանության, բանալիների և գիտելիքի վերականգնումը

Ամսաթիվը	Երկնային սուրհանդակներ և հայտնություններ	Վերականգնվեցին քահանայության իշխանությունը, բանալիները և գիտելիքը:
1829	Հովհաննես Մկրտիչը	Շնորհեց Սիարոնյան Քահանայության իշխանությունը և բանալիները (Վարդապետություն և Ուխտեր 13):
1829	Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը	Շնորհեցին Մելքիսեդեկյան Քահանայությունը և արքայության բանալիները (Վարդապետություն և Ուխտեր 27.12–13):

Ամսաթիվը	Երկնային սուրհանդակներ և հայտնություններ	Վերականգնվեցին քահանայության իշխանությունը, բանալիները և գիտելիքը:
1830	Վարդապետություն և Ուխտեր 20	Հայտնությամբ տրվեց մկրտության և հաղորդության ընթացակարգերը և ընդգծվեց քահանայություն կրողների պարտականությունները:
1832	Վարդապետություն և Ուխտեր 84	Հայտնությամբ տրվեց քահանայության պատմությունը, նպատակը և ուխտերը:
1831, 1835	Վարդապետություն և Ուխտեր 107	Հայտնությամբ տրվեց քահանայության պաշտոնների և քվորումների անունները, պաշտոնավարումը և կառուցվածքը:
1836	Մովսեսը	Հանձնեց Իսրայելի տունը հավաքելու բանալիները (Վարդապետություն և Ուխտեր 110.11):
1836	Եղիասը	Հանձնեց «Աբրահամի ավետարանի տնտեսությունը» (Վարդապետություն և Ուխտեր 110.12):
1836	Եղիան	Հանձնեց կնքման զորության բանալիները (Վարդապետություն և Ուխտեր 110.13–16):
1839	Վարդապետություն և Ուխտեր 121.34-46	Հայտնությամբ տրվեցին գիտելիքներ քահանայության կրողների վարքի մասին:

Ամսաթիվը	Երկնային սուրհանդակներ և հայտնություններ	Վերականգնվեցին քահանայության իշխանությունը, բանալիները և գիտելիքը:
Անհայտ	Ադամը, Գաբրիելը, Ռաֆայելը և տարբեր հրեշտակներ	Հայտարարեցին իրենց տնտեսությունները, իրավունքները, բանալիները և իրենց քահանայության զորությունը (Վարդապետություն և Ուխտեր 128.21):
1978	Պաշտոնական Հայտարարություն 2	Հայտնությամբ տրվեց, որ Հիսուս Քրիստոսի եկեղեցու բոլոր արժանի արական սեռի անդամները կարող են ստանալ քահանայությունը:

Նշում. Քահանայության հատուկ բանալիների նշանակությունը ավելի մանրամասն կքննարկվի դաս 16-ում՝ «Կիրթլենդի տաճարը և քահանայության բանալիները»:



Մտածեք դասին Նախապատրաստվելիս

Ինչպե՞ս կարող է քահանայության վերաբերյալ ձեր վկայությունն ամրապնդվել, իմանալով, թե ինչպես է այն վերականգնվել երկրի վրա:

ԲԱԺԻՆ 2

Ո՞րն է կապը քահանայության իշխանության և քահանայության բանալիների միջև:

Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթն ուսուցանել է.



Ընդհանրապես Զահանայությունը իշխանություն է, որը տրվում է մարդուն՝ գործելու Աստծո համար: Այս իշխանությունը տրվում է յուրաքանչյուր տղամարդու, որը կարգված է Զահանայության որևէ աստիճանի:

Սակայն անհրաժեշտ է, որ այս իշխանության ներքո կատարված յուրաքանչյուր գործողություն կատարվի պատշաճ ժամանակին և տեղում, պատշաճ ձևով և կարգով: Այդ գործերն ուղղորդող գործությունը կազմում է Զահանայության բանալիները: *Եկեղեցու նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Ֆ. Սմիթ* [1998], 224):

Առաջին Նախագահությունից Նախագահ Դավիթ Ն. Օուքսը նույնպես սովորեցրել է.



«Զահանայության բանալիները Աստծո իշխանությունն են, որը Նա տվել է քահանայություն [կրողներին]՝ երկրի վրա Իր քահանայության օգտագործումը ղեկավարելու, վերահսկելու և կառավարելու համար» [*Handbook 2: Administering the Church* [2010], 2.1.1]: Եկեղեցում տեղի ունեցող ցանկացած գործողություն կամ արարողություն կատարվում է այդ գործողության համար պատասխանատու բանալիներ կրողի ուղղակի կամ անուղղակի լիազորության ներքո: Երեց Մ. Ռասսել Բալլարդը բացատրել է. «Նրանք ովքեր ունեն քահանայության բանալիներ . . . հնարավոր են դարձնում իրենց ղեկավարության ներքո գտնվող ցանկացած հավատարիմ ծառայողի կիրառել քահանայության իշխանությունը և օգտվել քահանայության զորությունից»: . . .

Վերջին հաշվով՝ Հիսուս Քրիստոսը, ում քահանայությունն է մեզ շնորհվում, կրում է քահանայության բոլոր բանալիները: Նա միակն է, ով որոշում է, թե ինչ բանալիներ պատվիրակել մահկանացուներին և ինչպես այդ բանալիները օգտագործել: (Դավիթ Ն. Օուքս, «Զահանայության բանալիները և իշխանությունը», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2014, 49-50):

ԲԱԺԻՆ 3

Ինչպե՞ս են քահանայության արարողություններն օգնում մեզ ստանալ Փրկիչի քավիչ զորությունը:

Եկեղեցում արարողությունը սրբազան, կանոնակարգված գործողություն է, որը կատարվում է քահանայության իշխանությամբ: Որոշ արարողություններ կարևոր են մեր վեհացման համար: Այս արարողությունները կոչվում են փրկարար արարողություններ: Դրանք են՝ մկրտությունը, հաստատումը, Մեղքիսեղեկյան Զահանայության կարգումը (տղամարդկանց համար), տաճարի օծումը և ամուսնության կնքումը: Յուրաքանչյուր նման արարողության ժամանակ մենք հանդիսավոր ուխտ ենք կապում Տիրոջ հետ: («Ordinances,” Gospel Topics, topics .ChurchofJesusChrist.org)

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվ Գ. Ռենլանդը մեկնաբանել է այն զորությունը, որը մենք ստանում ենք քահանայության արարողությունների շնորհիվ.



Երկնային Հոր ծրագրի իրականացման համար Քրիստոսի քավիչ զորությունը պետք է հասանելի լինի Աստծո զավակների համար [տես 1 Նեփի 11.31, 2 Նեփի 2.8]: Քահանայությունը հասանելի է դարձնում այդ հնարավորությունները: . . . Քահանայությունը էական է, որովհետև երկրի վրա անհրաժեշտ արարողություններն ու ուխտերը սպասավորվում են միայն նրա իշխանությամբ: Եթե քահանայությունը թերանա հասանելի դարձնել Փրկիչի քավիչ զոհաբերությունից օգտվելու հնարավորությունը, ուրիշ ի՞նչ գործառնություն կունենա այն: . . .

. . . Քահանայության միջոցով աստվածայնության զորությունն է բացահայտվում բոլոր նրանց կյանքում, ովքեր կապում և պահում են ավետարանի ուխտերը և ստանում են ուղեկից արարողությունները [տես Վարդապետություն և Ուխտեր 84.19–21]: Այդպես է մեզանից յուրաքանչյուրը գալիս Քրիստոսի մոտ, մաքրագործվում և հաշտվում Աստծո հետ:

Քրիստոսի քավիչ գործությունը հասանելի է քահանայության միջոցով: (Դեյլ Գ. Ռենլանդ, «Քահանայությունը և Փրկիչի քավող զոհաբերությունը», *Ensign* կամ *Liahona*, նոյեմբեր 2017, 65):

Նախագահ Օուքսը նաև առաջարկել է հետևյալ բացատրությունը, թե ինչպես է Միաբնակության Քահանայությունը ուղի հանդիսանում Տիրոջ մաքրագործող գործության ստացման համար:



Մկրտությունը մեղքերի թողության համար է, իսկ հաղորդությունը մկրտության ուխտերի և օրհնությունների նորոգումն է: Երկուսին էլ պետք է նախորդի ապաշխարությունը:

[Մեզանից] ոչ մեկը չի ապրել առանց մեղքի՝ [մեր] մկրտությունից հետո: Մեր մկրտությունից հետո հետագա մաքրման համար առանց որոշակի նախապատրաստության մեզանից յուրաքանչյուրը կորած կլինի հոգևոր բաների համար:

Մեզ պատվիրված է ապաշխարել մեր մեղքերի համար և գալ դեպի Տերը կոտրված սրտով ու փշրված հոգով և ճաշակել հաղորդությունը՝ համապատասխան դրա ուխտերի: Երբ մենք այս եղանակով նորոգում ենք մեր մկրտության ուխտերը, Տերը նորոգում է մեր մկրտության մաքրագործող ազդեցությունը:

Մենք չենք կարող այս գործում թերագնահատել Միաբնակության Քահանայության կարևորությունը: Մեղքերի թողությանը վերաբերող այս բոլոր կարևոր քայլերը կատարվում են մկրտության փրկող արարողության և հաղորդության նորոգող արարողության միջոցով: (Dallin H. Oaks, "The Aaronic Priesthood and the Sacrament," *Ensign*, Nov. 1998, 38)



Գրի առեք ձեր մտքերը

Ինչպե՞ս են քահանայության օրհնություններն օգնել ձեզ ձեռք բերել Փրկիչի Քավության օրհնությունները: Գրի առեք ձեր մտքերը օրագրում կամ ձեր հատկացված տողերում: _

Ցանկանում ես ավելին: (Ոչ պարտադիր)

Ի՞նչ է քահանայության բանալիները:



Նախագահ Դալլին Ն. Օուքսը «Քահանայության բանալիները և իշխանությունը» իր ելույթում ուսուցանում է քահանայության իշխանության մասին (*Ensign* կամ *Liahona*, մայիս 2014, 49-52):

Priesthood Keys: The Restoration of Priesthood Keys (2:07) տեսանյութում Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Լ. Թոմ Փերին պատմում է մի դեպքի մասին, որը նրան ուսուցանել է քահանայության բանալիների կարևորության մասին:

Քահանայությունն ինչպե՞ս է Փրկիչի գործությունը փոխանցում ուրիշներին:

How the Priesthood Works (3:46) տեսանյութում Երեց Դեյլ Գ. Ռենլանդը հրթիռի կողմից բեռի տեղափոխումը համեմատում է նրա հետ, թե ինչպես է քահանայությունը Հիսուս Քրիստոսի քավությունը հասանելի դարձնում Աստծո զավակներին:

Ministry of Joseph Smith: The Restoration of Priesthood Authority (1:20) տեսանյութը պատկերում է քահանայության վերականգնումը և ներառում է Մարգարե Ջոզեֆ Սմիթի որոշ ուսմունքներ քահանայության մասին:

ԴԱՍ 7. ՈՒՍՈՒՑՁԻ ՆՅՈՒԹ

Քահանայության վերականգնումը

Ուրացության ժամանակաշրջանից հետո Աստծո քահանայության իշխանությունը վերականգնվեց Երկրի վրա: Այդ վերականգնումն ուղի նախապատրաստեց Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կազմավորման համար: Այս դասի ընթացքում ուսանողները կսովորեն, թե ինչու է քահանայությունը կարևոր Տիրոջ Եկեղեցու համար, և ինչպես են արարողությունները թույլ տալիս, որ մենք ստանանք Փրկիչի զորությունը:

Ուսուցման առաջարկներ

ԲԱՐԵԼԱԿԵԼ ՄԵՐ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Տեսեք ձեր ուսանողներին այնպես, ինչպիսին նրանք կարող են դառնալ: Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ուսուցանել է. «Մենք պարտավոր ենք մարդկանց տեսնել ոչ թե այնպես, ինչպիսին նրանք ներկայումս են, այլ այնպես, ինչպիսին նրանք կարող են դառնալ» («Տեսեք ուրիշներին այնպես, ինչպիսին նրանք կարող են դառնալ», *Ensign* կամ *Liahona*, նոյեմբեր 2012, 70): Աղոթեք, որ կարողանաք ձեր ուսանողներին տեսնել այնպես, ինչպես Երկնային Հայրն է տեսնում նրանց: Այդպես վարվելով, դուք կհասկանաք յուրաքանչյուր ուսանողի արժեքը և կզգաք Երկնային Հոր սերն ու հոգածությունը Իր յուրաքանչյուր զավակի համար:

կապված է Երկրի վրա, երկնքում կապելու կարողությամբ, Աստծո ճշմարիտ Եկեղեցու համար նույնքան կարևոր է, որքան և եզակի, և առանց դրա չէր լինի Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին: (Jeffrey R. Holland, “Our Most Distinguishing Feature,” *Ensign or Liahona*, May 2005, 43, մզեցված շեղագիրն ավելացված է):

- Ո՞ր բառերն ու արտահայտություններն են առանձնացել ձեզ համար Երեց Հովանդի հայտարարության մեջ: Ինչո՞ւ:

Ուսանողների կարծիքներն ու քննարկումները վարելու ընթացքում կարող եք օգտագործել հետևյալ թեմաներից և հարցերից մի քանիսը, որպեսզի օգնեք ուսանողներին ավելի խորը հասկանալ Երեց Հովանդի հայտարարության մի քանի կետեր: Միգուցե օգտակար կլինի մանրակրկիտ քննարկել մեկ կամ երկու հարցեր, քան՝ փորձել լուսաբանել բոլոր հարցերը: Ձեր քննարկումը կարող է զարգանալ, երբ ուսանողները նաև կիսվեն իրենց մտքերով այն մասին, թե ինչ են սովորել նախապատրաստական նյութից:

Նշում. Այս դասի երկրորդ կեսի ժամանակ դուք կքննարկեք արարողությունները: Մի մոռացեք բավարար ժամանակ թողնել այդ քննարկման համար, որպեսզի ուսանողները կարողանան ավելի լավ ճանաչել և հասկանալ արարողությունների կարևորությունը:

Քահանայությունը կարևոր է Տիրոջ եկեղեցու համար (տես նախապատրաստական նյութի բաժին 1-ը):

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է քահանայությունը կարևոր Տիրոջ եկեղեցու համար: Ի՞նչ գիտելիքներ և բանալիներ կբացակայեին, եթե քահանայությունը չվերականգնվեր:

Քահանայությունը կարևոր է Տիրոջ եկեղեցու համար:

Կարող եք ուսանողների ժամանելուց առաջ փակցնել հետևյալ հարցը, այնուհետև դասը սկսելուց հետո խնդրեք նրանց, որ կիսվեն իրենց մտքերով այդ մասին:

- Ե՞րբ եք վերջերս օրհնված զգացել քահանայության շնորհիվ:

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Զեֆրի Ռ. Հովանդի հայտարարությունը հետևյալ վարդապետության մասին.



Աստծո քահանայությունը իր բանալիներով, իր արարողություններով, իր աստվածային ծագումով և այն, ինչ

- Ինչպե՞ս է քահանայությունը կարևոր ձեր կյանքում:

Քահանայությունն ունի աստվածային ծագում (տես նախապատրաստական նյութի բաժին 1-ը):

- Ինչպե՞ս է քահանայությունը վերականգնվել:
- Ի՞նչ է ուսուցանում քահանայության վերականգնումը ձեր երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի մասին:

Քահանայության բանալիները կարևոր են Տիրոջ եկեղեցու համար (տես նախապատրաստական նյութի բաժին 2-ը):

- Որո՞նք են քահանայության բանալիները:
- Քահանայության բանալիներն ինչպե՞ս են օրհնություն դարձել ձեր կյանքում:

Երբ ուսանողները կիսվեն փորձով և վկայություն բերեն քահանայության և դրա վերականգնման մասին, դուք կարող եք նաև կիսել ձեր երախտագիտությունն ու վկայությունն այն մասին, թե ինչպես է քահանայության վերականգնումն օրհնել ձեր անձնական կյանքը:

Քահանայության արարողությունները և ուխտերը անհրաժեշտ են մեր փրկության համար:

Բացատրեք, որ 1832 թվականի սեպտեմբերին, Պետրոսից, Հակոբոսից և Հովհաննեսից Մելքիսեդեկյան քահանայությունը ստանալուց երկու տարի անց, Ջոզեֆ Սմիթը հայտնություն ստացավ, որն օգնում է մեզ ավելի լավ հասկանալ քահանայությունը: Այդ հայտնությունը ներառում էր այն ճշմարտությունը, որ քահանայության իշխանությամբ սպասավորվող փրկող արարողություններն օգնում են, որ մենք պատրաստվենք վերադառնալ Աստծո ներկայությունը: Հրավիրեք ուսանողներին ուսումնասիրել Վարդապետություն և Ուխտեր 84.18-22 հատվածները և ուշադրություն դարձնել, թե ինչպես են այդ արարողություններն օգնում մեզ պատրաստվել՝ վերադառնալու Աստծո ներկայությունը:

- Ըստ այս հատվածների, ի՞նչ կարևոր օրհնություն ենք ստանում քահանայության արարողությունների միջոցով:
- Որո՞նք են «աստվածայնության զորությունը» արտահայտության որոշ հնարավոր իմաստները: (Ուսանողների պատասխաններից հետո կարող եք առաջարկել, որ «աստվածայնություն» նշանակում է «աստվածային»: Աստվածայնության զորությունը մեզ՝ Իր նման դարձնելու Աստծո զորությունն է):

Ցուցադրեք և կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի հետևյալ խոսքը և հրավիրեք ուսանողներին ուշադրություն դարձնել «աստվածայնության զորությունը» արտահայտության հնարավոր իմաստներին:



Քահանայության արարողությունները բացում են դուռը և հնարավորություն են տալիս ստանալ աստվածայնության զորությունը: . . . Մարդկային միտքն ու մահկանացու լեզուն պարզապես չեն կարող ճշգրիտ կամ համարժեք բնութագրել «աստվածայնության զորությունը» սուրբգրային արտահայտության իմաստը: Բայց Քավության օրհնությունների ամբողջությունը՝ փրկագնումը մեղքից, բարիք գործելու և լավը դառնալու ուժը, անձնական խաղաղության հոգևոր պարգևը, փոխհատուցվող ունակությունները, որոնք օգնում են մեզ դիմագրավել հիասթափությանը, անարդարությանը, անհավասարությանը և այլն, անշուշտ, կազմում են աստվածայնության զորության գոնե մի մասը: . . . Փրկիչին մոտենալու համար անհատը նախ *պետք է* անցնի մկրտության դարպասը և ստանա Սուրբ Հոգու պարգևը, իսկ այնուհետև շարունակի առաջ ընթանալ այն ուխտերի և արարողությունների ճանապարհով, որը տանում է դեպի Փրկիչը և Նրա Քավության օրհնությունները (տես 2 Նեփի 31): Քահանայության արարողությունները անհրաժեշտ են, որպեսզի լիովին «[զանց] Քրիստոսի մոտ և կատարելագործվեն» նրանում» (Մորոնի 10:32, տես նաև 30–33 հատվածները): Առանց արարողությունների անհատը չի կարող ստանալ Տիրոջ անսահման և հավերժական քավիչ զոհաբերության

միջոցով հնարավոր բոլոր օրհնությունները (տես Ավմա 34.10–14), նույնիսկ՝ աստվածայնության զորությունը: (David A. Bednar, *Power to Become* [2014], 75–77):

- Մենք ի՞նչ ենք սովորում Երեց Բեղնարի հայտարարությունից «աստվածայնության զորության» մասին: Մենք ի՞նչ ենք սովորում քահանայության արարողությունների նպատակի մասին: (Ուսանողների խոսքերի օգնությամբ գրեք կամ ցուցադրեք նմանատիպ մի ճշմարտություն. **Քահանայության արարողությունների և ուխտերի միջոցով մենք կարող ենք ստանալ Տիրոջ Քավության օրհնությունները, ինչը մեզ զորություն է տալիս դառնալ Աստծու նման**):
- Ձեր կարծիքով ինչպե՞ս են Ահարոնյան և Մելքիսեդեկյան հատուկ արարողությունները մեզ կապում Փրկիչի Քավության օրհնությունների հետ: (Անհրաժեշտության դեպքում ուսանողներին ժամանակ տվեք վերանայել նախապատրաստական նյութի 3-րդ բաժնի պնդումները):

Ուսանողներին տվեք մի քանի լուսավորված պատկերներ՝ ցուցադրելու այն քահանայության արարողությունները, որոնց նրանք վերջերս են մասնակցել: Խնդրեք նրանց մտաբերել իրենց ունեցած զգացումները և մտածել այն մասին, թե այդ արարողություններն ինչ են նշանակում նրանց հավերժական առաջընթացի համար: Այնուհետև ցուցադրեք հետևյալ հարցերը, որպեսզի ուսանողները մտածեն դրանց մասին.

- Ո՞ր արարողությունը կարող է ավելի իմաստալից դառնալ ձեզ համար, երբ կիրառեք այն, ինչ այսօր սովորել եք: (Խրախուսեք ուսանողներին գրել և գործել իրենց տպավորությունների համաձայն):
- Ի՞նչ եք դուք սովորել և զգացել այսօր, որը մեծացրել է քահանայության արարողություններին մասնակցելու ձեր ցանկությունը:

Անհրաժեշտության դեպքում հրավիրեք ուսանողներին կիսվել իրենց վկայություններով այն մասին, թե ինչպես են քահանայության իշխանությունը, բանալիներն ու արարողություններն օգնել նրանց զգալ Երկնային Հոր սերը:

Հաջորդ անգամ

Հրավիրեք ուսանողներին մտածել, թե ինչ դեր է խաղում Եկեղեցին իրենց կյանքում: Երբ նրանք ուսումնասիրեն հաջորդ դասի նախապատրաստական նյութը, խրախուսեք նրանց ուշադրություն դարձնել այն օրհնություններին, որոնք Տերը հասանելի է դարձնում Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու հավատարիմ անդամներին:



ՀԱՍ 8. ՀԱՍՄԱՐՆԻ ՆԱԽԱՊԱՏԱՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Հիսուս Քրիստոսի Եկեղեցու կազմավորումը

Ի՞նչ է ձեզ համար նշանակում Հիսուս Քրիստոսի վերականգնված Եկեղեցու անդամ լինելը: Երբ ուսումնասիրեք այս դասը, մտածեք, թե ինչպես կարող է ձեր մասնակցությունը Տիրոջ Եկեղեցում հանգեցնել ավելի մեծ օրհնությունների ձեր և ձեր ընտանիքի, ինչպես նաև մյուսների համար, որոնց հետ շփում եք ունենում ամբողջ կյանքի ընթացքում:

ԲԱԺԻՆ 1

Ինչո՞վ է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին առանձնանում մյուս բոլոր եկեղեցիներից ու կրոններից:

1830 թվականի ապրիլի վերջին կանգնելով գետակի մոտ, Ջոզեֆ Սմիթը «վկա եղավ իր մոր և հոր մկրտությանը եկեղեցում: Տարիներ շարունակ ճշմարտության որոնման տարբեր ուղիներ անցնելուց հետո նրանք վերջապես միավորվեցին մեկ հավատքում: Երբ հայրը դուրս էր գալիս ջրից, Ջոզեֆը բռնեց նրա ձեռքը, օգնեց, որ ափ դուրս գա և գրկախառնվեց նրա հետ:

«Աստված իմ – հեկեկաց նա, երեսը թաքցնելով հոր գրկում,– ես ապրեցի, որ տեսնեմ հորս՝ Հիսուս Քրիստոսի ճշմարիտ եկեղեցում մկրտվելիս»:
(Սրբեր. Հիսուս Քրիստոսի Եկեղեցու սրբությունը

վերջին օրերում, հատ. 1, ճշմարտության չափանիշը, 1815–1846 [2018], 86):

Երբ Ջոզեֆ Սմիթը թարգմանեց Մորմոնի Գիրքը և ստացավ քահանայության իշխանությունը երկնային սուրհանդակներից, Տերը նրան ցուցում տվեց «մարգարեության և հայտնության Հոգով. . . կազմակերպելու [Հիսուս Քրիստոսի] եկեղեցին ևս մեկ անգամ՝ այստեղ՝ Երկրի վրա» (Joseph Smith, in History, circa June 1839–circa 1841 [draft 2], 29, josephsmithpapers.org): 1830 թվականի ապրիլի 6-ին մոտ 60 մարդ հավաքվեց Նյու Յորքի Ֆայեթ քաղաքում գտնվող Պիտեր Ուիթմեր Ավագի տանը՝ ականատես լինելու «Աստծո կամքով և պատվիրաններով Քրիստոսի եկեղեցու բարձրանալուն այս վերջին օրերին» (Վարդապետություն և Ուիտեր 20.1):

Եկեղեցու կազմավորման օրը Սրբերը հաստատեցին Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուտերիին որպես իրենց ղեկավարներ, ճաշակեցին հաղորդությունը, ականատես եղան սողամարդկանց կարգմանը

քահանայության պաշտոններում և տեսան, որ նախկինում մկրտվածները ստացան Սուրբ Հոգու պարգևը և հաստատվեցին Եկեղեցու անդամներ:

Այդ օրվա մասին Մարգարե Ջոզեֆ Սմիթը նկատել է.



Ուրախ ժամանակ անցկացնելով և վկայություն ստանալով ու զգալով Սուրբ Հոգու զորությունն ու օրհնությունը, որն Աստծո շնորհով իջել էր մեր վրա, մենք բաժանվեցինք, հաճելի գիտելիք ստանալով, որ այժմ մենք «Հիսուս Զրիստոսի Եկեղեցու» անդամներ էինք, անհատապես, Աստծո կողմից ընդունված, Նրա կողմից մեզ տրված պատվիրանների և հայտնությունների համաձայն: *(Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ [2007], 138):*

Տերը հայտնության միջոցով նշանակեց այն ճշգրիտ օրը, երբ Նրա Եկեղեցին պետք է նորից կազմակերպվեր երկրի վրա (տես Վարդապետություն և Ուխտեր 20, բաժնի վերնագիր), և Նա հետագայում տվեց այն անունը, որով պետք է կոչվեր Եկեղեցին:



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 115.4-5:

Եկեղեցին կազմավորելուց մոտ մեկ ու կես տարի անց Տերը հայտարարեց, որ Նա տվել էր Ջոզեֆ Սմիթին և ուրիշներին զորություն՝ «ղնելու հիմքն այս Եկեղեցու, և մթությունից ու խավարից դուրս բերելու այն՝ միակ ճշմարիտ և կենդանի Եկեղեցին ողջ երկրի երեսի վրա, որը, ես՝ Տերս, հավանում եմ, խոսելով Եկեղեցու մասին հավաքապես և ոչ անհատապես» (Վարդապետություն և Ուխտեր 1.30):



Մտածեք դասին Նախապատրաստվելիս

Հիսուս Զրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ լինելով, ինչպե՞ս է փոխվել ձեր կյանքը:

ԲԱԺԻՆ 2

Որո՞նք են այն պատճառները, ըստ որոնց Տերը հայտարարել է, որ սա «միակ ճշմարիտ և կենդանի Եկեղեցին է»:

Առաջին Նախագահությունից Նախագահ Դալլին Հ. Օուքսը սովորեցրել է.



Երեք հատկանիշներ՝ (1) վարդապետության լրիվությունը, (2) քահանայության զորությունը, և (3) վկայությունը Հիսուս Զրիստոսի մասին, բացատրում են, թե Աստված ինչու է հռչակել և ինչու մենք, որպես Նրա ծառաներ, պնդում ենք, որ սա միակ ճշմարիտ և կենդանի Եկեղեցին է երկրի վրա: . . .

Քանի որ Ուրացության ժամանակ շատ ճշմարտություններ էին կորել, անհրաժեշտ էր, որ Տերը վերականգներ Իր վարդապետության լրիվությունը: . . .

Հիսուս Զրիստոսի վարդապետությունն իր լրիվության մեջ այն ծրագիրն է, որով մենք կարող ենք դառնալ այնպիսին, ինչպիսին Աստծո զավակները պետք է դառնան:

Երկրորդ և բացարձակ կարևոր հատկանիշը . . . քահանայության իշխանությունն է: . . .

Քահանայության իշխանություն ունենալու շնորհիվ, ղեկավարները և պատշաճ կերպով լիազորված անդամները . . . լիազորված են կատարել քահանայության պահանջվող արարողությունները: . . .

Երրորդ պատճառը, թե ինչու ենք մենք միակ ճշմարիտ Եկեղեցին, այն է, որ մենք ունենք հայտնությամբ տրված

ճշմարտություն Աստծո Էության և Նրա հետ մեր հարաբերությունների մասին, և, հետևաբար, մենք ունենք առանձնահատուկ վկայություն Հիսուս Քրիստոսի մասին: Հատկանշական է, որ Աստծո Էության հանդեպ մեր համոզմունքն այն է, ինչը մեզ առանձնացնում է քրիստոնեական դավանանքների մեծ մասի պաշտոնական վարդապետություններից: (Dallin H. Oaks, "The Only True and Living Church," *New Era*, Aug. 2011, 3–5)



Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը շարունակում է բացատրել, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին «կենդանի եկեղեցի է Սուրբ Հոգու գործածության և պարզվների պատճառով» ("Receive the Holy Ghost," *Ensign or Liahona*, Nov. 2010, 97):

Կիրակնօրյա դպրոցի նախկին գերագույն նախագահ՝ Եղբայր Թադ Ռ. Քալիսթերը նույնպես ուսուցանել է.



[Վարդապետություն և Ուխտեր 1.30 հատվածի Տիրոջ հայտարարությունը] չի նշանակում, որ այլ եկեղեցիներ չեն պարունակում որոշ ճշմարտություններ, քանի որ դա այդպես չէ: Դա չի նշանակում, որ այլ եկեղեցիներ բարի գործեր չեն անում, քանի որ նրանք շատ բարիք են գործում: Դա նշանակում է, որ սա միակ ճշմարիտ եկեղեցին է, որը պարունակում է բոլոր ճշմարտությունները, որոնք այս տնտեսության մեջ մինչ օրս հայտնի են դարձվել, միակ եկեղեցին, որն ունի անհրաժեշտ արարողությունները վեհացման

համար, և միակ եկեղեցին, որն ունի Աստծո քահանայությունը այդ արարողությունները աստվածային վավերությամբ ի կատար ածելու համար: Ի՞նչ ապացույց ունենք այս հաստատման համար: . . .

Եթե մեկը ցանկանա համեմատել Քրիստոսի սկզբնական Եկեղեցու նախագիծը աշխարհում այսօր գոյություն ունեցող եկեղեցիների հետ, նա կհասկանա . . . , այն միայն կհամընկնի մեկի՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու հետ: (Թադ Ռ. Քալիսթեր, «Ո՞րն է Քրիստոսի Եկեղեցու նախագիծը» [Եկեղեցու կրթական համակարգի հոգևոր երեկո, հուն. 12, 2014], ChurchofJesusChrist.org):

Կարևոր է հասկանալ, որ Հիսուս Քրիստոսի «միակ ճշմարիտ և կենդանի եկեղեցու» անդամ լինելը չի նշանակում, որ մենք հավատում ենք, որ մենք ավելի լավն ենք, քան մյուս մարդիկ: Բայց մեր անդամակցության շնորհիվ մենք պարտավոր ենք սիրել և հրավիրել ուրիշներին գալ դեպի Քրիստոսը և ստանալ Նրա վերականգնված ավետարանի օրհնությունները:



Մտածեք դասին Նախապատրաստվելիս

Ինչ փորձառություններ են օգնել ձեզ հասկանալ, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին Փրկիչի ճշմարիտ և կենդանի Եկեղեցին է:

ԲԱԺԻՆ 3

Ինչպե՞ս կարող եմ արձագանքել այն մարդուն, ով կարծում է, որ ինքը կարող է լինել կրոնասեր կամ հոգևոր՝ առանց Տիրոջ Եկեղեցում իր մասնակցության:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնը ուսուցանել է.



Կան մարդիկ, ովքեր իրենց համարում են կրոնասեր կամ հոգևոր, սակայն հրաժարվում են Եկեղեցի հաճախելուց կամ նույնիսկ ժխտում են այդպիսի հաստատության կարիքը: Կրոնասերի կյանքով ապրելը նրանց համար բացառապես անձնական է: Այնուամենայնիվ, Եկեղեցին ստեղծագործությունն է Նրա՝ Հիսուս Քրիստոսի, ում մեջ կենտրոնացված է մեր հոգևորությունը: . . .

. . . Հնադարյան նպատակը, այսինքն՝ քարոզել Հիսուս Քրիստոսի ավետարանի բարի լուրը և սպասավորել փրկության արարողությունները, շարունակում է գործել. այլ կերպ ասած մարդկանց բերել դեպի Քրիստոսը: . . .

. . . Կարևոր է հասկանալ, որ Աստծո վերջնական նպատակը մեր առաջընթացն է: Նրա ցանկությունն է, որ մենք շարունակենք «շնորհից շնորհ, մինչև որ ստանանք լիությունն» [Վարդապետություն և Ուխտեր 93.13] այն ամենի, որ Նա կարող է տալ: Դա պահանջում է ավելին, քան պարզապես բարի կամ հոգևոր լինելն է: Այն պահանջում է հավատ առ Հիսուս Քրիստոս, ապաշխարություն, մկրտություն ջրով ու Հոգով և հավատքով տոկալը մինչև վերջ [տես 2 Նեփի 31.17–20]: Հնարավոր չէ հասնել դրան մեկուսացման մեջ, այսպիսով, Տիրոջ հիմնական նպատակներից մեկը Սրբերի այնպիսի համայնքի ստեղծումն է, որտեղ նրանք կաջակցեն մեկը մյուսին «այս նեղ և անձուկ արահետի վրա, որը տանում է դեպի հավերժական կյանք» [2 Նեփի 31.18]: . . .

Եթե մարդը հավատում է, որ բոլոր ճանապարհները տանում են դեպի երկինք կամ փրկության համար գոյություն չունի ոչ մի հատուկ պահանջ, նա չի հասկանա ավետարանի հռչակման անհրաժեշտությունը և արարողությունների ու ուխտերի կարիքը՝ ո՛չ ողջերի, ո՛չ էլ մահացածների փրկագնման համար: Բայց մենք խոսում ենք ոչ միայն անմահության, այլև հավերժական կյանքի մասին, իսկ դրա համար կարևոր են ավետարանի ճանապարհն ու ավետարանի ուխտերը: Իսկ Փրկիչը

կարիք ունի, որ Եկեղեցին դրանք մատչելի դարձնի Աստծո բոլոր զավակների համար՝ ողջ և մահացած: (Դ. Թոդ Քրիստոֆերսոն, «Ինչո՞ւ Եկեղեցին», *Ensign* կամ *Liahona*, նոյեմբեր 2015, 108, 110):



Քույր Բոնին Լ. Օսկարսոնը, ով ծառայել է որպես Երիտասարդ Կանանց Գերագույն Նախագահ, ուսուցանել է, որ Եկեղեցում մասնակցությունը նաև օգնում է մեզ ավելի նմանվել Փրկիչին՝ մեզ հնարավորություն ընձեռելով ծառայել ու սպասավորել ուրիշներին:



Հիրավի, մենք հաճախում ենք Եկեղեցու շաբաթական ժողովներին՝ արարողություններին մասնակցելու, վարդապետություն սովորելու և ոգեշնչվելու համար, բայց մասնակցության մեկ այլ շատ կարևոր պատճառն այն է, որ որպես ծխի ընտանիք և Փրկիչ Հիսուս Քրիստոսի աշակերտներ, մենք հսկում ու խրախուսում ենք մեկս մյուսին և ուղիներ փնտրում՝ ծառայելու և զորացնելու միմյանց: Մենք պարզապես ընդունողներ ու վերցնողներ չենք այն ամենի, ինչն առաջարկում է Եկեղեցին, մենք պիտի լինենք տվողներ և մատակարարներ: . . .

Խնդրեք ձեր Երկնային Հորը ցույց տալ շրջապատի այն մարդկանց, ովքեր ունեն ձեր կարիքը և ոգեշնչի ձեզ, թե ինչպես լավագույնս ծառայել նրանց: Հիշե՛ք, որ Փրկիչը շատ հաճախ ծառայում էր նրանց մեկ առ մեկ: (Բոննի Լ. Օսկարսոն, «Կարիքները մեր առջև են», *Ensign* կամ *Liahona*, նոյեմբեր 2017, 26):



Մտածեք դասին Նախապատրաստվելիս

Տիրոջ եկեղեցում եռանդուն մասնակցությունն ինչպե՞ս կօգնի ձեզ ավելի նմանվել ձեր Երկնային Հորը: Ի՞նչ կարող եք անել, որպեսզի ավելի լիարժեք մասնակցեք Հիսուս Քրիստոսի Եկեղեցում:

Ցանկանո՞ւմ ես ավելին: (Ոչ պարտադիր)

Ի՞նչ անել, եթե ես չեմ զգում, որ Հիսուս Քրիստոսի Եկեղեցում ինձ համար տեղ կա:

Is There a Place for Me? (4:00) տեսանյութում, Երեց Թոդ Դ. Քրիստոֆերսոնն ուսուցանում է

այնպիսի սկզբունքներ, որոնք կարող են օգնել այն մարդկանց, ովքեր ընդունված չեն զգում Եկեղեցում:



«Եկե՛ք, միացեք մեզ» (*Ensign* կամ *Լիաժողով*, նոյեմբեր 2013, 21–24) իր այս ելույթում, Նախագահ Դիտեր Ֆ.

Ուխտորֆը, մինչ ծառայում էր Առաջին Նախագահությունում, բացատրել է, թե ինչու Հիսուս Քրիստոսի վերականգնված եկեղեցում տեղ կա նրանց համար, ովքեր մեկուսացել են նրանից:

Ո՞րն է Տիրոջ Եկեղեցու ճիշտ անունն օգտագործելու կարևորությունը:



«Եկեղեցու ճիշտ անունը» (*Ensign* կամ *Լիաժողով*, նոյեմբեր 2018, 87–90)

իր այս ելույթում Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն ընդգծում է Տիրոջ այն պատվիրանը, որ Իր Եկեղեցին պետք է կոչել Իր անունով:

ԴԱՍ 8. ՈՒՍՈՒՑԶԻ ՆՅՈՒԹ

Հիսուս Քրիստոսի Եկեղեցու կազմավորումը

Մարգարե Զոգեֆ Սմիթի միջոցով Տերը կրկին կազմավորեց Իր Եկեղեցին Երկրի վրա: Այս դասը կօգնի ուսանողներին բացատրել, թե ինչն է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին դարձնում «միակ ճշմարիտ և կենդանի եկեղեցին» (Վարդապետություն և Ուխտեր 1.30): Ուսանողները կհասկանան նաև, թե ինչպես կարող են ավելի լիարժեք մասնակցել Տիրոջ վերականգնված եկեղեցուն:

Ուսուցման առաջարկներ

Տերը վերականգնել է Իր Եկեղեցին Մարգարե Զոգեֆ Սմիթի միջոցով:

Հրավիրեք ուսանողներին պատկերացնել, որ երբ իրենց ընկերոջը հրավիրեն եկեղեցի հաճախել, նա կասի. «Եկեղեցին լավ է, բայց ես կարծում եմ, որ ես կարող եմ լավ մարդ լինել առանց կազմակերպված կրոնի: Մենք յուրաքանչյուրս մեր ճանապարհին ունենք դեպի Աստծված, այնպես չէ՞»:

- Որո՞նք են այն սխալ պատկերացումները, որոնք կարող են խանգարել ձեր ընկերոջը հասկանալ Տիրոջ Եկեղեցու արժեքը:

Թույլ տվեք ուսանողներին մի քանի բոլոր փոքր խմբերով քննարկել՝ ինչպես կարող են այդ ընկերոջը բացատրել, թե ինչու է Տերը երկրի վրա եկեղեցի հիմնել: (Խրախուսեք ուսանողներին կիրառել այն, ինչ նրանք սովորել են նախապատրաստական նյութի ուսումնասիրությունից):

Ցուցադրեք Նյու Յորքի Ֆայեթ քաղաքում գտնվող Պիտեր Ուիթմեր Ավագի տան կից նկարները: Հրավիրեք ուսանողներին հիշել, թե ինչ են նրանք սովորել նախապատրաստական նյութի բաժին 1-ում, որպեսզի նկարագրեն, թե ինչ է տեղի ունեցել Ուիթմերների տանը Եկեղեցու կազմավորման օրը:



Դասարանով կարդացեք Հավատո Հանգանակ 1.6 հատվածը և ուշադրություն դարձրեք նրան, ինչ ժամանակին գրել էր Զոգեֆ Սմիթը Հիսուս Քրիստոսի եկեղեցու կազմավորման մասին: Անհրաժեշտության դեպքում կարող եք նշել, որ «ավետարանիչները» կարող են վկայակոչել հայրապետներին, իսկ «հովիվները» կարող են վկայակոչել նախագահող կոչումներին, ինչպես՝ եպիսկոպոսներին:

- Ի՞նչ ճշմարտություններ կարող ենք սովորել այս հայտարարությունից: (Մի ճշմարտություն, որը մենք կարող ենք սովորել այն է, որ **Տիրոջ եկեղեցին վերջին օրերին կազմավորված է այնպես, ինչպես դա եղել է Հիսուսի օրոք**):

Հրավիրեք որևէ ուսանողին բարձրաձայն կարդալ բաժին 2-ում Եղբայր Թադ Ռ. Քալիստերի հայտարարության երկրորդ պարբերությունը, որը սկսվում է «Եթե մեկը ցանկանա համեմատել . . .»

Ցուցադրեք սուրբ գրությունների հետևյալ հղումները: Հրավիրեք ուսանողներին ընտրել դրանցից մեկը կամ մի քանիսը և լուռ կարդալ՝ ուշադրություն դարձնելով, թե ինչ են դրանք բացահայտում Փրկիչի Նոր Կտակարանի եկեղեցու կազմավորման, գործելակերպի և ուսմունքների վերաբերյալ:

- Մատթեոս 16.18-19
- Մատթեոս 28.16-19
- Ղուկաս 9.1-2, 10.1-2
- Գործք Առաքելոց 8.14-17
- Եփեսացիս 2.19-20
- Եփեսացիս 4.11-15
- Հակոբոս 5.14-15
- Ա Կորնթացիս 15.29

Նշում. Այդ վարժությունը չպետք է համապարփակ կամ ժամանակատար լինի: Այն պարզապես կօգնի ուսանողներին ճանաչել, թե ինչպես է Տիրոջ վերականգնված եկեղեցին կազմավորվել Նրա հնագույն եկեղեցու օրինակով:

- Ի՞նչ նմանություններ եք տեսնում Քրիստոսի սկզբնական եկեղեցու և մեր օրերի եկեղեցու միջև: Ինչո՞ւ է կարևոր իմանալ, որ այսօր Տիրոջ եկեղեցին կազմավորվել է համաձայն Նրա հնագույն եկեղեցու օրինակի:

Բացատրեք, որ եկեղեցու կազմավորումից մոտավորապես մեկ ու կես տարի անց, Տերն ուսուցանեց Իր Վերականգնված եկեղեցու յուրահատկության վերաբերյալ: Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ Վարդապետություն և Ուխտեր 1.30 և ուշադրություն դարձնել, թե Տերն ինչ հայտարարեց:

- Ինչպե՞ս է Տերը նկարագրել Իր եկեղեցին հատված 30: (Ուսանողներին օգնեք բացահայտել վարդապետության հետևյալ պնդումը. **Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի եկեղեցին միակ ճշմարիտ և կենդանի եկեղեցին է ողջ երկրի վրա**):

Որպեսզի ամրապնդեք ուսանողների հասկացողությունն այս ճշմարտության վերաբերյալ, կարող եք խնդրել դասարանին քննարկել հետևյալ հարցերից մի քանիսը: (Խրախուսեք ուսանողներին վերանայել և մտածել, թե քննարկման ընթացքում ինչ են սովորել նախապատրաստական նյութի բաժին 2-ից):

- Ինչպե՞ս կարող եք զգույշ, բայց համարձակորեն ինչ-որ մեկին բացատրել, թե ինչ է նշանակում, որ այս եկեղեցին «միակ ճշմարիտ և կենդանի եկեղեցին է ողջ երկրի երեսին»:
- Ի՞նչն է այս եկեղեցին «կենդանի» դարձնում: (Օգտակար կլինի, եթե ցույց տաք կենդանի մի բան, օրինակ բույսը, և ուսանողներին խնդրեք նկարագրել կենդանի բույսի հատկանիշները՝ համեմատած այն բանի հետ, որը չի ապրում կամ մեռած է):
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր հասկանալ, որ թեև Փրկիչի ավետարանի հավերժական ճշմարտությունները չեն փոխվում, եկեղեցին շարունակում է աճել և հարմարվել Տիրոջ հայտնության միջոցով:
- Ինչ փորձառություններ են օգնել ձեզ հասկանալ, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի եկեղեցին Փրկիչի ճշմարիտ և կենդանի եկեղեցին է:

Տիրոջ եկեղեցին ավետարանի օրհնությունները հասանելի է դարձնում բոլորին:

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնի հետևյալ խոսքերը: Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



Արժե դադար տալ և խորհել, թե ինչու է Հիսուս Քրիստոսը ընտրում օգտագործել եկեղեցի՝ Իր եկեղեցին, . . . որպեսզի կատարի Իր և Իր Հոր աշխատանքը:

(«Ինչո՞ւ Եկեղեցին», *Ensign* կամ *Lhahnnasa*,
նոյեմբեր 2015, 108)

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է Հիսուս Քրիստոսը օգտագործում եկեղեցի՝ Իր Եկեղեցին, որպեսզի կատարի Իր և Իր Հոր աշխատանքը:

Դասարանով կարդացեք Մորոնի 6.3–6 և Վարդապետություն և Ուխտեր 43.8–9 հատվածները՝ ուշադրություն դարձնելով այն նպատակներին և օրհնություններին, որոնք ստանում ենք Տիրոջ Եկեղեցում անդամակցության և ծառայության շնորհիվ: Հրավիրեք ուսանողներին կիսվել, թե ինչ են սովորել այս հատվածներից

Մի բոլակ տվեք ուսանողներին, որպեսզի համառոտ քննարկեն նախապատրաստական նյութի բաժին 3-ում տրված Երեց Քրիստոֆերսոնի և Քույր Բոնի L. Օսկարսոնի հայտարարությունները:

- Այդ հայտարարություններից ո՞ր ուսմունքներն էին նշանակալից ձեզ համար: (Ուսանողների պատասխանից հետո ցուցադրեք հետևյալ ճշմարտությունը. **Տերը կազմավորեց Իր Եկեղեցին, որպեսզի օգնի, որ մենք գանք Իր մոտ, ստանանք Իր ավետարանի ամբողջ օրհնությունները և հնարավորություն ունենանք ծառայելու ուրիշներին**):

Խնդրեք ուսանողներին մտածել այս ճշմարտության յուրաքանչյուր հիմունքի մասին: Հրավիրեք ուսանողներին կիսվել, թե ինչպես է այս ճշմարտությունն իրականացել իրենց կյանքում: Կարող եք ստուգիչ հարցեր տալ, ինչպիսիք են՝

- Որո՞նք են Տիրոջ ավետարանի «ամբողջ օրհնությունները»:
- Ի՞նչ դեր է խաղում Եկեղեցին ձեզ օգնելու գործում, որ ավելի նմանվեք ձեր Երկնային Հորը:

Ուսանողներին որոշ ժամանակ տրամադրեք հետևյալ հարցի շուրջ խորհելու և իրենց մտքերը գրելու համար.

- Ես ի՞նչ եղանակներով կարող եմ ակտիվորեն մասնակցել Եկեղեցում և օգնել իրականացնել դրա նպատակները:

Բավարար ժամանակից հետո կարող եք ուսանողներին հարցնել, թե ինչ են սովորել այսօր, որը կարող է օգնել նրանց պատասխանել ընկերոջ հարցերին, ինչպես օրինակ դասի սկզբում նկարագրված սցենարի հարցերն են: Դուք կարող եք ամփոփել՝ վկայելով այն ճշմարտությունների մասին, որոնք քննարկվեցին այս դասին:

Հաջորդ անգամ

Բացատրեք, որ ավետարանի վերականգնման շնորհիվ մենք կարող ենք ավելին իմանալ Փրկիչի բնավորության և քավիչ գոհաբերության մասին, քան մոտավորապես 2000 տարի առաջ ապրած որևէ մարդ: Հորդորեք ուսանողներին մտածել իրենց Փրկիչին՝ Հիսուս Քրիստոսին ավելի մոտենալու օրհնությունների մասին: Հրավիրեք նրանց ամրապնդել իրենց հասկացողությունն ու հավատը Նրա հանդեպ՝ ուշադիր ուսումնասիրելով հաջորդ դասի նախապատրաստական նյութը:



ԴԱՍ 9. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Հիսուս Քրիստոսը՝ մեր Աստվածային Քավիչը

Ոմանք մտածում են, որ Հիսուս Քրիստոսը պարզապես լավ օրինակ է հետևելու համար, ոմանք՝ որպես հին մարգարե, իսկ ոմանք՝ որպես աշխարհի Փրկիչ: Որո՞նք են ամենատարածված համոզմունքներն ու դիրքորոշումները Տիրոջ մասին այն վայրում, որտեղ դուք ապրում եք: Ո՞րն է ձեր կարծիքն ու համոզմունքը Նրա մասին: Երբ ուսումնասիրեք տեսիլքները, հայտնությունները և սուրբ գրությունները, որոնք Մարգարե Ջոզեֆ Սմիթը ստացել է Հիսուս Քրիստոսի վերաբերյալ, մտածեք, թե ինչպես կարող են դրանք խորացնել ձեր հավատն ու վկայությունը Նրա նկատմամբ՝ որպես ձեր աստվածային Քավիչ:

ԲԱԺԻՆ 1

Ջոզեֆ Սմիթն ու Վերականգնումն ինչպե՞ս են մեծացնում Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ իմ հասկացողությունը:

Ջոզեֆ Սմիթի անձնական կապը Տիրոջ հետ սկսվել է Ջոզեֆի պատանեկության տարիներից: Նա գրել է, որ մոտավորապես 12 տարեկանում. «միտքս չափազանց մտատանջվում էր, քանի որ ես սկսում էի գիտակցել իմ մեղքերը: . . . Ես վշտացած էի թե՛ իմ մեղքերի համար և թե՛ աշխարհի մեղքերի համար»:



Ավելի ուշ, երիտասարդ Ջոզեֆը «աղաղակեց Տիրոջը ողորմածության համար» և Տերը տեսիլքում խոսեց նրա հետ, ասելով՝ «Ջոզեֆ, որդի՛ս, քո

մեղքերը ներված են քեզ: Գնա՛ք ճանապարհով, քայլիր իմ կանոններով և պահիր իմ պատվիրանները: Ահա, ես եմ փառավոր Աստվածը: Ես խաչվեցի աշխարհի համար, որպեսզի բոլոր նրանք, ովքեր հավատում են իմ անվանը, կարողանան ունենալ հավերժական կյանք»:

Առաջին Տեսիլքի այդ փորձառության միջոցով Ջոզեֆն անձամբ իմացավ, որ Հիսուս Քրիստոսը և Երկնային Հայրը ողորմած և ներողամիտ են: Տիրոջ հետ խոսելուց և Իր մեղքերի համար ներում ստանալուց հետո Ջոզեֆը վկայեց. «Իմ հոգին լցվեց սիրով և երկար ժամանակ ես շատ ուրախ էի: Տերն ինձ հետ էր» (“Joseph Smith’s Accounts of the First Vision,” Circa Summer 1832 History, josephsmithpapers.org):

Հիշեք այն ժամանակների մասին, երբ ունեցել եք մտահոգություններ, որոնք նման են եղել Ջոզեֆի մահոգություններին: Գուցե դուք կարողանաք նմանություն գտնել ներված լինելու նրա ցանկության հետ և նաև այն ուրախության հետ, երբ իմացավ, որ Տերն իր հետ էր:

Ջոզեֆ Սմիթի բազմաթիվ տեսիլքները Փրկչի մասին թույլ էին տալիս, որ նա ծառայեր որպես Հիսուս Քրիստոսի վերջին օրերի գորեղ վկա: 1832 թվականի փետրվարի 16-ին, երբ աշխատում էր Աստվածաշնչի ոգեշնչված փոփոխությունների վրա (որը հայտնի է որպես Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն), Ջոզեֆ Սմիթը և Միդնի Ռիզդոնը տեսան մի տեսիլք, որտեղ «տեսան փառքը Որդու, Հոր աջ կողմում»: Խոսելով Հիսուս Քրիստոսի մասին նրանք վկայել են. «Նա ապրում է»: (Վարդապետություն և Ուխտեր 76.20, 22–23):

Ուշադրություն դարձրեք, թե Հիսուս Քրիստոս Մարգարեի մասին ինչ այլ ճշմարտություններ են ցուցադրվել այս տեսիլքում:



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 76.23-24:



Չորս տարի անց Մարգարեն կրկին վկայեց այն մասին, որ տեսել է Փրկչին Կիրթլենդի տաճարում և հայտարարեց, որ «նրա դեմքը փայլում էր արևի պայծառությունից վառ. և նրա ձայնն ասես շառաչում մեծ ջրերի հնչում լինեք» (Վարդապետություն և Ուխտեր 110.3):

Տերը Սրբերին ուսուցանեց, որ երբ նրանք ուսումնասիրեն Հոգու միջոցով տրված հայտնությունները. «Դուք կարող եք վկայել, որ լսել եք իմ ձայնը և գիտեք իմ խոսքերը» (Վարդապետություն և Ուխտեր 18.36):

Անդրադառնալով, թե Ջոզեֆ Սմիթն ինչ ներդրում է ունեցել Հիսուս Քրիստոսի մասին մեր պատկերացումների վրա, Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնն ասել է.



Տիրոջ հետ նրա անձնական հաղորդակցության շնորհիվ՝ Մորմոնի Գրքի նրա թարգմանության և հրատարակության ու իր վկայությունը իր նահատակության արյամբ կնքելու շնորհիվ, Ջոզեֆը դարձավ Հիսուս Քրիստոսի՝ որպես աստվածային Քավիչի ճշմարիտ հայտնողը: (D. Todd Christofferson, “Born Again,” *Ensign* or *Liahona*, May 2008, 79):



Մտածեք դասին Նախապատրաստվելիս

Ջոզեֆ Սմիթին տրված տեսիլքների, հայտնությունների և սուրբ գրությունների շնորհիվ, մենք շատ ավելի լավ պատկերացում ունենք Փրկիչի բնավորության մասին:

- Փրկիչի մասին ի՞նչ գիտելիքներ կկորսվեին առանց մարգարե Ջոզեֆ Սմիթի: Ի՞նչ ազդեցություն կունենար այն ձեր կյանքի վրա, եթե այդ գիտելիքը տրված չլիներ: (Հիշեք այս հարցերը, երբ շարունակում եք ուսումնասիրել):

ԲԱԺԻՆ 2

Փրկիչի Քավության վերաբերյալ
ի՞նչ վերականգնված
ճշմարտություններ կարող
են մեծացնել իմ հավատքը
Նրա հանդեպ:

Նշում. Երբ կարդաք սուրբ գրությունների հետևյալ հատվածները և մարգարեական ուսմունքները, կարող եք ձեզ համար նշել Փրկիչի Քավությանն առնչվող այն ճշմարտությունները, որոնք կարևորվեցին ձեզ համար:

Փրկիչի ավետարանի և Քավության վերաբերյալ շատ պարզ և արժեքավոր ճշմարտություններ վերականգնվել են Ջոզեֆ Սմիթի կողմից Մորմոնի Գրքի թարգմանության շնորհիվ (տես 1 Նեփի 13.34, 40):



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Ավմա 34.10, 12 հատվածները և ուշադրություն դարձրեք, թե Փրկիչի քավիչ զոհաբերության մասին ջորամացիների

ինչ ուսուցանեց Մորմոնի Գրքի Ամուղեկ
մարգարեն:

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը բացատրել է, թե ինչի շնորհիվ է Հիսուս Քրիստոսի քավությունն անսահման.



Նրա Քավությունն անսահման է՝ առանց վերջի [տես 2 Նեփի 9.7, 25.16, Ավմա 34.10, 12, 14]: Այն նաև անսահման էր այն առումով, որ ողջ մարդկությունը կարող էր փրկվել անվերջանալի մահից: Այն անսահման էր Նրա ահռելի տառապանքի առումով: Այն անսահման էր ժամանակի առումով, վերջ ղնելով կենդանիների զոհաբերության նախորդ նախատիպին: Այն անսահման էր գործունեության շրջանակով. այն պետք է կատարվեր մեկ անգամ՝ բոլորի համար [տես Եբրայեցիս 10.10]: Եվ Քավության ողորմածությունը տարածվում է ոչ միայն անսահման քանակությամբ մարդկանց վրա, այլև Նրա կողմից ստեղծված անթիվ աշխարհների վրա [տես Վարդապետություն և Ուխտեր 76.24, Մովսես 1.33]: Այն անսահման էր՝ վեր մարդկային ցանկացած չափման սանդղակից կամ մահկանացուի հասկացողությունից:

Հիսուսը միակն էր, ով կարող էր առաջարկել այսպիսի անսահման քավություն, քանի որ Նա ծնվել էր մահկանացու մորից և անմահ Հորից: Այդ յուրօրինակ ծնունդի պատճառով Հիսուսն անսահման Էակ էր: (Russell M. Nelson, "The Atonement," *Ensign*, Nov. 1996, 35)



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Ավմա մարգարեն նաև Գեղեոնի ժողովրդին կարևոր ճշմարտություններ սովորեցրեց Փրկիչի Քավության վերաբերյալ: Կարդացեք Ավմա 7.11–13:

Ալմա 7-ից մեջքերում անելուց հետո Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարն ուսուցանել է.



Չկա ոչ մի ֆիզիկական ցավ, ոչ էլ հոգևոր վերք, ոչ հոգու տվայտանք, ոչ սրտի ցավ, ոչ թուլություն, ոչ էլ տկարություն, որին ես կամ դուք դիմակայել եք մահկանացու կյանքում, որը մինչ այդ Փրկիչը տարած չլիսի: Տկարության պահին մենք, հնարավոր է, բարձրաձայնենք. «Ո՛չ ոք չգիտի, թե ինչով եմ ես անցնում: Ո՛չ ոք չի կարող հասկանալ»: Սակայն Աստծո Որդին կատարելապես գիտի և հասկանում է, քանզի Նա զգացել և կրել է մեր անհատական բեռը: Եվ Իր անսահման և հավերժական զոհաբերության շնորհիվ (տես Ալմա 34.14) Նա ունի կատարյալ կարեկցանք և կարող է մեկնել մեզ Իր ողորմած ձեռքը: Նա կարող է հասնել, դիպչել, սատարել, բուժել և ամրացնել մեզ: (Դեյվիդ Ա. Բեդնար, «Իրենց բեռները հեշտությամբ տանելի», *Ensign* կամ *Լիա-հոնա*, մայիս 2014, 90):

Զոգե՛ք Սմիթը մի հայտնություն ստացավ, որը կապում էր Տիրոջ անհասկանալի տառապանքը հոգիների արժեքի հետ: Կանչելով Օլիվեր Քաուդերիին և Դեյվիդ Ուիթմերին՝ քարոզելու ապաշխարություն, Տերը ցուցումներ տվեց նրանց:



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր
18.10–11, 13:



Տերը շարունակեց մեկնաբանել Իր քավիչ զոհաբերությունը՝ Մարտին Հարրիսի համար տրված հայտնության մեջ: Մարտինը դժվարանում էր կորցնել իր ազարակը, որպեսզի վճարեր Մորմոնի Գրքի հրատարակության համար: Հայտնության մեջ Տերը Մարտինին պատվիրեց ապաշխարել, ապա հայտնեց եզակի մի պատմություն, թե ինչպես է Ինքը տառապել:



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր
19.16–19:

Երբ խորհեք այն տառապանքի մասին, որը Հիսուս Քրիստոսը կրեց հանուն ձեզ, կարդացեք կամ լսեք օրհներգի խոսքերը «Ես մնում եմ զարմացած» (օրհներգ, հր. 22):



Ինչպե՞ս կարող եմ ավելի լավ ճանաչել Հիսուս Քրիստոսին:

Ձեր օրագրի հատկացված տարածքում գրեք մի քանի ճշմարտություններ, որոնք դուք կարևորել եք սուրբ գրություններից և այս բաժնի ուսմունքներից, ինչպես նաև բոլոր

այն մտքերն ու հարցերը, որոնք դուք ունեք Փրկիչի քավիչ զոհաբերության վերաբերյալ: Դասարան եկեք պատրաստված՝ ձեր սովորած ճշմարտություններով և գափարներով կիսվելու համար:

Ցանկանում ես ավելին: (Ոչ պարտադիր)

Դուք կցանկայի՞ք ավելի լավ ճանաչել Հիսուս Քրիստոսին:

The Only True God and Jesus Christ Whom He Has Sent տեսանյութում Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը վկայում է Փրկիչի և այն մասին, թե ինչ է ենթադրում քրիստոնյա լինելը:

Ի՞նչ անել, եթե զգում եմ, որ ես արժանի չեմ փրկվելու:

The Savior Wants to Forgive տեսանյութը ցույց է տալիս, թե ինչպես է Նախկինում կախվածության մեջ գտնվող տղամարդն իմացել Փրկիչի ներելու պատրաստակամության և ցանկության մասին:

Ինչպե՞ս եմ ես ապաշխարում:



«Ապաշխարության աստվածային պարզևը» (*Ensign* կամ *Liahona*, նոյեմբեր 2011, 38–40) իր ելույթում Երեց Թոդ Դ. Քրիստոֆերսոնն ուսուցանել է, թե մենք ինչպես կարող ենք մտածել ապաշխարության սկզբունքի մասին և կիրառել այն:

Ինչո՞ւ են մարդիկ պնդում, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամները քրիստոնյաներ չեն:

Are Mormons Christian? ([topics.ChurchofJesusChrist.org](https://www.topics.churchofjesuschrist.org)) Ավետարանի Թեմաների ակնարկը բացատրում է, թե ինչու են որոշ մարդիկ ասում, որ Եկեղեցու անդամները քրիստոնյա չեն և տեղեկություններ է տալիս, որոնց միջոցով դուք կարող եք պատասխանել այդ հարցերին:



ԴԱՍ 9. ՈՒՍՈՒՑԶԻ ՆՅՈՒԹ

Հիսուս Քրիստոսը՝ մեր Աստվածային Քավիչը

Վերականգնման ժամանակ Ջոզեֆ Սմիթին և Սրբերին ավելի ճշգրիտ ուսուցանեցին Հիսուս Քրիստոսի բնավորության և առաքելության մասին: Այս դասի ընթացքում ուսանողները հնարավորություն կունենան մեծացնել իրենց հավատը Փրկիչի և Նրա Քավության հանդեպ և կորոշեն, թե ինչպես կարող են ավելի լիարժեք իրենց կյանք հրավիրել Նրա զորությունը:

Ուսուցման առաջարկներ

Ջոզեֆ Սմիթը սովորում է Հիսուս Քրիստոսի բնավորության մասին:



Ցույց տվեք Առաջին Տեսիլքը պատկերող որևէ նկար: Հիշեցրեք ուսանողներին, որ այս առիթով Ջոզեֆ Սմիթի աղոթելու նպատակներից մեկն այն էր, որ հարցներ Աստծուն, թե որ եկեղեցուն միանար (տես Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.13–19): Մակայն, տեսիլքի մասին 1832 թվականի իր պատմության մեջ Ջոզեֆը նշել էր ևս մեկ պատճառ, թե ինչու է գնացել պուրակ՝ այդ օրը աղոթելու համար:

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ նախապատրաստական նյութի բաժին 1-ի առաջին պարբերությունը:

Մեկ րոպե հատկացրեք, որպեսզի ուսանողները հիշեն իրենց կյանքից մի դրվագ, երբ նրանք վշտացել էին իրենց մեղքերի կամ թուլությունների պատճառով: Ապա խնդրեք ուսանողներին մտքում կարդալ նախապատրաստական նյութի բաժին 1-ի երկրորդ և երրորդ պարբերությունները:

- Ջոզեֆին ի՞նչ սովորեց Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի բնավորության մասին: (**Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը ողորմած և ներողամիտ են**):

Բացատրեք, որ Ջոզեֆը և Սրբերը շարունակեցին սովորել Հիսուս Քրիստոսի բնավորության մասին Նրա հայտնությունների միջոցով: Ցուցադրեք հետևյալ հղումները կամ գրեք դրանք գրատախտակին. Վարդապետություն և Ուխտեր 3.10, 38.14, 58.42, 61.2, 62.1, 64.2–4: Ժամանակ տվեք, որ ուսանողները կարդան հատվածներից մի քանիսը և խնդրեք նրանց կարդալ այնպես, կարծես Տերն ուղղակիորեն խոսում է իրենց հետ: Հորդորեք նրանց մտածել, թե այս հատվածներում Փրկիչի խոսքերն ինչպես են մեծացրել նրանց հասկացողությունը Փրկիչի ողորմած և ներողամիտ բնավորության մասին: Կարդալուց հետո ուսանողներին խնդրեք կիսվել իրենց սովորածով:

- Ձեր կարծիքով, մեզ համար ինչո՞ւ է կարևոր հասկանալ, որ Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը ողորմած և ներողամիտ են:

Բացատրեք, որ Ջոզեֆ Սմիթի Առաջին Տեսիլքն այն բազմաթիվ փորձառություններից մեկն էր, որը պատրաստեց Ջոզեֆին դառնալ Հիսուս Քրիստոսի զորեղ վկա: Հիշեցրեք ուսանողներին,


որ համաձայն Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թող Քրիստոֆերսոնի, Ջոզեֆ Սմիթը «գլխավոր հայտնողն է Հիսուս Քրիստոսի՝ որպես աստվածային Քավիչի, Իր *խրական բնասիրությունը* հանդերձ» (Դ. Թող Քրիստոֆերսոն, «Վերստին ծնված», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2008, 79, շեղագիրն ավելացված է):

- Ինչպե՞ս են Ջոզեֆ Սմիթը և Վերականգնումն ազդել Հիսուս Քրիստոսի մասին ձեր պատկերացումների և զգացմունքների վրա:

Հիսուս Քրիստոսի Քավությունը անսահման և անձնական է:

Բացատրեք ուսանողներին, որ Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով Մորմոնի Գրքի ի հայտ գալը աշխարհին թույլ տվեց այնպես հասկանալ Հիսուս Քրիստոսին և Նրա Քավությունը, որը դարերով հնարավոր չէր: Բազմաթիվ հատվածների թվում են նաև Ալմայի և Ամուղեկի ուսմունքները, որոնք մեզ սովորեցնում են մարդկության համար Փրկիչի զոհաբերության մասին: Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ Ալմա 34.10, 12, և 14 հատվածները և ուշադրություն դարձնել, թե Ամուղեկն ինչպես նկարագրեց Փրկիչի քավիչ զոհաբերությունը: Խնդրեք նրանց կիսվել իրենց գտած նյութով:

Գծեք կամ ցուցադրեք հետևյալ գծապատկերը.



- Ի՞նչ առումներով է Փրկիչի Քավությունը «անսահման և հավերժական»: (Խրախոսեք ուսանողներին գծել այն, ինչ նրանք սովորել են նախապատրաստական նյութի բաժին 2-ից):

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Երեց Սեսիլ Օ. Սամուելսոն Կրտսերի հետևյալ հայտարարությունը, ով ծառայել է Յոթանասունի Նախագահությունում, և խնդրեք դասարանի անդամներին ուշադրություն դարձնել այն բառերին, որոնցով նա նկարագրել է Տիրոջ Քավությունը:




Նրա Քավությունն իսկապես ընդգրկում է աշխարհը և ողջ մարդկությունը՝ սկզբից

մինչև վերջ: Սակայն եկեք չմոռանանք, որ իր համապարփակությամբ և լիարժեքությամբ այն նաև խիստ անձնական է և առանձնահատուկ կերպով ուղղված է կատարելապես համապատասխանելու մեր անհատական հանգամանքներին: Հայրը և Որդին մեզանից յուրաքանչյուրին գիտեն ավելի լավ, քան մենք գիտենք ինքներս մեզ, և այնպիսի Քավություն են պատրաստել մեզ համար, որը լիովին համապատասխանում է մեր կարիքներին, դժվարություններին և հնարավորություններին:

Փառք Աստծուն՝ Իր Որդու պարգևի համար, և Փառք Փրկիչին՝ Իր Քավության համար: Այն ճշմարիտ է, գործում է և մեզ կառաջնորդի այնտեղ, ուր մենք ցանկանում ենք գնալ և պետք է լինենք: (Cecil O. Samuelson Jr., “What Does the Atonement Mean to You?” *Ensign*, Apr. 2009, 51)

- Ի՞նչ բառերով է Երեց Սամուելսոնը նկարագրել Փրկիչի Քավությունը:

Գծապատկերին ավելացրեք *անձնական* բառը և մյուս բառերը, որոնք ուսանողները կգտնեն.



- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր հիշել, որ չնայած Փրկիչի քավիչ զոհաբերությունն ընդգրկում է անսահման թվով մարդկանց և աշխարհներ, այն նաև խիստ անձնական է:

Հիշեցրեք ուսանողներին, որ նախապատրաստական նյութի բաժին 2-ում նրանք խնդրեցին նշել այն ճշմարտությունները, որոնք նշանակալից էին նրանց համար: Անհրաժեշտության դեպքում ուսանողներին որոշ ժամանակ տրամադրեք վերանայելու այդ բաժնում իրենց նշած սուրբ գրությունների հատվածներն ու մարգարեական ուսմունքները:

- Ո՞ր ճշմարտություններն էին նշանակալից ձեզ համար և ինչո՞ւ: (Ցուցադրեք այդ ճշմարտությունները կամ գրեք դրանք գրատախտակին):

Ուսանողների պատասխաններից հետո կարող եք նրանց խնդրել անձնավորված վերաճակերպել (կամ վերաշարադրել) այդ սկզբունքները, օգտագործելով առաջին դեմքի դերանուններ, ինչպիսիք են՝ *Ես, ինձ, և իմ*: Ճշմարտությունները կարող են կարդացվել հետևյալ կերպ. **Հիսուս Քրիստոսն Իր վրա է վերցրել իմ մեղքերը, չարչարանքները, ցավերը, և գայթակղությունները, որպեսզի Նա կարողանա իմանալ, թե ինչպես սատարի ինձ: Իմ արժեքն այնքան մեծ է, որ Հիսուս Քրիստոսը տանջվեց և մահացավ, որպեսզի ես կարողանամ ապաշխարել: Հիսուս Քրիստոսը տառապեց իմ մեղքերի համար, որպեսզի ես կարողանամ ապաշխարել և չտառապել Նրա նման:**

- Այդ ճշմարտությունները հասկանալուց և դրանց հավատալուց հետո, ինչպե՞ս կարող եք ավելի մեծ հավատք ունենալ Հիսուս Քրիստոսի հանդեպ:
- Ի՞նչ մտքեր և զգացողություններ եք ունենում, երբ մտածում եք, թե Փրկիչն ինչ տառապանքներ կրեց ձեզ համար և ինչո՞ւ Նա այդ արեց:

Ցուցադրեք հետևյալ հարցը. *Ես ի՞նչ կամենեմ, որ Հիսուս Քրիստոսի զոհությունը հղավիղեմ իմ կյանք:*

Ժամանակ տրամադրեք, որ ուսանողներն աղոթքով խորհեն այս հարցի շուրջ և պատասխանը գրեն իրենց օրագրերում կամ նոթատետրերում: Մինչ նրանք մտածում են, կարող եք ցուցադրել Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ խոսքերը: Հրավիրեք ուսանողներին խորհուրդ փնտրել այն մասին, թե ինչը կօգնի նրանց Փրկիչի զոհությունն իրենց կյանք հրավիրել:



Մենք սկսում ենք սովորել [Հիսուս Քրիստոսի] մասին: «Անհնար է, որ [մենք] փրկվենք անգիտության մեջ»: [Վարդապետություն և Ուխտեր 131.6]: Որքան շատ ենք իմանում Փրկիչի ծառայության և առաքելության մասին [տես Վարդապետություն և Ուխտեր 76.40–41], որքան շատ ենք հասկանում Նրա վարդապետությունը, [տես

2 Նեփի 31.2–21] և թե ինչ է արել Նա մեզ համար, այնքան ավելի շատ ենք հասկանում, որ Նա կարող է զորություն տալ մեզ, որի կարիքն ունենք այս կյանքում: . . .

Նվիրելով մեր ժամանակը Փրկիչի և Նրա քավիչ զոհաբերության մասին ուսումնասիրությանը, մենք մասնակցում ենք Նրա զորությունից օգտվելու մեկ այլ առանցքային տարրին. մենք ընտրում ենք հավատք ունենալ Նրա հանդեպ և հետևել Նրան: . . .

Մենք նաև ավելացնում ենք Փրկիչի զորությունը մեր կյանքում, երբ սրբազան ուխտեր ենք կապում և ճշգրտությամբ պահում ենք այդ ուխտերը: Մեր ուխտերը մեզ կապում են Նրա հետ և մեզ աստվածային զորություն են տալիս: . . .

Երբ Փրկիչը գիտի, որ դուք իսկապես ուզում եք հասնել Նրան, երբ Նա զգում է, որ ձեր սրտի մեծագույն ցանկությունն է Իր զորությունը ձեր կյանք հրավիրել, Սուրբ Հոգու զորությամբ դուք ճշգրիտ կիմանաք, թե ինչ պիտի անեք [տես Վարդապետություն և Ուխտեր 88.63]: (Ռասսել Մ. Նելսոն, «Մեր կյանք հրավիրել Հիսուս Քրիստոսի զոհությունը», *Ensign* կամ *Լիահոնա*, մայիս 2017, 39–42):

Ավարտեք դասը՝ վկայելով, որ Իր Քավության շնորհիվ, Հիսուս Քրիստոսը զորություն ունի ամրացնելու, մխիթարելու, բուժելու և ողորմություն ուներողամտություն տարածելու մեզ վրա:

Հաջորդ անգամ

Հրավիրեք ուսանողներին մտածել այն մասին, թե ինչպիսին կլինեն իրենց կյանքն առանց ապրող մարգարեների: Խնդրեք ուսանողներին ուսումնասիրել հաջորդ դասի նախապատրաստական նյութը և պատրաստ լինել՝ քննարկելու ապրող մարգարեների կողմից առաջնորդվելու օրհնությունները:



ԴԱՍ 10. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԴԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Հետևել Տիրոջ ապրող մարգարեներին

Մտածեք, թե ձեր կյանքն ինչպիսին կլիներ առանց ապրող մարգարեների ազդեցության և ուսմունքների: Ուսումնասիրելու ժամանակ մտածեք, թե Տիրոջ մարգարեներին հետևելիս ինչպես եք ավելի մեծ առաջնորդություն և օրհնություններ ստանում ձեր կյանքում:

ԲԱԺԻՆ 1

Տիրոջ մարգարեներին հետևելու որոշումն ինչպե՞ս կարող է օրհնել իմ կյանքը:

Այն օրը, երբ կազմավորվեց Հիսուս Քրիստոսի Եկեղեցին, Տերը հայտնեց, որ Մարգարե Զոգեֆ Սմիթը պիտի «կոչվի տեսանող, թարգմանիչ, մարգարե, Հիսուս Քրիստոսի առաքյալ, եկեղեցու երեց» (Վարդապետություն և Ուխտեր 21.1):



Այնուհետև Տերը պատվիրան տվեց, որ Սրբերը հետևեն Իր մարգարեին և նկարագրեց այն օրհնությունները, որոնք պիտի ստանան դրա արդյունքում:



Ուսումնասիրեք դասին նախապատրաստվելիս

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր
21.4-6:

Հաջորդ տարի Տերը ընդգծեց Իր ձայնի և Իր մարգարեների ձայնի միջև կապը: Այն հայտնության մեջ, որը նախաբան է ծառայել Պատվիրանների Գրքի համար, որն ավելի ուշ պետք է դառնար Վարդապետություն և Ուխտեր, Տերը կրկին ուսուցանեց, որ «թեև երկինքն ու երկիրը պիտի անցնեն, իմ խոսքը չպիտի անցնի, այլ բոլորը պիտի կատարվի, լինի դա իմ իսկ ձայնով, թե իմ ծառաների ձայնով՝ միևնույն է» (Վարդապետություն և Ուխտեր 1.38):

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ուլիսես Սոարեսը վկայել է.



Մարգարեներ ունենալը Իր զավակների հանդեպ Աստծո սիրո նշանն է: Նրանք հայտնի են դարձնում Աստծո և Հիսուս Քրիստոսի խոստումներն ու ճշմարիտ էությունը իրենց ժողովրդին: . . .

Երբ հետևում ենք [Տիրոջ մարգարեներին], մեր կյանքը դառնում է ավելի երջանիկ, մեր դժվարություններն ու խնդիրները պակասում ու դառնում են հեշտ տանելի, իսկ մենք մեր շուրջը ստեղծում ենք հոգևոր սպառազինություն, որը կպահպանի մեզ մեր օրերի թշնամիների հարձակումներից: (Ուլիսես Սոարես, «Մարգարեները խոսում են Սուրբ Հոգու զորությամբ», *Ensign* կամ *Liahona*, մայիս, 2018, 99):



Մտածեք դասին նախապատրաստվելիս

Ինչպե՞ս է ձեր կյանքն օրհնվել՝ մարգարեների ուսմունքներին ու խորհուրդներին հետևելով:

ԲԱԺԻՆ 2

Ինչպե՞ս կարող եմ Տիրոջ մարգարեների խոսքերը ստանալ «համբերությամբ ու հավատքով» (Վարդապետություն և Ուխտեր 21.5):

Ժամանակ առ ժամանակ, գուցե դժվարանաք ընդունել և հետևել Տիրոջ մարգարեների խորհուրդներին և ուսմունքներին: Դա կարող է տեղի ունենալ այն դեպքում, երբ դուք լիովին չհասկանաք նրանց խոսքերի պատճառաբանությունը:

Կամ նրանց ուսմունքները կարող են հակասել հասարակության ընդունված հայացքներին և սովորույթներին, կամ ձեր անձնական հայացքներին և ընտանեկան ավանդույթներին:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Լ. Անդերսենը հետևյալ խորհուրդն ու խոստումն է տվել.



Մի զարմացեք, եթե երբեմն ձեր անձնական տեսակետները սկզբում չեն համապատասխանում Տիրոջ մարգարեի ուսմունքներին: Դրանք սովորելու, խոսարհվելու պահեր են, երբ մենք աղոթում ենք մեր ծնկների վրա: Մենք առաջ ենք քայլում հավատքով, վստահելով Աստծուն, իմանալով, որ ժամանակի ընթացքում մենք ավելի շատ կստանանք հոգևոր հստակություն մեր Երկնային Հորից: . . .

. . . Իմ կյանքում ես հասկացել եմ, որ երբ աղոթքով ուսումնասիրում եմ Աստծո մարգարեի խոսքերը և ուշադիր, համբերությամբ, հոգևորապես հավասարեցնում եմ իմ կամքը ոգեշնչված ուսմունքների հետ, իմ հավատքը Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ միշտ աճում է: Եթե մենք, խորհուրդները մի կողմ դնելով որոշենք, որ մենք ավելի լավ գիտենք, մեր հավատը կտուժի և մեր հավերժական հեռանկարը կխամրի: Ես ձեզ խոստանում եմ, որ երբ վճռականորեն հետևեք մարգարեին, ձեր հավատքը Փրկչի հանդեպ կաճի: (Նիլ Լ. Անդերսեն, «Աստծո մարգարեն», *Ensign* կամ *Liahona*, մայիս, 2018թ, 26–27):

Քույր Քերոլ Ֆ. Մակքոնկին, ով ծառայել է Երիտասարդ Կանանց Գերագույն նախագահության առաջին խորհրդական, ուսուցանել է.



Երբ հնազանդվում, պաշտպանում և հաստատում ենք մարգարեական խոսքը, մենք տեսնում ենք, որ ունենք բավականաչափ հավատք՝ խոսարհ ընդունելու Տիրոջ կամքը, իմաստությունն ու ժամանակացույցը:

Մենք ականջ ենք դնում մարգարեական խոսքին, անգամ երբ այն թվում է ոչ այնքան ողջամիտ և հարմար: Ըստ աշխարհի չափանիշների՝ մարգարեին հետևելը կարող է համարվել համբավ չվայելող, քաղաքականապես սխալ և սոցիալապես

անընդունելի: Սակայն մարգարեին հետևելը միշտ ճիշտ է: . . .

Երբ մենք ականջ ենք դնում մարգարեների խոսքերին, մենք կառուցում ենք մեր տները և մեր կյանքը հավերժորեն հաստատուն հիմքի վրա՝ «մեր Զավչի վեմի վրա, որը Քրիստոսն է՝ Աստծո Որդին» [Հեղինակ 5.12]: (Քերոլ Ֆ. Մակքոնկի, «Ապրենք մարգարեների խոսքերին համաձայն», *Ensign* կամ *Liahona*, նոյեմբեր 2014, 77, 79):



Եկեղեցու պատմությունից հետևյալ օրինակը կարող է ցույց տալ, թե ինչ է նշանակում համբերությամբ և հավատքով ստանալ Տիրոջ ապրող մարգարեների խոսքերը: Խոսելով փառքի արքայությունների մասին, որոնք այժմ գտնվում են Վարդապետություն և Ուխտեր 76 բաժնում (տես նաև «Տեսիլքը (Վ&Ու 76)», ChurchofJesusChrist.org), Նախագահ Բրիգամ Յանգը պատմել է.



Երբ Աստված հայտնեց Ջոզեֆ Սմիթին և Սիդնի Ռիզդոնին, որ կար մի տեղ, որը պատրաստված էր բոլորի համար՝ համաձայն լույսի, որ նրանք ստացել էին և այն բանի, որ մերժել էին չարը և կիրառել բարին, մեծ փորձություն էր շատերի համար, և ոմանք ուրացան, որովհետև Աստված չէր պատրաստվում հավերժական պատիժ ուղարկել հեթանոսներին և մանուկներին, այլ ուներ փրկության մի վայր՝ իր ժամանակին, բոլորի համար և օրհնելու էր ազնիվներին, առաքինիներին և հավատարիմներին, անկախ նրանից, թե նրանք երբևէ պատկանել էին որևէ եկեղեցու, թե՛ ոչ: Սա մի նոր վարդապետություն էր այս սերնդի համար,

և շատերը դժվարանում էին ընդունել դա. (*Teachings of Presidents of the Church: Brigham Young* [1997], 292)

Սկզբում Բրիգամ Յանգը նույնպես դժվարանում էր ընդունել այդ վարդապետությունը: Նա ասել է. «Իմ ավանդույթներն այնպիսին էին, որ երբ Տեսիլքն առաջին անգամ տեսա, դա ուղղակիորեն հակառակ և դեմ էր իմ նախկին կրթությանը: Ես ասացի՝ մի քիչ սպասենք: Ես չմերժեցի այն, բայց ես չէի կարողանում դա հասկանալ: . . . Ես [ստիպված էի] մտածել և աղոթել, կարդալ և մտածել, քանի դեռ անձամբ չէի իմացել և լիովին հասկացել դա» (*Journal of Discourses*, 6:281):



Քննարկեք ուրիշների հետ և պատրաստվեք կիսվել դասարանում

Կարող եք ընտանիքի անդամի կամ ընկերոջ հետ կիսվել նրանով, ինչ սովորել եք Տիրոջ մարգարեներին համբերությամբ և հավատքով հետևելու վերաբերյալ: Այնուհետև հարցրեք. «Ի՞նչն է ձեզ օգնել, որ Տիրոջ մարգարեներին հետևեք համբերությամբ և հավատքով»: Դասարան եկեք պատրաստ՝ ձեր սովորածով կիսվելու համար:

ԲԱԺԻՆ 3

Ի՞նչ դեր են կատարում մարգարեները՝ ինձ ճշմարիտ վարդապետություն ուսուցանելիս:

Եկեղեցու պատմության սկզբում Ջոզեֆ Սմիթը փնտրեց Տիրոջ օգնությունն այն անդամների վերաբերյալ, որոնք խաբվել էին կեղծ վարդապետությամբ:

[Եկեղեցին կազմավորելուց մի քանի ամիս անց, Ջոզեֆ Սմիթն] իմացավ, որ Հայրամ Փեյջը, [Մորմոնի Գրքի ութ վկաներից] մեկը և Սիարոնյան Քահանայությունում ուսուցիչ, սկսեց հայտնություն փնտրել Եկեղեցու համար այն առարկայի միջոցով, ինչ նրա կարծիքով տեսանողի քար էր: Բազմաթիվ Սրբեր . . . հավատում էին, որ այդ հայտնություններն Աստծուց էին:

Ջոզեֆը գիտեր, որ կանգնած է ճգնաժամի առաջ: Հայրամի հայտնությունները կրկնօրինակում էին սուրբ գրությունների բառերը: Նրանք խոսում էին Սիոնի հաստատման և եկեղեցու կազմավորման մասին, բայց երբեմն դրանք հակասում էին Նոր Կտակարանին և այն ճշմարտություններին, որոնք Տերը հայտնել էր Ջոզեֆի միջոցով:

Չիմաստալիվ ինչպես վարվել, Ջոզեֆը մի գիշեր արթուն մնաց և աղոթեց առաջնորդության համար: (*Saints: The Story of the Church of Jesus Christ in the Latter Days*, vol. 1, *The Standard of Truth, 1815–1846* [2018], 97)

Ի պատասխան Ջոզեֆի աղոթքներին, Տերը հայտնություն տվեց, որը գրված է Վարդապետություն և Ուխտեր 28 բաժնում, որտեղ հստակեցվեց Ջոզեֆի եզակի դերը՝ որպես Եկեղեցու մարգարե:



Ուսումնասիրեք դասին նախապատրաստվելիս

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 28.2, 7:

Տերը նաև հայտարարել է, որ այն բաները, որոնք գրել է Հայրամ Փեյջը, Աստծուց չեն (տես Վարդապետություն և Ուխտեր 28.11): Այս հայտնությունից անմիջապես հետո «Սրբերը հրաժարվեցին Հարամի հայտնություններից և Ջոզեֆին միաձայն հաստատեցին որպես միակ մարդը, որը կարող էր հայտնություն ստանալ Եկեղեցու համար» (*Սրբեր*, 1.98):

Քանի որ Տիրոջ ապրող մարգարեները կրում են Եկեղեցու համար հայտնություն ստանալու բանալիները, նրանք նաև պարտավոր են ուսուցանել և պարզաբանել վարդապետությունը Եկեղեցու անդամների համար: Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնն ուսուցանել է.



Այսօր Եկեղեցում, ճիշտ ինչպես հնադարյան ժամանակներում, Քրիստոսի վարդապետությունը հաստատելը կամ վարդապետական շեղումներն ուղղելը աստվածային հայտնության հարց է

նրանց համար, ում Տերը օժտում է առաքելական իշխանությամբ: . . .

Նրանք ունեն իրավունք, զորություն և իշխանություն՝ հայտարարելու Աստծո միտքն ու կամքը՝ ենթակա լինելով Եկեղեցու Նախագահի համընդհանուր զորությանն ու իշխանությանը: . . .

Ինչպե՞ս է Փրկիչը հայտնում Իր կամքը և վարդապետությունը մարգարեներին, տեսանողներին և հայտնողներին: Նա կարող է գործել իր սուրհանդակի միջոցով կամ Իր սեփական անձով: Նա կարող է խոսել Իր իսկ ձայնով կամ Սուրբ Հոգու ձայնով: . . . (տես 1 Նեփի 17.45, Վարդապետություն և Ուխտեր 9.8): Նա կարող է Ինքը դիմել Իր ծառաներին անձնապես կամ գործելով խորհրդով (տես 3 Նեփի 27.1-8): . . .

. . . Պետք է հիշել, որ Եկեղեցու ղեկավարի՝ անցյալի, թե՛ ներկայիս, ամեն մի հայտարարությունը պարտադիր չէ, որ վարդապետություն հանդիսանա: Եկեղեցում բոլորը հասկանում են, որ առանձին առիթով որևէ ղեկավարի կողմից կատարված հայտարարություն հաճախ հանդիսանում է անձնական, թե՛ն լավ մտածված կարծիք, և պաշտոնական կամ պարտավորեցնող չէ ամբողջ Եկեղեցու համար: (Ղ. Թոդ Քրիսթոֆերսոն, «Քրիստոսի վարդապետությունը», *Ensign* կամ *Liahona*, մայիս, 2012թ., 86-88):

Երեց Անդերսենը բացատրել է, որ ճշմարիտ վարդապետությունն անընդհատ ուսուցանվել է Տիրոջ ընտրյալ, ապրող մարգարեների կողմից.



Ոմանք կասկածի տակ են դնում իրենց հավատքը, երբ գտնում են Եկեղեցու որևէ ղեկավարի կողմից ասվածը տասնամյակներ առաջ, որը համահունչ չէ [հակասական է] մեր վարդապետությանը: Կարևոր մի սկզբունք կա, որը կարգավորում է Եկեղեցու վարդապետությունը: Վարդապետությունն ուսուցանվում է Առաջին Նախագահության և Տասներկուսի Քվորումի բոլոր 15 անդամների կողմից: Այն թաքնված չէ որևէ առանձին ելույթի անորոշ տողերում: Ճշմարիտ սկզբունքները ուսուցանվում են հաճախ և շատերի կողմից: Մեր վարդապետությունը դժվար չէ գտնել: (Նիլ Լ. Անդերսեն, «Չե՛ր հավատքի փորձությունը», *Ensign* կամ *Liahona*, նոյեմբեր 2012, 41):



Մտածեք դասին Նախապատրաստվելիս

Ի՞նչ օրինություններ եք ստացել ձեր կյանքում, երբ դուք հետևել եք Տիրոջ մարգարեների ուսմունքներին և խորհուրդներին մեր օրերում:

Ցանկանում ես ավելին: (Ոչ պարտադիր)

Ինչպե՞ս կարող եմ Տիրոջ մարգարեներին հետևելու մեծ հավատք դրսևորել:



Կարդացեք Երեց Անդերսենի «Աստծո մարգարեն» ելույթը (*Ensign* կամ *Liahona*, մայիս, 2018թ., 24-27), որտեղ Երեց Անդերսենը բացատրում է Տիրոջ մարգարեին հավատքով հետևելու պատճառներն ու օրինությունները:

Ինչպե՞ս կարող եմ պատասխանել այն մարդուն, ով զգում է, որ ապրող մարգարեները շատ ծեր են կամ կտրված են իրականությունից, որպեսզի առաջնորդեն այսօրվա երիտասարդ սերունդներին:



Գաղափարներ գտեք Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի ելույթում՝ «Ընտրվել են վկայելու իմ անվան համար» (*Ensign* կամ *Liahona*, նոյեմբեր 2015, 128-31):

Իրականում կա՞ այսօր մարգարեների անհրաժեշտությունը:



Կարդացեք *The Case for a Living Prophet* ելույթը, (*Ensign*, Jan. 2017, 80), որտեղ Առաջին Նախագահությունից Նախագահ Հյու Բ. Բրաունը նկարագրում է 1939 թվականին Անգլիայի խորհրդարանի ստորին պալատի մի անդամի հետ ունեցած իր զրույցը:

ԴԱՍ 10. ՈՒՍՈՒՑՁԻ ՆՅՈՒԹ

Հետևել Տիրոջ ապրող մարգարեներին

Վերականգնված ավետարանի հիմնարար ճշմարտությունն այն է, որ Տերը շարունակում է կանչել ապրող մարգարեներ՝ Իր ժողովրդին Իր կամքն ու վարդապետությունը հայտնելու համար: Այս դասի նպատակն է՝ ամրացնել Տիրոջ մարգարեներին համբերությամբ և հավատքով հետևելու ուսանողների պարտավորությունը:

Ուսուցման առաջարկներ

Տերը պատվիրում է Սրբերին ականջ դնել Իր մարգարեի խոսքերին:

Ցուցադրեք Եկեղեցու Նախագահի որևէ նկար և հարցրեք ուսանողներին, թե նրանք ինչ են մտածում կամ ինչ են զգում այդ նկարին նայելիս:

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ուլիսես Սոարեսի հետևյալ հայտարարությունը, որը գրված է նաև նախապատրաստական նյութում:



Մարգարեներ ունենալը Իր զավակների հանդեպ Աստծո սիրո նշանն է: (Ուլիսես Սոարես, «Մարգարեները խոսում են Սուրբ Հոգու զորությամբ», *Ensign* կամ *Լիահոնա*, մայիս, 2018թ., 99):

- Ապրող մարգարեները ինչպե՞ս են Իր զավակների հանդեպ Աստծո սիրո նշանն հանդիսանում: (Խրախոսեք ուսանողներին հիշել այն, ինչ նրանք ուսումնասիրել են նախապատրաստական նյութի բաժին 1-ում):

Բացատրեք, որ Եկեղեցու կազմավորման օրը Մարգարե Զոզեֆ Սմիթը հայտնություն ստացավ Տիրոջից, որտեղ պատվիրան և խոստում էր տրվում Իր Եկեղեցու անդամներին: Ուսանողների հետ կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 21.4–5 հատվածները և ուշադրություն դարձրեք, թե Տերն ինչ էր պատվիրել, որ Եկեղեցու անդամներն անեն:

- Ի՞նչ ճշմարտություն կարող ենք սովորել Սրբերին տված Տիրոջ պատվիրանից: (Օգտագործելով ուսանողների բառերը, բացահայտեք նմանատիպ մի սկզբունք. **Տերը պատվիրում է,**

որ մենք պետք է համբերությամբ ու հավատքով ընդունենք մարգարեի խոսքերը, ինչպես Իր բերանից:)

- Ինչո՞ւ է երբեմն մարգարեի խոսքերին ականջ դնելու և դրանք ընդունելու համար պահանջվում համբերություն և հավատք:

Ուսանողներին հրավիրեք դասարանով կամ փոքր խմբերով կարդալ հետևյալ սցենարը և քննարկել հետևյալ հարցերը.

Վերջին գերագույն համաժողովի մասին ընկերոջ հետ զրուցելիս, ձեր ընկերը պատմում է ձեզ այն մասին, որ դժվարանում է ընդունել Եկեղեցու ղեկավարներից մեկի կողմից ուսուցանված նյութը: «Ի՞նչ պետք է անեմ, եթե համաձայն չեմ այն բանի հետ, որը մարգարեն է սովորեցրել», - հարցնում է նա:

- Ինչո՞ւ կարող է դա դժվարին իրավիճակ լինել Եկեղեցու անդամի համար:
- Ի՞նչ կարող էք ասել ձեր ընկերոջը, որպեսզի խրախոսեք նրան գործել համբերությամբ և հավատքով, քանի դեռ նա փորձում է լուծել իր մտահոգությունը: (Խրախոսեք ուսանողներին մտածել կամ կրկնել այն, ինչ նրանք սովորել են նախապատրաստական նյութի բաժին 2-ից):
- Ի՞նչն է ձեզ օգնել, որ Տիրոջ մարգարեներին հետևեք համբերությամբ և հավատքով: Կամ ի՞նչ եք սովորել ընտանիքի անդամից կամ ընկերոջից, որի հետ դուք խոսել եք այդ հարցի վերաբերյալ (ինչպես առաջարկվում է նախապատրաստական նյութի բաժին 2-ում):

Գրատախտակին գրեք (կամ ցուցադրեք) հետևյալ անավարտ սկզբունքը. **Երբ մենք համբերությամբ**

ու հավատքով ականջ ենք դնում Տիրոջ մարգարեներին . . .

Ուսանողների հետ կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 21.6 և ուշադրություն դարձրեք Տիրոջ խոստացած օրհնությանը՝ համբերությամբ ու հավատքով Նրա մարգարեներին հետևելիս:

- Ձեր կարծիքով ի՞նչ է նշանակում, որ «դժոխքի դռները չեն հաղթի ձեզ այդ», որ «Տեր ձեր առջևից կցրի խավարի գործությունները», որ «երկինքները կցնցվեն՝ ձեր բարիքի համար»: (Ուսանողների պատասխանները գրեք գրատախտակին՝ անավարտ սկզբունքի տակ):
- Որո՞նք են Տիրոջ մարգարեների վերջին ուսմունքները, որոնք կարող են պաշտպանել մեզ խավարի գործություններից և ստիպել, որ երկինքները ցնցվեն մեր բարիքի համար: (Կարող եք նախապատրաստել մի քանի օրինակներ, որ կիսվեք դրանցով):
- Ե՞րբ է մարգարեների խորհուրդներին համբերությամբ և հավատքով հետևելու ձեր պատրաստակամությունը առաջ բերել այդ օրհնություններից մի քանիսը:

Ուսանողներին ժամանակ տվեք, որ աղոթքով խորհեն, թե ինչ կարող են անել՝ Տիրոջ մարգարեներին ավելի մեծ համբերությամբ և հավատքով հետևելու համար: Դա իր մեջ կարող է ներառել այն, թե նրանք ինչպես կարող են ավելի լիարժեք գործել ըստ մարգարեական վերջին հրավերների և խորհուրդների: Հրավիրեք ուսանողներին գրի առնել այն մտքերն ու տպավորությունները, որոնք նրանք ստանում են: Խրախուսեք նրանց գործել համաձայն հուշումների, որոնք ստանում են Հոգուց:

Տիրոջ մարգարեները ստանում են հայտնություն և հայտարարում են վարդապետություն ամբողջ Եկեղեցու համար:

Հորդորեք ուսանողներին հիշել Հայրամ Փեյջի և նրա քարի հետ ունեցած փորձառությունը նախապատրաստական նյութի ուսումնասիրությունից:

- Ի՞նչ խնդիրներ էին առաջացրել Հայրամ Փեյջի ենթադրյալ հայտնությունները Եկեղեցու անդամների համար:

Հիշեցրեք ուսանողներին, որ Հայրամ Փեյջը ոչ միայն պնդում էր, որ ստանում է հայտնություն Եկեղեցու համար, այլ նաև նրա ենթադրյալ հայտնությունները հակասում էին սուրբ գրություններում ուսուցանվող վարդապետությանը և նախկինում Ջոզեֆ Սմիթի կողմից ստացված հայտնություններին: Հայրամ Փեյջի հայտնությունները ընդունողների թվում էին Ուիթմերների և Օլիվեր Քաուդերիի ընտանիքի անդամները:

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 28.1-7 հատվածները և ուշադրություն դարձրեք Օլիվեր Քաուդերիին և Եկեղեցու անդամներին տված Տիրոջ ուսմունքներին: Նշեք, որ հատված 7 -ում նշված «խորհուրդները» վերաբերում են «հոգևոր ճշմարտություններին, որոնք տրվում են միայն հայտնությամբ» (Սուրբ գրքերի ուղեցույց, «Մատոն խորհուրդները», scriptures.ChurchofJesusChrist.org):

- Ի՞նչ ճշմարտություններ կարող ենք սովորել այս հատվածներից այն մասին, թե ով կարող է հայտնություն ստանալ ամբողջ Եկեղեցու համար: (Ուսանողները կարող են բացահայտել մի շարք ճշմարտություններ, ներառյալ հետևյալը. **Միայն նրանք, ովքեր ունեն Եկեղեցին ղեկավարելու բանալիներ, իրավունք ունեն ստանալ հայտնություն և վարդապետություն հաստատել ամբողջ Եկեղեցու համար**):
- Ինչպե՞ս կարող է այդ ճշմարտությունն օգնել մեզ, որ այլևս չխաբվենք:

Բացատրեք, որ Տիրոջ ընտրյալ մարգարեների ուսմունքների մեջ Եկեղեցու պատմության ողջ ընթացքում մեծ հետևողականություն է պահպանվում: Այնուամենայնիվ, որոշ անդամներ կարող են մտածել, թե ինչ պետք է անեն, երբ հանդիպեն Եկեղեցու ղեկավարի կողմից նախկինում արված որևէ հայտարարության, որը կարծես անհամատեղելի է այսօրվա ուսուցանվող վարդապետության հետ:

- Ի՞նչ սկզբունքներով կարող ենք առաջնորդվել, որ ճանաչենք Տիրոջ վարդապետությունը, ինչպես ուսուցանել են Նրա ապրող մարգարեները:

(Կարող եք ուսանողներին հրավիրել վերանայելու Երեց Դ. Թող Քրիստոֆերսոնի և Նիլ Լ. Անդերսենի հայտարարությունները նախապատրաստական նյութի բաժին 3-ում):

Որպես քննարկման մաս, դուք կարող եք կիսվել Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ խոսքերով.



Դուք գուցե միշտ չհասկանաք ապրող մարգարեի ամեն հայտարարությունը: Բայց, երբ դուք գիտեք, որ մարգարեն մարգարե է, դուք կարող եք մոտենալ Տիրոջը խոնարհությամբ և հավատով և խնդրել ձեր սեփական վկայությունը նրա վերաբերյալ, ինչ Նրա մարգարեն հրապարակել է: (Russell M. Nelson, “Stand as True Millennials,” *Ensign*, Oct. 2016, 31)

Կարող եք դասը եզրափակել՝ կիսվելով ապրող մարգարեների և համբերությամբ ու հավատքով

նրանց հետևելու օրհնությունների մասին ձեր վկայությամբ:

Հաջորդ անգամ

Բացատրեք, որ հաջորդ դասին կանդրադառնան մի թեմայի, որի մասին Նախագահ Ռասել Մ. Նելսոնը խոսել է որպես՝ *«սյուր Երկրի վրայի մեծագույն մարտահրավերի, մեծագույն նպատակի, և մեծագույն աշխատանքի մասին»* («Իսրայելի հույսը» [համաշխարհային հոգևոր հավաք, հունիս 3, 2018թ], ներդիր՝ *New Era* և *Ensign*, 4–5, ChurchofJesusChrist.org, շեղագրերն ըստ բնօրինակի): Հրավիրեք ուսանողներին ուսումնասիրել հաջորդ դասի նախապատրաստական նյութը և պատրաստ եղեք քննարկել Իսրայելը հավաքելու մեծ գործին մասնակցելու նպատակներն ու օրհնությունները:



ՀԱՍ 11. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԴԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Իսրայելի հավաքումը

Դիմելով Եկեղեցու երիտասարդներին, Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը հարցրել է. «Կցանկանալի՞ք մասնակիցը լինել այսօր երկրի վրա գոյություն ունեցող *մեծագույն* մարտահրավերի, *մեծագույն* նպատակի և *մեծագույն* աշխատանքի»: Արդյո՞ք կցանկանալիք օգնել հավաքել Իսրայելն այս թանկագին վերջին օրերում: («Իսրայելի հույսը» [համաշխարհային հոգևոր հավաք, հունիս 3, 2018], *Ensign* և *New Era*, 8 ամսագրերի լրացում, ChurchofJesusChrist.org, շեղագիրն ըստ բնօրինակի):

Երբ ուսումնասիրեք այս դասը, ուշադրություն դարձրեք, թե ինչու է Տերը հավաքում իր ժողովրդին աշխարհի յուրաքանչյուր անկյունից և մտածեք այն մասին, թե ինչպես կարող եք օգնել Նրան իրականացնել այդ մեծ աշխատանքը:

ԲԱԺԻՆ 1

Ի՞նչ է Իսրայելի հավաքումը:

Իսրայելի զավակները Հին Կտակարանի Հակոբ մարգարեի սերունդն են, ում անունը փոխվել է և դարձել Իսրայել: Նրանք միևնույն ուխտի մասնակիցներն են, որոնք Աստված տվել է Հակոբի հայր Իսահակին և նրա պապ Աբրահամին (տես Ծննդոց 26.3–4, 24, Աբրահամ 2.6–11): Հակոբի 12 որդիներն ու նրանց սերունդները «Իսրայելի տունը» կամ «Իսրայելի տասներկու ցեղերն» են: Ժամանակ առ ժամանակ «իրենց անարդարակեցության և ըմբոստության պատճառով Տերը ցրում և չարչարում էր Իսրայելի տասներկու ցեղերին: Մական, իր ընտրյալ ժողովրդի այս ցրումն աշխարհի ազգերի

մեջ Տերն օգտագործեց նաև այդ ազգերին օրհնելու համար» (Սուրբ գրքերի ուղեցույց, «Իսրայել», scriptures.ChurchofJesusChrist.org):

Կարող եք նշել հետևյալ մարգարեություններից մի քանիսն Իսրայելի հավաքման վերաբերյալ:



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Եսայիա 11.11–12 (տես նաև 2 Նեփի 25.17, 29.1, Հակոբ 6.2):

Մորմոնի Գիրքն ուսուցանում է, որ Փրկիչն անձամբ կհավաքի Հակոբի սերունդներին:



Ուսումնասիրեք դասին նախապատրաստվելիս

Կարդացեք 3 Նեփի 5.24-26:

Մեր տնտեսության ժամանակ Եկեղեցու վաղ անդամներից շատերը մեծ հետաքրքրություն դրսևորեցին վերջին օրերում Աստծո ժողովրդի հավաքման Մորմոնի Գրքի մարգարեության վերաբերյալ, որպեսզի կառուցեն Սիոնը՝ Փրկիչի Երկրորդ Գալուստին նախապատրաստվելու համար (տես 3 Նեփի 21.23–26): 1830 թվականի Եկեղեցու համաժողովից օրեր առաջ, Ջոզեֆ Սմիթն ու մյուսները Տիրոջը հարցրին այդ մարգարեության վերաբերյալ և ստացան Վարդապետություն և Ուխտերը 29 բաժնում գրված հայտնությունը:

Միսիոներները մեծ հաջողություն ունեցան, երբ կանգ առան Օհայոյի Կիրթլենդի տարածքում: Այնտեղ նրանք մկրտեցին մոտ 130 նորադարձների, որոնց հիմնական մասը Միդնի Ռիգդոնի Բարեփոխված Մկրտականների համայնքն էր, այդպիսով հիմք դնելով այն վայրին, որը հաջորդ տարի հավաքման վայր պիտի դառնար Եկեղեցու հարյուրավոր անդամների համար: : (Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ (2007), 150):

Այդ առաջին միսիոներական ջանքերից հետո Տերը շարունակեց կանչել միսիոներներին այն մարդկանց հավաքելու գործին, ովքեր կլսեին Նրա ձայնը:



Ուսումնասիրեք դասին նախապատրաստվելիս

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 33.5-7:



Ուսումնասիրեք դասին նախապատրաստվելիս

Կարդացեք Վարդապետություն և Ուխտերի 29.1-2, 7 հատվածները:

Այս հայտնությունից մեկ ամիս անց Օլիվեր Քաուդերին և Լա Երեք հոգի սկսեցին միսիոներական ճամփորդություն՝ օգնելու Տիրոջ ընտրյալների հավաքմանը:




1830 թվականի դեկտեմբերի վերջին Տերը Ջոզեֆ Սմիթի միջոցով հայտնեց Եկեղեցու համար իր կամքը՝ Օհայոյի հավաքատեղիի վերաբերյալ:

«Ես պատվիրան եմ տալիս եկեղեցուն», - հայտարարել է Նա, - «որ նրանք պետք է հավաքվեն Օհայոյում»: Նրանք պետք է հավաքվեին Կիրթլենդի տարածքի նորադարձների հետ և սպասեին, որ միսիոներները վերադառնան Արևմուտքից: . . .

Օհայո տեղափոխվելու կոչը, կարծես թե, մոտեցնում էր Սրբերին Աստծո ժողովրդի հավաքման մասին հին մարգարեությունների իրականացմանը: Աստվածաշունչը և Մորմոնի Գիրքը խոստացել էին, որ Տերը հավաքելու է Իր ուխտի ժողովրդին, որպեսզի պաշտպանի նրանց վերջին օրերի վտանգներից: (Սրբեր. Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու պատմությունը, հ. 1, ճշմարտության չափանիշը, 1815–1846 [2018], 109):

Միացյալ Նահանգների Նյու Յորքի, Պենսիլվանիայի և Օհայոյի տարածաշրջան, 1831



Այս և մյուս հայտնությունների միջոցով Սրբերին պատվիրվեց հավաքվել սկզբում Օհայո և Միսսուրի, ապա Իլլինոյս նահանգներում, որից հետո Մոլթ Լեյքի հովտում: Այդ բոլոր հավաքատեղիներում Տերը Սրբերին պատվիրեց տաճար կառուցել:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարն ուսուցանել է.



Տերը հավաքում է Իր ժողովրդին երկրպագելու, կառուցելու Եկեղեցին, պաշտպանության համար և ստանալու խորհուրդ ու իրահանգ: . . .

Մարգարե Ջոզեֆ Սմիթը հայտարարել է, որ բոլոր դարերում հավաքման աստվածային նպատակն է կառուցել տաճարներ, որպեսզի Տիրոջ զավակները կարողանան ստանալ բարձրագույն արարողությունները և դրանցով ձեռք բերեն հավերժական կյանք [տես Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ (2007), 416–19]: (David A. Bednar, “The Spirit and Purposes of

Gathering” [Brigham Young University–Idaho devotional, Oct. 31, 2006], byui.edu)



Մեր օրերում Տերը ֆիզիկապես հավաքում է իր ժողովրդին Միոնի ցցերում և Երկրի տարբեր ազգերի տաճարներում:

Նա նաև հոգևորապես հավաքում է նրանց դեպի Իր ավետարանի գիտելիքը (տես 1 Nephi 15:12–16).



Մտածեք դասին Նախապատրաստվելիս

Ի՞նչ կարող եք սովորել Տիրոջ և Նրա բնավորության մասին՝ Իր ուխտի ժողովրդին ցրելու և հավաքելու շնորհիվ: Ինչպե՞ս է ծխերում, ցցերում և տաճարներում Եկեղեցու մյուս անդամների հետ հավաքվելն օրհնել ձեր կյանքը:

ԲԱԺԻՆ 2

Ինչպե՞ս կարող եմ Տիրոջն օգնել հավաքել վերջին օրերի Իսրայելը:

Հեբեր 2. Քիմբալ անունով նոր վերականգլած եկեղեցու մի վաղ նորադարձ, ով ավելի ուշ կանչվեց Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ:

Հեբերը նյարդայնանում էր ավետարանն ուրիշների հետ կիսվելու իր ունակությունից: Նա հիշում էր.



Մոտավորապես 1837 թվականի հունիսի առաջին օրը Մարգարե Ջոզեֆը եկավ ինձ մոտ, մինչ ես նստած էի . . . Կիրթլենդի Տաճարում և շշուկով ասաց ինձ. «Եղբայր Հեբեր, Տիրոջ Հոգին շնչաց ինձ, «Թող իմ ծառա Հեբերը գնա Անգլիա և հռչակի իմ ավետարանը և փրկության դուռ բացի այդ ազգի համար»: Երեց Քիմբալը ցնցված էր այդպիսի ձեռնարկման մտքից. «Ես ինձ զգում էի Աստծո ծառաներից ամենաթույլը: Ես հարցրի Ջոզեֆին, թե ինչ պիտի ասեի, երբ այնտեղ հասնեի: Նա ասաց ինձ, որ դիմեմ Տիրոջը, և Նա կառաջնորդի ինձ և կխոսի իմ միջոցով այն նույն հոգով, որ [ուղղություն էր տալիս] իրեն:» (Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ [2007], 327):

Երեց Քիմբալը հետևյալն է գրել իր օրագրում.

Զգալով իմ սեփական թուլությունն ու անհամապատասխանությունը նման ձեռնարկման համար, ինձ ստիպեցին ուժեղ աղաղակել առ Տերը՝ իմաստության և այն հարմարավետության ու աջակցության համար, որն ինձ այդքան անհրաժեշտ էր: . . .

Ես ջանում էի վստահել Աստծուն՝ հավատալով, որ նա կօգնի ինձ ճշմարտությունը հրապարակելու հարցում, ինձ կօգնի արտահայտվել, և որ նա ներկա կլիներ անհրաժեշտության պահին: (*Journal of Heber C. Kimball*, ed. R. B. Thompson [1840], 15)

Հեբեր Զ. Քիմբալն ավելի ուշ հիշում է.

Ես գնացի և կատարեցի իմ միսիան՝ կենդանի Աստծո մարգարեի խոսքերի համաձայն, և անցավ տասնմեկ ամիս և երկու օր Կիրթլենդից հեռանալուց հետո, . . . որի ընթացքում եկեղեցում և Աստծո արքայությունում ավելացան մոտ երկու հազար հոգի: (Heber C. Kimball, “Sermon,” *Deseret News*, Dec. 2, 1857, 3)

Առաջին Նախագահությունից Նախագահ Դալլին Հ. Օուքսը ուսուցանել է նաև, որ մենք կարող ենք ապավինել Տիրոջը, մինչ օգնում ենք հավաքել Իսրայելը՝ կիսվելով Նրա ավետարանով.



Մենք պետք է աղոթենք Տիրոջ օգնության և առաջնորդության համար, որպեսզի գործիքներ լինենք Նրա ձեռքում այն անձնավորության համար, ով այժմ պատրաստ է, Նրա համար, ում Տերը ցանկանում է, որ մենք օգնենք այսօր: Ապա մեր հետագա անելիքներում մենք պետք է աչալուրջ լինենք՝ լսելու և հետամուտ լինելու Նրա Հոգու հուշումներին:

Այդ հուշումները կգան: Անհամար անձնական վկայություններից մենք գիտենք, որ Իր ձևով և Իր ժամանակին Տերը նախապատրաստում է մարդկանց՝ ընդունելու Իր ավետարանը: Նման անձնավորությունները փնտրտուքի մեջ են լինում, և երբ մենք փորձում ենք գտնել նրանց, Տերը կպատասխանի նրանց աղոթքներին՝ մեր աղոթքներին պատասխանելու միջոցով: Նա կհուշի և կառաջնորդի նրանց, ովքեր ցանկանում են և ովքեր անկեղծորեն առաջնորդություն են փնտրում, թե ինչպես, որտեղ, երբ և ում հետ կիսվել Իր ավետարանով: (Dallin H. Oaks, “Sharing the Gospel,” *Ensign*, Nov. 2001, 8)



Նախագահ Նելսոնը շարունակել է ուսուցանել.



Այժմ, Իսրայելի հավաքմանը մասնակցելիս ձեզանից կպահանջվի որոշ զոհաբերություն: Միգուցե, դրա համար ձեր կյանքում որոշ փոփոխություններ պահանջվի կատարել: Այն անշուշտ կպահանջի ձեր ժամանակն ու եռանդը և

Աստծուց տրված ձեր տաղանդները: Դուք հետաքրքրված եք: . . .

. . . Իսրայելի հավաքումն, ի վերջո, նշանակում է՝ առաջարկել Հիսուս Քրիստոսի ավետարանը վարագույրի երկու կողմերում գտնվող Աստծո այն զավակներին, ովքեր Աստծո հետ չեն կապել կարևոր ուխտերը և ոչ էլ ստացել են իրենց հիմնական արարողությունները: . . .

. . . Դուք ուղարկվել եք Երկիր այս որոշակի ժամանակահատվածում՝ աշխարհի պատմության ամենավճռական ժամանակ, որպեսզի օգնեք Իսրայելի հավաքմանը: Այս պահին, այս Երկրում *ոչինչ* չի կատարվում, որն ավելի կարևոր է, քան դա: *Ոչինչ* ավելի մեծ հետևանք չունի, քան դա: Բացարձակապես *ոչինչ*:

. . . Սա է այն առաքելությունը, որի համար դուք ուղարկվել եք Երկիր: (Ռասսել Մ. Նելսոն, «Իսրայելի հույսը» 8, շեղագիրը բնօրինակն է)



Գործեք ըստ ձեր սովորածի

Առաջիկա օրերին և շաբաթներին ի՞նչ եք անելու, որպեսզի ավելի եռանդուն մասնակցեք Իսրայելի հավաքման գործին:

Ցանկանում ես ավելին: (Ոչ պարտադիր)

Ուրիշների հետ ավետարանով կիսվելու ժամանակ ինչպե՞ս կարող եմ ավելի բնական պահել ինձ:

Sharing the Gospel տեսանյութում Նախագահ Օուքսն ուսուցանում է, թե ինչպես կիսվել ավետարանով ավելի բնական և սիրալիկ ձևով: (Տես 2016 թվականի հոկտեմբեր ամսվա գերագույն համաժողովի նրա ելույթը. «Կիսվել վերականգնված ավետարանով» [Ensign կամ *Liahona*, նոյեմբեր 2016, 57–60]:)



Երեց Դիտեր Ֆ. Ուխտորֆն իր ելույթում գաղափարներ է տալիս այն մասին, թե ինչպես կարող ենք ավելի լավ պատրաստվել ավետարանով կիսվել բնական եղանակներով. «Միսիոներական աշխատանք. կիսելով այն, ինչ կա Ձեր սրտում» (Ensign կամ *Liahona*, մայիս 2019, 15–18):



«Քույրերի մասնակցությունը Իսրայելի հավաքմանը» (Ensign կամ *Liahona*, նոյեմբեր 2018, 68–70) վերնագրով իր ելույթում Նախագահ Նելսոնը կարևորում է հոգևոր պարգևները, որոնք Եկեղեցու կանայք կարող են օգտագործել՝ օգնելով հավաքել Իսրայելը:

ԴԱՍ 11. ՈՒՍՈՒՑՁԻ ՆՅՈՒԹ

Իսրայելի հավաքումը

Հիսուս Քրիստոսը խոստացավ հավաքել Իր ժողովրդին վերջին օրերում (տես 3 Նեփի 21.22–29): Այս դասի նպատակն է օգնել ուսանողներին ավելի լավ հասկանալ, թե որն է Իսրայելի հավաքման գործում Տիրոջն օգնելու նրանց դերը: Այն նաև կօգնի ուսանողներին ծրագրել, թե նրանք ինչպես լիարժեք կմասնակցեն այս հավաքին:

Ուսուցման առաջարկներ

Տերը պատվիրել է Իր ժողովրդին հավաքվել:

Ցուցադրեք հետևյալ նկարը և ուսանողներից մեկին հրավիրեք բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 29.1–2 հատվածները:



- Այդ հատվածների պատկերավոր նկարագրությունն ի՞նչ կարող է ուսուցանել մեզ Փրկիչի մասին: Ի՞նչ է Հիսուս Քրիստոսը ցանկանում անել Իր ժողովրդի համար:

Ուշադրությունը հրավիրեք հատված 1-ի «քավել» բառին: Բացատրեք, որ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն ուսուցանել է, որ «եբրայերենով քավության հիմնական բառը՝ *կաֆար* բայն է, որը նշանակում է «փակել» (“The Atonement,” *Ensign*, Nov. 1996, 34):

- Համաձայն հատված 2-ի, ովքե՞ր են Տիրոջ ժողովուրդը, ում Նա ուզում է հավաքել և փակել Իր ողորմության թևերով:

Բացատրեք, որ Աստվածաշունչը, Մորմոնի Գիրքը և Ջոզեֆ Սմիթին տրված մի քանի հայտնություններ սովորեցնում են, որ Տերը վերջին օրերում կհավաքի Իր ժողովրդին՝ ցրված Իսրայելին (տես Եզեկիել 28.25, 2 Նեփի 10.8, Վարդապետություն և Ուխտեր 33.6):

Հրավիրեք ուսանողներին բացատրել, թե նրանք ինչ գիտեն Իսրայելի հավաքման մասին: (Խրախուսեք նրանց վերանայել նախապատրաստական նյութի բաժին 1-ը:) Դուք կարող եք տալ նմանատիպ հարցեր՝ քննարկումը խորացնելու համար.

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ պետք է Նախագահ Նելսոնն այդ հավաքումը կոչեր «այսօր Երկրի վրա գոյություն ունեցող *մեծագույն* մարտահրավեր, *մեծագույն* նպատակ և մեծագույն աշխատանք»: («Իսրայելի հույսը» [համաշխարհային հոգևոր հավաք, հունիս 3, 2018], *Ensign* և *New Era*, 8 ամսագրերի լրացում, Church of Jesus Christ .org, շեղագիրն ըստ բնօրինակի):
- Ի՞նչ կարող ենք սովորել Տիրոջ և Նրա բնավորության մասին՝ Իր ուխտի ժողովրդին ցրելու և հավաքելու շնորհիվ:
- Ինչո՞ւ է Տերը ցանկանում, որ Իր Սրբերը հավաքվեն միասին:

Բացատրեք, որ 1830 թվականի դեկտեմբերին Ջոզեֆ Սմիթը հայտնություն ստացավ, որտեղ Սրբերին պատվիրվեց տեղափոխվել Օհայո (տես Վարդապետություն և Ուխտեր 37.1–3): 1831 թվականի հունվարին, Եկեղեցու համաժողովի ժամանակ Ջոզեֆը լրացուցիչ հայտնություն ստացավ՝ մեկնաբանելով, թե Տերն ինչու էր պատվիրել Սրբերին հավաքվել, և բացատրեց խոստացված օրհնությունները դա անելու համար:

Խնդրեք դասարանի անդամներին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 38.28, 31–33, ուշադրություն դարձնելով, թե սրբերն ինչպես են օրհնվելու, հնազանդվելով Օհայոյում հավաքվելու պատվիրանին: Հրավիրեք ուսանողներին կիսվել իրենց գտած նյութով:

Կարող եք ընդգծել հետևյալ ճշմարտությունը.

Տերը հավաքում է Իր ժողովրդին, որպեսզի պաշտպանի նրանց և հոգեպես ամրացնի:

- Այսօր մեր ճյուղերում, ցցերում և տաճարներում հավաքվելով, մենք ինչպե՞ս հնարավորություն կունենանք պաշտպանություն և հոգևոր ուժ ստանալ:
- Ինչպիսի՞ պաշտպանություն եք զգացել, երբ հավաքվել եք մյուս Սրբերի հետ:

Տերը կանչում և օգնում է Իր ծառաներին հավաքել Իսրայելը:

Կրկին անդրադարձեք իր ճտերին թևերի տակ հավաքող հավի նկարին: Ցուցադրեք հետևյալ ճշմարտությունը. **Տերը կանչել է մեզ և կօգնի մեզ հավաքել Իսրայելը:**

Ուսանողներին հանձնարարեք մտքում կարդալ Վարդապետություն և Ուխտեր 29.4-7 և 84.86–88 հատվածները, ուշադրություն դարձնելով, թե Տերը ինչ եղանակներով կօգնի մեզ, երբ մենք աջակցենք Իսրայելի հավաքման գործին: Թող ուսանողները կիսվեն իրենց սովորածով:

Որպեսզի իմանաք, թե Տերը ինչպես կօգնի մեզ հավաքել Իսրայելը, հրավիրեք ուսանողներին պատմել կամ միասին կարդալ Հեբեր 2. Քիմբալի Մնգլիայի միսիայի պատմությունը, որը կարող եք գտնել նախապատրաստական նյութի 2-րդ բաժնում: Սա կարելի է անել փոքր խմբերով: Հրավիրեք յուրաքանչյուր խմբին (կամ դասարանին) Երեց Քիմբալի պատմությունն ուսումնասիրելուց հետո միասին քննարկել հետևյալ հարցերը.

- Ի՞նչ կարող եմ սովորել Հեբեր Քիմբալի փորձառությունից, որն ինձ ավելի մեծ վստահություն կտա, որպեսզի օգնեմ հավաքել Իսրայելը՝ ավետարանով կիսվելով ուրիշների հետ:

- Ե՞րբ եմ զգացել Տիրոջ օգնությունը ավետարանը հռչակելու ժամանակ:
- Ի՞նչ կարող եմ անել հավատքս գործադրելու և ավետարանով ուրիշների հետ ավելի շատ կիսվելու համար:

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դիտեր Ֆ. Ուլսդորֆի հետևյալ խոսքերը. Հրավիրեք ուսանողներին կարդալ խոսքերը, այնուհետև պատմել այն մասին, թե ինչպես են նրանք արդյունավետ, բայց բնական եղանակներով ավետարանի ուղերձով կիսվել ուրիշների հետ:



Որտեղ էլ գտնվեք այս աշխարհում, կան շատ հնարավորություններ Հիսուս Քրիստոսի ավետարանի բարի լուրով կիսվելու համար այն մարդկանց հետ, որոնց հանդիպում եք, ում հետ սովորում, ապրում, աշխատում և շփվում եք: . . . Կան շատ սովորական և բնական եղանակներ դա անելու համար: (Դիտեր Ֆ. Ուլսդորֆ, «Միսիոներական աշխատանք. կիսելով այն, ինչ կա Ձեր սրտում», *Ensign* կամ *Լիահոնա*, մայիս 2019, 15, 17):

Մենք կարող ենք միանալ Իսրայելի հավաքման հրաշալի գործին:

Ցուցադրեք Նախագահ Նելսոնի հետևյալ խոսքերը և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



Ամեն անգամ, երբ դուք անում եք ինչ-որ բան, որն օգնում է որևէ մեկին ավարագույրի այս կամ այն կողմում՝ կատարելու քայլ Աստծո հետ ուխտեր կապելու համար, . . . դուք օգնում եք Իսրայելի հավաքմանը: (Ռասսել Մ. Նելսոն, «Իսրայելի հույսը» 15, շեղագիրը բնօրինակն է):

- Ելնելով Նախագահ Նելսոնի ուսմունքներից, ուրիշ ի՞նչ կարող ենք անել, որպեսզի Տերն օգնի հավաքել Իսրայելը: (Օգնեք ուսանողներին բացահայտել նմանատիպ մի ճշմարտություն. **Մենք հավաքում ենք Իսրայելը, երբ օգնում ենք Աստծո զավակներին քայլեր ձեռնարկել Նրա հետ ուխտեր կնքելու և պահելու ուղղությամբ):**

Նշում. Ուսանողները հնարավորություն կունենան «Մահացածների փրկագնումը» վերնագրով 19-րդ դասի ժամանակ շարունակել քննարկել Իսրայելի հավաքումը ընտանեկան պատմության և տաճարային ծառայության միջոցով:

Հրավիրեք ուսանողներին բացահայտել մի քանի հատուկ եղանակներ, որոնք կօգնեն հավաքել Իսրայելը: Նրանց պատասխանները թվարկեք գրատախտակին: Կարող եք խնդրել ուսանողներին կիսվել իրենց փորձառություններով, որոնք վերաբերում են այդ ցուցակի կետերին:

Ժամանակ հատկացրեք ուսանողներին խորհել նախապատրաստական նյութի բաժին 2-ի հետևյալ հարցի շուրջ և գրել մի նպատակ, որն իրենց կարծիքով, կարող են իրականացնել: Միգրացե նրանք ցանկանան ծրագիր կազմել, որպեսզի իրականացնեն իրենց այդ նպատակն ընկերոջ կամ դասարանի որևէ խմբի հետ: Կարող եք նաև հարցնել, թե արդյոք ուսանողներից ոմանք կցանկանան կիսվել իրենց փորձով հետագա քննարկման ընթացքում:

- Առաջիկա օրերին և շաբաթներին ի՞նչ եք անելու, որպեսզի ավելի եռանդուն մասնակցեք Իսրայելի հավաքման գործին:

Վերջում կիսվեք ձեր վկայությամբ այն մասին, որ Տերը հավաքում է Իսրայելը վերջին օրերում: Հավաստիացրեք ուսանողներին այն պաշտպանության և ուժի մասին, որն Աստված կտա նրանց, երբ նրանք հավաքվեն այլ Սրբերի հետ, և երբ նրանք օգնեն հավաքել Իսրայելը:

Հաջորդ անգամ

Բացատրեք, որ Իսրայելի հավաքումը սերտորեն կապված է երկրի վրա Միոն հիմնելու Տիրոջ աշխատանքի հետ՝ որպես նախապատրաստություն Նրա Երկրորդ Գալուստին: Հրավիրեք ուսանողներին ուսումնասիրել հաջորդ դասի նախապատրաստական նյութը և պատրաստ լինել քննարկելու, թե ինչ է Միոնը, և ինչ օրհնություններ կստանան, եթե օգնեն Միոնը հաստատել իրենց տներում և ցցերում:



ԴԱՍ 12. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Հաստատել Սիոնի գործը

Մարգարե Զոգեֆ Սմիթն ուսուցանել է. «Մեր ամենամեծ նպատակը պետք է լինի Սիոնի կառուցումը» (Եկեղեցու նախագահների ուսմունքները. Զոգեֆ Սմիթ [2007], 186): Երբ ուսումնասիրեք այս նյութը, ուշադրություն դարձրեք այն ճշմարտություններին, որոնք կօգնեն ձեզ հասկանալ, թե ինչ է Սիոնը, ինչու է անհրաժեշտ կառուցել Սիոնը, և դուք ինչ կարող եք անել այդ գործին օգնելու համար:

ԲԱԺԻՆ 1

Ի՞նչ է նշանակում
հաստատել Սիոնը:

1830թ. դեկտեմբերին, երբ Զոգեֆ Սմիթը աշխատում էր Սատվածաշնչի թարգմանության վրա, Տերը հայտնեց, (այժմ այն գրված է Մովսես 7-ում), որ Հին Կտակարանի Ենովք մարգարեն կառուցել է Սիոն անունով քաղաք:



**Ուսումնասիրեք դասին
նախապատրաստվելիս**

Կարդացեք Մովսես 7.18-21:



Դիտեք Teachings of Joseph Smith: Preparing for Zion (1:42) տեսանյութը, կամ ուսումնասիրեք ստորև բերված Մարգարե Զոգեֆ Սմիթի հայտարարությունը.

Մարգարե Ջոզեֆ Սմիթը հայտարարել է.



Սիոնի կառուցումը մի գործ է, որը հետաքրքրել է Աստծո ժողովուրդին բոլոր դարերում, . . . Նրանք ուրախության ակնկալիքով սպասել են այն օրվան, որում ապրում ենք մենք, և խանդավառված երկնային և ուրախալի ակնկալիքներով նրանք երգել են, գրել ու մարգարեացել մեր այս օրվա մասին, . . . մենք արտոնյալ ժողովուրդ ենք, որոնց Աստված է ընտրել առաջ բերելու Վերջին օրերի փառքը, մեզ է թողնված տեսնելու, մասնակցելու և օգնելու առաջ տանել Վերջին օրերի փառքը:

Ցանկացած տեղ, որտեղ հավաքվում են Սրբերը, Սիոն է, որը յուրաքանչյուր տղամարդ և [և կին] կկառուցի, որպես ապահովության վայր [իրենց] երեխաների համար: . . .

. . . Ժամանակը շուտով գալիս է, երբ մարդ ոչ մի տեղ հանգստություն չի ունենա, բացի Սիոնից և նրա ցցերից: *(Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ [2007], 197):*

Մարգարե Ջոզեֆ Սմիթին տրված հայտնության մեջ Տերը հայտնեց, որ Սիոնը նաև վերաբերում է «սրտով մաքուրներին» (տես Վարդապետություն և Ուխտեր 97.21):

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թոդ Քրիսթոֆերսոնը ուսուցանել է.



Սիոնը թե՛ վայր է և թե՛ ժողովուրդ: . . .

Սիոնը Սիոն է իր քաղաքացիների բնավորությունների, հատկանիշների և հավատարմության շնորհիվ: . . . Եթե մենք ցանկանում ենք հիմնել Սիոնը մեր տներում, ճյուղերում, ծխերում և ցցերում, ապա անհրաժեշտ կլինի (1) դառնալ մեկ սրտով և մտքով, (2) դառնալ սուրբ մարդիկ՝ որպես ժողովուրդ և անհատապես, և (3) հոգ տանել աղքատների ու կարիքավորների մասին, մինչև որ աղքատությունը վերանա մեր միջից: Մենք չենք կարող սպասել Սիոնի գալուստին, որպեսզի այս ամենը կատարվի. Սիոնը կգա միայն, եթե այս ամենը կատարվի: . . .

Մենք կդառնանք մեկ սիրտ և մեկ միտք, եթե ամեն մեկս Փրկչին դնենք մեր կյանքի կենտրոնում և հետևենք նրանց, ում

Նա լիազորել է ղեկավարել մեզ: (Դ. Թոդ Քրիստոֆերսոն, «Եկեք Սիոն», *Ensign* կամ *Լիահոնա*, նոյեմբեր 2008, 37–38)

Սիոնին արժանի մարդկանց հատկանիշների մասին ավելին իմանալու համար, կարդացեք 4 Նեփի 1.1–4, 15–18:




Մտածեք դասին Նախապատրաստվելիս

Փրկչին իմ կյանքի կենտրոնում դնելով և հետևելով Եկեղեցու ղեկավարներին, ինչպե՞ս կօգնեմ ինձ նմանվել Մովսես 7.18 և Վարդապետություն և Ուխտեր 97.21 հատվածներում նկարագրված մարդկանց:

ԲԱԺԻՆ 2

Ի՞նչ պատահեց Միսսուրիի այն Սրբերի հետ, ովքեր փորձեցին կառուցել Սիոնը:

Եկեղեցու կազմավորումից մեկ տարի անց Տերը նշանակեց Միսսուրի նահանգի, Ջեքսոն գավառի Ինդեփենդենս քաղաքը որպես Սիոնի «կենտրոնական վայր» (Վարդապետություն և Ուխտեր 57.3), որտեղ Սրբերը կհավաքվեին և կկառուցեին Սիոն սուրբ քաղաքը, որը նաև կոչում են Նոր Երուսաղեմ (տես Վարդապետություն և Ուխտեր 45.64–66, 57.1–3):



Սիոն քաղաքի համար նախատեսված հողակտորի քարտեզը գծվել է Մարգարե Ջոզեֆ Սմիթի ղեկավարությամբ և 1833 թվականի հունիսին Սիոնում առաջին տաճարի համար նախատեսված ճարտարապետական նախագծերի հետ միասին ուղարկվել է Միսսուրիի Սրբերին:

Մարգարեի առաջնորդությամբ, Եկեղեցու վաղ օրերի անդամները փորձեցին Ջեքսոն գավառում հիմնել Միոն քաղաքը, բայց դժվարանում էին լավ հարաբերություններ զարգացնել այնտեղի բնակիչների հետ: Կրոնի, ստրկության, քաղաքականության և սրբերի բնակչության աճի շուրջ անհամաձայնությունը հրահրեց Ջեքսոն գավառի մյուս քաղաքացիներից շատերին պահանջել Սրբերի վտարումը երկրից:

1833 թվականի հուլիսի 20-ին Ջեքսոն գավառի քաղաքացիներից բաղկացած մի ամբոյս դատարանի դահլիճում տեղի ունեցած հանդիպման ժամանակ հակառակվեց Եկեղեցու տեղի ղեկավարներին և պահանջեց, որ Սրբերը փակեն իրենց տպարանն ու խանութը և հեռանան գավառից: Եկեղեցու ղեկավարները հրաժարվեցին, ուստի ամբոյսը ոչնչացրեց Եկեղեցու տպարանը և ձյութով ու փետուրներով պատեցին Եպիսկոպոս Էդվարդ Պատրիցին ու Եկեղեցու անդամ Չարլզ Ալենին: Երեք օր անց ամբոյսը սպառնաց հետագա բռնություններով: Սպառնալիքի ներքո Եկեղեցու տեղի ղեկավարները ստիպված համաձայնվեցին գարունը բացվելուն պես հեռանալ գավառից: Մակայն, երբ Եկեղեցու ղեկավարներն ու անդամները 1833 թվականի աշնանը որոշեցին մնալ և պայքարել իրենց իրավունքների համար, ամբոյսի բռնությունները շարունակվեցին:

Փարլի Պ. Պրատը պատմում է.



Բռի և անտաշ մարդկանց խմբերը շրջում էին բոլոր ուղղություններով, առանց վախի մտնելով մարդկանց տները, . . . վախեցնելով կանանց և երեխաներին և սպառնալով սպանել նրանց, եթե անմիջապես չփախչեն: . . .

. . . Կանայք և երեխաները փախչում էին տարբեր ուղղություններով: Մոտ հարյուր հիսուն հոգուց բաղկացած մի ամբոյս փախավ դեպի դաշտերը, որտեղ նրանք մի քանի օր թափառում էին, հիմնականում առանց սննդի և բաց [երկինքն] էր միայն նրանց ապաստարանը: Մյուս խմբերը փախան դեպի Միսսուրի գետը: Ցրելով կանանց և երեխաներին, այդ խմբերը հետապնդում էին տղամարդկանց, կրակում էին ոմանց վրա, կապում

էին, մյուսներին ծեծում, իսկ ոմանց էլ հետապնդում էին մի քանի մղոն: . . .

[Միսսուրի գետի] ափը երկու կողմից սկսեց լցվել լաստանավերով, որոնք բեռնված էին տղամարդկանցով, կանանցով, երեխաներով, ապրանքներով, սայլերով, արկղերով, պարենով և այլն, մինչ լաստանավն անընդհատ աշխատում էր՝ տեղափոխելով մարդկանց մյուս ափը: . . . Ամեն ուղղությամբ կարելի էր տեսնել հարյուրավոր մարդկանց, ոմանք իրենց վրաններում, իսկ ոմանք էլ իրենց խարույկի շուրջը, բաց երկնքի տակ, մինչդեռ հորդառատ անձրև էր գալիս: Ամուսինները փնտրում էին իրենց կանանց, կանայք փնտրում էին իրենց ամուսիններին, ծնողները՝ իրենց զավակներին, իսկ զավակները՝ իրենց ծնողներին: Ոմանք հաջողություն ունեցան փախչել իրենց ընտանիքի, կենցաղային ապրանքների և որոշ պարենի հետ, մինչդեռ մյուսները չկիսեցին իրենց ընկերների ճակատագիրը և կորցրին իրենց բոլոր բարիքները: . . .

. . . [Մեր] հասարակության բոլոր անդամները թշվեցին գավառից, և եգիպտացորենի դաշտերն ավերվեցին ու ոչնչացվեցին, ցորենի խրձերն այրվեցին, կենցաղային իրերը թալանվեցին, իսկ բոլոր տեսակի ունեցվածքն ու շինությունները ոչնչացվեցին: (*Autobiography of Parley Parker Pratt*, ed. Parley P. Pratt Jr. [1938], 101–3)



Ս.Ս.Ա. Քրիստենսեն (1831–1912), Սրբերը դուրս են թշվում Ջեքսոն գավառից, Միսսուրի, մոտ. 1878, ներկված՝ թեմպերա ներով, մուսլին կտորի վրա, 196՝ 287 սմ: Բրիգամ Ցանգի Համալսարանի Արվեստի թանգարան, Ս. Ս. Ա. Քրիստենսենի թոռների ընծան, 1970 թ.

Ջեքսոն գավառից դուրս են քշվել ավելի քան 1000 սրբեր, իսկ ավելի քան 200 Սրբերի տները այրվել են:

ԲԱԺԻՆ 3

Ի՞նչը խանգարեց Սրբերին հաստատել Սիոնը Միսսուրի նահանգի Ջեքսոն գավառում:

Ջեքսոն գավառից Սրբերի բռնի վտարմանը հաջորդող ամիսներին Տերը Մարգարե Ջոզեֆ Մմիթին հայտնեց այն պատճառները, ըստ որոնց նա թույլ էր տվել, որ Իր Սրբերը հետապնդվեն և քշվեն իրենց հողերից և տներից: Երբ ուսումնասիրեք Վարդապետություն և Ուխտեր 101 և 105 բաժինների հետևյալ հատվածները, ուշադրություն դարձրեք, թե ինչ արարքներ և ինչպիսի վերաբերմունքը Սրբերին խանգարեց Սիոնը հաստատել Ջեքսոն գավառում, Միսսուրի:



Ուսումնասիրեք դասին նախապատրաստվելիս

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 101.2-3, 6-8 և Վարդապետություն և Ուխտեր 105.3-6 հատվածները:



Գրի առեք ձեր մտքերը

Վերանայելով այդ հատվածները, նշեք կամ թվարկեք այն արարքներն ու վերաբերմունքը, որոնք Տերը վերջին օրերում պահանջում է այն մարդկանցից, ովքեր ցանկանում են հաստատել Սիոնը:

ԲԱԺԻՆ 4

Ինչպիսի՞ն է Սիոնի ապագան:

Երեց Քրիստոֆերսոնն ուսուցանեց, որ Սիոնը հաստատելիս ինքներս մեզ և աշխարհին պատրաստում ենք ընդունելու Փրկիչին՝ Իր Երկրորդ Գալուստի ժամանակ:



Տիրոջ վերադարձի համար այս երկրի վրա անհրաժեշտ է այն մարդկանց ներկայությունը, ովքեր պատրաստ են ընդունել Նրան Նրա գալուստի օրը: . . .

Հին ժամանակներում Աստված Իր մոտ վերցրեց Սիոն քաղաքը: Բայց վերջին օրերում Նոր Սիոնը կոչմավորի Տիրոջը Նրա վերադարձի օրը: . . .

Մինչ մենք ձգտում ենք ջանասիրաբար աշխատել Սիոնը կառուցելիս, այդ թվում՝ Տիրոջ ընտրյալների հավաքման և մահացածների փրկագնման աշխատանքի մեր մասը կատարելով, մենք պետք է դադար առնենք և հիշենք, որ դա Տիրոջ գործն է, և Նա է կատարում դա: . . .

Այս մեծ ու վերջին դարաշրջանը հաստատուն կերպով մոտենում է իր գագաթնակետին՝ երկրի վրա կառուցվող Սիոնին, Փրկիչի փառավոր վերադարձի ժամանակ միավորվելով վերևում գտնվող Սիոնի հետ: . . . Եկեք կառուցենք Սիոնը, որպեսզի արագացնենք այդ օրը: (Դ. Թոդ Քրիստոֆերսոն, «Պատրաստվել Տիրոջ վերադարձին», *Ensign* կամ *Liahona*, մայիս, 2012թ., 82-84):




Մտածեք դասին նախապատրաստվելիս

Ի՞նչ եք անում, որպեսզի կառուցեք Սիոնը, երբ պատրաստվում եք Տիրոջ Երկրորդ Գալուստին: Ուրիշ ի՞նչ կարող եք անել:

Ցանկանում ես ավելին: (Ոչ պարտադիր)

Որտեղից կարող եմ ավելին սովորել
Սիոնը հաստատելու մասին:



Ջոզեֆ Սմիթի՝ Սիոն հաստատելու մասին ուսմունքներից մի քանիսը կարելի է գտնել *Եկեղեցու Նախագահների Ուսմունքներում*. Ջոզեֆ Սմիթ, գլուխ 15-ում, «Հաստատել Սիոնի գործը» (Էջ 193):



«Եկեք Սիոն» իր ուղերձում (*Ensign* կամ *Liahona*, նոյեմբեր 2008, 37-40), Երեց Դ. Թոդ Թրիստոֆերսոնը բացատրում է, թե ինչ կարող ենք անել, որ հաստատենք Սիոնը:



Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալն իր *Becoming the Pure in Heart* ուղերձում (*Ensign*, Mar. 1985, 2-5) խոսում է անձնագոհության, համագործակցության և զոհաբերության մասին՝ որպես Սիոնը կառուցելու հիմնարար սկզբունքներ:

ԴԱՍ 12. ՈՒՍՈՒՑՉԻ ՆՅՈՒԹ

Հաստատել Սիոնի գործը

Սիոնի գործը հաստատելու Տիրոջ պատվիրանից հետո վաղ օրերի Սրբերը սկսեցին հավաքատեղի կառուցել Միսսուրիի նահանգի Ջեքսոն գավառում: Այս դասի նպատակն է օգնել ուսանողներին բացահայտել այն եղանակները, որոնք կօգնեն նրանց կառուցել Սիոնը մեր օրերում:

Ուսուցման առաջարկներ

Տերը պատվիրում է Իր ժողովրդին հաստատել Սիոնի գործը:

Հորդորեք ուսանողներին մտածել այն մասին, թե քանի անգամ են նրանք աղոթել Երկնային Հորը՝ օգնություն խնդրելով այն մասին, թե ինչպես վարվել իրենց կյանքում:

Բացատրեք, որ 1829 թվականի գարնանը, նույնիսկ նախքան Եկեղեցու կազմավորումը, Ջոզեֆ Սմիթը հայտնություններ ստացավ Օլիվեր Քաուդերիի, Հայրում Սմիթի և Ջոզեֆ Նայթի համար: Այս մարդկանցից յուրաքանչյուրը ցանկանում էր իմանալ, թե Տերն ինչ էր ցանկանում նրանց անել: Գրատախտակին գրեք սուրբ գրությունների հետևյալ հղումները. Վարդապետություն և Ուխտեր 6.6, 11.6, 12.6:

Հրավիրեք ուսանողներին մտքում կարդալ այդ հատվածները՝ ուշադրություն դարձնելով, թե Տերն ինչ ասաց նրանցից յուրաքանչյուրի մասին:

- Ձեզ կարծիքով, ի՞նչ է նշանակում «առաջ տանել և հաստատել Սիոնի գործը»: (Վարդապետություն և Ուխտեր 6.6):

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ նախապատրաստական նյութի բաժին 1-ի Ջոզեֆ Սմիթի խոսքերը: Կամ կարող եք ցուցադրել *Teachings of Joseph Smith: Preparing for Zion* (1:42) տեսանյութը: Դասարանին հանձնարարեք ուշադրություն դարձնել, թե ինչ ուսուցանեց Ջոզեֆ Սմիթը Սիոնի մասին:

- Ձեր կարծիքով, ինչու է Սիոնը մի գործ, որը հետաքրքրել է Աստծո ժողովրդին բոլոր դարերում: (Հրավիրեք ուսանողներին հիշել այն, ինչ

նրանք ուսումնասիրել են նախապատրաստական նյութում:)

Հետևյալ անավարտ արտահայտությունը գրեք գրատախտակին. **Մենք կարող ենք Սիոնը կառուցել . . .**

Բացատրեք, որ 1830 թվականի նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին, երբ Ջոզեֆ Սմիթը աշխատում էր Աստվածաշնչի իր ոգեշնչված թարգմանության վրա, նա հայտնություններ ստացավ հնադարյան մարգարե Ենոքի և նրա ժողովրդի մասին: Հրավիրեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Մովսես 7.18-19 հատվածները, իսկ մեկ այլ ուսանողի խնդրեք բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 97.21 հատվածը: Խնդրեք դասարանին լսել, թե ինչպես է Տերը նկարագրում Սիոնը:

- Ի՞նչ կարող ենք սովորել Սիոնի մասին Տիրոջ նկարագրությունից, որը կօգնի մեզ իմանալ, թե ինչպես կառուցել Սիոնը մեր օրերում: (Ուսանողների պատասխանները գրեք գրատախտակին՝ անավարտ արտահայտության տակ: Ուսանողների պատասխանները տարբեր կլինեն, բայց կարող են ներառել հետևյալ օրինակները. **Մենք կարող ենք կառուցել Սիոնը, եթե սրտով և մտքով լինենք մեկ, ապրենք արդար, հոգ տանենք աղքատների և կարիքավորների մասին և ձգտենք լինել սրտով մաքուր**):
- Ի՞նչ փոփոխություն կարող եք նկատել այն ընտանիքում, ծխում կամ ճյուղում, որտեղ բոլորը «մեկ սրտի և մեկ մտքի են»:

Հանձնարարեք ուսանողներին վերանայել Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնի հետևյալ հայտարարությունը նախապատրաստական նյութի բաժին 1-ից:

Հորդորեք ուսանողներին ուշադրություն դարձնել, թե մենք ինչպես կարող ենք դառնալ մեկ սրտի և մեկ մտքի: Նրանց զեկույցներից հետո գրատախտակի ցանկին կարող եք ավելացնել՝ **Փրկիչին դնելով մեր կյանքի կենտրոնում և հետևելով Եկեղեցու ղեկավարներին:**

- Ձեր կարծիքով, դնելով Փրկիչին մեր կյանքի կենտրոնում և հետևելով Եկեղեցու ղեկավարներին, ինչպե՞ս կարող ենք օգնել մեզ դառնալ Սիոնին արժանի մարդիկ:

Սրբերը փորձեցին կառուցել Սիոն քաղաքը Ջեկսոն գավառում (Միսսուրի):

Բացատրեք, որ Սրբերը Մովսես 7 գլխից սովորեցին, որ Փրկիչի Երկրորդ Գալուստից առաջ Տիրոջ ժողովուրդը կրկին կհավաքվի միասին և կկառուցի մեկ այլ Սիոն քաղաք (տես Մովսես 7.62): Մովսես 7-ում գրված հայտնությունը ստանալուց մի քանի ամիս անց Մարգարե Ջոզեֆ Սմիթը Եկեղեցու համաժողովի ժամանակ ստացավ մեկ այլ հայտնություն, որոնք լրացուցիչ մանրամասներ էին հայտնում այդ ապագայի Սիոն քաղաքի մասին (տես Վարդապետություն և Ուխտեր 45):

Դասարանին հանձնարարեք միասին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 45.66–71 հատվածները՝ ուշադրություն դարձնելով Սիոն քաղաքի նկարագրությանը:

- Ի՞նչ եք կարծում, այդ հայտնությունն ինչ ազդեցություն ունեցավ Սրբերի վրա:

Հիշեցրեք ուսանողներին, որ Ջոզեֆ Սմիթը հետագայում հայտնության միջոցով իմացավ, որ Սիոն քաղաքի համար «կենտրոնական վայրը» պետք է լինի Ինդիպիենդենսը (Ջեքսոն գավառ, Միսսուրի նահանգ) (Վարդապետություն և Ուխտեր 57.3):

- Ի՞նչ դժվարություններ խանգարեցին Սրբերին կառուցել Սիոն քաղաքը Միսսուրի նահանգի Ջեքսոն գավառում: (Խրախուսեք ուսանողներին պատմել այն, ինչ նրանք սովորել են նախապատրաստական նյութի բաժին 2-ից):
- Ի՞նչ հարցեր կարող էին առաջանալ Սրբերի մոտ այն բանից հետո, երբ նրանք վտարվեցին Ջեքսոն գավառից:

Սիոնը կարող է միայն կառուցվել արդարության սկզբունքների վրա:

Բացատրեք, որ Միսսուրիի ամբոխի կողմից Սրբերին Ջեքսոն գավառից բռնի վտարումից հետո Ջոզեֆ Սմիթը մտածում էր այն հարցերի շուրջ, թե «ինչո՞ւ է Աստված այդքան մեծ արհավիրք բերել Սիոնի վրա», և «ինչ միջոցներով նա կվերադարձնի [Սիոնին] [իր] ժառանգությունը» (“Letter to Edward Partridge and Others, 10 December 1833,” josephsmithpapers.org): Տերն, ի վերջո, Ջոզեֆին տվեց հասկացողություն, թե ինչու են Սրբերը հալածվում և արտաքսվում:

Դասարանի մի կեսին հանձնարարեք կարդալ Վարդապետություն և Ուխտեր 101.2–3, 6–8 հատվածները, իսկ մյուս կեսին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 105.3–6 հատվածները, որոնք նրանք ուսումնասիրել են նախապատրաստական նյութի բաժին 3-ում: Խնդրեք ուսանողներին կիսվել հետևյալ հարցերի վերաբերյալ իրենց մտքերով, որոնց մասին նրանց խնդրել էին մտածել:

- Ի՞նչը խանգարեց Սրբերին հաստատել Սիոնը գործը Միսսուրի նահանգի Ջեքսոն գավառում:
- Ի՞նչ գործեր ու վերաբերմունք է վերջին օրերում Տերը պահանջում այն մարդկանցից, ովքեր ցանկանում են կառուցել Սիոնը: (Ուսանողների պատասխաններն ավելացրեք գրատախտակի ցուցակին՝ **Մենք կարող ենք Սիոնը կառուցել . . .** արտահայտության տակ):

Բացատրեք, որ չնայած Միսսուրիի Ինդիպիենդենսը Սիոնի «կենտրոնական վայրն» է (Վարդապետություն և Ուխտեր 57.3), Մարգարե Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է, որ «Ցանկացած տեղ, որտեղ հավաքվում են Սրբերը, Սիոն է» (Եկեղեցու Նախագահների Ուսումնքները. Ջոզեֆ Սմիթ [2007], 186): Այսօր դա ներառում է Եկեղեցու բոլոր ցգերը ամբողջ աշխարհում:

Ցուցադրեք Ջոզեֆ Սմիթի հետևյալ մեջբերումը.



«Մեր ամենամեծ նպատակը պետք է լինի Սիոնի կառուցումը» (Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ

[2007], 186):

- Ելնելով նրանից, ինչ դուք սովորեցիք Միոնի մասին, ինչ եք կարծում, Միոնի կառուցումն ինչո՞ւ պետք է լինի մեր ամենամեծ նպատակը:

Ուսանողներին ժամանակ տվեք վերանայելու իրենց սովորածը վաղ Մրբերի փորձառություններից և Միոն կառուցելու մասին հայտնություններից: Հրավիրեք նրանց խորհել, թե ինչ կարող են անել հիմա, որպեսզի օգնեն հաստատել Միոնն իրենց տներում, ծխերում և ճյուղերում: Կարող եք խրախուսել նրանց գրի առնել այն մտքերն ու տպավորությունները, որոնք նրանք կստանան: Կարող եք նաև խնդրել մի քանի ուսանողների կիսվել նրանով, թե ինչպես կվարվեն: Հիշեցրեք նրանց չկիսվել խիստ անձնական փորձառությամբ:

Հաջորդ անգամ

Բացատրեք, որ Միոնը հաստատելու գործին օգնելու համար, Տերն Իր Մրբերին, ի թիվս այլոց, հայտնեց նվիրաբերման, բարոյականության, առողջության և հանգստության օրվա օրենքները: Ընդգծեք, որ հաջորդ դասին նախապատրաստվելիս ուսանողները հնարավորություն կունենան ուսումնասիրել այս թեմաներից մեկը կամ մի քանիսը: Խրախուսեք նրանց, որ հաջորդ անգամ դասին ներկայանալիս պատրաստ լինեն կիսվելու մի հատուկ բանով, որը նրանք բացահայտել են այս օրենքներից մեկի կամ մի քանիսի վերաբերյալ:



ԴԱՍ 13. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԴԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Աստծո օրենքները

Մտածեք ձեր շրջապատող աշխարհում Աստծո օրենքների և պատվիրանների նկատմամբ մարդկանց վերաբերմունքի մասին: Արդյո՞ք այդ վերաբերմունքը դրական է, բացասական, թե՛ չեզոք: Երբ ուսումնասիրեք Մարգարե Զոգեֆ Սմիթի միջոցով վերականգնված օրենքներն ու պատվիրանները, ուշադրություն դարձրեք, թե նրանք ինչպես կարող են ձեզ խաղաղություն և պաշտպանություն շնորհել ու օգնել ձեզ ավելի շատ նմանվել Փրկիչին:

ԲԱԺԻՆ 1

Աստծո օրենքներին
հնազանդվելով, ինչպե՞ս կարող
եմ օրհնվել:

1830թ. դեկտեմբերին Տերը պատվիրեց Նյու Յորքում ապրող Սրբերին հավաքվել Օհայոյի Սրբերի հետ: Տերը խոստացավ, որ եթե նրանք հնազանդվեին, նա կհայտներ նրանց Իր օրենքը և կօժտեր նրանց «ի վերուց» (Վարդապետություն և Ուխտեր 38.32): 1831 թվականի փետրվարին Օհայո ժամանելուց քիչ անց, Մարգարե Զոգեֆ Սմիթը ստացավ հայտնություն, որում Տերը հայտնեց Իր օրենքը (տես Վարդապետություն և Ուխտեր 42): Հայտնության մեջ Տերը վերահաստատեց այն պատվիրանները պահելու անհրաժեշտությունը, որոնք Նա

հնում տվել էր Իր ժողովրդին, ներառյալ՝ մաքրաբարոյության օրենքը:

Տերը նաև Սրբերին հանձնարարեց հոգ տանել աղքատների մասին և կառուցել Իր արքայությունը՝ ապրելով նվիրաբերման օրենքով (տես Վարդապետություն և Ուխտեր 42.30-35): Ճիշտ այնպես, ինչպես նա ուսուցանել էր Իր առաքյալներին հնում, Տերը բացատրեց, որ երբ Սրբերը ծառայում են Նրան և պահում Նրա պատվիրանները, նրանք ցույց են տալիս իրենց սերը Նրա հանդեպ (տես Հովհաննես 14.15, Վարդապետություն և Ուխտեր 42.29):

Հաջորդ տարիներին Տերը վերականգնեց Իր հնագույն օրենքները Զոգեֆ Սմիթի միջոցով, ներառյալ Հանգստության օրվա օրենքը (տես Վարդապետություն և Ուխտեր 59, 68.29) և տասանորդի օրենքը (տես Վարդապետություն և Ուխտեր 64.23, 119):

Նա հայտնեց նաև առողջության օրենքը, որն անվանում են Իմաստության Խոսք (տես Վարդապետություն և Ուխտեր 89):

Դասին նախապատրաստվելու համար ուսումնասիրեք հետևյալ օրենքներից *մեկը կամ մի քանիսը*, որոնք Տերը վերահաստատել կամ հայտնել է մեր օրերում. 1) մաքրաբարոյության օրենքը, 2) նվիրաբերման օրենքը, 3) Հանգստության օրվա օրենքը, կամ 4) առողջության օրենքը, որը հայտնի է որպես Իմաստության Խոսք: Օգտագործեք ստորև նշված նյութերը, երբ ուսումնասիրեք ձեր ընտրած օրենքը կամ օրենքները: Դուք կարող եք նաև որոնել լրացուցիչ նյութեր՝ ChurchofJesusChrist.org-ում: Եկեք դասին պատրաստ՝ քննարկելու հետևյալ հարցերը.

1. Ի՞նչ ճշմարտություն կամ ճշմարտություններ եք սովորել ձեր ուսումնասիրությունից:
2. Ի՞նչ մարտահրավերներ կարող են առաջ գալ այսօր օրենքին հնազանդվելիս, և ինչպե՞ս կարող են դրանք լուծվել:
3. Ի՞նչ օրհնություններ եք դուք անձամբ ունեցել այդ օրենքին հնազանդվելիս:
4. Այդ օրենքին հնազանդվելն ինչպե՞ս է օգնում ձեզ ավելի շատ նմանվել ձեր Երկնային Հորը և Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին:

ԲԱԺԻՆ 2

Մաքրաբարոյության օրենքը



1. Ուսումնասիրեք Վարդապետություն և Ուխտեր 42.22–25 հատվածները և ուշադրություն դարձրեք այն վարդապետությանը և սկզբունքին, որոնք Տերն ուսուցանում է սեռական անարատության մասին:
2. Մտածեք այն մասին, թե Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդն ինչ է ուսուցանել Աստծո մաքրաբարոյության օրենքը խախտելու և սեռական մտերմության սրբության կարևորության մասին: Ուսումնասիրեք 9–16 պարբերությունները նրա Personal Purity ելույթից (*Ensign*, Nov. 1998, 75–79) և ուշադրություն դարձրեք այն փաստարկներին, թե մենք ինչու պետք է զգուշորեն պաշտպանենք մեր սեռական անարատությունը:
3. Դիտեք «Մաքրաբարոյության օրենքը» (2:03) տեսանյութը, որը գտնվում է ChurchofJesusChrist.org-ում և ուշադրություն դարձրեք մաքրաբարոյության օրենքը պահելու կարևորությանը և օրհնություններին:

Ցանկանում ես ավելին: (Ոչ պարտադիր)

Ուսումնասիրեք «Սեռական անարատություն» բաժինը, որը գտնվում է *Երիտասարդներին զորացնելու համար* (2011) գրքույկում՝ մաքրաբարոյության օրենքի մասին Եկեղեցու արդի ուսմունքներ սովորելու համար:

Դիտեք We Believe in Being Chaste (1:17) տեսանյութը: Այս տեսանյութում Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը նկարագրում է սեռական բարոյականության Տիրոջ չափանիշը:

Դիտեք I Choose to Be Pure (4:19) տեսանյութը: Այս տեսանյութում տարբեր հավատքների վեց երիտասարդներ անկեղծ բացատրում են, թե ինչու են իրենք ընտրել սեռական անարատությունը:

ԲԱԺԻՆ 3

Նվիրաբերման օրենքը



Իմացեք ավելին նվիրաբերման օրենքի մասին՝ կատարելով հետևյալը.

1. Կարդացեք նվիրաբերման մասին Սուրբ գրքերի ուղեցույցում գրված տեղեկությունը:
2. Կրկնեք, թե վաղ օրերի որոշ Սրբեր ինչպես էին ձգտում ապրել նվիրաբերման օրենքով: 1831 թվականի փետրվարին Ջոզեֆ Սմիթի Կիրթլենդ (Օհայո) ժամանելուց առաջ այդ քաղաքի Սրբերից շատերը ձգտում էին հետևել Նոր Կտակարանի Սրբերի օրինակին, որոնց «բոլոր բաներն ընդհանուր էին» (տես Գործք Առաքելոց 4.32), և փորձում էին մեծ ընտանիքի նման իրար հետ կիսել իրենց ապրանքներն ու ունեցվածքը: Ուսումնասիրեք Վարդապետություն և Ուխտերի 42.30-35 հատվածները՝ փնտրելով Տիրոջ ցուցումները, որոնք պարզաբանում էին, թե Սրբերն ինչպես պետք է միմյանց մասին հոգ տանեին նվիրաբերման օրենքի ներքո:
3. Կատարեք հետևյալ վարժություններից մեկը.
 - Դիտեք The Law of Consecration (5:02) տեսա-նյութը ChurchofJesusChrist.org կայքում և լսեք այն նկարագրությունը, թե վաղ օրերի Վերջին Օրերի Սրբերն ինչպես են ապրել նվիրաբերման օրենքով:

- Ուսումնասիրեք Consecration and Stewardship հոդվածը ChurchofJesusChrist.org կայքում և մտածեք, թե ինչպես են Վերջին Օրերի Սրբերն ապրել նվիրաբերման օրենքով:

Ցանկանում ես ավելին: (Ոչ պարտադիր)



Կարդացեք «Մտորումներ նվիրաբերված կյանքի մասին» (*Ensign* կամ *Լիափոխա*, նոյեմբեր 2010, 16–19): Այդ ելույթի մեջ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեք Քրիստոֆերսոնը բացատրում է, թե Վերջին Օրերի Սրբերն ինչպես կարող են նվիրաբերված կյանքով ապրել:

ԲԱԺԻՆ 4

Հանգստության օրվա օրենքը



1. Երբ 1831 թ-ի ամռանը Եկեղեցու անդամները բնակություն հաստատեցին Միսսուրի նահանգի Ջեքսոն գավառում, նրանք խնդիրներ ունեցան տեղի բնիկների համայնքի հետ, որտեղ գերակշռում էին խաղամուլությունը, հարբեցողությունը, բռնությունը և հանգստության օրվա խախտումը: Ուսումնասիրեք Վարդապետություն և Ուխտեր 59.9-19 հատվածները և ուշադրություն դարձրեք, թե Տերն ինչ հրահանգեց Սրբերին անել, որ օգնեն այդ համայնքին դիմակայել աշխարհի ամբարշտությանը:

2. Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը ուսուցանել է Հանգստության օրվա կարևորության մասին: Կարդացեք «Կիրակին բերկրանք է» նրա ելույթի 3-16 պարբերությունները (*Ensign* կամ *Liahon*, մայիս 2015, 129–30): Ուշադրություն դարձրեք այն խորհրդին, որը կօգնի ձեզ Հանգստության օրը բերկրանք դարձնել:

3. Դիտեք Upon My Holy Day—Honoring the Sabbath (1:30) տեսանյութը, որտեղ Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը բացատրում է Հանգստության օրը պատվելու օրհնություններից մի քանիսի մասին:

Ցանկանում ես ավելին: (Ոչ պարտադիր)

Դիտեք Upon My Holy Day (9:52) տեսանյութը: Այդ տեսանյութում Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդն ուսուցանում է Հանգստության օրվա նպատակների և օրհնությունների մասին:

ԲԱԺԻՆ 5

Առողջության օրենքը



1. Մարգարեների դպրոցը, որը կազմավորվել էր 1833 թվականի հունվարին, սկսեց կանոնավոր հանդիպումներ անցկացնել Կիրթլենդի (Օհայո) Նյուել Կ. Ուիթնիի խանութի վերնահարկում:

Այդ հանդիպումների ժամանակ եղբայրները հաճախ ծխախոտ էին օգտագործում: Այն բանից հետո, երբ Ջոզեֆի կինը՝ Էմման, բարձրաձայնեց իր մտահոգությունները, Ջոզեֆ Սմիթը հարցրեց Տիրոջ և ստացավ այն հայտնությունը, որը հայտնի է Իմաստության Խոսք անունով (տես *Սրբերը. Վերջին օրերում Հիսուս Քրիստոսի Եկեղեցու պատմությունը*, հատ. 1, *Ճշմարտության չափանիշը*, 1815–1846 [2018], 167–68): Ուսումնասիրեք Վարդապետություն և Ուխտեր 89.1–14, 18–21 հատվածները և նշեք Սրբերին տրված Տիրոջ հրահանգներն ու խոստումները:

2. Վերջին Օրերի Սրբերից ոմանք մտածում են, թե ինչու Իմաստության Խոսքը մասնավորապես չի արգելում այլ վնասակար նյութերի օգտագործումը: Տասներկու Առաքյալների Քվորումից Նախագահ Բոյդ Ք. Փաքերը անդրադարձել է այդ հարցին և պարզաբանել է Իմաստության Խոսքը պահելու խոստացված օրհնությունները: Կարդացեք *The Word of Wisdom: The Principle and the Promises* նրա ելույթի 10-12 և 23-34 պարբերությունները (*Ensign*, May 1996, 17–19):

Ցանկանում ես ավելին: (Ոչ պարտադիր)

Ուսումնասիրեք «Ֆիզիկական և էմոցիոնալ առողջություն» բաժինը, որը գտնվում է *Երիտասարդներին զորացնելու համար* (2011) գրքուկում՝ Իմաստության Խոսքի մասին Եկեղեցու արդի ուսմունքներ սովորելու համար:

Իմաստության Խոսքը հայտնի դարձվեց հայտնության միջոցով, բայց ի սկզբանե այն «պատվիրան կամ [հարկադրանք]» չէր (Վարդապետություն և Ուխտեր 89.2): Կարդացեք «Իմաստության Խոսքը (ՎՋՈՒ 89)» հոդվածը՝ ChurchofJesusChrist.org-ում: Ուշադրություն դարձրեք, թե Իմաստության Խոսքի պահպանումն ինչպես է փոխվել ժամանակի ընթացքում:

ԴԱՍ 13. ՈՒՍՈՒՑՉԻ ՆՅՈՒԹ

Աստծո օրենքները

Տերը իր օրենքներն ու պատվիրաններն այս տնտեսության մեջ կրկին հայտնեց Ջոզեֆ Սմիթի և նրան հաջորդող մարգարեների միջոցով: Այս դասը կնախապատրաստի, որ ուսանողները բացատրեն Աստծո զավակներին պատվիրաններ տալու Նրա աստվածային նպատակները: Ուսանողներին նաև կառաջարկվի որոշել, թե ինչ կարող են անել՝ Տիրոջ պատվիրաններն ավելի հավատարիմ պահելու համար:

Ուսուցման առաջարկներ

Տերն օրենքներ ու պատվիրաններ է տալիս մեզ մեր փրկության համար:

Ուսանողներին ցուցադրեք *Why Does God Give Us Commandments?* (0:39) տեսանյութը և խնդրեք նրանց ուշադրություն դարձնել, թե դա ինչ է լուսաբանում Աստծո պատվիրանների վերաբերյալ որոշ մարդկանց տեսակետի մասին:

- Ինչպե՞ս է այս տեսանյութը լուսաբանում մի քանի չափափաս երիտասարդների վերաբերմունքն Աստծո օրենքների և պատվիրանների նկատմամբ:
- Ի՞նչը կարող են սխալ հասկանալ այն մարդիկ, ովքեր Աստծո օրենքը դիտում են որպես սահմանափակող:

Բացատրեք, որ Աստծո օրենքների համար կան ավելի կարևոր նպատակներ, քան պարզապես ֆիզիկական պաշտպանությունը կամ մահկանացու փորձությունն է: Մարգարե Ջոզեֆ Սմիթին տրված հայտնություններում Տերը Սրբերին ուսուցանեց այն ավելի հիմնավոր պատճառները, թե ինչու է Աստված Իր զավակներին օրենքներ և պատվիրաններ տալիս: Դասարանի մի կեսին հանձնարարեք կարդալ Վարդապետություն և Ուխտեր 93.19-20 հատվածները, իսկ մյուս կեսին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 130.20-21: Հորդորեք ուսանողներին ուշադրություն դարձնել այն մարդկանց ուղղված Տիրոջ խոստումներին, ովքեր պահում են Աստծո օրենքներն ու պատվիրանները: Թող ուսանողները կիսվեն իրենց սովորածով:

Նշեք, որ Վարդապետություն և Ուխտեր 93.19–20 հատվածներում Աստծո «լիությունը» բառերը

հավերժական կյանքի խոստումն է՝ մտնել Աստծո ներկայության մեջ և նմանվել Հորն ու Որդուն (տես Վարդապետություն և Ուխտեր 76.94):

- Ինչպե՞ս կամփոփեք սուրբ գրությունների այս հատվածներից մի ճշմարտություն այն մասին, թե ինչու է Երկնային Հայրն Իր զավակներին պատվիրաններ տալիս: (Ուսանողների խոսքերով գրատախտակին գրեք կամ ցուցադրեք վարդապետության մի պնդում, որը նման է հետևյալին. **Երկնային Հայրը Իր զավակներին պատվիրաններ է տալիս, որպեսզի Նա կարողանա օրհնել նրանց և օգնել նրանց դառնալ Իր նման**)

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ այդ ճշմարտությունը, ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Դեյլ Գ. Ռենլանդի հետևյալ խոսքերը և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



Աստծո ծրագիրը ներառում է ուղղորդումներ մեզ համար, որոնք սուրբ գրություններում նշվում են որպես պատվիրաններ: Այս պատվիրանները ոչ քմահաճ շարք են, ոչ էլ հարկադրական կանոնների ինքնակամ հավաքածու, որոնք նախատեսված են միայն մեզ վարժեցնելու համար, որ հնազանդ լինենք: Դրանք կապված են մեր մեջ բարեպաշտության հատկանիշների զարգացնելու, մեր Երկնային Հոր մոտ վերադառնալու և հարատև ուրախություն ստանալու հետ: («Ընտրեք այսօր», *Ensign* կամ *Liahona*, նոյեմբեր 2018, 105)

- Ինչպե՞ս են պատվիրանները ցույց տալիս մեր Երկնային Հոր և Փրկիչի սերը մեր հանդեպ:
- Ի՞նչը կարող է փոխվել մեր կյանքում, եթե պատվիրաններն ընդունենք որպես սիրով

տրված հրահանգներ, որոնք կօգնեն մեզ ձեռք բերել աստվածային հատկանիշներ և ուրախություն ստանալ:

Տերն Իր օրենքը տալիս է Սրբերին

Հիշեցրեք ուսանողներին, որ մարգարե Ջոզեֆ Մմիթը Կիրթլենդ (Օհայո) տեղափոխվելուց շատ չանցած ստացավ մի հայտնություն, որը պարունակում է Տիրոջ օրենքը Իր Եկեղեցու համար (տես Վարդապետություն և Ուխտեր 42): Հաջորդ տարիներին Տերը Սրբերին ավելի շատ բան սովորեցրեց Իր օրենքից:

- Որո՞նք են հնագույն օրենքներն ու պատվիրանները, որոնք Տերը վերահաստատել է մեր տնտեսության մեջ:

Հիշեցրեք ուսանողներին այն հանձնարարության մասին, որը նրանք ստացան նախապատրաստական նյութն անցնելիս: Մի քանի թույլ հատկացրեք, որ ուսանողները կրկնեն իրենց ուսումնասիրած օրենքը կամ օրենքները: Հրավիրեք այն ուսանողներին, ովքեր գուցե չեն ուսումնասիրել նախապատրաստական նյութում նշված օրենքներից որևէ մեկը, այս ընթացքում ուսումնասիրել այն:

ԲԱՐԵԼԱԿԵԼ ՄԵՐ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Փոքր խմբերով քննարկումներն ու հանձնարարությունները կարող են օգնել ուսանողներին խորությամբ սովորել: Դասարանի բաժանումը զույգերի կամ փոքր խմբերի թույլ է տալիս, որ ավելի շատ ուսանողներ արտահայտեն իրենց մտքերն ու զգացմունքները և ուսուցանեն միմյանց: Որպեսզի օգնեք ուսանողներին միասին իմաստավոր փորձառություն ունենալ, համոզվեք, որ նախքան սկսելը նրանք հասկանում են իրենց քննարկման նպատակը և արդիականությունը: Կարող եք նաև նշանակել քննարկման ղեկավար կամ հանձնարարել մի ուսանողի առաջինը կիսվել:

Բավարար ժամանակ տրամադրելուց հետո դասարանը բաժանեք փոքր խմբերի (յուրաքանչյուր խմբում երկուսից-հինգ ուսանող)՝ ըստ իրենց ընտրած օրենքի: Օրինակ՝ երկուսից-հինգ ուսանողներ, ովքեր ուսումնասիրել են Նվիրաբերման օրենքը, կստեղծեն մի խումբ: Հնարավոր է, անհրաժեշտ լինեն մի քանի խմբեր, որոնք կքննարկեն նույն օրենքը, եթե հինգից ավելի ուսանողներ որոշեն ուսումնասիրել նույն օրենքը: (Եթե ձեր դասարանը փոքր է, կամ եթե միայն մեկ ուսանող է որոշում ուսումնասիրել տվյալ օրենքը, ապա հարմարեցրեք այս վարժությունը՝ ձեր դասի կարիքները բավարարելու համար: Օրինակ, դուք կարող եք հրավիրել որևէ ուսանողի ձեզ հետ կամ մեկ ուրիշ թեմա ուսումնասիրած խմբի հետ կիսվել նրանով, ինչ նա սովորել է:)

Հանձնարարեք ուսանողներին յուրաքանչյուր խմբից ընտրել խմբի ղեկավար: Յուրաքանչյուր խմբի ղեկավարի տվեք «Աստծո օրենքները» թերթիկի մեկական օրինակ:

Աստծո օրենքները

Խմբի ղեկավարի ցուցումներ. Խնդրում ենք հետևյալ հարցերի միջոցով իմաստավոր քննարկում անցկացնել ձեր խմբի հետ: Համոզվեք, որ խմբի բոլոր անդամներին ընդգրկեք ձեր քննարկման մեջ:

1. Ի՞նչ ճշմարտություն կամ ճշմարտություններ եք սովորել ձեր ուսումնասիրությունից:
2. Ի՞նչ մարտահրավերներ կարող են առաջ գալ այսօր օրենքին հնազանդվելիս, և ինչպե՞ս կարող են դրանք հաղթահարվել:
3. Ի՞նչ օրինություններ եք դուք անձամբ կամ ձեր ընտանիքը ստացել՝ այդ օրենքին հնազանդվելու շնորհիվ:
4. Հնազանդվելով այդ օրենքին, ինչպե՞ս է այն օգնում ձեզ ավելի շատ նմանվել Երկնային Հորը:

Ավարտելով դասը, խնդրեք որևէ մեկին դասարանի կետ կիսվել ձեր խմբային քննարկումների մի քանի կարևորագույն կետով:

Խմբերին տվեք 10 րոպե կամ բավականաչափ ժամանակ, որպեսզի բովանդակային քննարկում ունենան: Նրանց բավարար ժամանակ հատկացնելուց հետո, յուրաքանչյուր խմբից հրավիրեք մեկական ներկայացուցչի, ով դասարանի հետ կկիսվի իրենց քննարկումներից մի քանի կարևոր մտքերով: Խմբերի ներկայացուցիչներին կարող եք հորդորել, որ նրանք կիսվեն, թե իրենց ուսումնասիրած օրենքին հնազանդնվելով ինչպես կարող ենք ավելի նմանվել Երկնային Հորը:

Կիսվեք ձեր վկայությամբ և փորձով, թե հնազանդվելով Աստծու օրենքներին և պատվիրաններին, ձեր կյանքն ինչպես է օրհնվել և օգնել ավելի շատ նմանվել Երկնային Հորը:

Ցուցադրեք հետևյալ հարցերը. Ուսանողներին ժամանակ տվեք մտածել հարցերի մասին, գրել իրենց տպավորությունները և բացահայտել այն գործողությունները, որոնք զգում են՝ պետք է կատարեն: Խրախուսեք ուսանողներին աղոթքով փնտրել Երկնային Հոր օգնությունը և առաջնորդությունը՝ գործելու ըստ իրենց ստացած տպավորությունների: Կարող եք նաև հրավիրել նրանց որոշել այն ժամանակահատվածը, երբ կարող եք ստուգել իրենց պարտավորությունների կատարումը:

- Այսօր քննարկված Տիրոջ պատվիրաններից ես ո՞ր մեկը կարող եմ ավելի հավատարմորեն պահել:
- Ի՞նչ պետք է հատկապես փոխեմ և սկսեմ անել կամ դադարեմ անել, որպեսզի ավելի լիարժեք պահեմ այս պատվիրանը:
- Աստվածապաշտության և ուրախության ի՞նչ օրհնություններ կստանամ իմ կյանքում, եթե այս պատվիրանին ավելի ուշադիր և անկեղծորեն հետևեմ:

Հաջորդ անգամ

Բացատրեք, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Մրբերի Եկեղեցու անգուգական համոզմունքներից մեկն այն է, որ Աստված շարունակում է առաջնորդել Իր զավակներին՝ լրացուցիչ սուրբ գրություններ տրամադրելով: Հրավիրեք ուսանողներին ուսումնասիրել հաջորդ դասի նախապատրաստական նյութը և պատրաստ լինել քննարկելու, թե ինչպես են լրացուցիչ սուրբ գրությունները պարզաբանում և ամրապնդում Փրկիչի ավետարանի մասին մեր հասկացողությունը:



ԴԱՍ 14. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԴԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Տերը հայտնում է ևս մեկ սուրբ գրություն

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը նշել է. «[Մարգարե Զոգեֆ Սմիթի միջոցով] մենք ստացել ենք սուրբ գրությունների ավելի շատ լրացուցիչ էջեր, քան որևէ այլ մարգարեից» («Բաց մի թողեք ալիքի վրա լինելու հնարավորությունը», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2013, 47): Սուրբ գրությունները, որոնք Տերն ի հայտ բերեց Զոգեֆ Սմիթի միջոցով, համոզիչ վկայություն են տրամադրում որպես մարգարե նրա աստվածային կոչման մասին: Ուսումնասիրելիս դիտարկեք, թե լրացուցիչ սուրբ գրությունն ինչպե՞ս է ամրապնդել ձեր հասկացողությունն ու վկայությունը Երկնային Հոր, Հիսուս Քրիստոսի և Նրանց ավետարանի մասին:

ԲԱԺԻՆ 1

Ի՞նչ կարծիք ունենք
շարունակվող հայտնության
և լրացուցիչ սուրբ
գրությունների վերաբերյալ:

Պատասխանելով Չիկագոյի թերթի խմբագրին, ով հարցրել էր Հիսուս Քրիստոսի Եկեղեցու համոզմունքների մասին, Զոգեֆ Սմիթը հայտարարել է. «Մենք հավատում ենք այն ամենին, ինչ Աստված հայտնել է, այն ամենին, ինչ Նա այժմ հայտնում է, և հավատում ենք, որ Նա դեռ շատ մեծ ու կարևոր բաներ է հայտնելու Աստծո Արքայության վերաբերյալ» (Հավատո հանգանակ 1.9):

Ապրող մարգարեների միջոցով ստացվող շարունակվող հայտնության վերաբերյալ այս հավատը Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Մրբերի Եկեղեցու հատկանշական վարդապետությունն է: Ի լրումն Աստվածաշնչի, մենք կարևոր ճշմարտություններ ենք սովորում Մորմոնի Գրքից, Վարդապետություն և Ուխտերից և Թանկագին Մարգարիտից, որոնք մենք համարում ենք սուրբ գրություններ:

Բացի Աստվածաշնչյան շատ հատվածներ հստակեցնելուց, Աստվածաշնչի Զոգեֆ Սմիթի Թարգմանությունը նաև վերականգնում է շատ պարզ ու արժեքավոր ճշմարտություններ, որոնք կորսվել էին դարերի ընթացքում:

ԲԱԺԻՆ 2

Վարդապետություն և Ուխտերի ուսումնասիրությունը ինչպե՞ս կարող է օրհնել իմ կյանքը:

Մարգարե Զոգեֆ Սմիթը գրել է. «Եկեղեցու պատմության այդ վաղ օրերում մեծ ցանկություն կար ստանալու Տիրոջ խոսքը բոլոր բաների վերաբերյալ, որն ինչ-որ կերպ առնչվում էր մեր փրկության հետ» (History, 1838–1856 [Manuscript History of the Church], volume A-1, 146, josephsmithpapers.org): Տերը ողորմածորեն և հաճախակի պատասխանում էր այս ցանկություններին հայտնության միջոցով:



Եկեղեցու կազմավորումից մեկ ու կես տարի անց Հայրամում (Օհայո) տեղի ունեցող համաժողովի ժամանակ Մարգարեն առաջարկեց երեցներին կազմել և հրատարակել այն հայտնությունները, որոնք Տերը տվել էր: Այդ կերպ հայտնությունները հասանելի կլինեին Եկեղեցու բոլոր անդամներին և կօգնեին միասնորեն աշխատանքին: Այդ համաժողովի ժամանակ Եկեղեցու անդամները հայտարարեցին, որ հայտնությունները «արժեն . . . աշխարհի բոլոր հարստությունները» (Minute

Book 2, 18, josephsmithpapers.org): Կարճ ժամանակ անց հայտնությունները հրատարակվեցին մեկ հատորով, որը կոչվում էր Պատվիրանների Գիրք: Ավելի ուշ այս և այլ լրացուցիչ հայտնություններ հրատարակվեցին որպես Վարդապետություն և Ուխտեր գիրքը:

Վարդապետություն և Ուխտերի նախաբանը օգնում է մեզ հասկանալ, թե հայտնությունների հավաքումն ինչու է այդքան արժեքավոր. «Պատգամները, զգուշացումներն ու հորդորները ողջ մարդկության օգտի համար են և պարունակում են հրավեր՝ բոլոր մարդկանց համար, ամենուրեք, լսելու Տեր Հիսուս Քրիստոսի ձայնը, որը խոսում է իրենց հետ՝ իրենց մահկանացու բարեկեցության և հավիտենական փրկության համար» (Վարդապետություն և Ուխտերի նախաբանը, տես նաև Վարդապետություն և Ուխտեր 18.34–36):

Երեցների համաժողովի ընթացքում Զոգեֆը ստացավ հայտնություն, որն այժմ արձանագրված է Վարդապետություն և Ուխտեր 1ում: Դա Տիրոջ սեփական նախաբանն էր հայտնություններին:



Ուսումնասիրեք դասին նախապատրաստվելիս

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 1.17, 21-23, 37-ը:



Մտածեք դասին նախապատրաստվելիս

Մտածեք այն մասին, թե Տերն ինչպես է խոսել ձեզ հետ Վարդապետություն և Ուխտերի ձեր ուսումնասիրության միջոցով: Վարդապետություն և Ուխտերից գտեք որևէ սուրբգրային հատված, որն ամրապնդել է ձեր հավատը Հիսուս Քրիստոսի հանդեպ: Դասարան եկեք պատրաստված՝ այս հատվածով կիսվելու համար:

ԲԱԺԻՆ 3

Ջոզեֆ Սմիթի Թարգմանությունը
և Թանկագին Մարգարիտը
ի՞նչ են ավելացնում Փրկիչի և
Նրա ավետարանի մասին իմ
հասկացողությանը:



Մարգարե Ջոզեֆ Սմիթն իր ողջ կյանքում միշտ
մեծ սեր է ցուցադրել Աստվածաշնչի հանդեպ:
Մակայն նա տեղյակ էր, որ տեքստի հետ կապված
խնդիրներ կային: Նա ասել է.



Ես հավատում եմ Աստվածաշնչին, ինչ-
պես այն կարդացվել է բնագիրը գրչով
գրողների ժամանակ: Անգիտակ թարգ-
մանիչները, անզգույշ տպագրիչները
կամ կազմող ու խեղաթյուրող քահանա-
ները կատարել են բազմաթիվ սխալներ:
(Եկեղեցու Նախագահների Ուսմունքնե-
րը. *Ջոզեֆ Սմիթ* [2007], 207)

1830թ. ամռանը Ջոզեֆ Սմիթը սկսեց Աստվածաշն-
չի ոգեշնչված թարգմանությունը: Նա չթարգմանեց

Աստվածաշունչը մի լեզվից մյուսը, ոչ էլ բնօրինակ
աստվածաշնչյան ձեռագրերն ուներ, որոնցից
կթարգմաներ: Դրա փոխարեն Ջոզեֆը կարդացել
և ուսումնասիրել էր հատվածներ Աստվածաշնչի
Հակոբ Թագավորի Տարբերակից, իսկ հետո ուղ-
ղումներ ու լրացումներ էր կատարել Սուրբ Հոգու
ոգեշնչմամբ:

Մարգարեի ոգեշնչված վերանայումների հատ-
վածներ կարելի է գտնել Աստվածաշնչի որոշ
հրատարակությունների ծանոթագրություններում
և հավելվածներում և Սուրբ գրքերի ուղեցույցում
(scriptures.ChurchofJesusChrist.org):

Թանկագին Մարգարիտը ոգեշնչված տեքստերի
հավաքածու է, որը հստակեցնում և ավելացնում
է ավետարանի մեր հասկացողությունը: Մովսեսի
գիրքը կազմված է Աստվածաշնչի Ծննդոց գրքի
առաջին վեց գլուխների Ջոզեֆ Սմիթի թարգմա-
նության հատվածներից: Ջոզեֆ Սմիթ-Մատթեոսը
Նոր կտակարանից Մատթեոսի 23 և 24 գլուխների
Ջոզեֆ Սմիթի Թարգմանության մի մասն է: Ջոզեֆ
Սմիթ-Պատմությունը և Հավատո Հանգանակը
Ջոզեֆի վկայության և համոզմունքների հայտա-
րարության հատվածներ են:

Թանկագին Մարգարիտը պարունակում է նաև
Հայրապետ Աբրահամի մի քանի գրվածքները:
1835թ.-ի ամռանը Մայքլ Չենդլեր անունով մի մարդ
եկավ Կիրթլենդ (Օհայո), ով իր հետ ուներ չորս
մումիաներ և Թեբսում (Եգիպտոսում) հայտնա-
բերված բազմաթիվ հին պապիրոսների գլանակ-
ներ: Մարգարե Ջոզեֆ Սմիթը զննեց պապիրոսի
գլանակները և «որոշ նշաններ և հիերոգլիֆներ»
թարգմանելուց հետո հայտարարեց, որ «փաթեթնե-
րից մեկը պարունակում էր Աբրահամի գրվածքնե-
րը, իսկ մյուսը՝ Եգիպտացի Հովսեփի գրվածքները»
(History, 1838–1856, volume B-1 [1 September
1834–2 November 1838], 596): Եկեղեցու անդամների
օգնությամբ Մարգարեն զննեց մումիաները, պապի-
րոսի երկու գլանակներ և պապիրոսի մի քանի
հատվածներ: Աստծո պարգևով և զորությամբ նա
թարգմանեց Աբրահամի գրվածքների մի մասը,
իսկ ավելի ուշ դրանք սկզբում հրատարակեց
Եկեղեցու Ժամանակներ և եղանակներ թերթում՝
որպես Աբրահամի գիրքը:



Մտածեք դասին Նախապատրաստվելիս

Ջոզեֆ Սմիթ Թարգմանությունում կամ Թանկագին Մարգարիտում գտեք սուրբ գրության որևէ հատված, որը խորացրել է Փրկիչի ավետարանի ձեր հասկացողությունը: Եթե չեք կարող հիշել որևէ մեկը, կարող եք հետևյալ ցուցակից ընտրել մեկը: Դասարան եկեք պատրաստված՝ ձեր հատվածով կիսվելու համար, և ասեք, թե ինչու եք ընտրել այն:

- Մովսես 5.5–11
- Մովսես 7.28–35
- Աբրահամ 2.8–12
- Աբրահամ 3.22–28
- Ջոզեֆ Սմիթ Թարգմանություն, Հովհաննես 1.19 (Աստվածաշնչի հավելվածում, համեմատեք Հովհաննես 1.18-ի հետ), Ջոզեֆ Սմիթ Թարգմանություն, Հովհաննես 4.26 (Հովհաննես 4.24-ում, ծանոթագրություն ա):
- Ջոզեֆ Սմիթ Թարգմանություն, Մատթեոս 7.1–2, Ջոզեֆ Սմիթ Թարգմանություն, Ղուկաս 6.29–30 (Աստվածաշնչի հավելվածում, համեմատեք զուգահեռ հատվածները Մատթեոսի և Ղուկասի գրքերում)

ԲԱԺԻՆ 4

Ի՞նչ է Աբրահամի Գիրքը:



Աբրահամի գիրքը սուրբ գրությունների գիրք է, որը պատմում է այս մարգարեի կյանքի վաղ շրջանի մասին իր սեփական բառերով: Այն պատմում է նրա ցանկության մասին՝ «լինել արդարության հետևորդ» (Աբրահամ 1.2), պատմում է նաև վստահության մասին, որը նա դրել է Տիրոջ վրա, ով հրաշքով փրկեց նրան, երբ նրա «հայրերը» նրան զոհաբերության էին հանձնել Փարավոնի քրմի միջոցով (տես Աբրահամ 1.5–7, 30): Այս գիրքը նաև ուսուցանում է հիմնարար ճշմարտություններ, որոնք վերաբերում են՝ Աբրահամի ուվստին, նախաերկրային կյանքին, հոգիների հավերժական բնույթին, նախակարգմանը, Երկնային Խորհրդին և կյանքի նպատակին, ինչպես նաև երկրի ծրագրմանն ու արարմանը: Եվ ամենակարևորը, այն վկայում է Հիսուս Քրիստոսի, Նրա նախամահականացու մեծության, Նրա ողորմության և Աստծո զավակներին ազատելու Նրա զորության, ինչպես նաև Երկնային Հոր ծրագրում Նրա կենտրոնական դերի մասին:



Հետևյալ թեմաները կենտրոնանում են այն բանի վրա, թե մենք ինչ գիտենք և չգիտենք Աբրահամի գրքի ի հայտ գալու մասին:

Աբրահամի Գիրքը և հին աշխարհը

Աբրահամի գիրքը զարմանալիորեն համապատասխանում է այն ամենին, ինչ գիտնականները սովորել են հին աշխարհի մասին: Այս գիտելիքներից մի քանիսը դեռ չէին բացահայտվել կամ շատ հայտնի չէին Ջոզեֆ Սմիթի ժամանակներում: Օրինակ, մի ժամանակ կարծում էին, որ

Եգիպտացիները չէին կիրառել մարդկային զոհաբերությունը, ինչպես նկարագրված է Աբրահամի գրքում (տես Աբրահամ 1.8–15, «Վերատպում Աբրահամի գրքից», Թիվ 1): Վերջին պատմական բացահայտումները հաստատում են, որ նրանք կատարում էին զոհաբերություններ, և դրանք ուղղված էր նրանց դեմ, ովքեր կասկածի տակ էին առնում եգիպտական կրոնական սովորությունները, ինչպես Օնիտայի դուստրերը Աբրահամ 1.11 հատվածում:

Գիտնականները նաև պարզել են, որ զոհաբերություններ կատարվում էին ոչ միայն եգիպտոսում, այլև եգիպտոսի ազդեցության տակ գտնվող տարածքներում (տես Աբրահամ 1.1, 5–11): Աբրահամի գիրքը հղում է կատարում «Օլիշեմի հարթավայրին», որը գտնվում է Ուր և Խառան երկրների մոտ (տես Աբրահամ 1.10): Այս վայրի անունը որևէ մեկին հայտնի չէր Ջոզեֆ Սմիթի ժամանակներում: Սակայն այդ ժամանակից հայտնաբերված հնադարյան տեքստերը վկայաբերում են Օլիշեմ կոչված տեղանունը՝ Խառան քաղաքի մոտ, որը կարող էր լինել Աբրահամի գրքում նշված քաղաքը: Բազմաթիվ հնադարյան տեքստեր նույնպես վկայում են, որ Աբրահամը եգիպտացիներին սովորեցնում էր օգտագործել աստղագիտություն (տես Աբրահամ 3.1–15, «Վերատպում», Թիվ 3): Ուրիշ հնադարյան փաստաթղթեր պատմում են Արարման վերաբերյալ Աբրահամի տեսիլքի մասին և նկարագրում են երկնային խորհուրդը, որտեղ քննարկվում և ծրագրվում էր մարդկության արարումը (տես Աբրահամ 3.23–25, 4.26–27): Այս համընկնումները նշաններ են Աբրահամի գրքի իսկության վերաբերյալ:

Ավելի շատ տվյալներ ձեռք բերելու համար, տես նաև «Translation and Historicity of the Book of Abraham», Սուրբ գրքերի ուղեցույց, topics .ChurchofJesusChrist.org; Daniel C. Peterson, “News from Antiquity,” *Ensign*, Jan. 1994, 16–21; and Kerry Muhlestein, “Egyptian Papyri and the Book of Abraham: A Faithful, Egyptological Point of View,” in Robert L. Millet, ed., *No Weapon Shall Prosper: New Light on Sensitive Issues* (2011), rsc.byu.edu:

Եգիպտական պապիրուս

Ջոզեֆ Սմիթի մահից հետո նրա ընտանիքը, ի վերջո, վաճառեց մումիաներն ու պապիրուսները: Պապիրուսների մեծ մասը հավանաբար ոչնչացան 1871թ. Չիկագոյի մեծ հրդեհի ժամանակ: Սակայն 1967թ. Նյու Յորքի Արվեստի Մետրոպոլիտեն թանգարանը Եկեղեցուն նվիրաբերեց պապիրուսի հատվածներ, որոնք մի ժամանակ պատկանել էին Մարգարե Ջոզեֆ Սմիթին: Այս վերականգնված հատվածները թվագրվում են Քրիստոսի ծնունդից մի քանի դար առաջ՝ Աբրահամից շատ ժամանակ անց:

Քննադատները փորձել են օգտագործել պապիրուսի հատվածների թվագրումը՝ Աբրահամի գրքի իսկությունը կասկածի տակ դնելու համար: Սակայն պապիրուսի հատվածները չպետք է թվագրվեն Աբրահամի ժամանակին, որպեսզի Աբրահամի գիրքը իսկական համարվի: Հնադարյան հիշատակարանները հաճախ փոխանցվում էին որպես կրկնօրինակներ կամ որպես կրկնօրինակների կրկնօրինակներ: Օրինակ Սատվածաշնչի գրքերի պահպանված ամենահին ձեռագրերը թվագրվում են դրանց սկզբնական ստեղծման ժամանակներից հետո եկող դարերին (տես John Gee, *A Guide to the Joseph Smith Papyri* [2000], 23–25, scholarsarchive.byu.edu; Kerry Muhlestein, “Egyptian Papyri and the Book of Abraham: Some Questions and Answers,” *Religious Educator*, vol. 11, no. 1 [2010], 91–108):

Որոշ անհատներ քննադատում են Աբրահամի գիրքը նաև նրա համար, որ պապիրուսի հատվածների ժամանակակից թարգմանությունները, որոնք պարունակում են հին եգիպտական հուղարկավորության ծիսակարգերի մասին տեքստեր, չեն համապատասխանում Աբրահամի գրքի տեքստին: Մրա համար կարող են լինել մի քանի հնարավոր պատճառներ:

Պապիրուսի հատվածներից մեկը պարունակում է այն պատկերի մի մասը, որը հիմա Վերատպում 1-ն է Աբրահամի գրքում: Ոմանք ենթադրում են, որ հնարավոր է, այս պատկերին կից տեքստը եղել է այն աղբյուրը, որից Ջոզեֆ Սմիթը թարգմանել է Աբրահամի Գիրքը: Սակայն եգիպտական պապիրուսներում կարելի է գտնել պատկերներ, որոնք որոշ չափով տարբերվում են այն տեքստից, որը

նկարագրում է դրանք: Ականատեսները նկարագրել են «պապիրոսի վրա գրված մեծ քանակությամբ գրառումներ», որոնք պարունակում են պապիրոսի «երկար կամ բազմաթիվ գլանակներ» (տես John Gee, *An Introduction to the Book of Abraham* [2017], 5): Թարգմանելիս Մարգարե Ջոզեֆ Սմիթը գուցե աշխատում էր ձեռագրերի այնպիսի մասերի հետ, որոնք հետագայում ոչնչացվել են: Այսպիսով, մենք չգիտենք, թե թարգմանելիս պապիրոսի որ բաժինն է օգտագործել Ջոզեֆը:

Մյուսները ենթադրում են, որ Աբրահամի գիրքը կամ դրա մասերը հավանաբար չեն առաջացել պապիրոսի բառացի թարգմանությունից: Համաձայն այս տեսակետի, Ջոզեֆի կողմից եգիպտական մեհենագրերի ուսումնասիրությունը հանգեցրել է հայտնության, որոնք վերաբերում են Աբրահամի կյանքի կարևոր իրադարձություններին և ուսմունքներին. սա նման է այն եղանակին, որով Մարգարեն ստացավ Մովսեսի գիրքը, մինչ ուսումնասիրում էր Աստվածաշունչը: Ո՛չ Տերը, ո՛չ էլ Ջոզեֆ Սմիթը չեն մեկնաբանել, թե ինչպես է թարգմանվել Աբրահամի գիրքը:

Աստծո վկան

Աբրահամի գիրքը պարզև է Աստծուց: Ինչպես բոլոր մյուս սուրբ գրությունների դեպքում, Աբրահամի գրքի բովանդակության ճշմարտացիության մասին համոզմունքը ես, նախ և առաջ հիմնված է հավատքի վրա: Գրքի ուսմունքների մասին աստվածային վկայությունը, որը ձեռք է բերվում աղոթքով ուսումնասիրության շնորհիվ, ինչպես նաև Սուրբ Հոգուց տրված հայտնությամբ, ամենամեծ վկայությունն է, որ այն ճշմարիտ է: Առաջին Նախագահությունում ծառայելիս Նախագահ Դիտեր Ֆ. Ուլստրֆը վկայել է. «Գոյություն ունի ճշմարտության միայն մեկ աղբյուր, որը կատարյալ է, ճիշտ և անկաշառ: Այդ աղբյուրը մեր անսահման իմաստուն և ամենագետ Երկնային Հայրն է» («What

Is Truth?» [Brigham Young University devotional, Jan. 13, 2013], 5, speeches.byu.edu):

Ցանկանում եք ավելին: (Ոչ պարտադիր)

Վարդապետություն և Ուխտերն ինչպե՞ս կարող է օգնել ինձ ստանալ անձնական հայտնություն:

Յոթանասունական Երեց Սթիվեն Ի. Սնոուն բացատրում է Վարդապետություն և Ուխտերի զորությունը հետևյալ հոդվածում «Treasuring the Doctrine and Covenants» (*Ensign*, Jan. 2009, 50–53):

Որտեղի՞ց կարող եմ ավելին սովորել Աբրահամի գրքի մասին:

Սրիեստավարժ եգիպտագետ դոկտոր Թերի Մուլեստայնը, քննարկելով Աբրահամի գիրքը, հետևյալ հոդվածում իմաստալի վկայություն է տրամադրում հայտնությանն ապավինելու կարևորության մասին, երբ մենք ձգտում ենք ձեռք բերել հոգևոր գիտելիք «The Book of Abraham, Revelation, and You» (*Ensign*, Dec. 2018, 54–57): Տես նաև հետևյալ հոդվածը՝ «Assessing the Joseph Smith Papyri: An Introduction to the Historiography of Their Acquisitions, Translations, and Interpretations», *Interpreter: A Journal of Latter-day Saint Faith and Scholarship*, vol. 22 [2016], 17–49:

Եգիպտագետ և Բրիգամ Յանգ Համալսարանի պրոֆեսոր դոկտոր Ջոն Ջին իր հրապարակումներում բազմաթիվ տեսություններ է առաջարկել Ջոզեֆ Սմիթի պապիրոսների մասին *A Guide to the Joseph Smith Papyri* (2000) (scholarsarchive.byu.edu) and *An Introduction to the Book of Abraham* (2017):


ԴԱՍ 14. ՈՒՍՈՒՑԶԻ ՆՅՈՒԹ

Տերը հայտնում է ևս մեկ սուրբ գրություն

Ինչպես նախորդ տնտեսություններում, Տերը շարունակում է հայտնել ևս մեկ սուրբ գրություն Իր ապրող մարգարեների միջոցով: Այս դասը ուսանողներին հնարավորություն է տալիս կիսվել, թե վերջին օրերի սուրբ գրությունն ինչպես է վերականգնում և օգնում հասակեցնել ավետարանի ճշմարտությունները: Ուսանողներն ավելի լավ կպատրաստվեն՝ հարցեր ուղղելու Աբրահամի Գրքի վերաբերյալ:

Ուսուցման առաջարկներ

Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով Տերը հայտնում է ևս մեկ սուրբ գրություն:



Խնդրեք ուսանողներին պատկերացնել, որ մի ընկեր անկեղծորեն հարցնում է. «Բացի Աստվածաշնչից, ինչո՞ւ Ձեր Եկեղեցին ուրիշ սուրբ գրություններ էլ ունի: Ես կարծում էի, որ Աստվածաշունչը պարունակում է Աստծո բոլոր խոսքերը»: Խնդրեք ուսանողներին ձեռք բարձրացնել, եթե նրանց տրվել են նմանատիպ հարցեր: Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել, թե իրենք ի՞նչ են պատասխանել (կամ կպատասխանեին):

Բացատրեք, որ Մորմոնի Գիրքը պարունակում է Նեփիի գրառումը տեսիլքի մասին, որտեղ նա տեսավ, որ Աստվածաշնչի բառերը տարածվում էին աշխարհում: Նա նաև տեսավ, որ Փրկիչի ավետարանի շատ «պարզ» ու «արժեքավոր» (1 Նեփի

13.26) մասերը հանվել են Աստվածաշնչից (տես 1 Նեփի 13.24–26):

Դասարանով կարդացեք 1 Նեփի 13.38–41-ը, փնտրելով, թե ինչ հիշատակարաններ տեսավ Նեփին, որոնք հասանելի կլինեին ժողովրդին վերջին օրերում: Կարող եք դադար տալ յուրաքանչյուր հատվածից հետո, և ուսանողները թող բացատրեն, թե որ հիշատակարաններին է անդրադառնում Նեփին: Օրինակ, հատված 39-ում «ուրիշ գրքեր»-ը վերաբերում է Մորմոնի Գրքին, Վարդապետություն և Ուխտերին, Թանկագին Մարգարիտին և Աստվածաշնչի Ջոզեֆ Սմիթի Թարգմանությանը:

- Համաձայն հատված 40 և 41-ի, որո՞նք են այս լրացուցիչ սուրբ գրությունների նպատակները, որոնք հայտնվել են Ջոզեֆ Սմիթի միջոցով: (Օգտագործելով ուսանողների պատասխանները, բացահայտեք մի նմանատիպ ճշմարտություն. **Ջոզեֆ Սմիթի միջոցով Տերը հայտնեց ևս մեկ սուրբ գրություն, որը հաստատում է Աստվածաշնչի ճշմարտությունները, վերականգնում է պարզ ու արժեքավոր ճշմարտություններ և օգնում է բերել մարդկանց Հիսուս Քրիստոսի մոտ**):

Որպեսզի օգնեք ուսանողներին խորացնել այս ճշմարտության հասկացողությունը, օգտագործեք այս ուսուցման գաղափարներից մի քանիսը՝ օգնելով ուսանողներին կիսվել և քննարկել այն:

Վարդապետություն և Ուխտեր

Հիշեցրեք ուսանողներին, որ 1831թ.-ի ժողովի ժամանակ Ջոզեֆ Սմիթը և մի քանի երեցներ որոշեցին հրատարակել հայտնությունները,

որոնք ստացվել էին մինչ այդ ժամանակը: Ժողովի ժամանակ Տերը Ջոզեֆ Սմիթի միջոցով հայտնեց Պատվիրանների Գրքի (այժմ Վարդապետություն և Ուխտերի) Իր նախաբանը: Այդ նախաբանն է Վարդապետություն և Ուխտեր 1:

Ուսանողներին մեկ րոպե հատկացրեք, որպեսզի վերանայեն Վարդապետություն և Ուխտեր 1.17, 21–23, 37-ը նախապատրաստական նյութից: Խնդրեք նրանց փնտրել, թե Տերն ինչ ուսուցանեց հայտնությունների մասին (տեքստում դրանք կոչվում են «պատվիրաններ»): Հրավիրեք ուսանողներին կիսվել իրենց գտած նյութով:

Նախապատրաստական նյութի բաժին 2-ում ուսանողներին հանձնարարվեց Վարդապետություն և Ուխտերից գտնել սուրբ գրության մի հատված, որն ամրապնդել է նրանց հավատը Հիսուս Քրիստոսի հանդեպ: Բավարար ժամանակ տրամադրելուց հետո, խնդրեք ուսանողներին միմյանց հետ կիսվել իրենց հատվածներով: Կարող եք այդ վարժությունը կատարել փոքր խմբերով կամ դասարանով: Նրանք կարող են միմյանց հետ կիսվել նաև հետևյալ հարցին տրվող իրենց պատասխաններով.

- Այս հատվածներն ինչպե՞ս են հաստատում Աստվածաշնչի ճշմարտությունը, վերականգնում պարզ ու արժեքավոր ճշմարտություններ և մեզ ավելի մոտեցնում Հիսուս Քրիստոսին:

Աստվածաշնչի և Թանկագին Մարգարիտի Ջոզեֆ Սմիթի Թարգմանությունը

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Ջոզեֆ Սմիթի հայտարարությունը Աստվածաշնչի մասին, որը գտնվում է նախապատրաստական նյութի բաժին 3-ում: Բացատրեք, որ Աստվածաշնչի Ջոզեֆ Սմիթի թարգմանության միջոցով Տերը վերականգնեց շատ պարզ ու արժեքավոր ճշմարտություններ, որոնք կորսվել էին:

Որպես դասարանական նախապատրաստության մաս, ուսանողներն ուսումնասիրեցին բացատրություններն այն մասին, թե ինչ են Ջոզեֆ Սմիթի Թարգմանությունը և Թանկագին Մարգարիտը: Հորդորեք մի քանի ուսանողների ամփոփել իրենց սովորածը յուրաքանչյուր գրքի մասին:

Անհրաժեշտության դեպքում հիշեցրեք ուսանողներին, որ Ջոզեֆ Սմիթ Թարգմանության որոշ մասեր ներառված են Թանկագին Մարգարիտում՝ որպես Մովսեսի գրքեր և Ջոզեֆ Սմիթ—Մատթեոս: Այլ ոգեշնչված թարգմանություններ կարելի է գտնել Աստվածաշնչի որոշ հրատարակությունների ծանոթագրություններում և հավելվածներում, Սուրբ գրքերի ուղեցույցում և scriptures.ChurchofJesusChrist.org: Խնդրեք ուսանողներին բացել ցանկացած հասանելի նյութ, որպեսզի համոզվեք, որ նրանք գիտեն՝ ինչպես օգտագործել այս սուրբ գրությունները:

Ցուցադրեք սուրբ գրությունների հատվածների ցուցակը Մովսեսի և Աբրահամի գրքերից և Ջոզեֆ Սմիթ Թարգմանությունից, որոնք գտնվում են նախապատրաստական նյութի բաժին 3-ում: Խնդրեք ուսանողներին համառոտ կրկնել սուրբ գրությունների հատվածները, որոնք նրանք ինքնուրույն ընտրել են ցուցակից:

Երբ կրկնության համար տրամադրեք մեկ րոպե, խնդրեք ուսանողներին որևէ զուգընկերոջ հետ կիսվել պարզ ու արժեքավոր ճշմարտություններով, որոնք ուսուցանում են այս սուրբ գրությունները կամ ինչպես են դրանք խորացնում իրենց գիտելիքները Հիսուս Քրիստոսի և Նրա ավետարանի մասին: Կարող եք նաև դասարանի հետ կիսվել՝ վերջին օրերի սուրբ գրության մասին ձեր վկայությամբ և ձեր կյանքի վրա դրա ազդեցությամբ:

Մենք կարող ենք գործել հավատքով, երբ հարցեր ենք տալիս Աբրահամի գրքի թարգմանության մասին:

ԲԱՐԵԼԱՎԵԼ ՄԵՐ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Ամրապնդեք հավատը, երբ ուսուցանում եք Եկեղեցու պատմությունը: Երբ ուսուցանում եք Եկեղեցու պատմությունը, արեք դա այնպիսի եղանակով, որն ամրացնում է ուսանողների հավատն առ այն, որ վերջին օրերում Հիսուս Քրիստոսը վերականգնեց Իր Եկեղեցին երկրի վրա: Օգնեք ուսանողներին տեսնել, թե Ջոզեֆ Սմիթն ինչպես հավատարմությամբ կատարեց իր

առաքելությունը՝ որպես Վերականգնման մարգարե: Օգտագործեք աստվածայնորեն նշանակված աղբյուրները (ինչպես օրինակ՝ սուրբ գրություններն ու մարգարեների խոսքերը), տրամադրված դասընթացի նյութերը և այլ հուսալի աղբյուրներ, որպեսզի օգնեք ուսանողներին հավատքի հեռանկարից տեսնել Վերականգնման շարունակվող առաջընթացը:

Ցուցադրեք հետևյալ պատկերը և բացատրեք, որ այն եզրիպատկան պապիրոսների հատված է, որը Ջոզեֆ Սմիթը մի ժամանակ ունեցել է:



Հրավիրեք ուսանողներին բացատրել, թե նրանք ինչ գիտեն պապիրոսների ձեռք բերման և պատմության մասին (տես նախապատրաստական նյութի բաժիններ 3 և 4-ը):

- Ի՞նչ հարցեր են առաջացել գոյություն ունեցող պապիրոսների հատվածների ուսումնասիրությունից: (Խրախուսեք ուսանողներին հիշել այն ամենը, ինչ սովորել են նախապատրաստական նյութի բաժին 4-ից):
- Ինչո՞վ կկիսվեիք նրա հետ, ով մտահոգություններ է ունեցել Աբրահամի գրքի թարգմանության վերաբերյալ:

Երբ ուսանողները պատասխանեն նախորդ հարցերին, կարող եք օգտագործել ստորև տրված մեկ կամ ավելի լրացուցիչ հարցեր՝ քննարկումը շարունակելու համար: Քննարկման ընթացքում ուսանողներին հնարավորություն տվեք դիտարկել իրենց կարդացածը նախապատրաստական նյութից և տալ իրենց հարցերը Աբրահամի գրքի մասին:

- Ի՞նչ եք անում, երբ չեք կարողանում հատուկ պատասխաններ գտնել ավետարանի հարցերին, ինչպես օրինակ՝ Աբրահամի գրքի մասին հարցերին:
- Ի՞նչ ապացույցներ են բացահայտվել Աբրահամի գրքի հրատարակությունից ի վեր, որոնք հաստատում են դրա իսկությունը: (Տես «Աբրահամի գիրքը և հին աշխարհը» նախապատրաստական նյութի բաժին 4-ում):
- Ի՞նչ կառաջարկեիք ինչ-որ մեկին՝ որպես Աբրահամի գրքի ճշմարտացիությունը որոշելու ամենահուսալի եղանակ: Ինչո՞ւ:

Եզրափակեք՝ ուսանողներին հնարավորություն տալով Աբրահամի գրքից կիսվել իրենց սիրելի սուրբ գրության հատվածով և վկայել այդ գրքի և Վերականգնման այլ սուրբ գրությունների վերաբերյալ:

Հաջորդ անգամ

Հրավիրեք ուսանողներին մտածել, թե ինչ կարծիք ունեն իրենց մասին: Խնդրեք նրանց դիտարկել իրենց հնարավոր ազդեցությունն այս կյանքում և հավերժության մեջ: Խրախուսեք ուսանողներին հաջորդ անգամ պատրաստված գալ՝ քննարկելու իրենց և իրենց ապագայի վերաբերյալ Աստծո ծրագրի վերականգնված ճշմարտությունները:



ՊԱՄ 15. ՂԱՍԱՐԴԱՆԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Երկնային Հոր ծրագիրը և մեր աստվածային ներուժը

Մարգարե Զոգեֆ Սմիթը հայտարարել է. «Փրկության մեծ ծրագիրը մի թեմա է, որը պետք է խստորեն գրավի մեր ուշադրությունը և համարվի երկնքի մեծագույն պարզևր մարդուն» (Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Զոգեֆ Սմիթ [2007], 208): Հայտնությունների և տեսիլքների միջոցով Զոգեֆ Սմիթը սկսեց հասկանալ Աստծո ծրագիրը Իր զավակների համար այնպիսի եղանակներով, որոնք կփոխեին միլիոնավոր մարդկանց կյանքը ամբողջ աշխարհում: Այս դասը կարող է հետագայում օգնել ձեզ հասկանալ, թե ով եք դուք և ինչ աստվածային ներուժ ունեք:

ԲԱԺԻՆ 1

Աստծո փրկության ծրագրի մասին վերականգնված ճշմարտություններն ինչպե՞ս են ազդել իմ կյանքի վրա:

Պատկերացրեք, որ Զոգեֆ Սմիթի ժամանակներում դուք նորադարձ էիք Տիրոջ վերականգնված Եկեղեցում: Ձեր հասկացողությունը Երկնային Հոր ծրագրի մասին թերի կլիներ: Եթե դուք դաստիարակվել եք որպես քրիստոնյա, դուք հավանաբար ունեցել եք նմանատիպ համոզմունքներ. (1) Աստված, Հիսուսը և Սուրբ Հոգին մեկ Աստված են՝

առանց ֆիզիկական մարմնի և զգացմունքների, (2) մարդիկ գոյություն չունենին նախորդ կյանքում և նրանք ոչնչից ստեղծվել են Աստծո կողմից, և (3) Աստված անիմանալի և առեղծվածային է. գաղափարը, որ մարդիկ Նրա զավակներն են, ընդամենը փոխաբերություն է:

Հայտնության միջոցով Զոգեֆ Սմիթը և վաղ շրջանի Սրբերը հասկացան Մեր Երկնային Հոր բնույթն ու Նրա աստվածային փրկության ծրագիրը: Պատկերացրեք, թե նրանք ինչ զգացին, երբ իմացան որոշ վերականգնված ճշմարտություններ, որոնք մենք ներկայումս բարձր ենք գնահատում Երկնային Հոր ծրագրում:

Փրկության ծրագրի մասին հասկացողությունը Ջոզեֆը հիմնականում ձեռք բերեց Մորմոնի Գրքի վրա աշխատելիս և Հին ու Նոր Կտակարանների ոգեշնչված թարգմանության ժամանակ: 1830թ. Օննդոգ գիրքը թարգմանելիս Մարգարե Ջոզեֆը իմացավ, որ Մովսեսը բարձրացվեց բարձր լեռան վրա, և նա տեսավ Աստծո արարչագործությունների ընդարձակությունը: Այս հայտնությունը հիմա մեզ հայտնի է որպես Մովսեսի առաջին գիրք Թանկագին Մարգարիտում: Տերն ասաց Մովսեսին, որ նա Աստծո որդին է: Մովսես 1-ում Աստված նաև ուսուցանեց մի կարևոր ճշմարտություն Իր աշխատանքի նպատակների մասին:



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Մովսես 1.37-39-ը:

Անմահության և հավերժական կյանքի մասին խոսելիս Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռոբերտ Դ. Հեյլը ուսուցանել է.



Հավերժական կյանքի պարզևր ստանալու համար արժե ամեն ջանք գործադրել փրկության ծրագիրն ուսումնասիրելու, սովորելու և կիրառելու համար: Ողջ մարդկությունը հարություն կառնի և կստանա անմահության օրհնությունը: Սակայն հավերժական կյանք, այսինքն՝

Աստվածանման կյանք ձեռք բերելու համար պետք է ապրենք փրկության ծրագրով՝ մեր ողջ սրտով, մտքով, գործությամբ և ուժով: (Robert D. Hales, «Փրկության ծրագիրը՝ մեզ առաջնորդող գիտելիքի սուրբ գանձ», *Ensign* կամ *Լիա-հոնա*, հոկտեմբեր 2015, 25)

Նկատեք, որ Երեց Հեյլը բնորոշում է հավերժական կյանքը որպես «Աստվածանման կյանք»: Դիտարկեք, թե ձեզ համար ինչ է նշանակում, որ Երկնային Հոր աշխատանքն է՝ ձեզ հետ վերադարձնել Իր ներկայություն, որպեսզի դուք կարողանաք վայելել անմահությունն ու հավերժական կյանքը:

1833թ. մայիսի 6-ին ստացված հայտնության մեջ Ջոզեֆ Սմիթը գրանցել է. «Մարդը նույնպես սկզբում Աստծո մոտ էր» (Վարդապետություն և Ուխտեր 93.29): Աբրահամի գրքի Ջոզեֆի թարգմանությունը, որը հրատարակվեց 1842թ., ավելի խորը հասկացողություն էր տալիս մեր նախաերկրային կյանքի և մեր հետմահականացու հնարավորությունների մասին:



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Աբրահամ 3.22–26-ը:





Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Ձեր կարծիքով, մահկանացու կյանքում մեր նախաերկրային կյանքի և մեր նպատակի մասին գիտելիքներն ինչպե՞ս էին ազդում վաղ շրջանի Սրբերի վրա: Այս գիտելիքներն ինչպե՞ս են ազդում ձեր մտածողության, որոշումների և գործողությունների վրա այսօր:

ԲԱԺԻՆ 2

Աստծո հատկանիշների
մասին ի՞նչ ուսմունքներ
վերականգնվեցին
Ջոզեֆ Սմիթին:



1844թ. իր մահից մի քանի ամիս առաջ Ջոզեֆ Սմիթը ելույթ ունեցավ իր վերջին համաժողովին: Նրա ընկերը՝ Քինգ Ֆոլլետը, վերջերս էր մահացել

դժբախտ պատահարից, և ընտանիքը խնդրել էր Ջոզեֆին ելույթ ունենալ թաղման ժամանակ: Ջոզեֆը համարձակորեն ուսուցանեց Աստծո բնույթի և Նրան նմանվելու մեր ներուժի մասին: Այդ ելույթում, որը հայտնի է որպես Քինգ Ֆոլլետի ճառ, Ջոզեֆը հայտարարեց.



Աշխարհում բացառապես շատ քիչ մարդիկ կան, ովքեր ճիշտ են հասկանում Աստծո բնույթը: . . . Եթե մարդիկ չեն ըմբռնում Աստծո բնույթը, նրանք չեն հասկանա, թե ովքեր են իրենք: . . .

Աստված ժամանակին եղել է այնպիսին, ինչպիսին հիմա մենք ենք և վեհացում ձեռք բերած մարդ է, ու նստած է գահին այնտեղ՝ երկնքում: . . . Եթե տեսնեիք Նրան այսօր, դուք կտեսնեիք Նրան մարդու տեսքով, ինչպես որ դուք եք: . . .

Երբ մենք հասկանում ենք Աստծո բնույթը և գիտենք՝ ինչպես գալ Նրա մոտ, Նա սկսում է բացել երկինքները մեզ համար և պատմել մեզ ամեն ինչ այդ մասին: . . .

. . . Աստված ինքը, գտնվելով ոգիների և փառքի մեջ, քանի որ նա ավելի խելացի էր, պատշաճ համարեց օրենքներ սահմանել, որով մնացածները կկարողանային արտոնություն ունենալ իր նման զարգանալու համար: Աստծո հետ ունեցած փոխհարաբերությունը մեզ հնարավորություն է տալիս զարգանալ գիտելիքով: . . .

Սրանում է, ուրեմն, հավերժական կյանքը՝ ճանաչել միակ իմաստուն և ճշմարիտ Աստծուն, և դուք պետք է սովորեք, թե ինչպես ինքներդ աստվածներ դառնաք, և թագավորներ ու քահանաներ [և թագուհիներ ու քահանայուհիներ] Աստծո համար, . . . գնալով մի փոքր աստիճանից մյուսը և մի փոքր կարողությունից դեպի ավելի բարձրը, շնորհից շնորհ, վեհացումից վեհացում: (Ուսմունքներ. Ջոզեֆ Սմիթ, 39–40, 210, 221)

Հղում. Քինգ Ֆոլլետի ճառը ամբողջությամբ կարող եք կարդալ «Classics in Mormon Thought: The King Follett Sermon», *Ensign*, Apr. 1971, 12–17:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնն ուսուցանել է.



Աստծո նպատակն այն է, որ մենք՝ Նրա զավակները, կարողանանք ունենալ առավելագույն ուրախություն, լինենք Իր հետ հավերժ և նմանվենք Իրեն: (Դ. Թոդ Քրիստոֆերսոն, «Ես որոնց որ սիրում եմ, հանդիմանում և խրատում եմ», *Ensign* կամ *Lhahhna*, մայիս, 2011,97):



Գրառումներ կատարեք դասին նախապատրաստվելիս

Ձեր օրագրում կամ ստորև տրված տեղում պատասխանեք հետևյալ հարցերին. Ի՞նչ ճշմարտություններ հայտնաբերեցիք Ջոզեֆ Սմիթի կողմից տրված Քինգ Ֆոլլետի ճառում: Այս ճշմարտություններն ինչպե՞ս են ազդում այն եղանակի վրա, որով դուք դիտարկում եք ինքներդ ձեզ, ձեզ շրջապատող մարդկանց և հարաբերություններն Աստծո հետ:

ԲԱԺԻՆ 3

Ինչպե՞ս կարող եմ հավերժական կյանք ստանալ սելենտիալ արքայությունում:

Կրկին պատկերացրեք, որ նորադարձ եք վաղ շրջանի վերականգնված եկեղեցում: Այդ ժամանակվա քրիստոնյաների մեծ մասի նման դուք հավանաբար կհավատայիք, որ երբ մարդը մեռնում է, գնում է կա՛մ երկինք, կա՛մ դժոխք: Ջոզեֆ Սմիթի ժամանակներում մարդկանց մեծ մասը միաբաններ կամ ունիվերսալիստներ էին: Եթե դուք «միաբանական» տեսակետի կողմնակից էիք, ապա հավատում էիք, որ միայն փոքր քանակությամբ մարդիկ կգնային երկինք: Եթե դուք «ունիվերսալիստական» տեսակետի կողմնակից էիք, դուք հավանաբար հավատում էիք, որ Աստված

պատիժ կպահանջի որոշ մեղավորների համար, բայց, ի վերջո, բոլոր մարդիկ կգնան երկինք:



1832թ. փետրվարին Ջոզեֆ Սմիթը և Միդնի Ռիզդոնը մի տեսիլք տեսան, որն օգնեց մեզ ավելի լավ հասկանալ կյանքը մահից հետո: Երկու տղամարդիկ աշխատում էին Նոր Կտակարանի Ջոզեֆ Սմիթի Թարգմանության վրա Ջոն Ջոնսոնի տանը և դադար առան, որպեսզի խորհեն Հովհաննես 5.29-ի մասին, որը արդարների հարության և անարդարների հարության մասին է: Մի քանի տղամարդ սենյակում էին Ջոզեֆի և Միդնիի հետ, երբ այս երկու տղամարդիկ տեսիլք տեսան և նկարագրեցին իրենց տեսածը: Այս տեսիլքը, որը գրանցված է Վարդապետություն և Ուխտեր 76-ում, օգնում է մեզ ավելի լավ հասկանալ Երկնային Հոր ծրագիրը: Այս բաժնում նշեք ճշմարտություններ, որոնք ընդլայնում են մեր հասկացողությունը մահից հետո եկող կյանքի մասին և հայտնում են Իր բոլոր զավակներին օրհնելու Երկնային Հոր ցանկությունը:



Ուսումնասիրեք դասին նախապատրաստվելիս

Կարդացեք հայտնության հատվածներ, որոնք գրանցված են Վարդապետություն և Ուխտեր 76.12, 20, 40–42, 50–54, 58, 62, 65, 69–71, 74–76, 79, 81–82, 86, 89–92, 111:



Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Ըստ ձեր պատկերացման, բաժին 76-ում հայտնված ճշմարտությունն ինչպե՞ս կազդեր ձեր վրա, եթե դուք նորադարձ լինեիք վաղ օրերի Եկեղեցում: Այս տեսիլքից ի՞նչ ենք սովորում Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի մասին:

Ցանկանում ես ավելին: (Ոչ պարտադիր)

Որտեղի՞ց կարող եմ ավելին սովորել հավերժական կյանքի մասին:

Աստվածաշնչի թեմաները, ինչպիսիք են՝ «Հավերժական կյանք» և «Դառնալ Աստծո նման» (topics.ChurchofJesusChrist.org), կարող են օգնել ավելին հասկանալ Աստծո գործի և փառքի մասին:

Որտեղի՞ց կարող եմ ավելին սովորել փառքի աստիճանների տեսիլքի մասին:

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 76 բաժինն ամբողջությամբ՝ փառքի աստիճանների մասին ավելին իմանալու համար: «Վարագույրից այն կողմ. Կյանքը հավերժություններում» *Ուսմունքներ. Ջոզեֆ Սմիթ* (39–40, 217–26) գաղափար է տալիս Վարդապետություն և Ուխտեր 76-ի մասին:

Փրկության ծրագիրն ինչպե՞ս կարող է օգնել ինձ մտածել դժվար հարցերի մասին հավերժության տեսանկյունից:

Հետևյալ հոդվածում՝ «The Plan of Salvation: A Sacred Treasure of Knowledge to Guide Us» (*Ensign*, Oct. 2015, 25–31), Երեց Ռոբերտ Դ. Հեյլսը Տասներկու Առաքյալների Քվորումից ուսուցանում է, թե մեր Երկնային Հոր ծրագրի մասին գիտելիքը ինչպես կարող է օգնել մեզ մտածել և գործել խելամտորեն, երբ մենք բախվում ենք զգայուն խնդիրների, որոնք վերաբերում են ընտանիքին, սեռին և նույն սեռի նկատմամբ հակմանը:

ԴԱՍ 15. ՈՒՍՈՒՑՁԻ ՆՅՈՒԹ

Երկնային Հոր ծրագիրը և մեր աստվածային ներուժը

Տերը Ջոզեֆ Սմիթին հայտնեց Երկնային Հոր փրկագնման ծրագրի փառքը և Նրա նման դառնալու մեր ներուժը: Այս դասը կօգնի ուսանողներին ամրապնդել Երկնային Հոր ծրագրի արժևորումը, ավելի խորը հասկանալ, թե ովքեր են իրենք, և ինչ կարող են անել իրենց աստվածային ներուժին հասնելու համար:

Ուսուցման առաջարկներ

Ջոզեֆ Սմիթը կարևոր ճշմարտություններ ստացավ փրկության ծրագրի վերաբերյալ:

Խնդրեք ուսանողներին բացատրել, թե քրիստոնյաները և Եկեղեցու վաղ շրջանի նորադարձները ինչ կարող էին հասկանալ Աստծո և հետմահու կյանքի մասին՝ այն հայտնություններից առաջ, որոնք Տերը այս թեմաների մասին տվեց Ջոզեֆ Սմիթի միջոցով: (Գուցե ուսանողները ցանկանան վերանայել նախապատրաստական նյութի բաժին 1 և 3-ը:)

- Ելնելով այն ամենից, ինչ դուք սովորել եք նախապատրաստական նյութից, ե՞րբ և ինչպե՞ս Տերը Ջոզեֆ Սմիթին բացահայտեց ճշմարտությունները փրկության ծրագրի մասին:
- Ձեր կարծիքով որո՞նք են այն մի քանի վերականգնված ճշմարտությունները ծրագրի մասին, որոնք ամենից շատ կփոխեին Սրբերի կյանքը: Որտե՞ղ են գրանցված այս ճշմարտությունները: (Տես նախապատրաստական նյութի բաժիններ 1 և 3-ը:)

Երբ ուսանողները պատասխանեն նախորդ հարցերին, կարող եք հանձնարարել նրանց վերանայել նախապատրաստական նյութի որոշ սուրբգրային հատվածներ, ինչպես օրինակ՝ Մովսես 1.39 և Աբրահամ 3.22–26: Օգնեք ուսանողներին գտնել և բացատրել նմանատիպ ճշմարտություններ. **Աստծո գործը և փառքն է՝ իրականացնել մարդու անմահությունը և հավերժական կյանքը:** (տես Մովսես 1.39): **Նախքան ծնվելը, մենք ապրում էինք Երկնային Հոր հետ որպես հոգիներ,** (տես

Աբրահամ 3.22–23) **Տերը ստեղծեց երկիրը որպես մի վայր, որտեղ մենք կարող ենք ընտրել՝ հնազանդվել Տիրոջը, թե՛ ոչ** (տես Աբրահամ 3.24–25):

- Պատկերացրեք, թե ինչպիսի՞ն կլինեին ձեր կյանքը, եթե դուք չիմանայիք Երկնային Հոր ծրագրի մասին: Ձեր կարծիքով, ծրագրի մասին իմանալը ինչպե՞ս է ազդել այն եղանակի վրա, որով դուք մտածում եք, որոշումներ կայացնում և գործում:

Ջոզեֆ Սմիթը ուսուցանեց մեր աստվածային ներուժի մասին:

Բացատրեք, որ «1844թ. ապրիլին Ջոզեֆ Սմիթը ելույթ ունեցավ իր վերջին համաժողովի ժամանակ: Կոչ անելով Սրբերին «շատ ուշադիր լինել», . . . Ջոզեֆն ուսուցանեց աստվածային բնույթի և հավերժական առաջընթացի մասին» (“King Follett Discourse,” Church History Topics, ChurchofJesusChrist.org/study/church-history):

Հրավիրեք որևէ ուսանողի կարդալ Ջոզեֆ Սմիթի հայտարարությունը նրա Քինգ Ֆոլլետի ճառից, որը գտնվում է նախապատրաստական նյութի 2-րդ բաժնի սկզբում:

- Ջոզեֆի ուսմունքներից ի՞նչ եք սովորում Աստծո հետ ձեր հարաբերության մասին:

Բացատրեք, որ 1995թ. Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Քվորումը հրապարակեցին «Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին» հռչակագիրը: Այդ հռչակագրում նրանք հայտարարեցին.

Բոլոր մարդկային էակները՝ տղամարդիկ և կանայք, ստեղծվել են Աստծո

պատկերով: Յուրաքանչյուրը երկնային ծնողների կողմից սիրված հոգևոր որդին կամ դուստրն է, և, որպես այդպիսին, յուրաքանչյուր ոք ունի աստվածային բնույթ և ճակատագիր: . . .

Նախաերկրային աշխարհում հոգևոր որդիներն ու դուստրերը ճանաչում և երկրպագում էին Աստծուն, որպես իրենց Հավերժական Հորը և ընդունում էին Նրա ծրագիրը, ըստ որի պետք է ֆիզիկական մարմիններ ձեռք բերեին և աշխարհիկ փորձ կուտակեին դեպի կատարելություն ընթանալու և իրենց աստվածային ճակատագիրը որպես հավերժական կյանքի ժառանգներ բացառիկ կերպով գիտակցելու համար: («Ընտանիք. Հայտարարություն աշխարհին», ChurchofJesusChrist.org)

- Որպես Աստծո որդիներ և դուստրեր, ո՞րն է մեր հավերժական ներուժը: (Օգնեք ուսանողներին գտնել նմանատիպ մի սկզբունք. **Որպես Երկնային Հոր հոգևոր որդիներ, մենք ունենք ներուժ Նրան նմանվելու համար:**)

Ցուցադրեք կամ տվեք հետևյալ հարցերը, ապա ուսանողներին տվեք մի քանի բույսեր դրանց շուրջ խորհելու և իրենց ստացած տպավորությունները գրանցելու համար:

- Այդ ճշմարտությունն ինչպե՞ս կարող է ազդել այն եղանակի վրա, որով դուք տեսնում եք Երկնային Հոր հետ ունեցած ձեր հարաբերությունները: Դա ինչպե՞ս է ազդում այն եղանակի վրա, որով դուք տեսնում եք ինքներդ ձեզ և ձեզ շրջապատող մարդկանց: Դա ինչպե՞ս կարող է ազդել այն եղանակի վրա, որով դուք ապրում եք ձեր կյանքը:

Հիսուս Քրիստոսը մեզ ցույց տվեց, թե ինչպես կարող ենք ստանալ Աստծո փառքի լիությունը սելեստիալ արքայությունում:

Գրատախտակին գրեք կամ ցուցադրեք հետևյալ բառերը՝ *Երկինք* և *դժոխք*, և հարցրեք ուսանողներին, թե 19-րդ դարի քրիստոնյաները հիմնականում ինչի՞ն էին հավատում, թե ով ուր պիտի գնա:

Խնդրեք ուսանողներին պատմել, թե Վարդապետություն և Ուխտեր 76 բաժնից ինչ են սովորել հետմահու կյանքի և սելեստիալ փառք ձեռք բերելու մասին: (Ուսանողները պետք է կրկնեն Վարդապետություն և Ուխտեր 76.50–54:): Կարող եք նաև հարցնել ուսանողներին, թե նրանք ինչ սովորեցին Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի մասին բաժին 76-ում բացահայտված ճշմարտություններից:

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի հետևյալ հայտարարությունը.



Եկեղեցում ես լսում եմ, թե շատերն ինչպես են մաքառում այս խնդրի հետ. «Ես բավականաչափ լավը չեմ»: «Ես շատ հեռու եմ կատարյալ լինելուց»: «Ես երբեք բավականաչափ արժանավոր չեմ լինի»: Ես սա լսում եմ անչափահասներից: Ես սա լսում եմ միսիոներներից: Ես սա լսում եմ նորադարձներից: Ես սա լսում եմ ուխտի մեջ ծնվածներից: (Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Արդ դուք կատարեալ եղիք, ի վերջո», *Ensign* կամ *Liahona*, նոյեմբեր 2017, 40–42)

Հրավիրեք ուսանողներին խորհել այն ժամանակների մասին, երբ իրենք ունեցել են այդ զգացումները:

Խնդրեք ուսանողներին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 76.40–42, 69-ը, փնտրելով այն կարևոր դերը, որը Հիսուս Քրիստոսը կատարում է մեր փրկության գործում:

- Հիսուս Քրիստոսն ի՞նչ դեր է կատարում հավերժական կյանքի մեր որոնումներում: (Օգնեք ուսանողներին գտնել հետևյալ ճշմարտությունը. **Մենք կարող ենք կատարյալ դառնալ միայն Հիսուս Քրիստոսի միջոցով:**)
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր հիշել, որ կատարելությունն ու վեհացումը գալիս են միայն Հիսուս Քրիստոսի միջոցով:

Դասարանի հետ կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 93.12–13-ը, պարզելով, թե հատվածներն ինչ են ուսուցանում Երկնային Հորը նմանվելու Փրկիչի ճանապարհի մասին:

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում, որ Փրկիչը «շարունակեց շնորհից շնորհ, մինչև որ ստացավ լիությունը»:
- Փրկիչի օրինակն ինչպե՞ս է օգնում ձեզ հաղթահարել հուսահատության զգացումը, երբ ձգտում եք հավերժական կյանքի:

Ցուցադրեք և կարդացեք Երեց Հովանդի հետևյալ հայտարարությունը.



Ես վկայում եմ այդ հոյակապ ճակատագրի մասին, որը մեզ հասանելի դարձավ Տեր Հիսուս Քրիստոսի Քավությանմբ, ով շարունակեց «շնորհից շնորհ», [Վարդապետություն և Ուխտեր 93.13] մինչև Իր անմահության մեջ [տես Դուկաս 13.32] Նա ստացավ սելեստիալ փառքի կատարյալ լիությունը: Ես վկայում եմ, որ այս և ամեն ժամ, Նա մեխերի սպիներով պատված իր ձեռքերով մեզ է մեկնում այդ նույն ողորմությունը, առանց անձնատուր լինելու, քաջալերելով մեզ, հրաժարվելով արձակել մեզ, մինչև մենք մի օր ապահով տուն կվերադառնանք Նրա հետ՝ մեր Երկնային Ծնողների գիրկը: Ես շարունակում եմ ձգտել այդ կատարյալ պահին, սակայն անճարակ կերպով: Այսպիսի կատարյալ պարզևի համար ես շարունակում եմ շնորհակալություն հայտնել, սակայն անհամապատասխան: Ես այդպես եմ վարվում Կատարելության անունով՝ Նրա, ով երբեք անճարակ ու անհամապատասխան չի եղել, այլ սիրում է մեզ բոլորիս, ինչպիսին կանք, Տեր Հիսուս Քրիստոսի անունով, ամեն: Ջեֆրի Ռ. Հովանդ, «Արդ դուք կատարեալ եղիք, ի վերջո», *Ensign* կամ *Liahona*, նոյեմբեր 2017, 42)

Խնդրեք ուսանողներին մի պահ խորհել, թե այս անգամ ինչն ամենից շատ կօգնի նրանց, որ հոգևորապես առաջ ընթանան դեպի հավերժական կյանքը: Եզրափակեք՝ կիսվելով ձեր վկայությամբ,

որ Փրկիչի ողորմածության շնորհիվ և Նրա օրինակին հետևելով, մենք կարող ենք ստանալ հավերժական կյանք և մտնել սելեստիալ արքայություն:

ԲԱՐԵԼԱՎԵԼ ՄԵՐ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Շարունակեք խրախուսել ուսանողների նախապատրաստությունը: Հիմա, երբ ուսանողներն արդեն այս դասընթացի կեսին են, կարող եք հրավիրել նրանց կիսվել, թե նրանց նախապատրաստությունը դասին ինչպես է ազդել այս դասընթացի իրենց փորձառության վրա: Կիսվեք Յոթանասուկից Երեց Քիմ Բ. Ջլարկի քաջալերանքի հետևյալ խոսքերով. «Երբ կատարեք ձեր բաժինը՝ հավատքով աղոթեք, նախապատրաստվեք, ուսումնասիրեք, ակտիվորեն մասնակցեք և ամեն ինչ անեք, ապա Սուրբ Հոգին կսովորեցնի ձեզ, կմեծացնի սովորած նյութը կիրառելու ձեր կարողությունը, և կօգնի ձեզ դառնալ այն, ինչ Տերն ուզում է, որ դառնաք» (“Learning for the Whole Soul,” *Ensign*, Aug. 2017, 27):

Հաջորդ անգամ

Խնդրեք ուսանողներին մտածել, թե նրանց կյանքն ինչպես է փոխվել տաճարների և տաճարային արարողությունների շնորհիվ: Բացատրեք, որ հաջորդ դասին նրանք կսովորեն, թե հնադարյան մարգարեներն ինչու հայտնվեցին Ջոզեֆ Մմիթին և Օլիվեր Քաուդերիին: Խրախուսեք նրանց ուսումնասիրել 16-րդ դասի նախապատրաստական նյութը, որպեսզի նրանք պատրաստ լինեն քննարկել սկզբունքներ, որոնք կօգնեն տաճարը դարձնել իրենց կյանքի իմաստավոր մասը:



ՀԱՍ 16. ՀԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Կիրթլենդի տաճարը և Քահանայության բանալիները

«Աստծո տուն» կառուցելու Աստծո պատվիրանը (Վարդապետություն և Ուխտեր 88.119) ավետարանի Վերականգնման կարևոր մասն էր: Եկեղեցու վաղ շրջանի անդամները պատրաստ էին տալ իրենց ունեցածը, որպեսզի ստանային խոստացված օրհնությունը՝ «զորությամբ կօծվեք ի վերուստ» (Վարդապետություն և Ուխտեր 38.32): Երբ ուսումնասիրեք, փնտրեք այն օրհնությունները, որոնք Սրբերը ստացել են, քանի որ պատրաստ էին զոհաբերություններ կատարել Կիրթլենդի Տաճարի կառուցման համար:

ԲԱԺԻՆ 1

Ես ի՞նչ կարող եմ սովորել
Կիրթլենդի Տաճարի
կառուցման համար վաղ
շրջանի Սրբերի կատարած
զոհաբերություններից:

1832թ. դեկտեմբերի 27-ին և 28-ին Տերը պատվիրեց Սրբերին տաճար կառուցել Կիրթլենդում (Օհայո):



**Ուսումնասիրեք դասին
Նախապատրաստվելիս**

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 88.119:

Այս պատվիրանի վերաբերյալ Մարգարե Ջոզեֆ Սմիթը գրել է. «Մա Տիրոջ խոսքն է մեզ, և մենք պետք է հնազանդվենք Տիրոջ օգնությամբ, քանի որ հնազանդության պայմանով նա մեծ բաներ է խոստացել մեզ, այո նույնիսկ այցելություն երկնքից՝ պատվելու մեզ Իր ներկայությամբ» (Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ [2007], 415):



Էլիզա Ռ. Մնոուն, ով ապրում էր Կիրթլենդում, տաճարի կառուցման ժամանակ, հիշում է.



Սրբերը քիչ էին թվով, և մեծ մասն աղքատ էր, բայց հավաստիացում կար, որ Աստված էր պատվիրել, որ տաճար պիտի կառուցվի Նրա անունով, . . . և այն ժամանակ գոյություն ունեցող հանգամանքների ներքո, տաճարի կառուցումը պետք է լիներ բոլորի մտահոգությունը:

Շատ փոքր միջոցներով, բացառությամբ նրանց կողմից ներդրված մտքի ու ֆիզիկական ուժի, Աստծո հանդեպ անսասան հավատի հետ մեկտեղված, տղամարդիկ, կանայք և նույնիսկ երեխաները աշխատում էին իրենց ողջ ուժով, . . . նրանց եռանդը խթանում էր տաճարի օրհնությունները ստանալու հեռանկարը՝ Բարձրյալի ղեկավարությամբ և Նրա կողմից ընդունվելու խոստումով: (In *Eliza R. Snow, an Immortal* [1957], 54, 57)

Մեկ այլ դժվարություն ևս դանդաղեցնում էր տաճարի շինարարության առաջընթացը.

1834թ. գարունն ու ամառը դժվար եղանակներ էին տաճարի շինարարության համար, քանի որ համայնքի տղամարդկանց մեծ մասը Ջոզեֆ Սմիթի հետ գնացել էին Միսսուրի՝ Իսրայելի ճամբար: . . . Երբ տղամարդիկ բացակայում էին, կանայք կատարում էին ողջ աշխատանքը: Ոմանք պատ էին շարում, մյուսները անասուններին էին արածեցնում և քար էին կրում, իսկ շատերը կարում էին, մանում և հագուստներ գործում բանվորների համար: (Lisa Olsen Tait and Brent Rogers, "A House for Our God," *Revelations in Context* [2016], 170)

Որպեսզի օգնի Սրբերին տաճարի կառուցման իրենց ջանքերում, Տերը «Ջոզեֆ Սմիթին և Առաջին Նախագահության նրա խորհրդականներին մի ուշագրավ տեսիլք տվեց, որում նրանք տեսան տաճարի մանրամասն նախագծերը: Ֆրեդերիկ Գ. Վիլյամսը՝ առաջին Նախագահության Երկրորդ Խորհրդականը, ավելի ուշ հիշել է.

Ջոզեֆ [Սմիթը] ստացավ Տիրոջ խոսքը, որ նա վերցնի իր երկու խորհրդականներին՝ [Ֆրեդերիկ Գ.] Վիլյամսին և [Սիդնի] Ռիգդոնին և գա Աստծո առաջ, ու Նա նրանց ցույց կտա կառուցվելիք տաճարի նախագիծը: Մենք ծնկի իջանք, դիմեցինք Տիրոջը և տաճարի նախագիծը հայտնվեց տեսանելի հեռավորության վրա, ես առաջինը տեսա այն: Ապա մենք բոլորս տեսանք այն: Երբ լավ գննեցինք արտաքին տեսքը, շինությունը, կարծես, հայտնվեց մեր գլխավերևում: (*Ուսմունքներ. Ջոզեֆ Սմիթ, 271*)



Կիրթլենդի Տաճարի կառուցման համար մեծ գոհաբերություն կատարողներից մեկը նորադարձ Ջոն Թաններն էր:

[Ջոնը] «գիշերը երազում հուշում ստացավ, որ ինքը . . . պետք է անմիջապես գնա Կիրթլենդի Եկեղեցի»: Նա վաճառեց իր ունեցվածքը՝ մի քանի բարգավաճող ագարակներ, մի հյուրանոց և պտղատու այգիներ, Սուրբ Ծննդի առավոտյան իր բազմանդամ ընտանիքի անդամներին և մի քանի հարևանների տեղավորեց սայլերի վրա, կտրեց անցավ ութ հարյուր կիլոմետր և 1835թ. հունվարյան մի կիրակի ժամանեց Կիրթլենդ:

Նրա կարիքը իրոք կար: Տաճարի տարածքի վարկի ժամանակը մոտենում էր և, ըստ որոշ գրանցումների, աղքատացած Մարգարե Ջոզեֆը և որոշ եղբայրներ աղութել էին օգնության համար:

Ջոն Թանները չվարանեց: Նա Մարգարեին երկու հազար դոլարի վարկ տվեց և գրություն վերցրեց նրանից, տաճարային հանձնաժողովին տասներեք հազար դոլարի վարկ տվեց, Մարգարեի և մյուսների հետ ստորագրեց երեսուն հազար դոլարի գրություն Նյու Յորքում գնված ապրանքների համար և «առատաձեռն նվիրաբերություններ» կատարեց տաճարի կառուցման համար: (Leonard J. Arrington, "The John Tanner Family," *Ensign*, Mar. 1979, 46)

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը բացատրել է, թե Վերջին Օրերի Սրբերը ինչու էին պատրաստակամ գոհաբերություններ կատարում տաճարների կառուցման համար և երկրպագում Տիրոջը այս սուրբ շենքերում:



Մեծ գոհաբերություններ են կատարվել տաճարի կառուցման և տաճար այցելելու համար: Անթիվ անդամներ են աշխատել ու մաքառել, որպեսզի իրենք և իրենց ընտանիքները օրհնություններ ստանան Աստծո տաճարներում:

Ինչո՞ւ են այդքան շատ մարդիկ ցականում այդքան շատ տալ՝ տաճարի օրհնությունները ստանալու համար: Ովքեր հասկանում են տաճարից եկող

հավերժական օրհնությունները, գիտեն, որ ոչ մի գոհաբերություն այդքան մեծ չէ, ոչ մի գին այդքան ծանր չէ, ոչ մի մաքառում այդքան դժվար չէ այդ օրհնությունները ստանալու համար: (Թոմաս Ս. Մոնսոն, «Սուրբ տաճար՝ փարոս աշխարհին», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2011, 92)



Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Ի՞նչ կարող եք սովորել՝ Կիրթլենդի տաճարը կառուցելու համար անհրաժեշտ վաղ շրջանի Սրբերի ցույց տված օրինակից և գոհաբերությունից:

ԲԱԺԻՆ 2

Քահանայության բանալիները, որոնք Կիրթլենդի տաճարում հանձնվեցին երկնային սուրհանդակների կողմից, ինչպե՞ս կարող են օրհնել իմ կյանքն այսօր:

Աստված վարձատրեց Սրբերին Կիրթլենդի տաճարի կառուցման գոհաբերության համար՝ հոգևոր դրսևորումներ հեղելով նվիրագործմանը նախորդող և հաջորդող օրերին (see *Saints: The Story of the Church of Jesus Christ in the Latter Days*, vol. 1, *The Standard of Truth, 1815–1846* [2018], 232–35, 237–39):

Շատ Սրբեր վկայեցին, որ Երկնային Էակները ներկա էին նվիրագործման ծառայությունների ժամանակ:

Էլիզա Ռ. Մնոուն ասել է. «Այդ նվիրագործման արարողություններին կարելի էր նախապատրաստվել, բայց մահկանացու լեզուն չի կարող նկարագրել այդ հիշարժան օրվա երկնային դրսևորումները: Հրեշտակներ հայտնվեցին ոմանց, մինչդեռ աստվածային ներկայության զգացումն առկա

էր բոլոր ներկա գտնվողների մեջ, և յուրաքանչյուր սիրտ լցված էր աննկարագրելի ուրախությամբ և լիառատ փառքով» [տես 1 Պետրոս 1.8]:

Այդ երեկո, երբ Մարգարեն մոտ 400 քահանայություն կրողների հետ հավաքվել էր տաճարում, «մի աղմուկ լսվեց, որը նման էր հզոր քամու շառաչունի, որը լցրեց տաճարը, և ողջ համայնքը միաժամանակ ոտքի կանգնեց՝ շարժվելով անտեսանելի ուժի կողմից»: Համաձայն Մարգարեի խոսքերի, «շատերը սկսեցին խոսել մարգարեության լեզուներով, մյուսները տեսան փառավոր տեսիլքներ, և ես տեսա, որ տաճարը լցված էր հրեշտակներով, որի մասին ես հայտարարեցի համայնքին» (*Ուսմունքներ. Ջոզեֆ Սմիթ, 307–8*):

Ամենանշանավոր հոգևոր դրսևորումները տեղի ունեցան Զատիկի կիրակի օրը՝ 1836թ. ապրիլի 3-ին, տաճարի նվիրագործումից մի շաբաթ անց: Մինչ նրանք աղոթում էին տաճարում, մի տեսիլք բացվեց Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուլերիին, և Տեր Հիսուս Քրիստոսը հայտնվեց: Նա հայտարարեց, որ Ինքն ընդունեց տաճարը, և խոստացավ օրհնություններ հեղել Սրբերի վրա (տես Վարդապետություն և Ուխտեր 110.1–10):



Այս այցելությունից հետո հայտնվեցին երկնային սուրհանդակները, որոնք հանձնեցին քահանայության բանալիները, որոնք անհրաժեշտ են վերջին օրերում Աստծո գործի իրականացման համար: Հետևյալ հատվածներում կարող եք նշել, թե ովքեր հայտնվեցին Ջոզեֆին և Օլիվերին և ինչ բանալիներ հանձնեցին Եկեղեցու ղեկավարների ձեռքը:



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 110.11:

Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը բացատրել է.



Մովսեսը կրում էր Իսրայելի հավաքման բանալիները: Նա առաջնորդեց Իսրայելին Եգիպտոսից դեպի Քանանի երկիրը: Այս տնտեսության մեջ դա նրա նշանակումն էր, որ գար և վերականգներ այդ բանալիները ժամանակակից հավաքման համար: (Joseph Fielding Smith, *Church History and Modern Revelation* [1953], 2:48)



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 110.12:

«Եղիաս անունով մարդը մահկանացու կյանքում, ըստ երևույթին, ապրել է Աբրահամի օրոք, ով հանձնեց Աբրահամի օրերի ավետարանը Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուլերիին: . . . Մենք չունենք հատուկ տեղեկություններ նրա մահկանացու կյանքի ծառայության մանրամասների մասին (Աստվածաշնչի բառարան, «Եղիաս»):

Երեց Բրյուս Ռ. Մակքոնկին բացատրել է, թե Եղիասն ինչպես հայտնվեց Կիրթլենդի Տաճարում:



Եղիասը հետ բերեց «Աբրահամի ավետարանը», Աբրահամի մեծ ուխտը, որով հավատարիմները ստանում են հավերժական աճի խոստումները, խոստումներ, որ սելեստիալ ամուսնության շնորհիվ նրանց հավերժական սերունդները կլինեն այնքան անհամար, որքան ավազը ծովափին, կամ այնքան բազմաթիվ, որքան աստղերն են երկնքում: (Bruce R. McConkie, "The Keys of the Kingdom," *Ensign*, May 1983, 22)



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 110.13-16:

Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Մմիթը գրել է.



Եղիային շնորհված այս կնքման գործությունը այն գործությունն է, որը կապում է ամուսիններին և կանանց, երեխաներին և ծնողներին՝ ժամանակի և հավերժության համար: Դա այն կապող գործությունն է, որն առկա է Ավետարանի յուրաքանչյուր արարողության մեջ: . . . Այդ գործության շնորհիվ են փրկությանը վերաբերվող բոլոր արարողությունները կապված կամ կնքված, և Եղիայի առաքելությունն էր գալ և վերականգնել դրանք: (Joseph Fielding Smith, *Elijah the Prophet and His Mission* [1957], 5)

Հին Կտակարանի մարգարե Եղիայի հայտնվելը կատարեց խոստումները, որոնք Տերը տվել էր Մաղաքիա մարգարեի միջոցով, կրկնել էր Մարգարե Ջոզեֆ Մմիթին՝ Մորոնիի միջոցով, երբ նա առաջին անգամ հայտնվեց Ջոզեֆի ննջասենյակում 1823թ. սեպտեմբերի 21-ին:



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 2 (տես նաև Մաղաքիա 4.5-6):



Խորհեք դասին Նախապատրաստվելիս

Դուք ինչպե՞ս եք օրհնվել քահանայության բանալիներով և զորությամբ, որոնք Մովսեսը, Եղիասը և Եղիան հանձնեցին Մարգարե Ջոզեֆ Մմիթին և Օլիվեր Քաուլտերիին Կիրթլենդի տաճարում: Ինչպիսի՞ն կլինե՞ր ձեր կյանքը, եթե այս քահանայության բանալիները չվերականգնվեին:

Ցանկանում ես ավելին: (Ոչ պարտադիր)

Որտեղի՞ց կարող եմ ավելին սովորել այն բանալիների կարևորության մասին, որոնք հանձնվեցին Ջոզեֆին և Օլիվերին՝ Կիրթլենդի տաճարում:



Գերագույն համաժողովի իր ելույթում
«Պատրաստեք հանդիպել Աստծուն»
(*Ensign* կամ *Liahona*, մայիս 2018,
114–17) Տասներկու Առաքյալների

Քվորումից Երեց Քվենթին Լ. Քուքը ուսուցանել է քահանայության բանալիների մասին, որոնք վերականգնել են Կիրթլենդի Տաճարում:

«Priesthood Keys Restored in the Kirtland Temple» (2:12) տեսանյութը պատկերում է Երկնային սուրհանդակների այցելությունները Կիրթլենդի տաճար և օրհնությունները, որոնք ստացել են այդ իրադարձությունից:

ԴԱՍ 16. ՈՒՍՈՒՑՉԻ ՆՅՈՒԹ

Կիրթլենդի տաճարը և քահանայության բանալիները

Տերը Սրբերին պատվիրեց տաճար կառուցել Կիրթլենդում (Օհայո) և խոստացավ, որ Ինքը կօժտի նրանց «բարձրից զորությամբ» (Վարդապետություն և Ուխտեր 95.8): Այս դասը կօգնի ուսանողներին քննարկել, թե նրանք ինչպես կարող են լիարժեք հնազանդվել տաճարին վերաբերող Տիրոջ պատվիրաններին: Դա կօգնի նրանց բացատրել նաև քահանայության բանալիների նշանակությունը, որոնք վերականգնվեցին Կիրթլենդի Տաճարում:

Ուսուցման առաջարկներ

Տերը օգնեց Սրբերին կատարել Իր պատվիրանը՝ կառուցել Կիրթլենդի Տաճարը:

Հրավիրեք ուսանողներին մտածել որևէ բանի մասին, որ Տերը Իր ծառաների միջոցով խնդրել է եկեղեցու անդամներին անել, որոնք դժվար կամ անհաղթահարելի են թվում: Հրավիրեք մի քանի ուսանողների դասարանի հետ կիսվել օրինակով:

Ցուցադրեք Կիրթլենդի Տաճարի նկարը: Հիշեցրեք ուսանողներին, որ 1830թ. դեկտեմբերին Տերը պատվիրեց Սրբերին կառուցել «Աստծո տուն» (Վարդապետություն և Ուխտեր 88.119):



Բացատրեք, որ Տիրոջ պատվիրանից ավելի քան հինգ ամիս անց եկեղեցու դեկավարները և անդամները դեռևս չէին սկսել տաճարի

կառուցումը: Դասարանով կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 95.1-3 և պարզեք, թե Տերն ի՞նչ ասաց Սրբերին՝ տաճարի կառուցման հետաձգման վերաբերյալ:

- Ձեր կարծիքով, տաճարի կառուցման հետաձգումը ինչո՞ւ կարող է համարվել «ցավագին մեղք» (հատված 3, տես նաև հատված 6):
- Ձեր կարծիքով, եթե Տերը խրատում էր Սրբերին տաճարը չկառուցելու համար, ինչպե՞ս էր դա հանդիսանում Նրա սիրո նշանը նրանց հանդեպ (տես հատված 1):

Ուսանողներին հանձնարարեք կարդալ Վարդապետություն և Ուխտեր 95.8-ը, փնտրելով մի պատճառ, որի համար Տերը ցանկանում էր տաճար կառուցել Կիրթլենդում:

Բացատրեք, որ *օժտել* նշանակում է շնորհ տալ ինչ-որ մեկին: Օժտումը, որի մասին խոսվում է Վարդապետություն և Ուխտեր 95 բաժնում, ներառում էր հոգևոր գիտելիքների և զորության պարգևներ: Տաճարի նվիրագործման արարողությունը, որը կիրառվում է այսօր, հայտնի դարձվեց միայն՝ 1842թ. Նավուում (Իլինոյս):

Ուսանողներից մեկին հրավիրեք բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 95.11-12 հատվածները:

- Ի՞նչ ճշմարտություն կարող ենք սովորել հատված 11-ում տրված Տիրոջ խոստումից: (Ուսանողների խոսքերի օգնությամբ գրատախտակին գրեք կամ ցուցադրեք նմանատիպ մի ճշմարտություն. **Երբ մենք ձգտում ենք պահել Տիրոջ**

պատվիրանները, Նա մեզ զորություն կտա կատարելու Իր կամքը:

- Տիրոջ այս խոստումը ինչո՞ւ կարող էր սփռված լինել Կիրթլենդի Սրբերի համար: (Տես Էլիզա Ռ. Մնոուի հայտարարությունը նախապատրաստական նյութի բաժին 1-ում:) Այս սկզբունքն ինչպե՞ս կարող է սփռվել ձեզ՝ ձեր կյանքում այսօր:
- Ի՞նչ զոհաբերություններ կատարեցին Սրբերը, որպեսզի հնազանդվեին Կիրթլենդի տաճարը կառուցելու Տիրոջ պատվիրանին: (Անհրաժեշտության դեպքում ուսանողներին խրախուսեք վերանայել նախապատրաստական նյութի բաժին 1-ը:)
- Տերն ինչպե՞ս զորություն տվեց և օգնեց Սրբերին, որ կառուցեն Կիրթլենդի Տաճարը:

Հանձնարարեք ուսանողներին վերանայել Նախագահ Թոմաս Ս. Մոնտոնի հայտարարությունը նախապատրաստական նյութի բաժին 1-ում և մտածել հետևյալի մասին. ներկայումս ինչպե՞ս են Սրբերն աջակցում տաճարների կառուցմանը: Ինչպիսի՞ զոհաբերություններ եմ ես կատարում, որն առնչվում է տաճարային երկրպագությանը:

- Ձեր կարծիքով, զոհաբերությունն ինչո՞ւ է հաճախ կապված տաճարային օրհնությունների հետ:

ԲԱՐԵԼԱՎԵԼ ՄԵՐ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Ուսանողներին մտածելու ժամանակ տվեք Երբ ուսանողներին ժամանակ է տրվում մտածելու իրենց փորձառությունների մասին, որոնք կապված են Հիսուս Քրիստոսի ավետարանով ապրելու հետ, Սուրբ Հոգին կարող է օգնել նրանց հիշել որոշ բաներ: Ժամանակ առ ժամանակ կիրառեք

այս մոտեցումը՝ հրավիրելով ուսանողներին գրանցել իրենց մտքերը, նախքան դրանցով կիսվելը, որն էլ կարող է հանգեցնել ավելի իմաստալի պատասխանների և կիսվելու ավելի մեծ պատրաստակամության:

Ուսանողներին ժամանակ տրամադրեք՝ մտածելու (գուցե գրելու) հետևյալի մասին՝ (1) զոհաբերությունները, որոնք նրանք կատարել են տաճարի հետ կապված, (2) օրհնություններ, որոնք նրանք արդեն ստացել են տաճարից, և (3) նրանք ինչ կարող են անել, որպեսզի ավելի ջանասիրաբար պահեն տաճարին վերաբերող Տիրոջ պատվիրանները:

Տերը ընդունեց Կիրթլենդի Տաճարը և քահանայության բանալիները հանձնվեցին Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին:

Նշում. Ուսանողները կուսումնասիրեն Վարդապետություն և Ուխտեր 109-ը՝ նվիրագործման աղոթքը Կիրթլենդի տաճարի համար դաս 20-ում:

Բացատրեք, որ Սրբերի զոհաբերությունների միջոցով Կիրթլենդի Տաճարի շինարարությունն ավարտվեց, ապա նվիրագործվեց 1836 թվականի մարտի 27-ին: Տիրոջ օժտման զորությունը Սրբերը ստացան տաճարի կառուցման պատվիրանին հնազանդվելու արդյունքում:

- Ի՞նչ հոգևոր դրսևորումներ զգացին Սրբերը Կիրթլենդի տաճարի նվիրագործման ժամանակ: (Խրախուսեք ուսանողներին հիշել այն, ինչ նրանք ուսումնասիրել են նախապատրաստական նյութի բաժին 2-ում:)

Բացատրեք, որ մեկ շաբաթ անց Փրկիչը և այլ երկնային սուրհանդակներ տաճարում հայտնվեցին Ջոզեֆ Սմիթին ու Օլիվեր Քաուդերիին: Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 110 բաժնի նախաբանը:

Ցուցադրեք հետևյալ պատկերը.



Դասարանով կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 110.1-10 հատվածները՝ փնտրելով Փրկիչի մասին նկարագրությունները և Ջոզեֆին ու Օլիվերին տված Նրա ուղերձը: Հրավիրեք ուսանողներին կիսվել, թե ինչն է առանձնահատուկ նրանց համար: Երբ ուսանողները կիսվեն, ժամանակ տվեք, որ նրանք քննարկեն նմանատիպ հարցեր.

- Ի՞նչ կարող ենք սովորել Տիրոջ մասին Իր նորակառույց տանը Նրա հայտնվելուց և Նրա ուսմունքներից:
- Տիրոջ խոսքերն ու խոստումները հատվածներ 7–8-ում ի՞նչ են ուսուցանում Նրա տաճարների սրբության մասին:
- Կիրթլենդի տաճարը ի՞նչ ազդեցություն կունենար աշխարհի մնացած մասի վրա (տես հատվածներ 9–10):

Հրավիրեք ուսանողներին կիսվել, թե նրանք ի՞նչ գիտեն այլ հրեշտակային սուրհանդակների մասին, որոնք հայտնվեցին Կիրթլենդի Տաճարում: Դուք կարող եք ցուցադրել հետևյալ ճշմարտությունը. **Տերը Կիրթլենդի տաճար ուղարկեց երկնային սուրհանդակներին, որպեսզի հանձնի**

քահանայության բանալիները, որոնք կարևոր են փրկության աշխատանքի համար:

Խնդրեք ուսանողներին նաև բացատրել բանալիները, որոնք այս սուրհանդակները հանձնեցին Ջոզեֆին և Օլիվերին: Անհրաժեշտության դեպքում, ուղղորդեք ուսանողներին նախապատրաստական նյութի բաժին 2-ը: Երբ ուսանողները կիսվեն, ցուցադրեք *Մովսես*, *Եղիսա* և *Եղիսա* անունները՝ համապատասխան բանալիների հետ:

- Ինչպե՞ս ենք մենք այսօր օրհնված Կիրթլենդի տաճարում հանձնված քահանայության բանալիների շնորհիվ:

Ցուցադրեք Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի հետևյալ խոսքերը և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



Կիրթլենդի Տաճարը յուրահատուկ տեղ է զբաղեցնում տաճարային շինարարության պատմության մեջ: Այն նման չէ այլ տաճարներին: Այն հիմնականում կառուցվել էր բանալիների վերականգնման համար: (Joseph Fielding Smith, *Doctrines of Salvation*, comp. Bruce R. McConkie, [1955], 2:74242)

Կիսվեք որևէ օրինակով այն հատուկ եղանակի մասին, որով Կիրթլենդի տաճարում հանձնված բանալիները օրհնել են ձեր կյանքը: Վկայեք, որ Մարգարե Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին հանձնված բանալիներն այսօր կրում և օգտագործում են Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի բոլոր անդամները՝ Եկեղեցու Նախագահության ղեկավարությամբ:

Հաջորդ անգամ

Բացատրեք, որ հաջորդ դասին պատրաստվելիս ուսանողները հնարավորություն կունենան ուսումնասիրել Եկեղեցու պատմության ամենադժվար ժամանակաշրջաններից մեկը, երբ Սրբերը բախվում էին փորձությունների, հալածանքի և դավաճանության: Հրավիրեք ուսանողներին ուսումնասիրել նախապատրաստական նյութը և պատրաստ զալ դասարան՝ կիսվելու սկզբունքներով, որոնք կարող են օգնել նրանց Աստծո հանդեպ ունեցած հավատքով պայքարել ընդդիմության և դժվարությունների դեմ:



ԴԱՍ 17. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Հավատարիմ մնալ ընդդիմության և տառապանքի ժամանակ

Մենք բոլորս էլ հանդիպում ենք փորձառությունների, որոնք փորձում են մեր հավատը: Կյանքում մեր մարտահրավերներից մեկն այն է, որ մենք մնանք համարձակ և հաստատուն Աստծո հանդեպ, երբ բախվենք այդ ծանր ժամանակների հետ: Երբ ուսումնասիրեք հետևյալ նյութը, ուշադրություն դարձրեք այն սկզբունքներին, որոնք կառաջնորդեն ձեզ հավատքի փորձությունների ժամանակ:

ԲԱԺԻՆ 1

1830 թվականների վերջին Սրբերն ի՞նչ դժվարություններ ունեցան Կիրթլենդում (Օհայո):

«Եկեղեցու ամենաուժեղ տղամարդկանց ծնկները երերացին», - ասել է Բրիգամ Յանգը 1837 թվականին Եկեղեցուն սպառնող ճգնաժամի մասին (*Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Զոգենֆ Սոփթ* [2007], 317): Միայն անցյալ տարի Սրբերը Կիրթլենդի տաճարի նվիրագործման ժամանակ վայելում էին խաղաղություն ու հորդող հայտնություն: Բայց նվիրագործմանը հաջորդող ամիսներին «շահարկման ոգին», որը տիրում էր ազգի վրա, նույնպես սկսեց գերակշռել Սրբերի շրջանում: Կիրթլենդը

«թվում էր, թե մեծապես բարգավաճում էր», - գրել է Հիբեր Ս. Քիմբելը, - «և կարծես թե բոլորը վճռականորեն ձգտում էին հարստանալ. իմ կարծիքով դրանք արհեստական կամ երևակայական հարստություններ էին: Բարգավաճման այդ երևույթը Սրբերից շատերին ստիպում էր հավատալ, որ եկել է ժամանակը, որպեսզի Տերը նրանց հարստացնի երկրի գանձերով, և այդ հավատքը ոգևորում էր նրանց այնպիսի մեծ ջանք գործադրել, որ Տասներկուսից երկուսը՝ Լիման Է. Ջոնսոնը և Ջոն Ֆ. Բոյթոնը, գնացին Նյու Յորք, գնեցին 20,000 դոլար արժողությամբ ապրանք և առևտուր սկսեցին՝ զգալի գումարներ վերցնելով Պոլլի Վոչից և Բոստոնի և նրա շրջակայքում գտնվող այլ Սրբերից, որը նրանք երբեք հետ չվճարեցին» (in Orson F. Whitney, *The Life of Heber C. Kimball* [1888], 111–12):

Հպարտության, ուրացության և թերություններ գտնելու ոգին սկսեց տարածվել Սրբերից շատերի մեջ: Էլիզա Ռ. Մնռուն հիշում է.



Շատերը, ովքեր ցանկացած ծառայության մեջ խոնարհ ու հավատարիմ էին գտնվել, իրենց հոգում դառնում էին գոռոզ և բարձրացնում իրենց սրտերի հպարտությունը: Մինչ Սրբերն արբած էին աշխարհի սիրուց և ոգուց, Տիրոջ Հոգին հեռացավ նրանց սրտերից: *(Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ (2007), 317)*

Չնայած բարգավաճման պատրանքին, Եկեղեցին ֆինանսական մեծ կարիքի մեջ էր՝ տաճար կառուցելու և հող գնելու պատճառով, որի արդյունքում Եկեղեցին կուտակել էր տասնյակ հազարավոր դոլարների պարտք: Այժմ, Կիրթլենդում և Միսսուրիում Սրբերը դժվարանում էին հետևել Տիրոջ հրամանին՝ ձեռք բերելով ավելի շատ հողեր և կառուցելով նոր բնակավայրեր Հեռավոր Արևմուտքում և Ջեքսոն գավառում: Ջոզեֆ Սմիթը և Եկեղեցու մյուս ղեկավարները, փորձելով մեղմել Եկեղեցու ֆինանսական կարիքները, ստեղծեցին մի փոքր բանկ, որը կոչվում էր Կիրթլենդի անվտանգության ընկերություն: Մի քանի Սրբեր գնեցին բաժնետոմսեր նոր բանկում, այդ թվում՝ Ջոզեֆը: Շատ Սրբերը հավատում էին, որ ապագայում կունենան բարգավաճում և հարստություն, եթե հավատարիմ լինեն:




1837 թվականի սկզբում լայն տարածում գտած տնտեսական ճգնաժամի հետևանքով շատ բանկեր փակվեցին ողջ Միացյալ Նահանգներով մեկ: Համազգային տնտեսական խուճապը, ինչպես նաև ոչ անդամ մի շարք քաղաքացիների ծանր ընդդիմությունը, նպաստեցին Կիրթլենդի անվտանգության ընկերության ձախողմանը՝ այն բացելուց յոթ ամիս անց: Բանկի երկու հարյուր ներդրողներ

կորցրին գրեթե ամեն ինչ, իսկ Ջոզեֆ Սմիթն ունեցավ ամենամեծ կորուստները:

Չնայած Սրբերի մեծամասնությունը դրսևորեց հավատք, հավատարիմ մնալով իրենց վկայություններին այդ փորձության ընթացքում, շատերը, ներառյալ՝ Եկեղեցու որոշ առաջնորդներ, մեղադրում էին Ջոզեֆ Սմիթին իրենց ֆինանսական խնդիրների մեջ: Ումանք պնդում էին, որ նա ընկած մարգարե է և ցանկանում էին նրա տեղում Եկեղեցու նոր Նախագահ նշանակել:

ԲԱԺԻՆ 2

Ի՞նչ կարող եմ անել, որպեսզի ամուր և հաստատուն մնամ, երբ իմ հավատքը փորձվում է:



1837 թվականի սկզբին Թոմաս Բ. Մարշը, որը Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահն էր, օգնում էր առաջնորդել Եկեղեցին Միսսուրիում: Իմանալով, որ քվորումի որոշ անդամներ քննադատել են Ջոզեֆ Սմիթին և սկսել են վիճել իրար հետ, Թոմասը գնաց Կիրթլենդ (Օհայո)՝ հույս ունենալով միավորվել Տասներկուսին:

Կիրթլենդի ճանապարհին Թոմասն իմացավ, որ Մարգարեն քվորումի երկու անդամներին կանչել է ծառայելու Անգլիայի միսիայում: Թոմասը մտածում էր, որ որպես քվորումի նախագահ, իր պարտականությունն է եղել նրանց միսիա կանչելը: Երբ Թոմասը հասավ Կիրթլենդ, նա իր մտաճանաչությունները կիսեց Ջոզեֆ Սմիթի հետ, և Մարգարեն հայտնություն ստացավ Թոմասի խորհրդով (see *Revelations in Context* [2016], 55–57):

Երբ կարդում եք Թոմասին ուղղված Տիրոջ խոսքերը, մտածեք, թե այս հատվածից ինչ խորհուրդներ

և ճշմարտություններ կարող են օգնել այն մարդուն, ով դժվարություններ ունի իր հավատքի մեջ: Կարող եք ընդգծել ձեր գտած բառերը:



Ուսումնասիրեք դասին նախապատրաստվելիս

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր
112.10, 12-15-ը:



Մտածեք դասին նախապատրաստվելիս

Այդ հայտնության մեջ գրված ո՞ր սկզբունքները կարող են օգնել ձեզ մնալ ամուր և հաստատուն ձեր հավատքի փորձությունների ժամանակ:

ԲԱԺԻՆ 3

Ինչպե՞ս կարող են
ձախորդությունները
պատրաստել մեզ
մեր ամենակարևոր
ուսումնառության համար:

Կիրթենդի անդամներից մի քանիսը, ովքեր լքել էին Եկեղեցին, փորձում էին սպանել Ջոզեֆ Մմիթին: Տիրոջ կողմից հայտնության միջոցով նախազգուշացվելուց հետո, նա և Միդնի Ռիգդոնը հեռացան մի գիշերվա ընթացքում և ուղևորվեցին Միսսուրիի նահանգի Ֆար Վեսթ՝ ժամանելով 1838 թվականի մարտին: Այդ տարվա ամռանը և աշնանը Միսսուրիի բնակիչների և Եկեղեցու անդամների միջև թյուրիմացությունները և լարվածությունը հանգեցրեցին զինված բախման Միսսուրիի հյուսիսում: Հենվելով այս հակամարտության մասին չափազանցված լուրերի վրա, Միսսուրիի նահանգապետը բնաջնջման հրամանագիր ստորագրեց՝ Սրբերին նահանգից ուժով հեռացնելու մասին: Դրանից կարճ ժամանակ անց, 1838 թվականի

նոյեմբերին, Մարգարե Ջոզեֆ Մմիթը և Եկեղեցու այլ ղեկավարներ ձերբակալվեցին և նրանց կեղծ մեղադրանք ներկայացվեց պետության դեմ դավաճանության մեջ և, ի վերջո, բանտարկվեցին Միսսուրիի նահանգի Քլեյ գավառում գտնվող Լիբերթի բանտում:



Միսսուրիի նահանգի Լիբերթիում գտնվող Լիբերթի բանտի պատմական լուսանկարը:

Կյանքը բանտում վիատեցրեց Ջոզեֆին: Հալածողները նայում էին ճաղավանդակների միջով, որպեսզի ծաղրեն ու անպարկեշտ բառեր ասեն նրան: Նա և մյուս բանտարկյալները հաճախ ուտելու այլ բան չունեին, բացի եգիպտացորենի մի փոքր հացից: Դեկտեմբերից ի վեր անկողնու համար օգտագործված ծղոտը նստել էր և հարմարավետություն չէր ապահովում: Երբ նրանք կրակ վառեցին, որպեսզի փորձեն տաքանալ, բանտը լցվեց ծխով և խեղդեց նրանց: . . .

Իր աստվածային կոչը ստանալուց ի վեր, Ջոզեֆն առաջ էր մղվել ընդդիմության դեմ՝ ձգտելով հնազանդվել Տիրոջը և հավաքել Սրբերին: Եվ այնուամենայնիվ, տարիների ընթացքում բարգավաճելուց հետո, Եկեղեցին այժմ կարծես թե գտնվում էր փլուզման եզրին:

Ամբոխը Սրբերին դուրս էր վռնդել Ջեքսոն գավառի Սիոնից: Ներքին տարաձայնության պատճառով Կիրթենդում Եկեղեցին պառակտվել էր, իսկ տաճարը հանձնել պարտատերերի ձեռքը: Իսկ այժմ, իրենց հարևանների հետ սարսափելի

պատերազմից հետո Սրբերը ցրվեցին Միսիսիպի գետի արևելյան ափի երկայնքով՝ վիատված և անօթևան:

[Ջոզեֆը զգում էր,] որ Սրբերը լավ մարդիկ էին, ովքեր սիրում էին Աստծուն: Նրանք արժանի չէին, որ դուրս քշվեին իրենց տներից, ծեծվեին և մեռնեին: (Սրբեր. Հիսուս Քրիստոսի Եկեղեցու պատմությունը վերջին օրերում, հ. 1, ճշմարտության չափանիշը, 1815–1846 [2018], 384-85):



Թիկունքում գտնվող Եկեղեցու ղեկավարներին և Սրբերին ուղղված իր նամակում Ջոզեֆն աղոթքով աղաղակեց. «Ո՛վ Աստված, որտե՞ղ ես դու: . . . Որքա՞ն պիտի քո ձեռքը հետ պահվի, և քո աչքը, . . . հավերժական երկինքներից նայի քո ժողովրդի և քո ծառաների հանդեպ անարդարություններին, և քո ականջը թափանցեն նրանց աղաղակները:» (Վարդապետություն և Ուխտեր 121.1–2):

Մտաբերեք մի ժամանակ, երբ ձախորդություն եք ունեցել և օգնության համար աղաղակել եք առ Աստված: Երբ ուսումնասիրեք հետևյալ խոսքերը, որոնք Տերը հայտնեց Ջոզեֆին Լիբերթիի բանտում, պատկերացրեք, որ Տերը դրանք ձեզ է ասում: Կարող եք նշել այն արտահայտությունները և սկզբունքները, որոնք նշանակալից են ձեզ համար:



Ուսումնասիրեք դասին նախապատրաստվելիս

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 121.7–10 և Վարդապետություն և Ուխտեր 122.7–9:



Գրի առեք ձեր մտքերը

Ձեր օրագրում կամ տրամադրված տեղում գրեք այն բառերն ու սկզբունքները, որոնք վերոնշյալ հատվածներում տպավորել են ձեզ: Պատրաստ եղեք դասարանի հետ կիսվելու ձեր սովորածով: Ինչպե՞ս եք անձամբ զգացել այն սկզբունքների ճշմարտացիությունը, որոնք Տերն ուսուցանեց Ջոզեֆ Սմիթին Լիբերթիի բանտում:

Ցանկանո՞ւմ ես ավելին: (Ոչ պարտադիր)

Ինչո՞ւ Տասներկու Առաքյալների Քվորումի վաղ օրերի անդամներից մի քանիսը հեռացան Եկեղեցուց:

If They Harden Not Their Hearts (11:20) տեսանյութը պատմում է Լիման Է. Ջոնսոնի և Թոմաս Բ. Մարշի փորձառությունները, որոնք, ի վերջո, լքեցին Եկեղեցին և այնուհետև միացան շատ տարիներ անց:

Ինչպե՞ս կարող եմ հաստատուն մնալ հավատքի փորձության ժամանակ:

Ձեր հավատքի փորձությունը (1:01) տեսանյութում Տասներկու Առաքյալների Քվորումից Երեք Նիլ Լ. Անդերսենը բացատրում է, թե ինչպես

կարող ենք կողմնորոշվել մեր հավատքի փորձությունների ժամանակ: Նրա ամբողջ ելույթը՝ «Ձեր հավատքի փորձությունը» (*Ensign* կամ *Լիաիոնա*, նոյեմբեր 2012, 39–42), կարող էք գտնել ChurchofJesusChrist.org կայքում:

The Refiner’s Fire (5:02) տեսանյութը պատմում է մի կնոջ հավատքի մասին, ով թույլ տվեց, որ իր փորձություններն օգնեն իրեն ավելի շատ նմանվել Փրկիչին:

Որտեղի՞ց կարող եմ ավելին սովորել Կիրթլենդի և Լիբերթի բանտի իրադարձությունների մասին:

Կիրթլենդի և Լիբերթի բանտում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ որոշ

մանրամասներ, որոնք փորձեցին Սրբերի հավատքը, կարելի է գտնել *Սրբեր*, գրքի, հատոր 1, 23–25 և 31–33 բաժիններում:

1839 թվականին Լիբերթի բանտից Ջոզեֆի նամակների ամբողջ տեքստը կարող էք կարդալ Ջոզեֆ Սմիթի գրվածքներ կայքում. Եկեղեցուն և Էդվարդ Պատրիցին ուղղված նամակ, մարտի 20, 1839թ. Եկեղեցուն և Էդվարդ Պատրիցին ուղղված նամակ, շուրջ մարտի 22, 1839թ.:

ԴԱՍ 17. ՈՒՍՈՒՑՁԻ ՆՅՈՒԹ

Մնալ հավատարիմ ընդդիմության և տառապանքի ժամանակ

1837-1839 թվականներին ուրացության ոգին էր տիրում Սրբերի շրջանում՝ Կիրթլենդում (Օհայո), իսկ Միսսուրիում՝ սաստիկ հալածանքներ: Այս դասը կօգնի ուսանողներին որոշել, թե Նրանք ինչպես կարող են դժվարին և ընդդիմության ժամանակ դիմել, վստահել և ավելի լիարժեք ապավինել Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին:

Ուսուցման առաջարկներ

Օհայո նահանգի Կիրթլենդի որոշ անդամներ լքեցին Եկեղեցին, իսկ մյուսները հավատարիմ մնացին:

Դասը սկսեք՝ ուսանողներին խնդրելով նկարագրել, թե իրենց ճանաչած մարդիկ ինչպես են արձագանքել իրենց կյանքի դժվար փորձություններին: Կարող եք նաև հարցնել, թե նրանք ինչ են սովորում նման օրինակներից:

Հրավիրեք ուսանողներին խորհել այն փորձությունների մասին, որոնք նրանք կամ իրենց սիրելիները այժմ ունեն, և մտածեն, թե Տերն ինչ կարող է սովորեցնել նրանց այսօր նման փորձություններին արձագանքելու վերաբերյալ:

- Ի՞նչ փորձություններ և դժվարություններ են ունեցել վաղ օրերի Սրբերն Օհայոյում: (Որպեսզի օգնեք ուսանողներին վերհիշել պատմությունը, կարող եք վկայակոչել իրենց նախապատրաստական նյութը:) Ի՞նչ կարող ենք սովորել Օհայոյում փորձությունների արդյունքում տուժած մարդկանցից:

Հիշեցրեք ուսանողներին, որ 1837 թվականի ամռանը Թոմաս Բ. Մարշը՝Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահը, Միսսուրիից ուղևորվեց Կիրթլենդ՝ հանդիպելու այդ քվորումի անդամներին և մարգարե Ջոզեֆ Սմիթի հետ:

- Որո՞նք էին Թոմաս Բ. Մարշի մարտահրավերներն ու մտահոգությունները Կիրթլենդ ժամանելուց առաջ:

Բացատրեք, որ, երբ Թոմաս Բ Մարշը և Ջոզեֆ Սմիթը հանդիպեցին և լուծեցին իրենց տարաձայնությունները, Մարգարեն Թոմասին վերաբերող հայտնություն ստացավ Տիրոջից: Հանձնարարեք

ուսանողներին մտքում կարդալ կամ կրկնել Վարդապետություն և Ուխտեր 112.10–15 հատվածները և ուշադրություն դարձնել, թե Տերն ինչ ցուցումներ և սկզբունքներ ուսուցանեց Թոմաս Բ. Մարշին և Տասներկուսի Քվորումի մյուս անդամներին: Հրավիրեք ուսանողներին կիսվել և քննարկել իրենց կարդացած նյութով:

Անհրաժեշտության դեպքում, օգնեք ուսանողներին հետևյալ հարցերի միջոցով բացահայտել և քննարկել 13-րդ հատվածի սկզբունքը:

- Ի՞նչ խոստացավ Տերը Տասներկուսի այն մարդկանց, ովքեր չեն խոստացնի իրենց սիրտը, երբ իրենց հավատը փորձվի: (Ուսանողների պատասխանից հետո ցույց տվեք հետևյալ սկզբունքը կամ գրեք այն գրատախտակին. **Եթե չխոստացնենք մեր սրտերը, երբ մեր հավատը փորձվի, Տերը մեզ հետ կլինի և կօգնի ամրապնդել մեր դարձը:**)
- Ինչպե՞ս կարող են ոմանք կարծրացնել իրենց սրտերը, երբ իրենց հավատը փորձվում է: Ի՞նչ վտանգներ է դա պարունակում:
- Երբ եք ականատես եղել, որ ինչ-որ մեկը հավատի փորձությանը պատասխանել է փափուկ սրտով և բաց մտքով: Ի՞նչ փոփոխություն եք նկատել այդ մարդու մոտ, երբ նա այդ ձևով է արձագանքել հավատի փորձությանը:

Մարգարե Ջոզեֆ Սմիթն օրհնվեց իր հավատարմության համար Լիբերթի բանտում իր փորձությունների ժամանակ:

Ցուցադրեք հետևյալ հարցը. *Ինչո՞ւ է Աստված թույլ տալիս, որ վատ բաներ պատահեն լավ մարդկանց հետ:*

Հարցրեք ուսանողներին, թե նրանք երբևէ մտածե՞լ են այդ հարցի շուրջ կամ որևէ մեկը տվե՞լ է նրանց այդ հարցը: Բացատրեք, որ Ջոզեֆ Սմիթը նմանատիպ մի հարց տվեց՝ Միասուրի նահանգի Լիբերթիում անարդարացիորեն բանտարկվելուց հետո: Ջոզեֆի փորձառությունը քննարկելու ժամանակ հրավիրեք ուսանողներին մտածել, թե ինչպես կպատասխանեին, եթե իրենց ընկերն այդ հարցը տար:

Ցուցադրեք Լիբերթի բանտի հետևյալ նկարները.



Հանձնարարեք ուսանողներին պատմել այն իրադարձությունները, որոնք հանգեցրին Լիբերթի բանտում Ջոզեֆ Սմիթի բանտարկությանը: (Անհրաժեշտության դեպքում ուսանողներին խորհուրդ տվեք վերանայել նախապատրաստական նյութի բաժին 3-ը:)

- Ինչպիսի՞ն էին պայմանները Ջոզեֆ Սմիթի և մյուսների համար Լիբերթի բանտում:

Հիշեցրեք ուսանողներին, որ Մարգարե Ջոզեֆ Սմիթն ավելի քան չորս ամիս անցկացրեց Լիբերթի բանտում ցրտաշունչ ձմռան ժամանակ: Ուսանողներից մեկին հրավիրեք բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 121.1-3 հատվածները: Դասարանին հրավիրեք հետևել՝ ուշադրություն դարձնելով, թե Մարգարեն ինչ հարցեր տվեց այդ աղոթագիր նամակի մեջ:

- Ի՞նչ են այդ հարցերը բացահայտում այդ ժամանակ Ջոզեֆ Սմիթի զգացմունքների մասին:
- Ինչպե՞ս կարող էր այդ ժամանակահատվածը Ջոզեֆի հավատքի փորձություն լինել:

Հիշեցրեք ուսանողներին, որ բանտում գտնվելու ընթացքում Ջոզեֆ Սմիթը երկու նամակ է ուղարկել Եկեղեցուն: Ուսանողներին բաժանեք փոքր խմբերի: Հրավիրեք նրանց վերանայել կամ կարդալ Վարդապետություն և Ուխտեր 121.7-10, 122.7-9-ը, ապա կարող են կիսվել այն արտահայտություններով և սկզբունքներով, որոնք նշանակալից են նրանց համար:

Բավարար ժամանակ տրամադրելուց հետո հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել այն արտահայտությունով կամ սկզբունքով, որոնք նրանք քննարկել են իրենց խմբերի հետ: Կարող եք ցուցադրել այդ սկզբունքները կամ արտահայտությունները, կամ կարող եք գրել դրանք գրատախտակին: Ուսանողների բացահայտած որոշ սկզբունքներ կարող են արտահայտվել կամ ամփոփվել հետևյալ եղանակներով. **Երբ մենք դիմենք Տիրոջը և ապավինենք Նրան մեր փորձությունների ժամանակ, Նա կօրհնի մեզ հայտնությամբ, հանգստությամբ և քաջալերանքով: Եթե մնանք հավատարիմ, տառապանքներն ու ձախորդությունները մեզ փորձառություն կտան և կլինեն մեր օգտի համար:**

- Ինչպե՞ս կարող են ձեր կողմից բացահայտած սկզբունքներն ու արտահայտություններն օգնել մեկին, ով ձախորդության կամ հավատքի փորձության մեջ է:

Ձեր քննարկման ընթացքում կարող եք ցուցադրել Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի

Ռ. Հովհաննիսյանի հետևյալ խոսքերը և հրավիրել որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



Տիրոջ հետ դուք կարող եք ունենալ սրբազան, հայտնությամբ ստացված, խորը ուսուցողական փորձառություն *ձեր կյանքի ամենաթշվառ փորձությունների ժամանակ*՝ ամենավատ վիճակներում, երբ կրում եք ամենախոցելի անարդարությունները, երբ բախվում եք ամենատառապալից տարաձայնություններին և դիմադրությանը, որը դուք երբևէ ունեցել եք: . . .

. . . 1838–39 թվականների ձմռան դասերը մեզ սովորեցնում են, որ յուրաքանչյուր փորձառություն կարող է դառնալ փրկագնող մի փորձառություն, եթե մենք այդ դժվարության միջով անցնելիս մնանք կապված մեր Երկնային Հոր հետ: Այս դժվարին դասերը մեզ սովորեցնում են, որ մարդու ծայրահեղ պահերն Աստծո համար հնարավորություն են, և եթե մենք լինենք խոնարհ և հավատարիմ, եթե մենք հավատանք և չանիծենք Աստծուն մեր խնդիրների համար, Նա կարող է մեր կյանքի անարդար, անմարդկային և թուլացնող բանտերը վերածել տաճարների, կամ գոնե դարձնել այնպիսի մի պայման, որը կարող է բերել մխիթարություն և հայտնություն, աստվածային ընկերակցություն և խաղաղություն: (Jeffrey R. Holland, “Lessons from Liberty Jail,” *Ensign*, Sept. 2009, 28)

- Ձեր կարծիքով ի՞նչ է նշանակում է, որ փորձությունները կարող են դառնալ «փրկագնող» մի փորձառություն:
- Կյանքի փորձություններին հավատարմորեն դիմանալով, ինչպե՞ս կարող ենք ավելի

նմանվել մեր Երկնային Հորը և մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսին:

- Որո՞նք են այն եղանակները, որոնցով դուք դիմել եք և լիովին ապավինել եք Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին այնպիսի փորձությունների ժամանակ, որոնք փորձել են ձեր հավատքը: Ի՞նչ եք սովորել դրա արդյունքում:

Հրավիրեք ուսանողներին դասընկերոջ հետ կիսվել, թե ինչպես կպատասխանեն ձեր կողմից նախկինում ցուցադրված այն հարցին, թե ինչու է Աստված թույլ տալիս, որ վատ բաներ պատահեն իր զավակների հետ:

Այնուհետև, հրավիրեք ուսանողներին ավելի վաղ քննարկված սուրբ գրությունների հատվածներից ընտրված բառերով ու արտահայտություններով կիսվել այն վայրերում, որտեղ նրանք կարող են հաճախ տեսնել դրանք, անգիր անել կամ կիսվել դրանցով սոցիալական լրատվամիջոցներում: Վկայեք, որ եթե մեր փորձությունների ժամանակ դիմենք Փրկիչին, Նա մեզ կտա խաղաղություն, կմխիթարի մեզ և կամրապնդի մեր դարձը:

Հաջորդ անգամ

Ավարտելով դասը, բացատրեք, որ այսօր աշխարհում կանանց ամենամեծ կազմակերպություններից մեկը՝ Միոփոդ Միությունը, հիմնադրվել է 1842 թվականին Մարգարե Զոզեֆ Սմիթի կողմից: Ասացեք ուսանողներին, որ հաջորդ դասին նախապատրաստվելիս նրանք հնարավորություն կունենան ավելի իմանալ այն մասին, թե ինչպես և ինչու է ստեղծվել այս համաշխարհային կազմակերպությունը: Քաջալերեք ուսանողներին, որ պատրաստ լինեն՝ կիսվելու իրենց սովորածով:



ԴԱՍ 18. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Դաս 18. Վերջին Օրերի Սրբերի կանայք և Սփոփող Միությունը

Սփոփող Միության մասին խոսելիս Մարգարե Զոգեֆ Սմիթը հայտարարել է. «Եկեղեցին չէր լինի կատարելապես կազմակերպված, մինչև կանայք այսպես չկազմակերպվեին» (*Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Զոգեֆ Սմիթ* [2007], 479): Մտածեք այն մասին, թե ինչ ուղերձ է այս հայտարարությունը հղում աշխարհին՝ Տիրոջ եկեղեցում կանանց գտնվելու դերի վերաբերյալ: Երբ ուսումնասիրեք այս նյութերը, խորհեք, թե Վերջին Օրերի Սրբերի կանանց և Սփոփող Միության աշխատանքն ինչ կարևոր նշանակություն ունի Հիսուս Քրիստոսի վերականգնված եկեղեցում:

ԲԱԺԻՆ 1

Ինչպե՞ս են Վերջին Օրերի Սրբերի կանայք կառուցում Աստծո արքայությունը:



Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Զեյմա Ի. Թալմիջը մի առիթով ասել է «Կանանց և կանացիության ամենամեծ պաշտպանն աշխարհում Հիսուս Քրիստոսն է» (in *Daughters in My Kingdom* [2011], 3):

Տասներկու Առաքյալների Քվորումից Նախագահ Մ.Ռասսել Բալլարդն ուսուցանել է.



Մեր քույրերը միշտ եղել են Տիրոջ աշխատանքի ամենակարևոր և բաղկացուցիչ մասը: Հավատարիմ կանայք աշխարհի հիմնադրումից առաջ արհաբար աշխատել են ճշմարտության և արդարության գործում: Մեր տնտեսությունը չի մնացել առանց իր հերոսուհիների: (M. Russell Ballard, "Women of Righteousness," *Ensign*, Apr. 2002, 69)

Մարգարե Զոգեֆ Սմիթի կինը՝ Էմմա Սմիթը, Վերջին Օրերի սուրբ կնոջ օրինակ է ծառայում, ով կարևոր դեր է ունեցել Վերականգնման գործում:

Զոգեֆ Սմիթին տրված հայտնության մեջ Տերն Էմմային կոչեց «Ընտրյալ Տիկին» (տես Վարդապետություն և Ուխտեր 25.3): Երբ կարդաք այդ հայտնության որոշ մասեր, ուշադրություն դարձրեք, թե Տերն ինչ պարտականություններ և ցուցումներ տվեց Էմմային: Ուշադրություն դարձրեք, որ 16-րդ հատվածում Տերը հայտարարում է, որ Էմմային տված Իր խորհուրդը վերաբերում է նաև բոլորիս:



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 25.5–7, 10–11, 13, 15–16:

Երբ միասին էին, Էմման և Զոգեֆը մեծ փորձություններ են կրել: Նրանք իրար նաև մեծ սփոփանք և ուրախություն են պարգևել: Մնալով հավատարիմ իր կոչմանը, Էմման մեծ սփոփանք է եղել Զոգեֆի համար, քաջալերելով և մխիթարելով նրան հալածանքների և փորձությունների միջով անցնելիս: Հիշելով այն մասին, երբ Էմման այցելել էր նրան, մինչ նա թաքնվում էր վտանգից, Մարգարեն գրել է. «Նորից նա այստեղ է, նույնիսկ յոթերորդ դժվարության պահին, չհուսահատված, ամուր և չտատանվող, անփոփոխ, քնքուշ Էմման» («Journal, December 1841–December 1842,” 135, josephsmithpapers.org):



Էմման մի ժամանակ ծառայում էր որպես Զոգեֆի դպիր՝ օգնելով թարգմանել Մորմոնի Գիրքը: Իր կյանքի ընթացքում նա համարձակորեն վկայել է Մորմոնի Գիրքի մասին: Մահից անմիջապես առաջ նա ասել է իր որդուն. «Իմ համոզմունքն այն է, որ Մորմոնի Գիրքն աստվածային ստույգություն ունի. Ես դրանում ոչ մի կասկած չունեմ» (Emma Smith, in “Last Testimony of Sister Emma,” *Saints’ Herald*, Oct. 1, 1879, 290): Հնազանդվելով Տիրոջ պատվիրանին, Էմման նաև մշակեց Եկեղեցու առաջին հիմնարանը:

Էմման ուսուցանում էր օրինակով. «Նյու Յորքում նա հազուստներ կարեց . . . միսիոներների համար, ովքեր կանչված էին բարոգել ավետարանը: . . . Կիրթլենդում նա աշխատում էր ուրիշ կանանց հետ՝ հավաքելով վերմակներ, ուտելիք և հագուստներ Միոնի ճամբարից գնացողների հետ Միսսուրիի չքավոր Սրբերին տանելու համար: Նա օգնեց ճաշեր պատրաստել և գուլպաներ, անդրավարտիքներ և բաճկոններ կարել Կիրթլենդի Տաճարը կառուցող բանվորների համար: Նա այնքան շատ տաճարի վրա աշխատող բանվորների էր ընդունել իր տուն որպես ապրողներ, որ Զոգեֆն ու նա քնում էին հատակին: Նավուի վաղ օրերին նա նվիրեց իր ժամանակի մեծ մասը և ուշադրությունը խնամելով բազմաթիվ մալարիայով հիվանդների, որոնք իր տնից դուրս Միսսիսիպի գետի ափին ճամբար էին խփել: Այս ձևով և այլ ուղիներով նա օրինակ էր հանդիսանում այն ծառայության, որ տրվում էր շատ քույրերի կողմից իր օրերում» (*Ուսումնաբեր. Զոգեֆ Սմիթ*, 478):



Մտածեք դասին Նախապատրաստվելիս

Մտածեք ձեր ծանոթ որևէ օրինակելի կնոջ մասին, ով իր ազդեցությունը, ձայնը և կարողությունն օգտագործում է, որպեսզի նշանակալից ներդրում ունենա Աստծո արքայությունը կառուցելու գործում: Ինչպե՞ս է նա կառուցում Աստծո արքայությունը մեր օրերում:

ԲԱԺԻՆ 2

Ի՞նչ եզակի առանձնահատկություն կա Սփոփող Միության կազմավորման մեջ:

1842 թվականի զարնանը, Մրբերը իրենց չքավորության մեջ դժվարությամբ կառուցում էին Նավուի Տաճարը: Քույրերից շատերը ցանկանում էին ավելին անել, որպեսզի օգնեն: Սառա Քիմբալի և Մարգարեթ Քուքի գլխավորությամբ, մի խումբ քույրեր հավաքվել էին կազմելու կանանց նոր միության սահմանադրությունն ու կանոնադրությունը, որպեսզի հագուստ կարեն տաճարի աշխատողների համար: Երբ նրանք խորհրդակցեցին Մարգարե Ջոզեֆ Սմիթի հետ, նա ասաց, որ նրանց սահմանադրությունը «լավագույնն էր իր երբևէ տեսածներից» (*Ուսմունքներ. Ջոզեֆ Սմիթ*, 479): «Բայց», ասաց նա. «սա այն չէ, ինչ դուք եք ուզում: Ասեք քույրերին նրանց զոհաբերությունն ընդունվում է Տիրոջ կողմից և նա ավելի լավ բան ունի նրանց համար: . . . Ես հրավիրում եմ նրանց բոլորին հանդիպել ինձ հետ և մի քանի եղբայրների հետ . . . և ես կանանց կկազմավորեմ քահանայության ներքո և քահանայության օրինակով» (in *Daughters in My Kingdom*, 12): Էլիզա Ա. Մնոուն պատմել է, որ Ջոզեֆ Սմիթը Սփոփող Միությանն ասել է, որ «նույն կազմակերպությունը գոյություն է ունեցել եկեղեցում հնում» (in *Daughters in My Kingdom*, 7):



Սփոփող Միության նախկին գերագույն նախագահ Քույր Ջուլի Բ. Բեքն ուսուցանել է, թե ինչ է

նշանակում, երբ ասում ենք, որ այն կազմավորված է քահանայության օրինակով:



Սփոփող Միությունը եզակի է, քանի որ այն կազմավորվել է «քահանայության օրինակով» [Joseph Smith, quoted in Sarah M. Kimball, "Auto-biography," *Woman's Exponent*, Sept. 1, 1883, 51]: . . . Մենք գործում ենք քահանայության օրինակով, որը նշանակում է, որ մենք ձգտում, ստանում և գործում ենք հայտնության միջոցով. որոշումներ ենք կայացնում խորհուրդներում և մտահոգվում ու մեկ առ մեկ հոգ ենք տանում անհատների մասին: Մեր նպատակը քահանայության նպատակն է. պատրաստվել հավերժական կյանքի օրհնություններին՝ կապելով և պահելով ուխտեր: Հետևաբար, քահանայություն կրող մեր եղբայրների նման, մերը նույնպես փրկության, ծառայության և սուրբ ժողովուրդ դառնալու աշխատանք է: (Ջուլի Բ. Բեքը, «Սփոփող Միություն. Սուրբ աշխատանք», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2009, 110)

Առաջին Նախագահությունից Նախագահ Դավիթ Հ. Օուքսը հետագայում կարևորել է, որ Սփոփող Միության աշխատանքը կատարվում է քահանայության իշխանությամբ.



Սփոփող միությանն ուղված իր ելույթում Նախագահ Ջոզեֆ Ֆիլիփս Սմիթը, դեռ Տասներկու Առաքյալների Թվորումի Նախագահ եղած ժամանակ, ասել է. «Չնայած որ քույրերին չեն [կարգվել] քահանայության . . . , դա չի նշանակում որ Տերը նրանց իշխանություն չի տվել: . . . Դուք իշխանությամբ կարող եք խոսել, քանի որ Տերը իշխանություն է տվել ձեզ»: Նա նաև ասաց, որ Սփոփող միությանը «[տրվել] է զորություն և իշխանություն անելու շատ մեծ բաներ: Աշխատանքը, որ նրանք անում են, կատարվում է աստվածային իշխանությամբ» [*Relief Society—An Aid to the Priesthood*, "Relief Society Magazine," Jan. 1959, 4–5]: . . .

. . . Ցանկացած մարդ, ով գործում է իր պաշտոնում կամ կոչման մեջ, որը ստացել է քահանայության բանալիներ կրողի կողմից, իրեն հանձնարարված պարտականությունները կատարելիս, գործադրում է քահանայության իշխանությունը:

(Դավլին Հ. Օուքս, «Քահանայության բանալիները և իշխանությունը», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2014, 50-51)

ընտանիքի փրկության աշխատանքում իրականացնելու ավելի մեծ բարիք: ("First General Conference of the Relief Society," *Woman's Exponent*, Apr. 15, 1889, 172)

ԲԱԺԻՆ 3

Ինչպե՞ս կանայք և Սփոփող Միությունն օգնում իրականացնել Աստծո և Նրա Եկեղեցու նպատակները:

1842 թվականի մարտի 17-ին տեղի ունեցավ Սփոփող Միության առաջին ժողովը՝ Նավու, Իլլինոյսում գտնվող Ջոզեֆ Սմիթի «Կարմիր աղյուսե վաճառատան» վերնահարկում: Էմման ընտրվեց և հաստատվեց որպես նոր կազմակերպության նախագահ: Ջոզեֆը կանգնեց և բացատրեց, որ սա Տիրոջ այն հայտարարության իրագործումն էր, որ Էմման «ընտրվել տիկին է, որին ես կանչել եմ» (Վարդապետություն և Ուխտեր 25.3): Կարճ ժամանակ անց Մարգարեն ասել է. «Այս Միությունը պետք է հրահանգավորում ստանա Աստծո հաստատված կարգի միջոցով, նրանց միջոցով, ովքեր նշանակված են առաջնորդելու և այժմ ես բանալին հանձնում եմ ձեզ՝ Աստծո անունով, և այս Միությունը պիտի ցնծա և գիտելիքն ու խելամուտությունը պիտի վար հոսի այս ժամանակից ի վեր» (in *Daughters in My Kingdom*, 14–15):

Քույր Էմմա Սմիթը հայտարարել է, որ Եկեղեցու կանայք միասին «մի արտառնոց բան» կանեն («Joseph Smith's Teachings about Priesthood, Temple, and Women," Gospel Topics, topics .ChurchofJesusChrist.org): Երբ ուսումնասիրեք հետևյալ հայտարարությունները, մտածեք այն մասին, թե ինչը կարևորվեց ձեզ համար՝ Սփոփող Միության նպատակների ու առաքելության ուսմունքներում:

Սփոփող Միության նախկին գերագույն նախագահ Զինա Դ. Հ. Յանգն ասել է.



Սփոփող Միությունը . . . սկզբում կազմավորվել . . . օրհնություններ պարգևելու աղքատներին և կարիքավորներին, քաջալերելու թույլերին և հետ պահելու սխալներից, ավելի լավ զարգացման և կնոջ կարեկցանքն ու գթասրտությունը գործի դնելու համար, որպեսզի Նա հնարավորություն ունենա ձեռք բերել հոգևոր ուժ և զորություն՝ մարդկության

Քույր Բեքն ուսուցանել է.



Ջոզեֆ Սմիթն ասել է, որ այս Եկեղեցու կանայք կազմակերպվեցին, որպեսզի «սփոփեն թշվառներին, չքավորներին, այրիներին, որբերին և բարեգործական շատ նպատակներ իրագործեն» [in *History of the Church*, 4:567] և «ոչ միայն սփոփեն թշվառին, այլ հոգիներ փրկեն» [in *History of the Church*, 5:25]: Հետագայում Երեց Զոն Ա. Վիդսոն այդ սփոփման ջանքերը բնորոշել է որպես «աղքատության, հիվանդության, կասկածանքի, անգրագիտության սփոփանք, . . . ուրախությանն ու առաջընթացին խոչընդոտող ամեն ինչի սփոփանք» [*Evidences and Reconciliations*, arr. G. Homer Durham, 3 vols. in 1 (1960), 308]:

. . . Սփոփող Միությունում մենք սովորում ենք լինելու Քրիստոսի աշակերտները: Մենք սովորում ենք, թե ինչ է Նա ցանկանում, որ մենք սովորենք, մենք կատարում ենք այն, ինչ Նա կցանկանանք, որ անենք, և մենք դառնում ենք այն, ինչ Նա կցանկանանք, որ դառնալիք: (Ջուլի Բ. Բեք, «Ինչ են Վերջին Օրերի Սուրբ կանայք լավագույնս կատարում՝ կանգնում են ամուր և անսասան», *Ensign* և *Liahona*, նոյ. 2007, 111, 109)



Նախագահ Մայենսեր Վ. Քիմբալը բացատրել է, թե ինչու տղամարդիկ և կանայք պետք է հասկանան Սփոփող Միության նպատակներն ու զորությունը.



Այս կազմակերպության մեջ զորություն կա, որը դեռևս լիովին չի օգտագործվել ամրացնելու Սիոնի տները և կառուցելու Աստծո արքայությունը, և չի օգտագործվի լիարժեք մինչև *ինչպես քույրերը, այնպես էլ քահանայության [եղբայրները]* չհասկանան Սփոփող Միության տեսլականը»:
(Spencer W. Kimball, in *Daughters in My Kingdom*, 142; italics added)



Մտածեք դասին Նախապատրաստվելիս

Ի՞նչ կարող են անել՝ ինչպես կանայք, այնպես էլ տղամարդիկ, որպեսզի հասկանան Սփոփող Միության տեսլականը և միասին աշխատելով իրականացնեն նրա նպատակները:

Ցանկանում ես ավելին: (Ոչ պարտադիր)

Ջոզեֆ Սմիթն ի՞նչ ուսուցանեց կանանց և քահանայության իշխանության մասին:


Joseph Smith's Teachings about Priesthood, Temple, and Women (Gospel Topics, topics.ChurchofJesusChrist.org) շարադրությունն ընդգծում է Ջոզեֆ Սմիթի ուսմունքները կանանց և քահանայության իշխանության մասին:

Որտե՞ղ կարող եմ գտնել հավատարիմ Վերջին օրերի սրբերի կանանց ոգեշնչող պատմություններ:

Ուսումնասիրեք Women of Conviction հավաքածուն history.ChurchofJesusChrist.org կայքում՝ աշխարհով մեկ հավատարիմ Վերջին օրերի սուրբ կանանց մասին պատմություններ կարդալու համար:

Իմ արքայության դուստրերը գրքում կան նաև հավատարիմ կանանց և Սփոփող Միությունում

նրանց կատարած աշխատանքի մասին մի շարք պատմություններ:



Որպես օրինակ, դուք կարող եք սկսել Սփոփող Միության Նախագահ Բեյլ Սպաֆորդի այս պատմությամբ, ով Սփոփող Միության ազդեցությունը տարածեց այլ հավատքի մարդկանց մեջ



Ինչպե՞ս էր Էմման համարվում «ընտրյալ տիկին»:

Դիտեք An Elect Lady (Ընտրյալ Տիկինը) (5:18) տեսանյութը, որպեսզի ավելին իմանաք այն մասին, թե Տերն ինչո՞ւ Էմմային պատվեց այդ կոչումով:

ԴԱՍ 18. ՈՒՍՈՒՑՉԻ ՆՅՈՒԹ

Դաս 18. Վերջին Օրերի Սրբերի Կանայք և Սփոփող Միությունը

Սփոփող Միությունը հնագույններից է և ունի ավելի քան 7,1 միլիոն անդամ, որը կանանց ամենամեծ կազմակերպություններից մեկն է աշխարհում: Սփոփող Միությունը Հիսուս Քրիստոսի վերականգված Եկեղեցու բաղկացուցիչ մասն է: Այս դասը կօգնի ուսանողներին կիսվել, թե ինչպես են Վերջին Օրերի Սուրբ կանանց եզակի ունակությունները և ներդրումները կարևոր Տիրոջ աշխատանքի համար: Ուսանողները կհասկանան նաև, թե ինչպես կարող են ավելի լիարժեք մասնակցել կամ աջակցելու Սփոփող Միությանը՝ իր նպատակները իրականացնելու հարցում:

Ուսուցման առաջարկներ

Ուխտ պահող կանայք եզակի և կարևոր ներդրում ունեն Աստծո արքայությունը կառուցելու գործում:

Ցուցադրեք կամ նկարագրեք ձեր կյանքում տեղ գտած մի արդար կնոջ օրինակ: Դասարանին հակիրճ ներկայացրեք, թե ինչն է նրան օրինակելի կին դարձնում և ինչպես է նա նպաստել Աստծո թագավորությունը կառուցելու գործում:

Հրավիրեք ուսանողներին կիսվել իրենց ծանոթ որևէ արդար կնոջ մասին, և թե ինչպես է նա բարի ազդեցություն ունենում Աստծո արքայությունը կառուցելու գործում: (Մա այն էր, ինչ ուսանողներին առաջարկվեց մտածել նախապատրաստական նյութն անցնելիս:)

Ցուցադրեք Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ հայտարարությունը: Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն, իսկ դասարանի անդամներն ուշադրություն դարձնեն, թե ինչ է Նախագահ Նելսոնն ուսուցանում Եկեղեցու արդար կանանց մասին:



Իմ սիրելի քույրեր, . . . այս վերջին օրերի մեր կարևոր գործընկերներն եք: . . . Ձեր առաքիլությունը, լույսը, սերը, գիտելիքը, քաջությունը, բնավորությունը, հավատքը և արդարակյաց կյանքը՝ աներևակայելի թվով աշխարհի լավ կանանց իրենց ընտանիքների հետ միասին կգրավի դեպի Եկեղեցին:

Մենք, ձեր եղբայրները, ձեր ուժի, ձեր դարձի, ձեր ղեկավարելու ունակության, ձեր իմաստության և ձեր ձայների կարիքն ունենք: Աստծո արքայությունը չի կարող լիարժեք լինել առանց կանանց, ովքեր սուրբ ուխտեր են կապում և ապա պահում, կանայք, ովքեր կարողանում են խոսել Աստծո զորությամբ և իշխանությամբ: (Ռասսել Մ. Նելսոն, «Մեկ կարևոր խնդրանք իմ քույրերին», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2015, 96)

- Այդ հայտարարության մեջ ի՞նչն է ավելի տպավորիչ ձեզ համար:
- Ինչպե՞ս կամփոփեք այն ճշմարտությունը, որը մենք կարող ենք սովորել Նախագահ Նելսոնի ուսմունքներից՝ Եկեղեցում ուխտ պահող կանանց մասին: (Ուսանողների խոսքերն օգտագործելով՝ տախտակի վրա գրեք կամ ցույց տվեք մի ճշմարտություն, որը նման է հետևյալին. **Ուխտ պահող կանանց հատկանիշները, առաջնորդությունը և ձայներն անհրաժեշտ են Աստծո արքայությունը կառուցելու համար:**)
- Ինչո՞ւ եք կարծում, որ Աստծո արքայությունը «լիարժեք չէ և չի կարող լիարժեք լինել» առանց ուխտ պահող կանանց ձայների և մասնակցության:

Բացատրեք, որ ինչպես գրված է Վարդապետություն և Ուխտեր 25-ում, Տերը կանչեց Էմմա Մմիթին օգտագործել իր ձայնը, տաղանդներն ու

կարողությունները՝ օգնելու կառուցել Իր արքայությունը: Հրավիրեք ուսանողներին կրկնել Վարդապետություն և Ուխտեր 25.5–7, 10–16, որը նրանք ուսումնասիրել են նախապատրաստական նյութի բաժին 1-ում և և խնդրեք նրանց բացահայտել այն ցուցումներն ու պարտականությունները, որոնք Տերը տվեց Էմմային:

Խնդրեք ուսանողներին կիսվել, թե այդ հատվածներում ինչը տպավորություն գործեց նրանց վրա: Հատկացրեք մեկ րոպե, որպեսզի ուսանողները մտածեն, թե Տերն այդ ցուցումների որ կետերը կցանկանար, որ նրանք լիովին ընդունեին և ապրեին:

Տերը Սփոփող Միությունը կազմավորեց Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով:

Ցուցադրեք Ջոզեֆ Սմիթի Նավու, Իլինոյսում գտնվող «Կարմիր աղյուսե վաճառատունը» և բացատրեք, որ հենց այստեղ էր, որ Սփոփող Միությունը կազմավորվեց 1842 թվականի, մարտ ամսին:



Խնդրեք ուսանողներին պատմել նախապատրաստական նյութի բաժին 2-ից (կամ դասը սկսելուց առաջ հրավիրեք որևէ ուսանողի անել դա) այն հանգամանքները, որոնք պատճառ հանդիսացան Սփոփող Միության կազմավորմանը:

- Ըստ Ջոզեֆ Սմիթի, ի՞նչ օրինակով է Սփոփող Միությունը կազմավորված: (**Սփոփող Միությունը կազմավորված է քահանայության օրինակով**):

- Ի՞նչ ենք հասկանում, երբ ասում ենք, որ Սփոփող Միությունը կազմավորված է քահանայության օրինակով: Մեզ համար ինչու՞ է կարևոր իմանալ դա: (Սնհրաժեշտության դեպքում կարող եք հրավիրել ուսանողներին հիշել այն, ինչ նրանք սովորել են նախապատրաստական նյութի բաժին 2-ից:)
- Ինչպե՞ս կամփոփեիք Սփոփող Միության նպատակները: (Դուք կարող եք հանձնարարել ուսանողներին վերանայել բաժին 3-ի Քույր Զինա Դ. Հ. Յանգի և Քույր Զուլի Բ. Բեքի խոսքերը, որոնք կօգնեն նրանց հասկանալ նմանատիպ մի սկզբունք. **Սփոփող Միությունը կազմավորվել էր, որպեսզի սփոփեր աղքատներին և փրկեր հոգիները**:)
- Որո՞նք են այն եղանակները, որոնցով Սփոփող Միության կանայք իրականացնում են այդ նպատակները: (Կարող եք կիսվել նաև մի իմաստալից օրինակով կամ ձեր անձնական փորձառությամբ:)

Ժամանակ տրամադրեք դասարանում գտնվող մի քանի քույրերի՝ կիսվելու Սփոփող Միության օրինությունների վերաբերյալ իրենց զգացմունքներով:

Խնդրեք մի քանի ուսանողներին կիսվել հետևյալ հարցի վերաբերյալ իրենց պատասխաններով, որոնց մասին նրանց խնդրել էին մտածել:

- Ի՞նչ կարող են անել ինչպես կանայք, *այնպես էլ* տղամարդիկ, որպեսզի հասկանան Սփոփող Միության տեսլականը և միասին աշխատելով իրականացնեն նրա նպատակները:

Ցուցադրեք հետևյալ հարցերը և ուսանողներին հրավիրեք աղոթքով մտածել դրանց մասին, որից հետո իրենց օրագրում կամ նոթատետրում գրել մի նպատակ:

- Քույրե՛ր, ինչպե՞ս ավելի լիարժեք կմասնակցեք Սփոփող Միության նպատակների իրականացմանը՝ ձեր կարողությունների, հավատքի, ձայների և առաջնորդության միջոցով:
- Եղբայրներ, ի՞նչ կարող եք անել, որպեսզի ավելի լավ աջակցեք, խրախուսեք և աշխատեք կանանց հետ Աստծո արքայությունը կառուցելու գործում:

Եթե ժամանակը թույլ է տալիս, կարող եք հրավիրել մի քանի ուսանողի՝ կիսվել իրենց գրածով:

ԲԱՐԵԼԱՎԵԼ ՄԵՐ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Հարմարեցնել ուսուցման առաջարկները:

Դուք կարող եք օգտագործել սուրբ գրության մասի համար նախատեսված ուսուցման բոլոր առաջարկները կամ դրանցից մի քանիսը, կամ հարմարեցնել առաջարկությունները՝ համաձայն Հոգու առաջնորդության և ձեր ուսանողների կարիքների ու հանգամանքների: Ուսուցման առաջարկությունները հարմարեցնելիս կամ դրանք ձեր սեփական մտքերով փոխարինելիս, հաշվի առեք ուսանողների ուսուցման նախանշված արդյունքները և ընտրեք այլընտրանքային ուսուցման մի գաղափար, որը կհանգեցնի նախատեսված արդյունքի:

Եզրափակելով դասը՝ կատարեք հետևյալ քայլերից մեկը կամ մի քանիսը:

1. Հարցրեք ուսանողներին, թե ինչպես նրանք կարձագանքեն մեկին, ով պնդում է, որ կանայք նվազ տեղ և դեր ունեն Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում:
2. Վկայեք դասի ընթացքում բացահայտած ճշմարտությունների վերաբերյալ:

3. Հանձնարարեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Նախագահի Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ հրավերը:



Դարձի եկած, ուխտ պահող կանանց . . . արդարակյաց կյանքն ավելի ակնհայտ կդառնա բարոյալքվող աշխարհում, և այդպիսով նրանք կտարբերվեն և կառանձնանան լավագույն առումներով:

. . . Ես աղերսում եմ ձեզ՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու քույրեր, շարունակեք գործել: Ավելի քան երբևէ, ձեր օրինական և կարևոր տեղը զբաղեցրեք ձեր տանը, ձեր համայնքում և Աստծո արքայությունում: (Ռասսել Մ. Նելսոն, «Մեկ կարևոր խնդրանք իմ քույրերին», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2015, 97, շեղագիրը բնօրինակն է)

Հաջորդ անգամ

Բացատրեք ուսանողներին, որ հաջորդ դասի ժամանակ նրանք կանդրադառնան վերականգնված ավետարանի այն մասի վրա, որը Մարգարե Զոգեֆ Սմիթն անվանել է այս աշխարհի ամենամեծ պարտականություններից մեկը, որը Աստված տվել է Վերջին Օրերի Սրբերին (տես *Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Զոգեֆ Սմիթ* [2007], 475): Հրավիրեք ուսանողներին ուշադիր ուսումնասիրել 19-րդ դասի նախապատրաստական նյութը և պատրաստ լինել քննարկելու այն մարդկանց տված մարգարեական հրաշալի խոստումները, ովքեր օգնում են կատարել տաճարային աշխատանքը մահացածների համար:



ԴԱՍ 19. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱՊԱՏԻՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Մահացածների փրկագնումը

Հիշեք այն մասին, երբ ինչ-որ մեկը որևէ գործ է արել ձեզ համար, որը դուք միայնակ չէիք կարող անել: Ի՞նչ եք զգացել այդ անձի հանդեպ: Ուսումնասիրելու ժամանակ կարող եք մտածել, թե ինչ կարող են զգալ ձեր ընտանիքի մահացած անդամները ձեր հանդեպ, երբ նրանց համար անեք այն, ինչը նրանք չեն կարող ինքնուրույն անել՝ կատարել կարևոր արարողություններ իրենց փրկության համար:

ԲԱԺԻՆ 1

Ի՞նչ է տեղի ունենում այն մարդկանց հետ, ովքեր մահանում են առանց ավետարանի իմացության:

Նշում. Այս դասի առաջին բաժինը կարդալու փոխարեն, դուք կարող եք ընտրել դիտել այս տեսանյութը, այնուհետև մտածել այս բաժնի վերջում գրված հարցերի շուրջ:

17 տարեկանում Ջոզեֆ Մմիթին խիստ վշտացրեց իր ավագ եղբոր՝ Ալվինի հանկարծակի մահը, որին նա շատ էր սիրում և որով հպարտանում էր: Մմիթների ընտանիքը «խնդրեց Երիցական եկեղեցու մի ծառայողի Պալմիրայում, Նյու Յորք, պաշտոնավարելու Ալվինի հուղարկավորությունը: Քանի որ Ալվինն այդ սպասավորի ծխական համայնքի անդամ չէր, իր քարոզում նա պնդեց, որ Ալվինը

չէր կարող փրկվել: Վիլյամ Սմիթը՝ Ջոզեֆի փոքր եղբայրը, հիշում է. «[Ծառայողը] . . . ազդարարեց շատ խստորեն, որ [Ալվինը] գնացել է դժոխք», քանի որ Ալվինը մկրտված չէր (*Եկեղեցու Նախագահների ուսումնականը*. *Ջոզեֆ Մմիթ* [2007], 429):

Հոգևորականի պատասխանը Ալվինի մահվան վերաբերյալ գուցե կոպիտ է հնչել: Մակայն, նրա ուսմունքը հիմնված էր այն ճշմարտության վրա, որ բոլոր մարդիկ պետք է ընդունեն Քրիստոսին և մկրտվեն, որպեսզի փրկվեն (տես Հովհաննես 3.5):

1836 թվականի հունվարին, Ալվինի մահից ավելի քան 12 տարի անց, Մարգարե Ջոզեֆ Մմիթն իր հոր և Եկեղեցու մյուս առաջնորդների հետ հանդիպեց գրեթե ավարտին հասցված Կիրթլենդի տաճարի վերնահարկում: Այդ ժողովի ընթացքում Մարգարեն ապագայի վերաբերյալ մի տեսիլք տեսավ, որն այժմ արձանագրված է Վարդապետություն և Ուխտեր 137-ում:



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր
137.1, 5-8:

Ջոզեֆը «զարմացավ», երբ իր եղբայր Ալվինին տեսավ սելեստիալ արքայության մեջ, քանի որ Ալվինը մկրտված չէր: Զորս տարի անց, 1840 թվականի օգոստոսին, Մարգարեն սկսեց Սրբերին ուսուցանել մահացածների մկրտության վարդապետությունը: Պողոս առաքյալը Նոր Կտակարանի մեջ ուսուցանել էր այդ վարդապետությունը՝ նախքան Տերը կվերականգներ այն մեր օրերում (տես Ա Կորնթացիս 15.29):

Իր ամուսնուն ուղղված նամակում Վայլեյթ Քիմբալը գրել է այդ նոր վերականգնված ուսմունքի վերաբերյալ Սրբերի ոգևորության մասին:



Նախագահ Սմիթը խոսեց մի նոր ու հիանալի թեմայի շուրջ: . . . Նա ասում է, որ այս եկեղեցու արտոնությունն է մկրտվել իրենց բոլոր նախնիների համար, ովքեր մահացել են նախքան այս ավետարանի ստեղծումը: . . . Այսպես վարվելով, մենք հանդես ենք գալիս որպես գործակալներ նրանց համար և առաջին հարության մեջ առաջ գալու արտոնություն ենք տալիս նրանց: Նա ասում է, որ Ավետարանը բանտում քարոզվելու է նրանց: . . . Այդ կարգն այստեղ քարոզվելուց ի վեր, գետի ջրերը շարունակաբար օգտագործվել են: Համաժողովի ընթացքում գետի մեջ երբեմն մկրտվում էին ութից տասը երեցներ: . . . Մի՞թե սա փառավոր վարդապետություն չէ: (Vilate Kimball, in Janiece Johnson and Jennifer Reeder, *The Witness of Women: Firsthand Experiences and Testimonies from the Restoration* [2016], 181)

Սմիթների ընտանիքը, անկասկած, մեծ ուրախություն զգաց, երբ Հայրումը մկրտվեց իր եղբոր՝ Ալվինի համար:



Մտածեք դասին Նախապատրաստվելիս

Ձեր կարծիքով, ի՞նչն է մահացածների փրկագնումն այդպիսի «փառավոր վարդապետություն» դարձնում: Ի՞նչ է այս վարդապետությունը սովորեցնում ձեզ Երկնային Հոր և Նրա Որդի Հիսուս Քրիստոսի բնավորության և ցանկությունների մասին:

Հաջորդ տարի՝ 1841 թվականին, Տերը հայտարարեց, որ «այդ արարողությունը պատկանում է իմ տանը», և որ տաճարի ավագանը պատրաստ լինելուց հետո Սրբերը պետք է դադարեցնեն գետում մահացածների համար մկրտություններ կատարելը (տես Վարդապետություն և Ուխտեր 124.29–34): Ջոզեֆ Սմիթը երկու նամակով հետագա հրահանգներ տվեց մահացածների փրկագնման վերաբերյալ, որոնք նա գրեց Սրբերին, երբ նա թաքնվում էր կեղծ մեղադրանքների պատճառով: Այդ նամակների բովանդակությունը կարելի է գտնել Վարդապետություն և Ուխտեր 127 և 128 բաժիններում: Մարգարեն ուսուցանել է, որ, երբ ավետարանի արարողությունը, ինչպիսին է մահացածների համար մկրտությունը, կատարվում է քահանայության իշխանությամբ և պատշաճ գրանցում է պահվում, միայն այդ ժամանակ արարողությունը կապված կլինի երկրի և երկնքի միջև (տես Վարդապետություն և Ուխտեր 127.5–7, 128.1–9):

ԲԱԺԻՆ 2

Ի՞նչ շարունակեց հայտնել Տերը մահացածների փրկագնման մասին այն տեսիլքում, որը նա տվեց Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթին:

Մարգարե Ջոզեֆ Սմիթի մահից հետո Տերը շարունակեց Իր ծրագրի մասին «տող առ տող» ճշմարտություններ հայտնել մահացածներին փրկագնելու վերաբերյալ (Վարդապետություն և Ուխտեր 98.12): 1918 թվականին Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը տեսիլք տեսավ, որը բացահայտում էր լրացուցիչ ճշմարտություններ մահացածների

փրկագնման մասին: Այդ տեսիլքը գրված է Վարդապետություն և Ուխտեր 138 բաժնում:

Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ Մ. Ռասսել Բալարդը բացատրել է, թե ինչպես էր Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը նախապատրաստվել՝ այդ հիանալի տեսիլքը ստանալու համար:



Իր կյանքի ընթացքում Նախագահ Սմիթը կորցրել է իր հորը [5 տարեկանում], մորը [13 տարեկանում], մի եղբորը, երկու քրոջը, երկու կանանց և 13 զավակներին: Նա լավ գիտեր, թե ինչ է վիշտը և սիրելիների կորուստը: . . .

[1918 թվականը] հատկապես ծանր էր նրա համար: Նա սգում էր Առաջին Համաշխարհային Պատերազմի զոհերի մահը, որոնց թիվը հասնում էր 20 միլիոնի: Ի լրումն դրա, գրիպի համաճարակը տարածվում էր ամբողջ աշխարհում, խլելով ավելի քան 100 միլիոն մարդու կյանք:

Տարվա ընթացքում Նախագահ Սմիթը կորցրեց իր համար . . . թանկ իր ընտանիքի ևս երեք անդամների: Տասներկու Առաքյալների Քվորումից Երեք Հայրում Մաք Սմիթը՝ նրա անդրանիկ որդին, նաև իմ պապիկը, հանկարծակի մահացավ կույր աղիքի սուր բորբոքումից:

Նախագահ Սմիթը գրել է. «Ես կարկամել և [անզգայացել] եմ վշտից: . . . Սիրտս կտրված է, և կյանքը մեռել է իմ մեջ: Օ՛, ես սիրում էի նրան: . . . Իմ հոգու խորքում ես շնորհակալ եմ Աստծուն նրա համար: Բայց . . . ավա՜ղ: Ես ունեի նրա կարիքը: Մենք բոլորս ունեինք նրա կարիքը: Նա շատ օգտակար էր Եկեղեցուն: . . . Իսկ հիմա, . . . Օ՛, ես ինչ, կարող եմ անել: . . . Օ՛, Աստվա՛ծ, օգնի՛ր ինձ . . .»:

Եվ այսպիսով, խորը վիշտ զգալով միլիոնավոր մարդկանց մահվան պատճառով, ովքեր մահացել էին պատերազմի ընթացքում և հիվանդություններից, ինչպես նաև իր ընտանիքի անդամների կորստից հետո, 1918թ.-ի հոկտեմբերի 3-ին Նախագահ Սմիթը երկնային հայտնություն ստացավ, որը հայտնի է որպես «մահացածների փրկագնման տեսիլքը»: (Մ. Ռասսել Բալարդ, «Մահացածների փրկագնման տեսիլքը», *Ensign* կամ *Liahona*, նոյեմբեր 2018, 72)

Ջոզեֆ Ֆ. Սմիթն իր աստվածային տեսիլքը ստացավ, երբ խորհում էր Փրկիչի քավիչ զոհաբերության մասին և կարդում էր Պետրոս առաքյալի նկարագրությունն այն մասին, երբ Հիսուսն էր խաչելությունից հետո ծառայում էր հոգևոր աշխարհում (տես Վարդապետություն և Ուխտեր 138.1–11):



Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթն իր որդի Հայրումի և թոռան՝ Ջոզեֆին հետ:



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 138.30, 33–34, 57, և նշեք, թե Տերն ինչ ուսուցանեց Նախագահ Սմիթին այն մասին, թե ինչպես է ավետարանը քարոզվել հոգևոր աշխարհում:

Մեկ այլ պարագայում Նախագահ Սմիթը սովորեցրեց, որ հավատարիմ կանայք նույնպես կանչված են քարոզելու ավետարանը հոգևոր աշխարհում (see *Gospel Doctrine*, 5th ed. [1939], 461):

ԲԱԺԻՆ 3

Մահացածների փրկագնման գործին մասնակցելն ինչպե՞ս կարող է ինձ մոտեցնել Փրկիչին:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնը ուսուցանել է.



Նախագահ Գորդոն Բ. Հինքլին հայտնել է. «Կարծում եմ, որ մահացածների համար փոխարինող աշխատանքն ավելի շուտ է նման հենց Փրկիչի փոխարինող զոհաբերությանը, քան իմ իմացած ցանկացած այլ աշխատանք» . . . [“Excerpts from Recent Addresses of President Gordon B. Hinckley,” *Ensign*, Jan. 1998, 73]:

Մահացածներին փրկագնելու մեր մեծ ցանկությունը և այդ պարտավորության համար տրամադրվող ժամանակն ու միջոցները առաջին հերթին արտահայտում են մեր վկայությունը Հիսուս Քրիստոսի մասին: Դա նույնքան հզոր է, որքան Նրա աստվածային բնության և առաքելության վերաբերյալ մեր վկայությունը:

Գտնելով մեր նախնիներին և նրանց համար կատարելով փրկող արարողություններ, որոնք նրանք չէին կարող կատարել, մենք վկայում ենք Հիսուս Քրիստոսի Զավության հասանելիության անսահմանության մասին: (D. Todd Christofferson, “The Redemption of the Dead and the Testimony of Jesus,” *Ensign*, Nov. 2000, 10)



Մտածեք և քննարկեք դասին նախապատրաստվելիս

Մահացածների փրկագնման գործին մասնակցելն ինչպե՞ս է արտացոլում Հիսուս Քրիստոսի և Նրա Զավության մասին ձեր վկայությունը:

Հնարավորության դեպքում, խնդրեք ընտանիքի անդամին կամ ընկերոջը կիսվել ընտանեկան պատմության իր փորձով: Հարցեր տվեք այն մասին, թե ինչպես սկսել կամ ինչպես առավել արդյունավետ կատարել ընտանեկան պատմությունը: Դասարան

ելեք պատրաստված՝ ձեր սովորածով կիսվելու համար:

Ցանկանում ես ավելին: (Ոչ պարտադիր)

Ինչպե՞ս կարող եմ օգնել իմ նախնիներին մահացածների փրկագնման աշխատանքում:

A Sacrifice of Time (2:54) տեսանյութում Նախագահ Ռասսել Մ. և քույր Վենդի Նելսոնները ուղղություն են տալիս այն մասին, թե ինչպես կարող ենք լավագույնս օգնել մեր նախնիներին և Տիրոջը՝ մահացածների փրկագնման Նրա աշխատանքում:

Որտեղի՞ց կարող եմ սկսել ընտանեկան պատմության ուսումնասիրությունը:

Բացահայտեք FamilySearch.org-ում առկա ռեսուրսներն ու ուսումնական նյութերը: Ուշադրություն դարձրեք ձեր ընտանեկան ծառին և փորձեք որոնման որոշ առանձնահատկություններ:

Ինչպե՞ս կարող եմ ընտանեկան պատմությունը և տաճարային ծառայությունն ուրախություն բերել իմ կյանք:



Երեց Թոմփսին L. Թոմփսի The Joy of Family History Work հոդվածում (*Ensign*, Feb. 2016, 29–33) նա խոսեց եղիայի առաքելության և այն մասին, թե մենք

ինչպես կարող ենք օրհնվել, եթե կատարենք ընտանեկան պատմության աշխատանք:

Ի՞նչ լրացուցիչ վկայություն ունենք հոգևոր աշխարհում մահացածների փրկագնման վերաբերյալ:

Նախագահ Նելսոնը պատմում է իր պապիկի ունեցած մի փորձառության մասին, որը վերաբերում է հոգևոր աշխարհում ավետարանը քարոզելուն:

ԴԱՍ 19. ՈՒՍՈՒՑԶԻ ՆՅՈՒԹ

Մահացածների փրկագնումը

Մարգարե Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է, որ Վերջին օրերի Սրբերին Աստծո տված ամենամեծ պարտականություններից մեկն է՝ օգնել փրկագնել մահացածներին (տես *Եկեղեցու նախազանգիների ուսմունքները*. *Ջոզեֆ Սմիթ* [2007], 475): Այս դասը նախատեսված է օգնել ուսանողներին հասկանալ և կիսվել, թե ինչու է մահացածների փրկագնումն Աստծո ծրագրի այդպիսի կարևորագույն մասը հանդիսանում, և մեծացնի ընտանեկան պատմությանն ու տաճարային ծառայությանն ավելի լիարժեք մասնակցելու նրանց ցանկությունը:

Ուսուցման առաջարկներ

Տերը հայտնում է մահացածների փրկագնման վարդապետությունը Ջոզեֆ Սմիթի միջոցով:

Ցուցադրեք ուղեկցող պատկերը և բացատրեք, որ այն պատկերում է Ալվին Սմիթին, ով տանում է իր կրտսեր եղբորը՝ Ջոզեֆին, ոտքի վիրահատությունից հետո: Հրավիրեք ուսանողներին պատմել, թե իրենց նախապատրաստական դասից ինչ են սովորել իր եղբայր Ալվինի հանդեպ Ջոզեֆի զգացմունքների մասին, և թե ինչ պատահեց Ալվինի հետ:



- Երիցական եկեղեցու մի սպասավոր ի՞նչ ասաց Սմիթների ընտանիքին Ալվինի հուղարկավորության ժամանակ:
- Դուք ի՞նչ կզգայիք այդ խոսքերը լսելիս, եթե լինեիք Ջոզեֆի ընտանիքի անդամը:

Հիշեցրեք ուսանողներին, որ այդ սպասավորի խոսքերն արտացոլում են Նոր Կտակարանում ուսուցանված համոզմունքն այն մասին, որ փրկության համար անհրաժեշտ է մկրտություն (տես Հովհաննես 3:5): Հանձնարարեք ուսանողներին վերանայել 1836 թվականի Ջոզեֆ Սմիթի տեսիլքը սելեստիալ արքայության մասին, ինչպես գրված

է Վարդապետություն և Ուխտեր 137.1, 5–8, ուշադրություն դարձնելով, թե Ջոզեֆ Սմիթն ի՞նչ իմացավ իր եղբայր Ալվինի մասին: Խնդրեք ուսանողներին պատմել՝ ինչ գտան:

- Փրկության ծրագրի մասին ի՞նչ ճշմարտություններ է օգնում վերականգնել կամ պարզաբանել այս հայտնությունը: Ձեր կարծիքով, ինչպիսի՞ մտքեր և զգացումներ կարող էր Ջոզեֆն ունենալ, երբ նա սովորեց այդ ճշմարտությունների մասին:

Բացատրեք, որ սելեստիալ արքայությունում Ալվինի տեսիլքը տեսնելուց չորսուկես տարի անց, Ջոզեֆը Նավուի Սրբերին ուսուցանեց այն մասին, թե Ալվինի նման մեկը, ով այս կյանքում չէր մկրտվել, ինչպես կարող է փրկվել Աստծո արքայությունում: Մարգարեն ներկայացրեց մահացածների համար մկրտության վարդապետությունը 1840 թվականի օգոստոսի 15-ին՝ հուղարկավորության քարոզի ժամանակ (see Church History Topics, “Baptism for the Dead,” ChurchofJesusChrist.org):

Հրավիրեք ուսանողներին զույգերով կամ փոքր խմբերով կարդալ Վայլեյթ Քիմբլիի նամակից մի քաղվածք, որը գտնվում է Նախապատրաստական նյութի բաժին 1-ում: Ապա ցուցադրեք հետևյալ հարցերը (որոնք նաև գտնվում են Նախապատրաստական նյութի բաժին 1-ում), և հրավիրեք ուսանողներին քննարկել դրանք.

- Ձեր կարծիքով, ի՞նչն է մահացածների փրկագնումը այդպիսի «փառավոր վարդապետություն» դարձնում:
- Ի՞նչ կարող է այս վարդապետությունը մարդուն սովորեցնել Երկնային Հոր և Նրա Որդի Հիսուս Քրիստոսի բնավորության և ցանկությունների մասին:

Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ Մարգարե Ջոզեֆ Սմիթի ուսմունքները, որոնք գրված են Վարդապետություն և Ուխտերի 128.15 հատվածում: Դասարանին խնդրեք հետևել նրան և ուշադրություն դարձնել, թե ինչու է մահացածների փրկագնման գործին մասնակցելն այդքան կարևոր մեզ համար:

- Ըստ այդ հատվածի, ինչու՞ է կարևոր, որ մենք փրկագնող արարողություններ կատարենք մահացածների համար: (Ուսանողները կարող են բացահայտել որոշ ճշմարտություններ, այդ թվում հետևյալը. **Առանց ավետարանի փրկագնման արարողությունների, մեր նախնիները, ովքեր մահացել են առանց ավետարանի իմացության, չեն կարող առաջ ընթանալ դեպի վեհացում: Մեր մահացած նախնիների փրկությունը կարևոր է մեր փրկության համար:**)

- Ձեր կարծիքով, ինչպե՞ս է մեր նախնիների փրկությունը «անհրաժեշտ և էական» մեր փրկության համար:

Ձեր քննարկման ընթացքում կարող եք ցուցադրել Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ խոսքերը, ապա խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



Տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքը զորություն ունի օրհնելու ոչ միայն Նրանց, ովքեր վարագույրի այն կողմում են, այլև Նրանց, ովքեր ապրում են: Այն մաքրագործող ազդեցություն ունի Նրանց վրա, ովքեր զբաղված են դրանով: Նրանք բառիս բուն իմաստով օգնում են իրենց ընտանիքներին վեհանալ:

Մենք վեհանում ենք, երբ մենք կարող ենք միասին ապրել մեր գերդաստանի հետ՝ Ամենագոր Աստծո ներկայության մեջ: (Ռասսել Մ. Նելսոն, «Սիրով կապված սերունդներ», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2010, 93–94, շեղագիրն ավելացված է):

Ջոզեֆ Ֆ. Սմիթը մի տեսիլք տեսավ մահացածների փրկագնման մասին:

Բացատրեք, որ Մարգարե Ջոզեֆ Սմիթի մահից հետո Տերը շարունակեց «տող առ տող» ճշմարտություններ հայտնել՝ մահացածներին փրկագնելու Իր ծրագրի վերաբերյալ (Վարդապետություն և Ուխտեր 98.12): 1918 թվականին Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը մի տեսիլք տեսավ մահացածների փրկագնման մասին:

- Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթի ո՞ր փորձառությունները և աշխարհում տեղի ունեցող ո՞ր իրադարձություններն էին այդ տեսիլքն այդքան պատեհ դարձնում: (Խրախոսեք ուսանողներին գծել այն, ինչ նրանք սովորել են նախապատրաստական նյութի բաժին 2-ից):

Հիշեցրեք ուսանողներին, որ երբ Նախագահ Սմիթը խորհում էր Հիսուս Քրիստոսի քավիչ գոհաբերության և Փրկիչի հոգևոր աշխարհ այցելության վերաբերյալ Պետրոս առաքյալի ուսմունքների մասին, նա տեսավ այդ տեսիլքը (տես Վարդապետություն և Ուխտեր 138.1–11): Հանձնարարեք ուսանողներին մտքում կարդալ Վարդապետություն և Ուխտեր 138.28–34, 57 հատվածները, ուշադրություն դարձնելով նրան, թե ինչ արեց Փրկիչը հոգևոր աշխարհի իր կարճատև այցելությունից հետո, և ինչ ազդեցություն ունեցավ դա:

- Այս հատվածների ճշմարտություններն ինչպե՞ս են օգնում մեզ ավելի լավ հասկանալ Երկնային Հոր ծրագիրն Իր զավակների համար:

Ուշադրությունը հրավիրեք «փոխարինող մկրտություն» արտահայտությանը (հատված 33-ում): Բացատրեք, որ *փոխարինող* նշանակում է հանդես գալ ուրիշի փոխարեն:

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Երեց Դ. Թող Քրիստոֆերսոնի հետևյալ խոսքերը, որոնք գտնվում են նախապատրաստական նյութի բաժին 3-ում: Դասարանին խնդրեք ուշադրություն դարձնել, թե Երեց Քրիստոֆերսոնն ինչ սովորեցրեց փրկության փոխարինող աշխատանքի մասին, որը մենք կատարում ենք տաճարում մեր ընտանիքի հանգուցյալ անդամների համար:

- Ինչպե՞ս կամփոփեք այն սկզբունքը, որը մենք սովորում ենք Երեց Քրիստոֆերսոնի ուսմունքներից: (Ուսանողները կարող են բացահայտել նմանատիպ ճշմարտություն. **Մենք վկայում ենք Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության մասին, երբ մասնակցում ենք այդ աշխատանքին, որպեսզի օգնենք փրկագնելու մեր ընտանիքի մահացած անդամներին**):
- Մեր մահացածների փրկագնման գործին մասնակցելն ինչպե՞ս է արտացոլում Հիսուս

Քրիստոսի և Նրա Քավության մասին մեր վկայությունը:

- Ընտանեկան պատմության և տաճարային ծառայության գործին մասնակցելը ինչպե՞ս է օգնում մեզ ավելի նմանվել Փրկչին:

Տիրոջ մարգարեները զորավոր օրհնություններ են խոստանում նրանց, ովքեր օգնում են փրկագնել մահացածներին:

Գրատախտակի վրա գրեք հետևյալ անավարտ սկզբունքը. երբ ես մասնակցում եմ ընտանեկան պատմության և տաճարային ծառայության գործին . . .

Ցուցադրեք The Promised Blessings of Family History (3:22) տեսանյութը: Հրավիրեք ուսանողներին ուշադրություն դարձնել այն օրհնություններին, որոնք սպասվում են նրանց, ովքեր կատարում են ընտանեկան պատմության և տաճարային աշխատանք: Կարող եք ուսանողների բացահայտած օրհնությունները գրել գրատախտակին գրված նախադասության տակ:

- Խոստացված ո՞ր օրհնությունն է նշանակալից ձեզ համար:
- Ինչպիսի՞ եղանակներով եք դուք և ձեր ընտանիքը մասնակցում ընտանեկան պատմության և տաճարային աշխատանքին: Ի՞նչ օրհնություններ եք ստացել դրա արդյունքում:

Կարող եք հրավիրել ուսանողներին մտածել այն մարդու մասին, ով կարող է լինել նրանց խորհրդատուն՝ օգնելով կատարել ընտանեկան պատմության աշխատանք: Եթե որոշ ուսանողներ արդեն փորձառու են ընտանեկան պատմություն կատարելու գործում, հրավիրեք նրանց լինել դասարանի որևէ անդամի խորհրդատուն: Եթե ժամանակը թույլ է տալիս, կարող եք նաև ուսանողներին ցույց տալ ընտանեկան պատմության կայքէջը ChurchofJesusChrist.org/family-history և խրախոսեք նրանց լրացուցիչ զաղափարների համար ուսումնասիրել այդ կայքը, որ իմանան, թե ինչպես ավելի շատ մասնակցեն ընտանեկան պատմության աշխատանքին:

ԲԱՐԵԼԱԿԵԼ ՄԵՐ ՌԻՍՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Գործեք ըստ հոգևոր հուշումների: Եթե ավետարանի վարդապետությունը կամ ավետարանի որևէ սկզբունք սովորում են, սակայն չեն կիրառում, ուսումը լիարժեք չէ: Մենք կիրառում ենք ավետարանի ուսուցում, երբ ընդունում ենք ճշմարտությունը մեր սրտում, և հետո գործում ենք այդ ճշմարտության համաձայն: Հրավիրեք ուսանողներին գործել համաձայն իրենց ստացած հոգևոր հուշումների, որպեսզի կիրառեն իրենց սովորած ավետարանի ճշմարտությունները:

Կիսվեք Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ հայտարարությամբ:



Ես հրավիրում եմ ձեզ աղոթքով խորհել, թե ինչպիսի զոհաբերություն, և ցանկալի է ժամանակի զոհաբերություն, դուք կարող եք անել այս տարի, որպեսզի ընտանեկան պատմության և տաճարային ավելի շատ աշխատանք կատարեք: (Russell M. Nelson, RootsTech Family

Discovery Day—Opening Session 2017,
ChurchofJesusChrist.org)

Դասն ավարտեք՝ հրավիրելով ուսանողներին աղոթքով խորհել, ապա գրի առնել, թե ինչ հատուկ զոհաբերություններ են կատարելու, կամ ինչպիսի հատուկ քայլեր են ձեռնարկելու՝ ընտանիքի պատմության և տաճարային ծառայությանն ավելի լիարժեք մասնակցելու համար:

Հաջորդ անգամ

Ցուցադրեք տաճարի մի նկար: Բացատրեք, որ հնագույն ժամանակներից ի վեր, Տերը պատվիրել է Իր ժողովրդին տաճարներ կառուցել: Վերջին օրերի մարգարեները սովորեցրել են, որ ավետարանի լավագույն օրհնությունները կարելի է ստանալ Տիրոջ տաճարներում: Ուսանողներին հանձնարարեք ուսումնասիրել հաջորդ դասի նախապատրաստական նյութը և պատրաստ լինել քննարկելու, թե ինչպես է Տերն օրհնում մեզ տաճարային արարողությունների և տաճարային երկրպագության միջոցով:



ԴԱՍ 20. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԴԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Տաճարային արարողություններ և ուխտեր

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ուսուցանել է. «Մենք տաճար կառուցող և տաճար հաճախող ժողովուրդ ենք» («Բարի գալուստ համաժողով», *Ensign* կամ *Հիստորիա*, մայիս 2014, 5): Երբ ուսումնասիրեք այս նյութը, քննարկեք, թե տաճարային արարողություններն ինչու են հանդիսանում Հիստու Քրիստոսի ավետարանի Վերականգնման այդքան կարևոր մասը վերջին օրերում: Որոշեք, թե դուք ինչ կարող եք անել, որպեսզի տաճարային երկրպագությունը դարձնեք ձեր կյանքի առավել կարևոր մասը:

ԲԱԺԻՆ 1

Ինչպե՞ս կարող է տաճարային երկրպագությունն օրհնել իմ կյանքը:

2019 թվականին Առաջին Նախագահությունը հայտարարել է.

Երբ որ Տերը երկրի վրա ունեցել է մի ժողովուրդ, որը հնազանդվել է Իր խոսքին, նրանց պատվիրան է տվել տաճարներ կառուցել: Մուրբ գրությունները տաճարային երկրպագության օրինակներ են

վավերացրում Ադամի և Եվայի, Մովսեսի, Մողոմոնի, Նեփիի և ուրիշների ժամանակներից:


Այս վերջին օրերում ավետարանի վերականգնման հետ միասին վերականգնվել է նաև տաճարային երկրպագությունը, որպեսզի օրհնի մարդկանց կյանքը ամբողջ աշխարհում, ինչպես նաև վարագույրի մյուս կողմում: . . . Նվիրագործված տաճարը երկրի վրա գոյություն ունեցող երկրպագության ամենասուրբ վայրն է:: («Առաջին Նախագահության հայտարարությունը տաճարների վերաբերյալ», հունվար 2, 2019, newsroom .ChurchofJesusChrist.org)



Միամն ու եվան զոհաբերություն են մատուցում (Մովսես 5.5-7)



Բենիամին թագավորը քարոզում է Նեփիացիներին (2 Նեփի 5.16, Մոսիա 2.1, 3 Նեփի 11)



Տաճարը (Ելից 26-28)

Մեր տնտեսության մեջ առաջին տաճարը Կիրթլենդի տաճարն էր, որը կառուցվեց 1836թ.: Այդ տաճարի նվիրագործումը սկսվեց հոգևոր դրսևորումների հրաշալի ժամանակաշրջանում: Հավատարիմները զգում էին Սուրբ Հոգին, իսկ ոմանք խոսում էին լեզուներով, տեսիլքներ էին ունենում կամ տեսնում հրեշտակների: Այս ժամանակաշրջանի գլխավոր իրադարձությունը տեղի ունեցավ, երբ Կիրթլենդի տաճարում Փրկիչը հայտնվեց Ջոզեֆ Սմիթին ու Օլիվեր Քառուելիին տաճարի նվիրագործումից կարճ ժամանակ անց: Այդ ժամանակ Փրկիչն ասաց. «Ես ընդունել եմ այս տունը» (Վարդապետություն և Ուխտեր 110.7)



Սողոմոնի տաճարը (Ա Թագավորաց 6)





Մտածեք դասին Նախապատրաստվելիս

Մտածեք այն մի քանի զգացումների մասին, որոնք դուք ունեցել եք, երբ մտել եք Տիրոջ տաճարը:

1836թ. մարտի 27-ին Ջոզեֆ Մմիթն ասաց նվիրագործման աղոթքը (որի բառերը նա հայտնությամբ ստացել էր Տիրոջից) Կիրթլենդի Տաճարի համար: Նվիրագործման այս աղոթքը գրանցված է որպես՝ Վարդապետություն և Ուխտեր 109: Այդ աղոթքում Ջոզեֆը խնդրեց Տիրոջից որոշակի օրհնություններ տալ նրանց, ովքեր երկրպագում են տաճարում:



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 109.13, 22-26-ը:

Քույր Ջին Ա. Սթիվենսը՝ Երեխաների Միության Գերագույն Նախագահության առաջին խորհրդակցանը, ասաց հետևյալն այն օրհնությունների մասին, որոնք մենք ստանում ենք տաճարում:



Եթե ուզում ենք ստանալ բոլոր օրհնությունները, որ Աստված այնքան առատորեն առաջարկում է, ապա մեր երկրային ճանապարհը պետք է տանի դեպի տաճարը: Տաճարներն Աստծո սիրտ արտահայտությունն են: Նա բոլորիս հրավիրում է գալ, սովորել Իր մասին, զգալ Իր սերը, և ստանալ Իր հետ հավերժական կյանք ապրելու համար անհրաժեշտ քահանայության արարողությունները: Յուրաքանչյուր ուխտ կապվում է մեկ առ մեկ: Սրտի յուրաքանչյուր հզոր փոփոխություն կարևոր է Տիրոջ համար: Եվ այդ ամենը մեծ փոփոխություն կառաջացնի ձեր մեջ: Քանի որ երբ մենք գնում ենք [Նրա] սուրբ տունը, մենք կարող ենք լինել «[Նրա] զորությամբ զինված, . . . [Նրա] անունը . . . [մեզ] վրա, . . . [Նրա] փառքը

. . . [մեր] շուրջը, և [Նրա] հրեշտակները պահպանեն [մեզ]» [Վարդապետություն և Ուխտեր 109.22]:

. . . Նրա Սիրելի Որդու՝ Հիսուս Քրիստոսի շնորհիվ է, որ իրականանում է ամեն հույս, ամեն խոստում և տաճարային ամեն օրհնություն: (Ջին Ա. Սթիվենս, «Աստծո ուխտի դուստրերը», *Ensign* կամ *Liahona*, նոյեմբեր 2014, 117)



Քննարկեք ուրիշների հետ

Հարցրեք ընտանիքի որևէ անդամի, թե ինչ հատուկ օրհնություններ է նա զգացել իր կյանքում տաճարային արարողություններ ստանալու միջոցով և մասնակցելով տաճարային երկրպագությանը: Ի՞նչ եղանակներով է այդ մարդը զգացել Աստծո սերը՝ հաճախելով տաճար:

ԲԱԺԻՆ 2

Ինչո՞ւ է Տերը պատվիրում Իր ժողովրդին տաճարներ կառուցել:

Նախքան Տերը կպատվիրեր Սրբերին տաճար կառուցել Կիրթլենդում, Միսսուրիի Սրբերը նվիրագործեցին վայրը, որպեսզի տաճար կառուցեին Ինդիփենդենսում (Միսսուրի): Ավելի ուշ նրանք դրեցին հիմնաքարերը տաճարի համար Ֆար Ուեստում (Միսսուրի): Երկուսն էլ մնացին անավարտ, քանի որ Սրբերը դուրս քշվեցին իրենց տներից և սեփականությունից: 1840թ. հոկտեմբերի համաժողովին Սրբերն ընդունեցին Նավուում տաճար կառուցելու Մարզարեի կոչը: Կրկին, գոհաբերության ոգով տոգորված, Սրբերը սկսեցին ներդնել աշխատանք, փող և այլ միջոցներ՝ շինարարությանն օգնելու նպատակով: 1841թ. հունվարին Ջոզեֆ Մմիթը ստացավ մի հայտնություն, որը տրամադրեց այն լրացուցիչ պատճառները, թե Տերն ինչու պահանջեց, որ այս տաճարը կառուցվի: Այդ խորհուրդը գրված է Վարդապետություն և Ուխտեր 124-ում: Երբ ուսումնասիրեք հետևյալ հատվածները, դիտարկեք այն պատճառները, թե

Տերն ինչու է մեզ պատվիրում տաճարներ կառուցել այս վերջին օրերում:



Ուսումնասիրեք դասին նախապատրաստվելիս

Կարդացեք Վարդապետություն և Ուխտերի
124.27–28, 40–42-ը:

Տաճարում Սրբերը ստացան կարևոր արարողություններ, որոնք Տերը հայտնությամբ տվել էր Մարգարեին, ներառյալ՝ օժտման արարողությունը:

Այս [տաճարային] արարողությունների թվում կար մի ծես, որը կոչվում էր օժտում, որն ընդգրկում էր լվացման և օժման արարողությունը, որը Ջոզեֆը ներկայացրել էր Կիրթլենդի տաճարում 1836թ.: Վախենալով, որ իր երկրային օրերը կարող են ավարտվել՝ նախքան տաճարի ավարտումը, 1842թ. մայիսի 3-ին Ջոզեֆ Սմիթը մի քանի տղամարդու կանչեց, որպեսզի Կարմիր աղյուսից վաճառատան վերին սենյակը ձևավորեն «տաճարի ներսի նմանությամբ, որքանով որ հանգամանքները թույլ կտային»: Հաջորդ օրը Ջոզեֆը առաջին անգամ օժտում կատարեց խմբի ինը տղամարդկանց համար: (“Temple Endowment,” Church History Topics, ChurchofJesusChrist.org/study/church-history)



Օժտման այս արարողությունը «ուսուցանեց վեհացնող ճշմարտություններ: Այն հիմնվում էր Արարման և Եղեմի պարտեզի մասին պատմող սուրբգրյան պատմությունների վրա, . . . որպեսզի առաջնորդեր մարդկանց քայլ առ քայլ՝ փրկության ծրագրի միջոցով: Ինչպես Աբրահամը և այլ հնադարյան մարգարեները, նրանք ստացան գիտելիք, որը նրանց հնարավորություն կտար վերադառնալ Աստծո ներկայություն: Դրա հետ զուգահեռ տղամարդիկ ուխտեր կապեցին՝ ապրել արդարակյաց, մաքուր կյանքով և նվիրվել Տիրոջ ծառայությանը (*Saints: The Story of the Church of Jesus Christ in the Latter Days*, vol. 1, *The Standard of Truth*, 1815–1846 [2018], 453):

1843թ. սեպտեմբերի 28-ին [կամ ավելի շուտ] Էմմա Սմիթը դարձավ առաջին կինը, ով օժտում ստացավ: Ջոզեֆի խոստումը, որ Սփոփող Միության անդամները կտեսնեն, որ «օժտման օրհնությունները կշարունակվեն», հաստատվեց, երբ Էմման սկսեց օգնել արարողություններ վարել ուրիշ կանանց համար: (Jill Mulvay Derr and others, eds., *The First Fifty Years of Relief Society: Key Documents in Latter-day Saint Women's History* [2016], 10)



Չնայած սկզբում Ջոզեֆն ընդամենը մի քանի մարդու հրավիրեց մասնակցելու օծման արարողությանը, նա հստակ նախատեսել էր տաճարային արարողությունները միանգամայն մատչելի դարձնել արժանավոր Վերջին Օրերի Սրբերի համար: . . . Վիլլարդ Ռիչարդսը բացատրել է. «Ոչինչ հայտնի չդարձվեց [մեզ], բացի նրանից, ինչ հայտնի կդարձվի Վերջին Օրերի բոլոր Սրբերին, հենց որ նրանք պատրաստ լինեն ընդունելու, իսկ [տաճարը]՝ պատրաստ լինի նրանց հայտնելու համար:» (“Anointed Quorum (‘Holy Older’),” Church History Topics, ChurchofJesusChrist.org/study/church-history)



Մտածեք դասին Նախապատրաստվելիս

Մենք ի՞նչ կարող ենք սովորել Տիրոջ մասին՝ տաճարներ կառուցելու վերաբերյալ Իր Սրբերին տված պատվիրաններից: Տերն ինչո՞ւ էր ցանկանում, որ Իր ժողովուրդը օծում ստանար տաճարում:

ԲԱԺԻՆ 3

Ես և իմ սիրելի մարդիկ ինչպե՞ս կարող են օրհնվել տաճարային օծման շնորհիվ:

2019թ. ապրիլի գերագույն համաժողովին Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը Տասներկու Առաքյալների Քվորումից հրավիրեց Եկեղեցու բոլոր անդամներին ծանոթանալ նյութերին, որոնք հասանելի են temples.ChurchofJesusChrist.org (տես «Պատրաստվել ստանալու ամեն անհրաժեշտ բան», *Ensign* կամ *Լիստոնա*, մայիս 2019, 103–4): Այս վեբկայքից տաճարի օծման մասին մենք սովորում ենք հետևյալը.

Հետևյալ բառը՝ *օծում*, նշանակում է «պարգև»: Այս համատեքստում տաճարային օծումը բառացիորեն պարգև է

Աստծուց, որով Նա սրբազան օրհնություններ է շնորհում ձեր վրա [Հիսուս Քրիստոսի քավության շնորհիվ]: Օծումը կարելի է ստանալ միայն Նրա եղանակով և Նրա սուրբ տաճարում: Որոշ պարգևներ, որոնք դուք ստանում եք տաճարային օծման միջոցով, հետևյալն են.

1. Տիրոջ նպատակների և ուսմունքների մասին ավելի շատ գիտելիքներ:
2. Զորություն, որպեսզի անենք այն ամենը, ինչ Աստված է ցանկանում:
3. Աստվածային ուղղորդում և պաշտպանություն, երբ մենք ծառայում ենք Տիրոջը, մեր ընտանիքներին և ուրիշներին:
4. Աճող հույս, մխիթարություն և խաղաղություն:
5. Խոստացված օրհնություններ հիմա և ընդմիշտ: . . .

Այս արարողությունների հետ միասին, ձեզ կհրավիրեն հատուկ ուխտեր կապել Աստծո հետ: Այդ ուխտերն ընդգրկում են.

- Հնազանդության օրենքը
- Զոհաբերության օրենքը
- Ավետարանի օրենքը
- Մաքրաբարոյության օրենքը
- Նվիրաբերման օրենքը

Փոխարենը, Աստված խոստանում է հրաշալի օրհնություններ այս կյանքում և հնարավորությունը՝ վերադառնալ ու ընդմիշտ ապրել Իր հետ: (“About the Temple Endowment,” temples.ChurchofJesusChrist.org)

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը հետևյալն է ուսուցանել օծման հոգևոր նշանակության մասին.



Տաճարային օծումը տրվել է հայտնությամբ: Ուստի, այն լավագույնս ընկալվում է հայտնությամբ, որին պետք է եռանդով և մաքուր սրտով ձգտենք: Նախագահ Բրիգամ Յանգը բացատրել է, որ «ձեր օծումը, Տիրոջ տանը ձեզ համար անհրաժեշտ բոլոր ծեսերը ստանալն է, որն

այս կյանքից հեռանալուց հետո հնարավորություն կտա ձեզ վերադառնալ շոր ներկայություն, անցնելով որպես պահակներ կանգնած հրեշտակների մոտով, . . . և ստանալ ձեր հավերժական վեհացումը» [Discourses of Brigham Young, sel. John A. Widtsoe (1954), 416]: (Russell M. Nelson, “Preparing for the Blessings of the Temple,” *Ensign*, Oct. 2010, 42)



Գրի առեք ձեր մտքերը

Ի՞նչ կառաջարկեիք ինչ-որ մեկին անել, որպեսզի պատրաստվի ստանալ իր օծումը: Տաճարն ու նրա արարողությունները ինչո՞ւ են կարևոր ձեզ համար: Գրի առեք ձեր մտքերը օրագրում կամ ստորև հատկացված տեղում:

Ցանկանում ես ավելին: (Ոչ պարտադիր)

Ես ի՞նչ կարող եմ անել տաճարին պատրաստվելու համար:

Կարդացեք Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի «Պատրաստվեք տաճարի օրհնությունները

ստանալու համար» (*Ensign*, Oct. 2010, 40–51) հոդվածը ավելի օգտակար տեղեկություններ ստանալու համար:

Եկեղեցին ի՞նչ նյութեր է տրամադրում, որպեսզի օգնի ինձ ներկայացնել տաճարը ուրիշներին:

Հետևյալ տեսանյութերը կարող են օգտակար լինել տաճարին վերաբերող հարցերին պատասխանելու համար.

- «Two Apostles Lead a Virtual Tour of the Rome Italy Temple», Երեցներ Դեյվիդ Ա. Բեդնարի և Ռոնալդ Ա. Ռասբանդի հետ (11:31)
- «What Is a Temple Endowment?» (1:58)
- «Sacred Temple Clothing» (4:15)

Ի՞նչ տարբերություններ և նմանություններ կան տաճարային օծման և Մասոնության միջև:

Որոշ պատմաբաններ գրել են տաճարային օծման և մասոնության միջև նմանությունների մասին: Այս թեմայով տեղեկության համար կարդացեք հետևյալ բաժինը՝ «Մասոնությունը և օծումը» Եկեղեցու պատմության թեմաների հոդվածում «Մասոնություն» (ChurchofJesusChrist.org/study/church-history):

ԴԱՍ 20. ՈՒՍՈՒՑՉԻ ՆՅՈՒԹ

Տաճարային արարողություններ և ուխտեր

Երբ Նավուի տաճարը կառուցվում էր, Մարգարե Զոգեֆ Սմիթն ուսուցանեց. «Եկեղեցին լիովին կազմակերպված չէ, . . . մինչև տաճարը չավարտվի» (Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Զոգեֆ Սմիթ [2007], 416): Այս դասի նպատակն է մեծացնել ուսանողների հասկացողությունը տաճարային արարողությունների նշանակության վերաբերյալ և հրավիրել նրանց լավացնել տաճարային երկրպագության հաճախականությունն (ինչպես հանգամանքները թույլ կտան) ու որակը:

Ուսուցման առաջարկներ

Տերը վերականգնել է տաճարային փրկարար արարողությունները Զոգեֆ Սմիթի միջոցով:

Ցուցադրեք որևէ տաճարի նկար, որը ուսանողները կճանաչեն: Հրավիրեք մի քանի ուսանողների, ովքեր բավականություն են ստացել՝ երկրպագելով տաճարում, կիսվել, թե իրենք ինչպես են մտել Տիրոջ տունը: Կարող եք նաև հարցնել, թե նրանք ինչ են զգում, երբ հեռանում են տաճարից:

ԲԱՐԵԼԱՎԵԼ ՄԵՐ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Տվեք հարցեր, որոնք խրախուսում են կիրառումը: Հրավիրեք ուսանողներին պատասխանել հարցերին, որոնք խրախուսում են կիրառումը: Նմանատիպ հարցերը կարող են կարևոր դեր կատարել, երբ օգնում եք ուսանողներին տեսնել, թե քննարկված ճշմարտություններն ինչպես են կիրառվում իրենց ներկայիս իրավիճակներում, ինչպես նաև դիտարկում եք, թե նրանք ինչպես կարող են կիրառել ապագայում (տես *Gospel Teaching and Learning* [2012], 5.1.4):

Բացատրեք, որ երբ Սրբերը հաստատվել էին Նավուում (Իլինոյս), Մարգարե Զոգեֆ Սմիթը տաճար կառուցելու պատվիրան ստացավ: Ինչպես Կիրթլենդի տաճարի դեպքում, այս հանձնարարությունը ևս Վերջին Օրերի Սրբերից մեծ

զոհաբերություններ էր պահանջում: Երբ Նավուի Տաճարը կառուցվում էր, Մարգարե Զոգեֆ Սմիթը ուսուցանել է. «Եկեղեցին լիովին կազմակերպված չէ, . . . մինչև տաճարը չավարտվի» (*Ուսմունքներ. Զոգեֆ Սմիթ*, 416):

- Ձեր կարծիքով, Փրկիչի Եկեղեցու վերականգնումն ինչո՞ւ ավարտված չէր առանց տաճարի: (Հուշեք ուսանողներին կիսվել նախապատրաստական նյութի ուսումնասիրությունից իրենց սովորածով:)

Բացատրեք, որ Սրբերին տված Նավուի տաճարի կառուցման պատվիրանի հայտնության մեջ Տերը բացահայտեց, թե տաճարն ինչու այդքան կարևոր կլինի Սրբերի համար: Նա բացատրեց, որ լվացումները, օծոտումները, մկրտությունները մահացածների համար և այլ արարողություններ պատկանում են Նրա սուրբ տանը: Հրավիրեք ուսանողներին մի քանի բոլոր ուսումնասիրել Վարդապետություն և Ուխտեր 124.31, 34, 40–41, 55-ը, փնտրելով, թե Տերն ինչպես խոստացավ օրհնել Իր ժողովրդին տաճարներում:

Թող ուսանողները զեկույցեն՝ ինչ գտան: Օգտագործելով ուսանողների խոսքերը, ցուցադրեք կամ գրատախտակին գրեք նմանատիպ մի ճշմարտություն. **Տաճարում Տերն օրհնում է մեզ կարևոր արարողություններով, որպեսզի մենք կարողանանք պսակվել փառքով, անմահությամբ և հավերժական կյանքով:**

- Ձեր կարծիքով, տաճարային արարողություններն ինչպե՞ս են մեզ պատրաստում փառքի, անմահության և հավերժական կյանքի համար:



Ցուցադրեք Ջոզեֆի Կարմիր աղյուսից վաճառատունը Նափոտմ և խնդրեք ուսանողներին բացատրել, թե ինչ գիտեն տաճարային օժտման արարողության վերականգնման մասին: Խնդրեք նրանց անհրաժեշտության դեպքում կրկնել նախապատրաստական նյութի բաժին 2-ը:

- Ի՞նչ սովորեցիք օժտման օրհնությունների մասին նախապատրաստական նյութի բաժին 3-ից:

Երբ քննարկեք օժտումը, տվեք ներքևում թվարկված լրացուցիչ հարցերից մի քանիսը. Նշեք, որ Երեց Բեդնարը ուսուցանել է, որ երբ մենք խոսում ենք տաճարի մասին, մենք չպետք է «բացահայտենք կամ նկարագրենք տաճարային սուրբ արարողությունների ժամանակ ստացած ուխտերին վերաբերող հատուկ խորհրդանիշները», այլ մենք «կարող ենք քննարկել տաճարի արարողություններին և ուխտերին վերաբերող հիմնական նպատակները, սկզբունքներն ու վարդապետությունը» («Պատրաստվել ստանալու ամեն անհրաժեշտ բան», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2019, 103):

- Ի՞նչ է ներառում օժտման պարզվել: (Տես նախապատրաստական նյութի բաժին 3:)
- Ո՞րն է կապը արարողությունների և ուխտերի միջև:
- Նախապատրաստական նյութն ուսումնասիրելիս ի՞նչ սովորեցիք այն ուխտերի մասին, որը մենք կապում ենք օժտման արարողության ժամանակ:

- Ձեր կարծիքով, Տերն ինչո՞ւ է ցանկանում, որ մենք օժտում ստանանք տաճարում:

Ուսանողներին մի քանի բուրբ հատկացրեք, որպեսզի մեկ այլ ուսանողի հետ իրենց խոհերով կիսվեն նախապատրաստական նյութի վերջում տրված հետևյալ հարցերի մասին:

- Ի՞նչ կառաջարկեիք ինչ-որ մեկին անել, որպեսզի պատրաստվի ստանալ իր օժտումը: Տաճարն ու նրա արարողություններն ինչո՞ւ են կարևոր ձեզ համար:

Տաճարային երկրպագությունը մեր կյանք է հրավիրում Տիրոջ զորությունն ու օրհնությունները:



Հիշեցրեք ուսանողներին, որ Կիրթլենդի տաճարը առաջին տաճարն էր, որի կառուցումն ավարտվեց մեր տնտեսությունում: Դրա նպատակը տարբերվում էր հաջորդ տաճարների նպատակներից. այն Տիրոջ համար տեղ էր հատկացնում՝ վերականգնելու գիտելիքներ և քահանայության բանալիներ ապագա տաճարային երկրպագության համար: Այդ տաճարի նվիրագործման աղոթքի ժամանակ Ջոզեֆ Սմիթը խնդրեց Տիրոջից որոշակի օրհնություններ տալ նրանց, ովքեր երկրպագում են տաճարում: Հանձնարարեք ուսանողներին կրկնել Վարդապետություն և Ուխտեր 109.13, 22–26-ը և փնտրել օրհնությունները, որոնք նրանք կարող են ստանալ տաճարային երկրպագության միջոցով:

- Համաձայն այս հատվածների, մենք ի՞նչ օրհնություններ կարող ենք ստանալ, երբ երկրպագում ենք տաճարում: (Ուսանողների պատասխանները գրեք գրատախտակին և խնդրեք նրանց բացատրել, թե այդ օրհնություններն ինչու են կարևոր նրանց համար: Կարող եք օգնել ուսանողներին բացահայտել նմանատիպ մի սկզբունք. **Երբ մենք երկրպագենք Տիրոջ տաճարում, Նա կզինի մեզ Իր զորությամբ և պաշտպանությամբ:**)

Ուսանողների հետ քննարկեք պատճառները, թե մենք ինչու ունենք Տիրոջ զորության և պաշտպանության կարիքը մեր օրերում: Ուսանողներին, ովքեր հարցրել են ընտանիքի անդամի կամ որևէ ընկերոջ, թե ինչ հատուկ օրհնություններ էր նա զգացել տաճարային արարողությունների և երկրպագության միջոցով, խնդրեք կիսվել, թե նրանք ինչ են սովորել (տես նախապատրաստական նյութի բաժին 1-ի վերջում տրված հրավերը): Կարող եք նաև հրավիրել ուսանողներին վկայել այն օրհնությունների մասին, որոնք նրանք զգացել են իրենց տաճարային երկրպագության ժամանակ:

Ցուցադրեք և ուսանողների հետ կարդացեք Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ հայտարարությունը.



Խնդրում եմ, որ աղոթքով քննեք, թե ինչպես եք ծախսում ձեր ժամանակը: . . . Եթե տաճարը մոտ է գտնվում ձեր տանը, ես կոչ եմ անում գտնել եղանակներ Տիրոջ հետ պարբերաբար պայմանավորվածություններ ձեռք բերելու համար, լինել Նրա սուրբ տանը, իսկ հետո պահել այդ պայմանավորվածությունները ճշգրտությամբ և ուրախությամբ: Ես ձեզ խոստանում եմ, որ երբ զոհաբերություններ կատարեք, ծառայեք ու երկրպագեք Տիրոջ տաճարներում, Նա ցույց կտա հրաշքներ, որոնք, Իր կարծիքով, ձեզ անհրաժեշտ են: (Ռասսել Մ. Նելսոն, «Դառնալ օրինակելի

Վերջին Օրերի Սրբեր,» *Ensign* կամ *Liahona*, նոյեմբեր 2018, 114)

Որպեսզի օգնեք ուսանողներին խորապես մտածել Տիրոջ հանդեպ իրենց պարտականության և տաճարի հետ իրենց փորձառության մասին, ցուցադրեք հետևյալ հարցերը և հրավիրեք ուսանողներին խորհել այն հարցերի մասին, որոնք առնչվում են իրենց ներկայիս հանգամանքներին: Ուսանողներին բավարար ժամանակ տվեք մտածելու և նույնիսկ իրենց տպավորությունները գրանցելու համար:

1. Արդյո՞ք անարժան լինելու վերաբերյալ շեղող հարցերն ու խնդիրները ինձ հետ են պահում տաճարից: Ես ի՞նչ պետք է անեմ այս խոչընդոտները վերացնելու համար:
2. Ինչպիսի՞ զոհաբերություններ է Տերը ցանկանում, որ ես կատարեմ, որպեսզի ավելի շատ օրհնություններ ստանամ տաճարային երկրպագության միջոցով:
3. Ինչպե՞ս կարող եմ ավելի իմաստալի դարձնել իմ տաճարային երկրպագությունը:
4. Ըստ Տիրոջ, ես ի՞նչ եղանակներով պետք է օգնեմ ուրիշներին՝ ստանալու տաճարային օրհնությունները:

Հաջորդ անգամ

Նշեք, որ հաջորդ դասին ուսանողները հնարավորություն կունենան քննարկելու տաճարային բարձրագույն արարողությունը՝ հավերժական ամուսնությունը: Խրախուսեք ուսանողներին ուշադիր կարդալ նախապատրաստական նյութի դաս 21-ը և քննարկել, թե ամուսնությունն ու ընտանիքը ինչու են այդքան կարևոր երկնային Հոր երջանկության ծրագրում:



ԴԱՍ 21. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Հավերժական ամուսնության և ընտանիքի վարդապետությունը

Նախագահ Դալլին Հ. Օուքսն ուսուցանել է, «Մահկանացու կյանքի և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու առաքելության նպատակն է նախապատրաստել Աստծո որդիներին և դուստրերին իրենց ճակատագրին՝ դառնալու մեր Երկնային ծնողների նման» (“Same-Gender Attraction,” *Ensign*, Oct. 1995, 7): Երբ ուսումնասիրեք հավերժական ամուսնության և ընտանիքի վարդապետությունը, բացահայտեք այնպիսի սկզբունքներ, որոնք կարող են օգնել ձեզ հասկանալ, թե ինչպես են ամուսնությունն ու ընտանիքը պատրաստում մեզ, որպեսզի դառնանք մեր Երկնային Ծնողների նման:

ԲԱԺԻՆ 1

Ո՞րն է ամուսնության նպատակն Աստծո հավերժական ծրագրում:

1831 թվականին Լեման Քուփլի անունով Եկեղեցու մի նորադարձ անդամ այցելեց Մարգարե Զոզեֆ Սմիթին: Լեմանը նախկինում Շեյքերների խմբի անդամ էր, որը կրոնական մի աղանդ էր, որը մերժում էր ամուսնությունը և հավատում էր, որ լիովին ամուրի լինելը (զերծ մնալ սեռական հարաբերություններից) քրիստոնեական նվիրվածության բարձրագույն կարգավիճակն է: Լեմանի այցից հետո Մարգարե Զոզեֆ Սմիթը Տիրոջը հարցրեց Շեյքերների ուսմունքների մասին և ստացավ հայտնություն, որը գրված է Վարդապետություն

և Ուխտեր 49 բաժնում: (Հնարավոր է, որ օգտակար համարեք կարդալ այդ բաժնի նախաբանը): Կարող եք հետևյալ հատվածում նշել այն բառերը և արտահայտությունները, որոնք ուսուցանում են ամուսնության մասին Տիրոջ վարդապետության վերաբերյալ:



**Ուսումնասիրեք դասին
Նախապատրաստվելիս**

Կարդացեք Վարդապետություն 49.15–17
(տես նաև Հակոբ 2.27–30):

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը բացատրել է, թե ինչու է ամուսնությունը կարգված Աստծո կողմից: Կարող եք նշել այն, թե նրա պատասխանից ինչը կարևորվեց ձեզ համար:



Երկու համոզիչ վարդապետական փաստարկներ կան, որ օգնում են մեզ հասկանալ, թե ինչու է հավերժական ամուսնությունը Էական Հոր ծրագրում:

Փաստարկ 1. Տղամարդու և կնոջ հոգիների բնությունը լրացնում և կատարյալ են դարձնում միմյանց և այդպիսով նախատեսված է, որ տղամարդիկ և կանայք միասին զարգանան դեպի վեհացում: . . .

. . . Անհրաժեշտ էր թե՛ տղամարդկանց, և թե՛ կանանց հոգևոր, ֆիզիկական, մտավոր և հուզական կարողությունների եզակի համադրությունը, որպեսզի երջանկության ծրագիրն իրականանար: Ո՛չ տղամարդը, և ո՛չ էլ կինը միայնակ չէին կարող իրագործել իրենց ստեղծման նպատակները: . . .

Փաստարկ 2. Աստվածային ծրագրի համաձայն, անհրաժեշտ էր թե՛ տղամարդու և թե՛ կնոջ մասնակցությունը՝ երեխաներ լույս աշխարհի բերելու և նրանց զարգացման ու դաստիարակման համար լավագույն պայմաններ ապահովելու համար:

Դեռևս ուժի մեջ է մնում Ադամին և Եվային տված շատանալու և երկիրը լցնելու վերաբերյալ պատվիրանը: . . . Այսպիսով, ամուսնությունը տղամարդու և կնոջ միջև լիազորված մի ուղի է, որի միջով նախաերկրային հոգիները մտնում են մահկանացու կյանք: . . .

Սիրող ու հավատարիմ ամուսնուց և կնոջից բաղկացած տունը լավագույն վայրն է, որտեղ երեխաները կարող են դաստիարակվել սիրով և արդարությամբ, և որտեղ երեխաների հոգևոր և ֆիզիկական կարիքները կարող են բավարարվել: Ճիշտ այնպես, ինչպես տղամարդկանց և կանանց յուրահատուկ բնութագրերը նպաստում են ամուսնական հարաբերությունների ամբողջականությանը, այդ

նույն բնութագրերն էլ կենսական են երեխաների զարգացման, դաստիարակման և ուսուցման համար: (Դեյվիդ Ա. Բեդնար, «Ամուսնությունը կարևոր է Նրա հավերժական ծրագրում», *Ensign*, հունիս, 2006թ., 83–84):



Մտածեք դասին Նախապատրաստվելիս

Ինչպե՞ս կբացատրեք այն, թե ինչու է ամուսնությունը տղամարդու և կնոջ միջև Էական դեր կատարում Աստծո ծրագրում:

ԲԱԺԻՆ 2

Որո՞նք են հավերժական ամուսնության օրինություններից մի քանիսը:

Նավուում Զոզեֆ Մմիթը սկսեց ավելի շատ ուսուցանել հավերժական ամուսնության վարդապետությունը: Դա նոր և զարմանալի վարդապետություն էր Սրբերի համար: Նրանցից շատերը հավատում էին, որ ամուսնությունը վերջանում է մահով:



Զոզեֆ և Էմմա Սմիթների մի նկար, ովքեր իրար հետ կնքվել էին հավերժության համար 1843 թվականի մայիսին:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Փարլի Պ. Պրատը նկարագրել է, թե ինչ է նա զգացել, երբ

Մարգարեն նրան ուսուցանել է հավերժական ամուսնության հնարավորության մասին:



[Ջոզեֆ Սմիթն] էր, որ ինձ ուսուցանեց, որ իմ կինը՝ իմ արտակից ընկերը, կարող է լինել ինձ հետ ժամանակի և ողջ հավերժության ընթացքում: . . . Նրանից էր, որ ես սովորեցի, որ այդ կապվածությունը պետք է սնել և դրանով աճել ու զարգանալ դեպի հավերժություն. այն ժամանակ, երբ մեր անվերջանալի միության արդյունքը կլինեն ժառանգները՝ այնքան շատ, որքան երկնքի աստղերն են կամ ծովի ավազը: . . .

Մինչ այդ ես սիրում էի, բայց չգիտեի, թե ինչու: Բայց հիմա ես սիրում էի անաղարտ սիրով՝ մի ուժեղ ու վեհ զգացումով:
(*Autobiography of Parley P. Pratt*, ed. Parley P. Pratt Jr. [2007], 260)

1843 թվականին Մարգարեն թելադրեց մի հայտնություն, որն այժմ գրված է Վարդապետություն և Ուխտեր 132 բաժնում, որտեղ գրված էր հավերժական ամուսնության վարդապետության մասին:



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 132.19-20:

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը բացատրել է.



Հավերժական կյանքին արժանանալու համար մենք պետք է հավերժական և հավիտենական ուխտ կապենք մեր Երկնային Հոր հետ [տես Վարդապետություն և Ուխտեր 132.19]: Դա նշանակում է, որ տաճարային ամուսնությունը միայն ամուսնու և կնոջ միջև չէ. այն ընդգրկում է նաև Աստծո հետ ընկերակցությունը [տես Մատթեոս 19.6]: . . .

. . . Երբ ընտանիքը կնքվում է տաճարում, այդ ընտանիքը կարող է դառնալ նույնքան հավերժական, որքան ինքը՝ Աստծո արքայությունը» [տես Վարդապետություն

և Ուխտեր 132.19–20]: (Ռասսել Մ. Նելսոն, «Սելենստիալ ամուսնություն», *Ensign* կամ *Liahona*, նոյ. 2008, 92-93)

Հավերժական ամուսնության օրհնությունները միայն հաջորդ կյանքի համար չեն: Նրանք, ովքեր ջանում են հավատարմորեն պահել իրենց ուխտերը, կարող են նաև այս կյանքում վայելել հավերժական ամուսնության օրհնությունները: Նախագահ Թոմաս Մ. Մոնսոնն ուսուցանել է.



Եթե խելամտորեն ընտրեք և եթե հանձն առնեք հաջող ամուսնություն կնքելու, այս կյանքում ոչինչ չի պարզվի ձեզ ավելի մեծ երջանկություն: («Քահանայության զորություն», *Ensign* կամ *Liahona*, մայիս, 2011թ, 67)

Եկեղեցու որոշ անդամներ հարցեր ունեն այն հանգամանքների վերաբերյալ, որոնք հնարավորություն չեն տալիս անհատներին ներկայումս ապրել հավերժական ամուսնության և ընտանիքի օրհնությունները: Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոնն անդրադարձել է այդ հարցին.



Ամուսնության և ընտանիքի վերաբերյալ հիմնական ճշմարտությունները հայտարարելը չի նշանակում անտեսել կամ թերազնահատել նրանց զոհաբերությունները և հաջողությունները, ում համար կատարելությունը ներկայիս իրականությունը չէ: Ձեզանից ոմանք գրկված են ամուսնության օրհնությունից բազմաթիվ պատճառներով, ինչպիսին են օրինակ կենսունակ հեռանկարների բացակայությունը, նույն սեռի հանդեպ համակրանքը, ֆիզիկական կամ մտավոր խնդիրները, կամ պարզապես ձախողվելու վախը, որը առնվազն մի պահ ստվերում է թողնում հավատը: Կամ միգուցե դուք ամուսնացել եք, սակայն այդ ամուսնությանը վերջ է դրվել, և դուք մենակ եք թողնվել հաղթահարելու այն, ինչը երկուսը միասին հազիվ են կարողանում գլուխ բերել: Ձեզանից ոմանք, ովքեր ամուսնացած են, չեն կարողանում երեխաներ ունենալ՝ անկախ մեծ ցանկությունից ու աղերսալի աղոթքներից:

... Մենք վստահաբար վկայում ենք, որ Հիսուս Քրիստոսի Զավությունը նախատեսված էր և, ի վերջո, կփոխհատուցի բոլոր նրանց զրկանքներն ու կորուստները, ովքեր դիմում են Նրան: Ոչ ոքի համար չի նախատեսված, որ պետք է ստանա ավելի քիչ, քան ամենը, որ Հայրն ունի Իր զավակների համար: (Դ. Թոդ Քրիստոֆերսոն, «Ինչո՞ւ ամուսնանալ, ինչո՞ւ ընտանիք ունենալ», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2015, 52-53)



Քննարկեք դասին Նախապատրաստվելիս

Բոլոր ամուսնությունները, հատկապես հավերժական ամուսնությունները, պահանջում են ջանք ու նվիրվածություն երկու ամուսինների կողմից: Զրուցեք ձեզ ծանոթ որևէ ամուսնական զույգի հետ, ովքեր ունեն ամուր և սիրով միություն և հարցրեք նրանց, թե ինչպես են նրանք հասել դրան: Հարցրեք նաև, թե ինչպես է նրանց ամուսնությունն իմաստավորել նրանց կյանքը: Պատրաստ եղեք կիսվել ձեր սովորածով դասարանի հետ:

ԲԱԺԻՆ 3

Ինչո՞ւ է ես պետք է պաշտպանեմ ամուսնության և ընտանիքի վարդապետությունը:

Վերականգնման շարունակությանը զուգահեռ Տերը ոգեշնչել է Իր մարգարեներին կարևորել ամուսնության և ընտանիքի վարդապետությունը: 1995 թվականի սեպտեմբերի ամսին տեղի ունեցած Սփոփող Միության գերագույն ժողովի ժամանակ, Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ներկայացրեց «Ընտանիք՝ Հայտարարություն Աշխարհին» հռչակագիրը: Այդ հռչակագրի վերջաբանում ուսուցանվում է, թե ինչո՞ւ է մենք պետք է պաշտպանենք ամուսնության և ընտանիքի վարդապետությունը:

Մենք զգուշացնում ենք, որ ընտանիքի քայքայումը անհատներին, համայնքներին և ազգերին կպատճառի այն դժբախտությունները, որոնց մասին կանխագուշակել էին հին ու նոր մարգարեները:

Մենք դիմում ենք պատասխանատու քաղաքացիներին և կառավարության պաշտոնյաներին ամենուր, որպեսզի պայմաններ ստեղծեն և միջոցառումներ անցկացնեն ուղղված ընտանիքների, որպես հասարակության հիմնական միավորների, պահպանմանն ու ամրապնդմանը: («Ընտանիք. Հայտարարություն աշխարհին», Church of Jesus Christ.org)

Քույր Զուլի Բ. Բեքը, Սփոփող Միության նախկին գերագույն նախագահը, բացատրել է «Ընտանիք. Հայտարարություն աշխարհին» հռչակագրի մեջ տեղ գտած ընտանիքի վարդապետությունն ուսումնասիրելու անհրաժեշտությունը:



Այս սերունդը կոչված կլինի պաշտպանելու ընտանիքի վարդապետությունը, ինչպես երբևէ նախկինում: Եթե նրանք չգիտեն այն, նրանք չեն կարող պաշտպանել այն: . . .

Նախագահ [Սպենսեր Վ.] Զիմբալեն ասել է.

Անցյալի սոցիալական բազմաթիվ սահմանափակումներ, որոնք նպաստել են ընտանիքի զորացմանը և ընտանիքի զարգացմանը, քայքայվում և անհետանում են: Կգա ժամանակը, երբ միայն նրանք, ովքեր մեծապես և ակտիվորեն հավատում են ընտանիքին, կկարողանան պահպանել իրենց ընտանիքները՝ մեր շուրջը հավաքվող չարիքի մեջ» [Spencer W. Kimball, "Families Can Be Eternal," *Ensign*, Nov. 1980, 4]: (Julie B. Beck, "Teaching the Doctrine of the Family," *Ensign*, Mar. 2011, 17)

Երիտասարդ Կանանց նախկին գերագույն նախագահ Քույր Բոննի Լ. Օսկարսոնն ուսուցանել է.



Մենք պետք է համարձակորեն պաշտպանենք Տիրոջ հայտնած վարդապետությունները, որոնք նկարագրում են ամուսնությունը, ընտանիքները, տղամարդկանց և կանանց աստվածային

դերերը և տան կարևորությունը որպես սրբազան վայր, նույնիսկ այն ժամանակ, երբ աշխարհն աղաղակում է մեր ականջներին, որ այս սկզբունքները հնացել են, սահմանափակող են և այլևս տեղին չեն: Յուրաքանչյուրը, անկախ ամուսնական կարգավիճակից կամ երեխաների քանակից, կարող է պաշտպանել Տիրոջ ծրագիրը, որը նկարագրվում է ընտանիքի վերաբերյալ հայտարարությունում: Եթե դա Տիրոջ ծրագիրն է, այն պետք է նաև մեր ծրագիրը լինի: . . .

. . . Եկեք լինենք պաշտպաններն այն ամուսնության, որը կարգվել է Տիրոջ կողմից, մինչ կշարունակենք սեր և կարեկցանք ցուցաբերել նրանց հանդեպ, ովքեր ունեն այլ տեսակետներ: (Բոննի Լ. Օսկարսոն, «Ընտանիքի վերաբերյալ հայտարարության պաշտպանները», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2015, 15)



Գրի առեք ձեր մտքերը

Ձեր օրագրում կամ տրամադրված տարածքում գրեք ձեր մտքերն այն մասին, թե ինչպես կարող է չափափաս երիտասարդը լինել ամուսնության և ընտանիքի պաշտպան: Արդյո՞ք երբևէ պաշտպանել եք ամուսնության վարդապետությունը: Կպատմե՞ք ձեր փորձառության մասին:

Ցանկանում ես ավելին: (Ոչ պարտադիր)

Մարգարեներն ի՞նչ են ուսուցանել ամուսնության և ընտանիքի վերաբերյալ:

Գտեք Եկեղեցու առաջնորդների վերջին խորհուրդը ամուսնության և ընտանիքի վերաբերյալ.

Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Զվորումը, «Ընտանիք. Հայտարարություն աշխարհին», ChurchofJesusChrist.org:



Դ. Թոդ Զրիստոֆերսոն, «Ինչո՞ւ ամուսնական, ինչո՞ւ ընտանիք ունենալ», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2015, 50-53:

Որո՞նք են ամուսնության օգուտները:

Renaissance of Marriage տեսանյութում Նախագահ Հենրի Բ. Այրինգը քննարկում է այն բազում օրինությունները, որոնք ամուսնությունը կարող է բերել մեր կյանք:

Ի՞նչ է Եկեղեցին ուսուցանում միասեռ ամուսնության մասին:

Ավետարանի թեմաների «Միասեռ ամուսնություններ» էջում ներկայացված է Եկեղեցու դիրքորոշումը միասեռ ամուսնությունների վերաբերյալ:

Ի՞նչ է Եկեղեցին ուսուցանում ամուսնալուծության վերաբերյալ:

Marriage and Divorce տեսանյութում Նախագահ Դալլին Հ. Օուքսն ուսուցանում է, որ Փրկիչի քավությունը կարող է բուժել խնդրահարույց կամ կոտրված ամուսնության ցավը:

ԴԱՍ 21. ՈՒՍՈՒՑԶԻ ՆՅՈՒԹ

Հավերժական ամուսնության և ընտանիքի վարդապետությունը

Որպես Վերականգնման մաս, Տերը հայտնեց Իր կամքը՝ հավերժական ամուսնության և ընտանիքի վերաբերյալ: Այս դասը նախատեսված է, որպեսզի օգնի ուսանողներին ավելի լավ բացատրել հավերժական ամուսնության և ընտանիքի վարդապետությունը որոշել, թե ինչ կարող են անել այս օրհնությունները ստանալու համար:

Ուսուցման առաջարկներ

Տղամարդու և կնոջ ամուսնությունը նպատակ ունի Աստծո ծրագրի մեջ:



Դասը սկսեք հետևյալ հարցով (հիշեցրեք ուսանողներին զերծ մալ մարդկանց հասցեին քննադատակ դիտողություններ անելուց)։

- Ներկայումս աշխարհում ի՞նչ տեսակետներ ու վերաբերմունք եք տեսնում ամուսնության վերաբերյալ:

Բացատրեք, որ ինչպես մեր օրերում, Ջոզեֆ Սմիթի օրոք որոշ մարդիկ տարբեր տեսակետներ ունեին ամուսնության վերաբերյալ: Հանձնարարեք ուսանողներին նախապատրաստական նյութի բաժին 1-ից հիշել, թե ինչ են նրանք սովորել ամուսնության վերաբերյալ Շեյքերների համոզմունքներից:

Ուսանողներից մեկին խնդրեք բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 49.15-17 հատվածները: Դասարանին խնդրեք ուշադրություն դարձնել այն վարդապետությանը, որը Տերը հայտնեց ամուսնության վերաբերյալ:

- Այդ հատվածում Տերն ի՞նչ ուսուցանեց ամուսնության վերաբերյալ: (Ուսանողները կարող են բացահայտել մի քանի ճշմարտություններ, այդ թվում նաև հետևյալը: **Ամուսնությունը կարգված է Աստծո կողմից: Ամուսիններին ու կանանց պատվիրված է երեխաներ ունենալ: Երբ տղամարդիկ ու կանայք ամուսնանում և երեխաներ են ունենում, նրանք օգնում են իրականացնել Երկիրը ստեղծելու Աստծո նպատակը:** Կարող եք գրատախտակի վրա ցուցադրել կամ գրել այդ մտքերից մի քանիսը կամ բոլորը:)

Կարող եք բացատրել, որ «մարդկանց քանակը» արտահայտությունը հատված 17-ում վերաբերում է Աստծո այն հոգևոր զավակներին, որոնց Նա պատրաստել էր Երկիրը բնակեցնելու համար: Բացատրեք նաև, որ «ամուսնությունն Աստծո կողմից է կարգված» արտահայտությունը 15-րդ հատվածում նշանակում է, որ ամուսնությունը հրահանգվում և հաստատվում է Աստծո կողմից: 1995 թվականին Տերն Իր մարգարեների միջոցով «Ընտանիք. Հայտարարություն աշխարհին»-ում վերակարևորեց այն, որ (ChurchofJesusChrist.org) «տղամարդու և կնոջ միջև ամուսնությունը կարգված Աստծո կողմից»:

Հրավիրեք ուսանողներին համառոտ կարդալ նախապատրաստական նյութի Երեք Դեյվիդ Ա. Բեդնար հայտարարությունը բաժին 1-ից: Խնդրեք դասարանին ուշադրություն դարձնել, թե ինչու է

ամուսնությունը տղամարդու և կնոջ միջև էական դեր կատարում էրկնային Հոր ծրագրում:

- Երեց Բեդնարի ուսմունքներն ինչպե՞ս են ամրապնդում ձեր գիտելիքն առ այն, որ տղամարդու և կնոջ միջև ամուսնությունը էական դեր է կատարում Աստծո ծրագրում:

Վաղ օրերի Սրբերն իմացել են հավերժական ամուսնության օրհնությունների մասին:

Եթե ունեք ուսանող, ով ամուսնացած է եղել տաճարում, կարող եք հարցնել նրան, թե ինչ է նրա համար նշանակում ամուսնանալ հավերժության համար: Բացատրեք, որ Նավուի Տաճարի կառուցումից առաջ, Ջոզեֆն ուսուցանեց հավերժական ամուսնության վարդապետությունը Եկեղեցու հավատարիմ անդամներին և կնքեց նրանց իրար հետ: Ուսանողներից մեկին հրավիրեք բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 131.1-4 հատվածները: Դասարանի անդամներին խնդրեք հետևել և ուշադրություն դարձնել, թե ինչ ուսուցանեց Մարգարեն:

- Ի՞նչ ճշմարտություն կարող ենք սովորել այս հատվածներից հավերժական ամուսնության մասին: (Ուսանողների պատասխանից հետո ցույց տվեք հետևյալ սկզբունքը. **Որպեսզի հասնենք սելեստիալ արքայության ամենաբարձր աստիճանին, մենք պետք է մտնենք ամուսնության նոր և հավիտենական ուխտի մեջ:** Կարող եք նշել, որ սելեստիալ արքայության միայն ամենաբարձր աստիճանում կարող ենք վեհացում ստանալ:)

Ուսանողներին մատնանշեք, որ Վարդապետություն և Ուխտեր 132.19 հատվածում Տերը շարունակեց ուսուցանել, որ մենք պետք է «մնանք [Իր] ուխտի մեջ», որպեսզի ստանանք վեհացման օրհնությունը:

- Ի՞նչ է նշանակում ձեզ համար «մնալ [Իր] ուխտի մեջ», որը վերաբերում է հավերժական ամուսնությանը:

Կարող եք ընդգծել, որ միայն տաճարում կնքվելը բավարար չէ: Ամուսիններից երկուսն էլ պետք է

ջանասեր պահեն իրենց տաճարային ուխտերը և հաստատեն ամուր ու կայուն հարաբերություններ:

«Եվ մնանք» բառակապակցությունն ավելացրեք ցուցադրված սկզբունքի մեջ, որպեսզի կարդացվի այսպես. «... **մենք պետք է մտնենք և մնանք ամուսնության նոր և հավիտենական ուխտի մեջ**»:

Ուսանողներին խնդրեք գրատախտակի վրա թվարկել հավերժական ամուսնության օրհնություններից մի քանիսը: (Հրավիրեք ուսանողներին նկարել այն, ինչ նրանք սովորել են նախապատրաստական նյութի բաժին 2-ից):

- Այդ օրհնություններից որո՞նք են հատկապես նշանակալից ձեզ համար: Ինչո՞ւ:

ԲԱՐԵԼԱՎԵԼ ՄԵՐ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Ուսանողներին օգնեք պատրաստվել դասին:

Դասին ինքնուրույն պատրաստվող ուսանողները գործադրում են իրենց հավատքը Տիրոջ հանդեպ և առ այն, որ Նա կարող է օգնել նրանց ավելի խորիմաստ ուսումնական փորձառություն ունենալ: Հիշեցրեք ուսանողներին, որ նրանք կարող են կատարել ուսման գործընթացի իրենց մասը, եթե ուսումնասիրեն նախապատրաստական նյութը և ավարտեն ուսումնական վարժությունները: Կարող եք անդրադառնալ առաջիկա դասին կամ դասերին, որպեսզի ուսանողներին տեղեկացնեք, թե ինչ կարող են անել հաջորդ դասին պատրաստվելու համար:

Հիշեցրեք ուսանողներին, որ նախապատրաստական նյութն անցնելիս նրանց խնդրել էին զրուցել իրենց ծանոթ որևէ ամուսնական զույգի հետ, ովքեր ունեն ամուր և սիրով միություն: Ուսանողներին խնդրել էին քննարկելու, թե ինչ է արել այդ զույգը հավերժական ամուսնություն հաստատելու համար և ինչպես է նրանց ամուսնությունն իմաստացրել նրանց կյանքը: Հրավիրեք մի քանի ուսանողի դասարանի հետ կիսվել, թե ինչ են սովորել այդ զրուցների ընթացքում:

Հրավիրեք ուսանողներին աղոթքով խորհել, թե ինչ հատկանիշներ, բնութագրեր կամ գործողություններ կօգնեն նրանց մնալ ամուսնական ուխտի մեջ և հաստատել սիրառատ, արդարակյաց ամուսնություններ: Ժամանակ հատկացրեք ուսանողներին գրի առնել և գործելու ծրագիր կազմել՝ հետևելով իրենց ստացած հուշումներին:

Աստված կամենում է, որ մենք պաշտպանենք ամուսնության և ընտանիքի վարդապետությունը:

Հարցրեք հետևյալը.

- Ինչու՞ է կարևոր մեզ համար պաշտպանել ամուսնության և ընտանիքի վարդապետությունը: (Ուսանողները կարող են կրկնել նախապատրաստական նյութի 3-րդ բաժինը, որը նրանց կօգնի պատասխանել այս հարցին):
- Արդյո՞ք երբևէ պաշտպանել եք ամուսնության կամ ընտանիքի վարդապետությունը: Եթե այո, ապա կապամե՞ք ձեր փորձառության մասին:

Հետևյալ տեքստը ցուցադրեք ուսանողներին և խնդրեք նրանց հիշել, թե արդյոք նրանք երբևէ լսել են որևէ բան, որն արտացոլում է հետևյալ վերաբերմունքը.

«Ինչո՞ւ եք ցանկանում առումսանալ հիմա: Ձեր ողջ կյանքն առջևում է: Ինչո՞ւ չեք ցանկանում այս ժամանակն օգտագործել զվարճանալու և կյանքում սափելի շատ բաների հասնելու համար»:

Հիշեցրեք ուսանողներին, որ հոգևոր գիտելիք ձեռք բերելու սկզբունքներից մեկը հասկացությունները և հարցերը հավերժական տեսանկյունից քննելն է: Հետևյալ վարժությունը կարող է օգնել ուսանողներին գործնականում կիրառել այս սկզբունքը, քանի որ այն առնչվում է ամուսնությանը վերաբերող հարցերին:

Ուսանողներին բաժանեք փոքր խմբերի և հրավիրեք նրանց քննարկել, թե ինչպես կպատասխանեն այն մարդուն, ով ունի այդ հեռանկարը: Ուսանողներին տվեք հետևյալ հարցերի օրինակները (կամ ցուցադրեք դրանք), որը կուղղորդի նրանց քննարկումը:

- Ի՞նչ ենթադրություններ կարող է ունենալ այդ անձը, ինչը կարող է սահմանափակել ամուսնության և ընտանիքի կարևորության մասին նրա տեսակետը:
- Ամուսնությունն ու ընտանիքը Աստծո փրկության ծրագրի տեսանկյունից հասկանալի ինչպե՞ս է օգնում արձագանքել այդ մարդու կարծիքին:
- Ի՞նչ վարդապետություններ, սուրբ գրություններ կամ մարգարեական ուսմունքներ կարող եք մեջբերել, որոնք կօգնեն այդ մարդուն ամուսնությունն ու ընտանիքը տեսնել հավերժական տեսանկյունից:

Բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո խնդրեք մի քանի ուսանողների կիսվել իրենց խմբերի քննարկումներով:

Դասի վերջում կիսվեք այս դասին բացահայտված ճշմարտությունների վերաբերյալ ձեր վկայությամբ:

Հաջորդ անգամ

Ավարտելով դասը, հիշեցրեք ուսանողներին, որ Տերը նաև Մարգարե Ջոզեֆ Մմիթին հայտնեց բազմակի ամուսնության վարդապետությունը: Խրախուսեք ուսանողներին ուշադիր կարդալ դաս 22-ի նախապատրաստական նյութը և պատրաստ ներկայանալ դասին, որպեսզի քննարկեն, թե ինչու են վաղ օրերի Սրբերը կիրառել բազմակի ամուսնությունները:



ՀԱՍ 22. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Բազմակի ամուսնություն

Տերն ուսուցանել է Աբրահամին, որ մահկանացու կյանքի նպատակներից մեկը «ստուգելն» է Աստծո զավակներին, «որպեսզի տեսնեն, թե արդյոք նրանք կանեն այն ամենը, ինչ Տերը՝ իրենց Աստվածը, կաատվիրի նրանց» (Աբրահամ 3.25): Աստծո պատվիրաններից մի քանիսը կարող են շատ դժվար թվալ, հատկապես, երբ դրանք հակառակ են մշակութային կանոններին կամ մեր սեփական սպասումներին: Ուսումնասիրելիս խորհեք, թե ինչ կարող եք սովորել բազմակի ամուսնությունը կիրառելու Տիրոջ պատվիրանի հանդեպ Մարգարե Զոգեֆ Սմիթի և վաղ Սրբերի արտակարգ հավատքի և հնազանդվելու մասին:

ԲԱԺԻՆ 1

Ինչու Մարգարե Զոգեֆ Սմիթը և վաղ օրերի Սրբերից շատերը կիրառեցին բազմակի ամուսնությունը:

1831 թվականին, երբ Զոգեֆ Սմիթն աշխատում էր Հին Կտակարանի ոգեշնչված թարգմանության վրա, նա աղոթեց, որ հասկանար, թե ինչու հնադարյան որոշ մարգարեներ և իսրայելացի թագավորներ կիրառել են բազմակի ամուսնությունը (տես բաժնի վերնագիրը և հատված 1-ը՝ Վարդապետություն և Ուխտեր 132-ում): Տերը հայտնություն տվեց Մարգարեին:



**Ուսումնասիրեք դասին
Նախապատրաստվելիս**

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 132.34-37:

37-րդ հատվածում *հայր* բառը վերաբերում է Նոր Կտակարանի այն կանանց, ովքեր օրինական ամուսնացած էին տղամարդու հետ, սակայն ունեին կնոջից ցածր սոցիալական կարգավիճակ: Մեր տնտեսության մեջ հարձերը բազմամուսնության մաս չեն հանդիսանում:

Երբ Տերը բացահայտեց բազմակի ամուսնության սկզբունքը Ջոզեֆ Սմիթին, Նա պատվիրեց Մարգարեին ապրել այդ սկզբունքով և ուսուցանել այն ուրիշներին: Չնայած մենք չենք հասկանում Աստծո բոլոր նպատակները Եկեղեցու վաղ օրերին բազմակնությունը սկսելու վերաբերյալ, դրա ներկայացումը վերջին օրերի «բոլոր բաների» վերականգնման մասն էր (Վարդապետություն և Ուխտեր 132.40, 45, տես նաև Գործք Առաքելոց 3.19–21):

ԲԱԺԻՆ 2

Ի՞նչ գիտենք Մարգարե Ջոզեֆ Սմիթի բազմակի ամուսնության փորձառության մասին:

Ջոզեֆ Սմիթին մոտ կանգնած անձինք հայտնում են, որ նա պատմել է նրանց, որ 1834-1842 թվականներին Աստծո հրեշտակը հայտնվել է նրան երեք անգամ և պատվիրել նրան ապրել բազմակի ամուսնության սկզբունքով: «Հատվածական ապացույցները ցույց են տալիս, որ Ջոզեֆ Սմիթը գործեց հրեշտակի առաջին պատվիրանի համաձայն՝ 1830-ականների կեսերին Կիրթլենդում (Օհայո) բազմակնության վերցնելով Ֆանի Ալջեր անունով մի կնոջ: . . . Այդ ամուսնության մասին շատ բան հայտնի չէ, և Ջոզեֆի ու Էմմայի միջև Ալջերի վերաբերյալ խոսակցությունների մասին ոչինչ հայտնի չէ: Երբ Ալջերի հետ ամուսնությունն ավարտվեց բաժանումով, Ջոզեֆը, կարծես թե, մի կողմ թողեց բազմակնության մասին թեման մինչև այն պահը, երբ Եկեղեցին տեղափոխվեց Նավու (Իլինոյս)» («Plural Marriage in Kirtland and Nauvoo,” Gospel Topics, topics.ChurchofJesusChrist.org):

1841 թվականից սկսած, Մարգարե Ջոզեֆ Սմիթը հնազանդվելով Տիրոջ պատվիրանին, ամուսնացավ ուրիշ կանանց հետ և բազմակի ամուսնության սկզբունքը ներկայացրեց Եկեղեցու սահմանափակ թվով այլ անդամների:

Էլիզա Ռ. Մնոուն, ով կնքված էր Մարգարե Ջոզեֆ Սմիթի հետ, իսկ ավելի ուշ ծառայեց Սփոփող Միության երկրորդ խորհրդական, պատմել է.



Մարգարե Ջոզեֆը . . . նկարագրել է այն հոգեվարքը, որ Նա ապրում էր իր զգացմունքների հակակրանքը հաղթահարելու համար՝ բազմակնությունը

ներկայացնելու վերաբերյալ: Նա ճանաչում էր Աստծո ձայնը, գիտեր, որ իրեն տրված Ամենակարողի պատվիրանը առաջ գնալն էր: . . . Նա գիտեր, որ ոչ միայն ստիպված էր պայքարել և հաղթահարել իր անձնական Նախապաշարմունքները [համոզմունքները], այլ նաև պայքարել ողջ քրիստոնյա աշխարհի դեմ, ով նայում էր իրեն, բայց Աստված, ով ամենից բարձր էր, պատվիրան էր տվել և Նա պիտի հնազանդվեր: (Eliza R. Snow, in *Biography and Family Record of Lorenzo Snow* [1884], 69)



Մտածեք դասին Նախապատրաստվելիս

Այդպիսի դժվարին պատվիրանին Մարգարե Ջոզեֆ Սմիթի պատրաստակամ հնազանդությունն ի՞նչ էր բացահայտում նրա հավատքի և բնավորության մասին:

Ջոզեֆ Սմիթի՝ բազմակնություն կիրառելու գործելակերպը չհասկանալու պատճառներից մեկն այն է, որ նա և մյուսները, ովքեր Նավույում կիրառել են բազմակնությունը, հազվադեպ էին դրա մասին նշումներ արել գրավոր գրառումներում: Բազմակնության կիրառման շատ մանրամասներ գաղտնի են պահվել, և պատմական գրառումները պարզապես չեն պատասխանում մեր բոլոր հարցերին:

Ավետարանի թեմաների հոդվածներից բազմակնության մասին սովորում ենք.

Բազմակնության կիրառման դարաշրջանում Վերջին Օրերի Սրբերը տարբերակում էին ժամանակի և հավերժության համար կատարվող կնքումները և միայն հավերժության համար կատարվող կնքումները: Ժամանակի և հավերժության համար կնքումները ներառում էին պարտավորություններ և հարաբերություններ այս կյանքի ընթացքում՝ հիմնականում ներառելով սեռական հարաբերությունների հնարավորությունը: Միայն հավերժության համար կնքումներում նշվում էր հարաբերությունները միայն հաջորդ կյանքում: . . .

Որոշ կանայք, ովքեր կնքվել էին Ջոզեֆ Սմիթի հետ, հետագայում վկայում էին, որ իրենց ամուսնությունները ժամանակի և հավերժության համար էին, մինչդեռ մյուսները նշում էին, որ իրենց հարաբերությունները միայն հավերժության համար էին:

Ջոզեֆ Սմիթի հետ կնքվածների մեծ մասը նրա հետ կնքվելիս 20-40 տարեկան էին: Ամենամեծը՝ Ֆանի Յանգը 56 տարեկան էր: Ամենաերիտասարդը Շելեն Մար Քիմբալն էր, . . . ով կնքվել էր Ջոզեֆի հետ իր 15 տարին լրանալուց մի քանի ամիս առաջ: Ամուսնությունն այդ տարիքում, որն անպատշաճ է ըստ մեր օրերի չափանիշների, օրինական էր այդ ժամանակ, և որոշ կանայք ամուսնանում էին դեռահաս տարիքում: Շելեն Մար Քիմբալը խոսել է Ջոզեֆի հետ իր կնքման մասին որպես «միայն հավերժության համար», ակնարկելով, որ նրանց միջև բացակայում էր սեռական հարաբերությունը: . . .

. . . Ջոզեֆ Սմիթը կնքվել է մի շարք կանանց հետ, ովքեր արդեն իսկ ամուսնացած են եղել: Ոչ այս կանայք, ոչ էլ Ջոզեֆը շատ բացատրություն չեն տվել այս կնքումների մասին, չնայած մի քանի կանայք ասել են, որ դրանք եղել են միայն հավերժության համար: . . .

Այս կիրառությունն ունի մի քանի հնարավոր բացատրություններ: Այս կնքումները միգրացիոն ուղի են պատրաստել՝ ստեղծելու հավերժական կապ Ջոզեֆի ընտանիքի և Եկեղեցու մյուս ընտանիքների միջև: . . .

Այս կնքումները կարող են բացատրվել նաև այն պատճառով, որ Ջոզեֆը դժկամությամբ է բազմակի ամուսնություններ կնքել, որպեսզի չվշտացնի իր կնոջը՝ Էմմային: Միգրացիոն հավատացել է, որ ամուսնացած կանանց հետ կնքումները կհամապատասխանեն Տիրոջ պատվիրանին՝ առանց պահանջելու սովորական ամուսնական հարաբերություններ ունենալ: . . .

Մեկ այլ հնարավորությունն այն է, որ մի դարաշրջանում, երբ կյանքի տևողությունն ավելի կարճ էր, քան այսօր է,

հավատարիմ կանայք զգացել են քահանայության իշխանությամբ կնքվելու հրատապությունը: Այս կանանցից մի քանիսն ամուսնացած էին ոչ անդամների կամ նախկին անդամների հետ, և բազմաթիվ կանայք հետագայում դժգոհություն են հայտնել իրենց ներկայիս ամուսնություններից: Ապրելով մի ժամանակաշրջանում, երբ ամուսնալուծությունը դժվար էր, այդ կանայք միգրացիոն հավատում էին, որ Ջոզեֆ Սմիթի հետ կնքումը իրենց օրինություններ կշնորհի, որոնք նրանք այլ կերպ չեն ստանա հաջորդ կյանքում: . . .

. . . Ջոզեֆի մահից հետո, նրա հետ կնքված կանանց մեծ մասը Սրբերի հետ տեղափոխվեց Յուտա և մնացին Եկեղեցու հավատարիմ անդամներ ու պաշտպանեցին ինչպես բազմակի ամուսնությունը, այնպես էլ՝ Ջոզեֆին: (“Plural Marriage in Kirtland and Nauvoo,” topics.ChurchofJesusChrist.org)

ԲԱԺԻՆ 3

Եկեղեցու անդամներն ինչպե՞ս արձագանքեցին բազմակի ամուսնության սկզբունքին:



Բազմակի ամուսնությունների կիրառությունը նույնքան օտար և դժվար էր վաղ Սրբերի համար, որքան դա կլինի Եկեղեցու անդամների համար մեր օրերում: «Աշխարհի շատ մասերում բազմակի ամուսնությունները ընդունելի էին

հասարակության մեջ և օրենքով թույլատրելի էին: Բայց Միացյալ Նահանգներում մարդկանց մեծամասնությունը կարծում էր, որ դրա կիրառությունը բարոյապես սխալ է» (“The Manifesto and the End of Plural Marriage,” Gospel Topics, topics.ChurchofJesusChrist.org): Բազմակնությունը կիրառելու պատվիրանը «վերականգնման առավել դժվարին կողմերից էր՝ ինչպես Ջոզեֆի, այնպես էլ Եկեղեցու մյուս անդամների համար: Ջոզեֆ Սմիթի կնոջ՝ Էմմայի համար դա վրդովվեցուցիչ հոգեվարք էր: Նա բազմիցս փոխել էր բազմակնության մասին իր տեսակետը, որոշ դեպքերում սատարելով այն, իսկ երբեմն էլ՝ դատապարտելով այն» (“Plural Marriage in Kirtland and Nauvoo,” topics.ChurchofJesusChrist.org):

Ոչ բոլոր Վերջին օրերի Սրբերից էր ակնկալվում կիրառել բազմակնի ամուսնությունները: Եվ Եկեղեցու որոշ անդամներ, ովքեր պայքարում էին բազմակնի ամուսնության սկզբունքի դեմ, օրինվեցին հոգևոր վկայությամբ, որը նրանց քաջություն տվեց առաջ ընթանալ և կիրառել այն: Երկու նման անդամների փորձառություններն ամփոփված են այստեղ.

Բրիգամ Յանգն ասել է, որ լսելով բազմակնի ամուսնության մասին, - «իմ կյանքում առաջին անգամ ցանկանում էի մեռնել»: «Ես ստիպված էի աղոթել անդադար», - ասել է նա, - «և ես պետք է հավատք գործադրեի և Տերը հայտնեց ինձ դրա ճշմարտության մասին, և դա ինձ բավարարեց»: . . .

Լյուսի Վոքերը հիշում էր իր հոգու շփոթմունքը, երբ Ջոզեֆ Սմիթը առաջարկեց նրան դառնալ իր կինը: «Իմ հոգու յուրաքանչյուր զգացում ապստամբեց դրա դեմ», - գրել է նա: Սակայն մի քանի անհանգիստ գիշերների ծնկաչոք աղոթքից հետո նա հանգստություն գտավ, երբ նրա սենյակը «լցվեց սուրբ ներգործությամբ», որը նման էր «արևի փայլուն շողերին»: Նա ասել է. «Իմ հոգին լցվեց հանգիստ, քաղցր խաղաղությամբ, որը ես երբեք չէի զգացել» և «իմ ողջ էությանը տիրեց գերազույն երջանկությունը»:

Ոչ բոլորն են նման փորձառություն ունեցել: Վերջին Օրերի Սրբերից ոմանք

մերժեցին բազմակնի ամուսնության սկզբունքը և հեռացան Եկեղեցուց, իսկ մյուսները հրաժարվեցին գործելակերպից, բայց մնացին հավատարիմ: Այնուամենայնիվ, շատ կանանց և տղամարդկանց համար նախնական վրդովմունքին և տառապանքին հաջորդեցին պայքարը, լուծումը և, ի վերջո, լույսն ու խաղաղությունը: Սրբազան փորձառությունը հնարավորություն տվեց Սրբերին առաջ շարժվել հավատքով: (“Plural Marriage in Kirtland and Nauvoo,” topics.ChurchofJesusChrist.org)



Մտածեք դասին Նախապատրաստվելիս

Եկեղեցու վաղ անդամների այս փորձառություններն ինչպե՞ս կարող են օգնել այն մարդուն, ով հարցեր ունի այն մասին, թե արդյոք Ջոզեֆ Սմիթը գործել է Աստծո ներշնչված մարգարեի նման, երբ իրականացրել է բազմակնի ամուսնության կիրառումը:

ԲԱԺԻՆ 4

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում ինչպե՞ս ավարտվեց բազմակնի ամուսնության կիրառությունը:

1844 թ-ին Մարգարե Ջոզեֆ Սմիթի մահից շատ չանցած, Սրբերը գաղթեցին Միացյալ Նահանգների արևմտյան տարածքի Մոլթ Լեյքի հովիտը, որտեղ, ի վերջո, Եկեղեցու անդամները բացահայտորեն կիրառեցին բազմակնի ամուսնությունները: 1860-ական թվականներից 1880-ական թվականներին Միացյալ Նահանգների կառավարությունը օրենքներ ընդունեց այդ կիրառության դեմ և, ի վերջո, դաժան պատիժներ կիրառեց նրանց համար, ովքեր չէին ենթարկվում այդ օրենքներին՝ ներառյալ ազատագրվումը: Տիրոջ առաջնորդությունը փնտրելուց և Նրա ցուցումները ստանալուց

հետո Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆը 1890 թվականի սեպտեմբերին պատրաստեց մի հայտարարություն, որը հայտնի դարձավ «Հռչակագիր» անվամբ (Պաշտոնական հայտարարություն 1), որն, ի վերջո, հանգեցրեց Եկեղեցու անդամների կողմից բազմակի ամուսնությունը կիրառելու ավարտին:

Հռչակագրից հետո Վերջին Օրերի Սրբերից քչերն էին շարունակում նոր բազմակի ամուսնություններ կնքել: 1904 թվականի գերագույն համաժողովի ժամանակ, Մարգարե Ջոզեֆ Ֆ. Մմիթը հրապարակեց երկրորդ հռչակագիրը և հայտարարեց «որ բոլոր [բազմակի] ամուսնություններն արգելվում են, և եթե Եկեղեցու որևէ պաշտոնյա կամ անդամ պաշտոնապես տոնի կամ կնքի այդպիսի ամուսնություն, նա Եկեղեցուց . . . կհեռացվի» (in Conference Report, Apr. 1904, 75): Այդ քաղաքականությունը շարունակվում է այսօր:

ԲԱԺԻՆ 5

Արդյո՞ք վեհացման համար անհրաժեշտ է բազմակի ամուսնությունը:

Յոթանասունից երեց Մարկուս Բ. Նաշն ուսուցանել է.



Ոմանք [սխալ են կարդում սուրբ գրությունները] և ասում են, որ բազմակի ամուսնությունն անհրաժեշտ է վեհացման համար: . . . Սակայն դա հաստատված չէ հայտնությամբ: . . . Հավերժական կյանքը խոստացված է այն մոկոգամ գույզին, ով կնքված է քահանայության իշխանությամբ և մնում է ուխտի մեջ՝ առանց որևէ լրացուցիչ պայմանի կամ պահանջի» [տես Վարդապետություն և Ուխտեր 132.19]: . . . Եկեղեցին հաստատում է, որ մոկոգամ ամուսնությունն Աստծո չափանիշն է ամուսնության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ Նա թույլ է տալիս կամ այլ բան պատվիրում է մարգարեի միջոցով: Եկեղեցին չի ուսուցանում, որ բազմակի ամուսնություն կնքելը անհրաժեշտ է վեհացման համար: (“The New and Everlasting Covenant,” *Ensign*, Dec. 2015, 44, 46)

Կրկին, մենք չենք հասկանում Աստծո բոլոր նպատակները Եկեղեցու վաղ օրերին բազմակնություն ներկայացնելու վերաբերյալ: Բայց վերջին օրերի Սրբերն այսօր հարգում են այն մարդկանց զոհաբերությունները և նվիրված ջանքերը, ովքեր կիրառել են բազմակի ամուսնություններ՝ հնազանդվելով Աստծո պատվիրանին:



Գրի առեք ձեր մտքերը

Ելնելով ձեր սովորածից, ինչպե՞ս էր այս տնտեսության ժամանակ վաղ օրերի Սրբերի կողմից բազմակի ամուսնության կիրառությունը՝ Տիրոջ հավատքի, վստահության և սիրո նշան հանդիսանում:

Ցանկանում ես ավելին: (Ոչ պարտադիր)


Որտե՞ղ կարող եմ արժանահավատ նյութեր գտնել, որպեսզի ավելին իմանամ վաղ օրերի Սրբերի կողմից բազմակի ամուսնություն կիրառելու վերաբերյալ:

Եկեղեցու պատմության մեջ բազմակի ամուսնության մասին ուսումնասիրելիս հիշեք նաև, որ այդ թեմայի վերաբերյալ բազմաթիվ ոչ հավաստի տեղեկություններ կան համացանցում ու շատ տպագիր աղբյուրներում: Որոշ հեղինակներ, ովքեր գրում են Եկեղեցու և դրա պատմության մասին, ներկայացնում են համատեքստից դուրս տեղեկություններ կամ ներառում են մասնակի ճշմարտություններ, որոնք կարող են մոլորեցնող լինել: Որոշ գրվածքներից մի քանիսը միտված են կործանելու հավատքը:


Հետևյալ նյութերն այն օրինակներն են, որոնք կարող են օգնել անկեղծ, բայց վստահելի պատկերացում կազմել բազմակի

ամուսնության մասին Եկեղեցու պատմության մեջ:

- “Plural Marriage in Kirtland and Nauvoo,” Gospel Topics, topics.ChurchofJesusChrist.org
- “Plural Marriage and Families in Early Utah,” Gospel Topics, topics.ChurchofJesusChrist.org
- “The Manifesto and the End of Plural Marriage,” Gospel Topics, topics.ChurchofJesusChrist.org
- “Why Was It Necessary for Joseph Smith and Others to Practice Plural Marriage?” [10:07]. Այս տեսանյութում համաշխարհային հոգևոր հավաքի ժամանակ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեք Քվենթին Լ. Քուլը Եկեղեցու պատմաբանների հետ միասին պատասխանում է բազմակի ամուսնության վերաբերյալ հարցին:
- “Mormon Polygamy Q and A” [7:40]. Այս տեսանյութում Եկեղեցու պատմաբանները քննարկում են բազմակի ամուսնությունը վաղ օրերի Եկեղեցում. թե ինչպես է սկսվել դրա կիրառությունը, ինչպես է այն փոխվել ժամանակի ընթացքում, և ինչու է այն դադարեցվել:
- Սրբեր. Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու պատմությունը, հատոր 1, ճշմարտության չափանիշը, 1815–1846, (36), 36, 40–41 բաժիններ: Այս գլուխները պատմում են Տիրոջ հրամանին հնազանդվելու Ջոզեֆ Սմիթի ջանքերի և բազմակի ամուսնության կիրառության մասին:



- Ջոզեֆ Սմիթի բազմակնության մասին կայքը Չնայած այս առցանց ռեսուրսը չի ստեղծվել Եկեղեցու կողմից, այն հավատքի տեսանկյունից պարունակում է համապարփակ և անկեղծ տեղեկություններ Ջոզեֆ Սմիթի կողմից բազմակնության կիրառության և ուսմունքների վերաբերյալ:



ԴԱՍ 22. ՈՒՍՈՒՑՉԻ ՆՅՈՒԹ

Բազմակի ամուսնություն

Մի տղամարդու և մի կնոջ միջև ամուսնությունը Տիրոջ օրենքն է, քանի դեռ Նա չի պատվիրում մեկ այլ բան (տես Հակոբ 2.27–30): Հայտնության միջոցով Տերը Մարգարե Զոգեֆ Սմիթին պատվիրեց ապրել բազմակնության սկզբունքով և ուսուցանել այն Եկեղեցու վաղ օրերի որոշ անդամներին: Բազմակի ամուսնությունները շարունակվեցին Եկեղեցում, մինչև Տերը հայտնությամբ հայտնեց, որ Սրբերը պետք է դադարեցնեն դրա կիրառությունը (տես Պաշտոնական հայտարարություն 1): Այս դասը նախատեսված է ամրապնդելու ուսանողների վստահությունն առ այն, որ Զոգեֆ Սմիթը և Եկեղեցու վաղ օրերի անդամները գործում էին Տիրոջ առաջնորդությամբ, երբ նրանք կիրառում էին բազմակի ամուսնությունը: Այն նաև կօգնի ուսանողներին ավելի լիարժեք վստահել Տիրոջը, մինչ նրանք ձգտում են հնազանդվել Նրա կամքին և գտնել իրենց հարցերի պատասխանները:

Ուսուցման առաջարկներ

Տերը հայտնում է բազմակի ամուսնության կիրառման մասին

Ցուցադրեք Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ հայտարարությունը.



Աստված միշտ խնդրել է Իր ուխտի զավակներին դժվար բաներ կատարել: (Ռասսել Մ. Նելսոն, «Կանգնեք որպես իսկական հազարամյակցիներ», *Ensign*, հոկտեմբեր 2016, 27)

- Որո՞նք են այն մի քանի «դժվարին բաները», որոնք Աստված Եկեղեցու անդամներին խնդրել է կատարել մեր օրերում: (Կարող եք պատասխանները գրել գրատախտակին: Հրավիրեք ուսանողներին դասի ընթացքում մտածել այդ պատվիրաններին իրենց հնազանդության մասին:)
- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է Աստված Իր ուխտի զավակներին խնդրում անել այդ բաները:

Ուշադրություն դարձրեք, որ վաղ շրջանի Վերջին օրերի շատ Սրբերի համար Աստծո կողմից ամենադժվար պահանջներից մեկն այն էր, որ նրանք ապրեին բազմակի ամուսնության սկզբունքով: Հիշեցրեք ուսանողներին, որ 1831 թվականին Զոգեֆ Սմիթն աղոթեց, որ հասկանար, թե ինչու են հնադարյան որոշ մարգարեներ և խորհրդավոր թագավորներ կիրառել բազմակնությունը (տես բաժնի վերնագիրը և հատված 1-ը՝ Վարդապետություն և Ուխտեր 132-ում):

Ուսանողներից մեկին հրավիրեք բարձրաձայն կարդալ Վարդապետություն և Ուխտեր 132.34-37

հատվածները: Դասարանին հանձնարարեք հետևել և ուշադրություն դարձնել, թե Տերն ինչպես պատասխանեց Մարգարեի հարցին:

- Ցուցադրեք հետևյալ հարցը. *Մբրահամն ինչո՞ւ որպես երկրորդ կին կնության վերցրեց Հազարին:*
- Ըստ 36-37 հատվածների, Տերը ի՞նչ սկզբունք ուսուցանեց Զոգեֆ Սմիթին Իր պատվիրաններին հնազանդվելու մասին: (Ուսանողների պատասխաններից հետո գրեք հետևյալ ճշմարտությունը գրատախտակին. **Երբ մենք պատրաստ ենք հնազանդվել այն ամենին, ինչ Տերը պատվիրում է, դա «արդարություն է համարվում [մեզ]:»**)
- Ինչպե՞ս կարող ենք Իսահակին գոհաբերելու Մբրահամին տված Տիրոջ պատվիրանը համեմատել Զոգեֆ Սմիթին և վաղ օրերի Սրբերին տված բազմակնությունը կիրառելու Նրա պատվիրանի հետ:

Բացատրեք, որ, երբ Տերը բացահայտեց բազմակի ամուսնության սկզբունքը Զոգեֆ Սմիթին, Նա պատվիրեց Մարգարեին ապրել այդ սկզբունքով և ուսուցանել այն ուրիշներին:

Ցուցադրեք հետևյալ խոսքերը և հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ այն.

Համաձայն Հելեն Մար Թիմբալի՝ Զոգեֆ Սմիթը հայտարարել է, որ «այս սկզբունքի կիրառումը լինելու է ամենադժվար փորձությունը, որով Սրբերը երբևէ ստիպված կլինեն փորձել իրենց հավատը»: Չնայած այն եղել է իր կյանքի «ամենադաժան» փորձությունը, Նա վկայել է, որ

այն դարձել է նաև «մեծագույն օրինություններից մեկը»: ("Plural Marriage in Kirtland and Nauvoo," Gospel Topics, topics.ChurchofJesusChrist.org)

- Որո՞նք էին Ջոզեֆ Սմիթի զգացողությունները բազմակի ամուսնության կիրառության նկատմամբ, երբ այն առաջին անգամ ներկայացվեց: (Մանրաժեշտության դեպքում, ուսանողներին հանձնարարեք կրկնել նախապատրաստական նյութի բաժին 2-ի քույր Էլիզա Ռ. Մնոուի հայտարարությունը:)

Հորդորեք դասարանի անդամներին մտածել Սբրահամի և Ջոզեֆ Սմիթի օրինակների մասին:

- Նման դժվարին պատվիրաններին հնազանդվելու վաղ օրերի Սրբերի պատրաստակամությունն ի՞նչ է հուշում նրանց բնավորության և հավատքի մասին:

Բացատրեք, որ վաղ օրերի Սրբերից մի քանիսը նկարագրել են իրենց ներքին պայքարը, երբ նրանց ներկայացվել է բազմակի ամուսնությունը: Հրավիրեք ուսանողներին կիսվել, թե ինչ են հիշում նախապատրաստական նյութի բաժին 3-ում ուսումնասիրած պատմությունների մասին:

Ցույց տվեք Նախագահ Վիլֆորդ Վուդրոֆի կնոջ՝ Ֆեբե Վուդրոֆի հետևյալ պատմությունը: Խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.

Երբ առաջին անգամ ուսուցանվեց բազմակնության սկզբունքը, ես մտածեցի, որ դա ամենավատ բանն է, որ ես երբևէ լսել եմ: . . . Բայց շուտով, երբ համոզվեցի, որ այն սկզբում եղել է Աստծո հայտնություն Ջոզեֆի միջոցով, և իմանալով, որ նա մարգարե է, ես ջերմեռանդ աղոթքով դիմեցի իմ Երկնային Հորը, որ ճիշտ առաջնորդվեմ իմ կյանքի կարևորագույն պահին: Պատասխանը տրվեց: Միտքս լցվեց խաղաղությամբ: Ես իմացա, որ դա Աստծո կամքն էր: (Phebe Woodruff, in Edward Tullidge, *The Women of Mormonism* [1877], 413)

- Փեբեի օրինակը մեր օրերում ինչպե՞ս կարող է օգնել մեկին, ով հնարավոր է, դժվարանում է հնազանդվել Աստծո պատվիրանին: Ինչպե՞ս կարող է նրա օրինակն օգնել այն մարդուն, ով միգուցե հարցեր ունի վաղ օրերի Սրբերի կողմից բազմակի ամուսնություն կիրառելու վերաբերյալ:

Հանձնարարեք ուսանողներից մեկին բարձրաձայն կարդալ Առակաց 3.5–6 հատվածները և խնդրեք դասարանի անդամներին հետևել նրան և ուշադրություն դարձնել այն սկզբունքին, որոնք կարելի է վերագրել այդ վաղ օրերի Սրբերի փորձառություններին:

- Ի՞նչ սկզբունքներ կարող ենք սովորել այս հատվածից և վաղ օրերի Սրբերի փորձառությունից: (Օգտագործելով ուսանողների խոսքերը, գրատախտակին գրեք (կամ ցուցադրեք) նմանատիպ մի սկզբունք. **Եթե մենք ամբողջ սրտով վստահենք Տիրոջը և չապավինենք մեր հասկացողությանը, ապա Նա կառաջնորդի մեր կյանքը:**)

Տվեք ուսանողներին հետևյալ հարցը.

- Ձեր կարծիքով, այն մարդու համար, ով մտահոգված է վաղ օրերի բազմակի ամուսնության կիրառությամբ, ի՞նչ է նշանակում իր ամբողջ սրտով վստահել Տիրոջը, և ոչ թե պարզապես ապավինել իր հասկացողությանը:

Բացատրեք, որ արտասովոր չէ, որ Եկեղեցու անդամները հարցեր կամ մտահոգություններ ունենան բազմակի ամուսնության վերաբերյալ: Աստված չի բացահայտել և չի պահանջում, որ Իր զավակներն այսօր հասկանան բազմակի ամուսնության մանրամասները: Այնուամենայնիվ, բոլոր Սրբերին խոստացված է, որ նրանք կարող են վկայություն ստանալ, որ Ջոզեֆ Սմիթն Աստծո մարգարեն էր, ով Նրանից պատվիրաններ և հայտնություններ էր ստանում, և որ Ջոզեֆը հավատարմորեն ապրում էր Տիրոջ պատվիրանների համաձայն:

ԲԱՐԵԼԱՎԵԼ ՄԵՐ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Դուք կարող եք օգնել ուսանողներին պատասխանել դժվարին հարցերին: Ուսանողներին ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելով և օգնելով, որ գտնեն վստահելի աղբյուրներ, կնպաստեք, որ նրանք խորհեն դժվար թեմաների շուրջ և դրանք ճիշտ բացատրեն: Եթե ուսանողները ցանկանում են ավելի իմանալ Եկեղեցու վաղ պատմության ընթացքում բազմակի ամուսնության կիրառության վերաբերյալ, հրավիրեք նրանց աղոթքով ուսումնասիրել նախապատրաստական նյութի «Ցանկանո՞ւմ ես

ավելին» բաժնում թվարկված լրացուցիչ աղբյուրները:

Հրավիրեք ուսանողներին հիշել իրենց կյանքի այն պահերը, երբ նրանք վստահել են Տիրոջը և հնազանդվել որևէ դժվարին պատվիրանի: Կամ, երբ նրանք ստիպված են եղել «չվստահել [իրենց] հասկացողությանը» դժվարին հարցերի պատասխանները փնտրելիս: Դուք կարող եք հրավիրել մի քանի ուսանողների կիսվել իրենց փորձառություններով: Հարցրեք նրանց, թե ինչպես է Տերը հարթել նրանց ուղիները:

Կարող եք ուսանողներին ժամանակ տալ, որ նրանք մտածեն իրենց ունեցած կրոնական կամ անձնական հարցերի շուրջ: Խնդրեք նրանց մտածել, թե ինչ կարող են անել, որ գտնեն այդ հարցերի պատասխանները կամ վերահաստատումը, վստահեն Տիրոջը և ապավինեն Նրան: Նրանք կարող են նույնիսկ իրենց մտքերը գրել օրագրում կամ աղոթել Տիրոջ օգնության համար, որպեսզի իմանան, թե ինչպես գործել հավատքով:

Տերը հայտնում է բազմամուսնության կիրառման մասին որոշ պատճառներ:

Բացատրեք, որ մենք այս տնտեսության ժամանակ չենք հասկանում Աստծո բոլոր նպատակները Եկեղեցու վաղ օրերին բազմակնություն ներկայացնելու վերաբերյալ, բայց Նա հայտնել է որոշ պատճառներ դրա վերաբերյալ: Օրինակ, Տերն ուսուցանել է Մարգարե Զոզեֆ Սմիթին, որ դրա կիրառությունը նախորդ տնտեսություններից «բոլոր բաները» վերականգնելու մաս է կազմում (տես Վարդապետություն և Ուխտեր 132.40, 45):

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Հակոբ 2.30 հատվածը և դասարանին խնդրեք փնտրել Տիրոջ հայտնած մեկ այլ պատճառ՝ Իր ժողովրդին բազմակի ամուսնությունը կիրառելու պատվիրանի վերաբերյալ: Հրավիրեք ուսանողներին զեկուցել իրենց գտածի մասին: (Ուսանողները իրենց պատասխաններում պետք է ներառեն, որ պատվիրանը տրվել է, որպեսզի ավետարանի ուխտում ծնված երեխաների թիվն աճի: Այս եղանակով, Տիրոջ ժողովուրդը «սերունդ [է] աճեցնում» Նրա համար):

Ուշադրություն դարձրեք, որ այդ պատվիրանին հնազանդվելու վաղ օրերի Սրբերի ջանքերը «հանգեցրել են մեծ թվով երեխաների ծնունդների» հավատարիմ վերջին օրերի տներում» (“Plural

Marriage and Families in Early Utah,” Gospel Topics, topics.ChurchofJesusChrist.org):

Տերն ավելի ուշ հայտնում է, որ Վերջին Օրերի Սրբերը պետք է դադարեցնեն բազմակնության կիրառությունը:

Հանձնարարեք որևէ ուսանողի, ով կարդացել է նախապատրաստական նյութը (բաժին 2-ը), պատմել, թե ինչը պատճառ հանդիսացավ դադարեցնել բազմակի ամուսնությունները վերականգնված Եկեղեցում:

- Ինչպե՞ս կբացատրեիք մարդկանց Եկեղեցու ներկայիս դիրքորոշումը բազմակի ամուսնությունների վերաբերյալ:

Հրավիրեք մի քանի ուսանողների հերթով բարձրաձայն կարդալ «Քաղվածքներ հռչակագրի վերաբերյալ նախագահ Վիլֆորդ Վուդրուֆի երեք ելույթներից» տեքստի առաջին և յոթերորդ պարբերությունները, որ հետևում է Պաշտոնական Հայտարարություն 1-ին:

- Ի՞նչ ուսուցանեց Սրբերին Նախագահ Վուդրուֆը: (Ուսանողները պետք է բացահայտեն նմանատիպ մի սկզբունք. **Տերը երբեք թույլ չի տա, որ Եկեղեցու Նախագահը մոլորեցնի Եկեղեցին:**)
- Ինչպե՞ս կարող է այս ճշմարտությունն ազդել այն բանի վրա, թե ինչպես ենք անձամբ պատասխանում Տիրոջ ապրող մարգարեի խորհուրդներին և ուսմունքներին:

Եզրավակեք ձեր վկայությամբ, որ Մարգարե Զոզեֆ Սմիթը և Եկեղեցու մյուս վաղ օրերի ղեկավարներն Աստծո ճշմարիտ մարգարեներն էին, ովքեր հնազանդորեն հետևել և ուսուցանել են Տիրոջ պատվիրանները Վերջին Օրերի Սրբերին:

Հաջորդ անգամ

Բացատրեք ուսանողներին, որ հաջորդ դասին նախապատրաստվելիս նրանք հնարավորություն կունենան իմանալ Զոզեֆ և Հայրում Սմիթների մահվան դեպքերի մանրամասները: Խրախուսեք ուսանողներին ներկայանալ դասին պատրաստ, որպեսզի քննարկեն իրենց մտքերն այն մասին, թե Զոզեֆ Սմիթն ինչ է արել՝ որպես Աստծո մարգարե:



ԴԱՍ 23. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Զոզեֆ Սմիթի մարգարեական առաքելությունը և նահատակությունը

Մտածեք սուրբ գրությունների այն մարդկանց մասին, ովքեր պատրաստ էին զոհաբերել իրենց կյանքը՝ Տիրոջ կամքը կատարելու համար: Ի՞նչ են այդպիսի զոհաբերությունները սովորեցնում ձեզ այդ մարդկանց վկայության և համոզմունքի մասին: Երբ ուսումնասիրեք Մարգարե Զոզեֆ Սմիթի առաքելությունն ու նահատակությունը, մտածեք այն մասին, թե ինչպես են նրա ներդրումներն ու ժառանգությունն փոխել ձեր կյանքը:

ԲԱԺԻՆ 1

Ո՞ր իրադարձությունները նախորդեցին Քարթեջի բանտում Մարգարե Զոզեֆ Սմիթի բանտարկությանը:

«Զոզեֆը և Հայրումը մահացան: [Զոն] Թեյլորը վիրավորվեց: . . . Ես լավ եմ»: Այդ խոսքերն այն ուղերձի մի մասն է, որը Վիլարդ Ռիչարդսն ուղարկեց Էմմա Սմիթին և Նավույում գտնվող մյուս Սրբերին այն բանից հետո, երբ Զոզեֆ և Հայրում Սմիթները դաժանորեն սպանվեցին Քարթեջի բանտում՝ 1844 թվականի, հունիսի 27-ի երեկոյան (Willard Richards letter, Carthage Jail, June 27, 1844, Church History Library, Salt Lake City): Պատկերացրեք այն մտքերն ու զգացողությունները, որոնք

Էմման և Սրբերը կարող էին ունենալ այս բառերը կարդալիս:

Սրբերի մեծացող քաղաքական և տնտեսական ազդեցությունը հարևան համայնքների կողմից դիտարկվում էր որպես սպառնալիք: 1844 թվականի ամռանը, Զոզեֆ Սմիթի և Եկեղեցուն նկատմամբ ընդդիմությունը մեծապես աճեց: Ոմանք, ովքեր հեռացել էին Եկեղեցուց, դավադրություն էին նյութում՝ հասարակության կարծիքը բորբոքելով Մարգարեի դեմ: Իլինոյսի որոշ քաղաքացիներ ցանկանում էին նահանգից վտարել Սրբերին, մինչև մյուսները ծրագրում էին սպանել Մարգարեին:

1844 թվականի հունիսի 10-ին Զոզեֆ Սմիթը, ով Նավուի քաղաքապետն էր, և Նավուի քաղաքային խորհուրդը հրամայեցին ոչնչացնել *Nauvoo Expositor* (Նավուի բացահայտիչը) և այն տպագրահաստոցը, որի վրա թերթը տպագրվել էր: *Nauvoo*

Expositor-ը հակամորմոնական լրագիր էր, որը զրպարտում էր Մարգարեին և մյուս Սրբերին, և կոչ էր անում չեղարկել Նավուի կանոնադրությունը: Քաղաքային իշխանությունները մտավախություն ունեին, որ այդ հրատարակությունը կհանգեցնի ամբոխի գործողությունների: «Ի հետևանք քաղաքապետի և խորհրդի որոշման, Իլինոյսի իշխանությունները Մարգարեի, նրա եղբայր Հայրումի և Նավու քաղաքի մյուս պաշտոնյաների դեմ խռովության անհիմն մեղադրանք հարուցեցին: Իլինոյսի նահանգապետ Թոմաս Ֆորդը հրաման արձակեց, որ այդ տղամարդիկ դատվեն Իլինոյս նահանգի Քարթեջ գավառի կենտրոնում, և նրանց պաշտպանություն խոստացավ: Ջոզեֆը գիտեր, որ եթե գնար Քարթեջ, իր կյանքը մեծ վտանգի տակ կդրվեր խաժամուժի կողմից, որը սպառնում էր նրան: . . .

. . . Հունիսի 24-ին Ջոզեֆ և Հայրում Սմիթները մնաս բարով ասացին իրենց ընտանիքներին, և Նավու քաղաքի մյուս պաշտոնյաների հետ հաջորդ օրը գնացին Քարթեջ: (Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ [2007], 529–30):

Կատարեք այս վարժություններից մեկը կամ երկուսը.

1. Դիտեք Ministry of Joseph Smith: Sealed His Testimony with His Blood (1:14) տեսանյութը:

1. Ուսումնասիրեք մնացած բաժին 1-ը:

Երբ Մարգարեն մյուսների հետ գնում էր Քարթեջ, նա մարգարեացավ իր նահատակության մասին:



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Ուսումնասիրեք Վարդապետություն և Ուխտեր 135.4:

Ջոզեֆը և Հայրումը «հաջորդ օրը կամավոր հանձնվեցին գավառի պաշտոնյաներին Քարթեջում: Եղբայրներին սկզբնական մեղադրանքի համար երաշխավորությամբ ազատ արձակելուց հետո,

նրանց դեմ կեղծ մեղադրանք հարուցվեց Իլինոյս նահանգի դեմ դավաճանության մեջ, ապա նրանք ձերբակալվեցին և բանտարկվեցին Քարթեջի բանտում՝ լսման սպասելու համար: Երեցներ Ջոն Թեյլորը և Վիլյամը Ռիչարդսը՝ Տասներկուսի միակ անդամները, ովքեր այդ ժամանակ միախառնվեցին ծառայում, կամավոր միացան նրանց» (Ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ [2007], 561–62):



ԲԱԺԻՆ 2

Ի՞նչ տեղի ունեցավ Քարթեջի բանտում:

Կատարեք այս վարժություններից մեկը կամ երկուսը.

1. Դիտեք «Ջոզեֆ Սմիթ.

Վերականգնման Մարգարեն», որը պատկերում է Ջոզեֆի և Հիրումի մահվան դեպքերը, սկսած՝ 0:00–3:20:

2. Կարդացեք հետևյալ պատմությունը՝ Մրբեր. Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Եկեղեցու պատմությունը գրքից:

Այդ օրը ժամանակը դանդաղ էր անցնում Քարթեջի բանտում: Ամառվա տապին տղամարդիկ հանեցին վերարկուները և բացեցին պատուհանները, որպեսզի քամի խաղար: Դրսում ութ մարդ. . . հսկում էր բանտը, իսկ ոստիկանների մյուս մասը մոտակայքում էր: Մեկ այլ պահակ նստած էր հենց դռան դիմաց:



Ստեֆան Մարկիսանը, Դեն Ջոնսոնը և ուրիշները կատարում էին Ջոզեֆի հանձնարարությունները: Այն մարդկանցի, ովքեր այդ գիշեր մնացել էին այդտեղ, միայն Վիլարդ Ռիչարդսը և Ջոն Թեյլորն էին շարունակում էին մնալ Ջոզեֆի և Հայրումի հետ: Ավելի վաղ այդ օրը, այցելուները երկու ատրճանակ էին գաղտնի փոխանցել բանտարկյալներին՝ վեց փամփուշտանի թմբուկային ատրճանակ և մեկ փամփուշտանի ատրճանակ, եթե հարձակման վտանգ առաջանար: Ստեֆանը նաև իր գնալուց հետո թողել էր ամուր ձեռնափայտը, որը նա անվանում էր «չարածճի մարդկանց ծեծիչ»:

Տրամադրությունը բարձրացնելու և ժամանակը սպանելու համար, Ջոնը երգեց մի անգլիական երգ: . . .

[Ջոն Թեյլորի երկրորդ անգամ այդ երգը երգելուց քիչ անց] բանտարկյալները դռան մոտ լսեցին ոտքերի ձայներ և հնչեց երեք կամ չորս կրակոց: Վիլարդը նայեց բաց պատուհանից և ներքևում տեսավ հարյուրավոր տղամարդկանց, որոնց դեմքերը ցելխով ու սև ածուխով պատված էր, ովքեր ներխուժում էին բանտի մուտքից ներս: Ջոզեֆը վերցրեց ատրճանակներից մեկը, իսկ Հայրումը ճանկեց մյուսը: . . . Բոլոր չորս տղամարդիկ հրեցին դուռը, երբ ամբոխը բարձրանում էր աստիճաններով և փորձում ուժով ներս մտնել:

Աստիճանավանդակի վրա հնչեց ամբոխի կրակոցները: . . . Փամփուշտն անցավ փայտի միջով: Այն հարվածեց Հայրումի դեմքին և նա շրջվեց ու երերալով հետ

գնաց դռնից: Մեկ այլ փամփուշտ հարվածեց նրա ծոծրակին: . . .

«Եղբա՛յր Հայրում»։ Աղաղակեց Ջոզեֆը Վերցնելով իր վեց թմբուկանի ատրճանակը, նա մի քանի սանտիմետր բացեց դուռը և մի անգամ կրակեց: Մուշկետի ևս մի քանի փամփուշտներ ներխուժեցին սենյակ և Ջոզեֆը պատահական կրակում էր ամբոխի վրա, իսկ Ջոն [Թեյլորը] ձեռնափայտի օգնությամբ փորձում էր վայր գցել դռան արանքից դուրս ցցված ինքնաձիգների փողերը:



Երբ Ջոզեֆի ատրճանակը երկու-երեք անգամ կրակեց, Ջոնը վազեց դեպի պատուհանը և փորձեց բարձրանալ ընդարձակ պատուհանագոգի վրայով: Մուշկետի փամփուշտն անցավ սենյակի երկայնքով և դիպավ նրա ոտքին՝ խախտելով հավասարակշռությունը: Նրա մարմինը թմրեց և նա ընկավ պատուհանագոգից՝ ջարդելով գրպանի ժամացույցը ժամը հինգ անց տասնվեց րոպեի վրա:

«Ինձ գնդակահարել են», - գոչեց նա:

Ջոնն իրեն քարշ տալով հատակին գլորվեց մահճակալի տակ, քանի որ ամբոխը նորից ու նորից էր կրակ արձակում: Գնդակը դիպավ նրա ազդրին և պոկեց միսը: Եվս երկու գնդակ կպավ նրա դաստակին և ծնկի անմիջապես վերևի ոսկրին:

Սենյակի մյուս կողմում Ջոզեֆը և Վիլարդը ձգտում էին իրենց մարմնի ամբողջ ծանրությամբ փակել դուռը, մինչ Վիլարդը զարկում էր իր առջև գտնվող ինքնաձիգերի փողերին և սվիններին: Անսպասելիորեն, Ջոզեֆը ցած գցեց իր ինքնաձիգը հատակին և նետվեց դեպի պատուհանը:

Երբ նա բարձրացավ պատուհանագոգին, երկու փամփուշտ մխրճվեց նրա մեջքին: Մեկ այլ փամփուշտ թափանցեց պատուհանի միջով և խոցեց սրտից ներքև:

«Օ՜ Տեր՝ իմ Աստված», - աղաղակեց նա: Նրա մարմինը թեքվեց առաջ և նա գլուխը հանեց պատուհանից:

Վիլարդը վազեց սենյակի մյուս կողմը և գլուխը հանեց պատուհանից դուրս, մինչ նրա շուրջը սուլում էին կապարե գնդակները: Ներքևում նա տեսավ ամբոխին, որոնք խմբվել էին Ջոզեֆի արյունաքամ մարմնի շուրջը: . . .

Ջոզեֆ Սմիթը՝ Տիրոջ մարգարեն և տեսա-նողը, մեռած էր: (Սրբեր. Հիսուս Քրիստոսի Եկեղեցու պատմությունը վերջին օրերում, հատ. 1, *Ճշմարտության չափանիշը*, 1815–1846 [2018], 548–552, տես նաև Վարդապետություն և Ուխտեր 135.1–2)




Մտածեք դասին Նախապատրաստվելիս

Ի՞նչ մտքեր ու զգացմունքներ են առաջ գալիս, երբ մտածում եք այն զոհաբերության մասին, որը Ջոզեֆ և Հայրում Սմիթները պատրաստ էին կատարել՝ հանուն Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի մասին իրենց վկայությունների

ԲԱԺԻՆ 3

Ինչպե՞ս է Ջոզեֆ Սմիթի մարգարեական առաքելությունն օրհնել իմ կյանքը:

Տասներկու Առաքյալների Քվորումի ղեկավարության ներքո պատրաստվեց նահատակության մասին գրավոր հայտարարություն՝ ելնելով ակա-նատեսներ Երեց Ջոն Թեյլորի և Երեց Վիլարդ Ռիչարդսի պատմածներից: Այդ հայտարարու-թյունն այժմ գրված է որպես Վարդապետություն և Ուխտեր 135 գլուխը:



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Ուսումնասիրեք Վարդապետություն և Ուխտեր 135.3: Նշեք այն բառերն ու արտա-հայտությունները, որոնք նշանակալից են ձեզ համար:



Գրի առեք ձեր մտքերը

Մտածեք Մարգարե Ջոզեֆ Սմիթի վերա-բերյալ ձեր վկայության մասին և թե ինչ եղանակներով է նրա մարգարեական առա-քելությունն ազդեցություն ունեցել և օրհնել ձեր կյանքը: Կարող եք ձեր մտքերը գրի առնել ձեր օրագրում:

Ցանկանում ես ավելին: (Ոչ պարտադիր)

Որտեղի՞ց կարող եմ ավելին իմանալ Ջոզեֆ Սմիթի մարգարեական առաքելության և նահատակության մասին:



Առաջին Նախագահությունից Նախա-գահ Դալլին Հ. Օուքսը կիսվել է Ջոզեֆ Սմիթի ուշագրավ կյանքի և մար-գարեական առաքելության մասին

իր վկայությամբ The Miraculous Mission of the Prophet Joseph Smith խորագրով իր հոդվածում (Ensign, Jan. 2019, 30–39):

«Ջոզեֆ Սմիթ. Վերականգնման մարգարեն» (1:09:25) տեսանյութում պատկերվում է Ջոզեֆ Սմիթի կյանքը և նահատակությունը:

ԴԱՍ 23. ՈՒՍՈՒՑՉԻ ՆՅՈՒԹ

Ջոզեֆ Սմիթի մարգարեական առաքելությունը և նահատակությունը

1844 թվականի, հունիսի 27-ին Ջոզեֆ և Հայրում Սմիթները նահատակվեցին Իլինոյսի Քարթիջում: Նրանց մահը գորեղ կնիք դրեց Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի վերաբերյալ նրանց վկայությունների վրա (տես Վարդապետություն և Ուխտեր 135.1, 3): Այս դասի նպատակն է ամրացնել Ջոզեֆ Սմիթի մարգարեական առաքելության մասին ուսանողների վկայությունները:

Ուսուցման առաջարկներ

ԲԱՐԵԼԱԿԵԼ ՄԵՐ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Օգտագործեք օրհներգ: Սրբազան երաժշտությունը, հատկապես Եկեղեցու օրհներգերը, կարող են օգնել ուսանողներին սգալ Սուրբ Հոգու ազդեցությունը ավետարանի ուսումնասիրման ժամանակ: Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ ըմբռնել դասը, կարող եք դասի ժամանակ երգել որևէ օրհներգ, որն անմիջականորեն կապված է դասի հետ:

Ջոզեֆ և Հայրում Սմիթները նահատակվեցին Քարթեջի բանտում:

Կարող եք մի հատված երգել (այդ թվում՝ հատված 7-ը) «Աղքատ վշտաբեկ անցվորը» օրհներգից: Բացատրեք, որ Ջոզեֆ Սմիթը ամենաշատն էր սիրում Փրկիչին ծառայելու մասին այս օրհներգը և դրա խոսքերը: Մարգարեն Ջոն Թեյլորին խնդրեց երգել այդ օրհներգը Քարթեջի բանտում՝ ամբոյսի հարձակումից անմիջապես առաջ:

Հորդորեք ուսանողներին բացատրել, թե ինչ նրանք գիտեն այն իրադարձությունների մասին, որը հանգեցրեց Ջոզեֆ և Հայրում Սմիթների ձերբակալությանը և բանտարկությանը Քարթեջի բանտում (Իլինոյս): (Խրախուսեք ուսանողներին նկարել այն, ինչ նրանք սովորել են նախապատրաստական նյութից):

- Ձեր կարծիքով, A Poor Wayfaring Man of Grief (Աղքատ վշտաբեկ անցվորը) երգի խոսքերն ինչպես են ազդել Փրկիչի հանդեպ Ջոզեֆի նվիրվածության վրա: (Անհրաժեշտության դեպքում կարող եք ուսանողներին ժամանակ տրամադրել՝ այդ հարցին պատասխանելու ժամանակ կրկնել այդ օրհներգի բառերը):

Ջոզեֆը գիտեր, որ նա կդատապարվեր մահվան, եթե նա դատին մասնակցելու համար գնար Քարթեջ: Դան Ջոնս անունով Եկեղեցու մի անդամ, ով գտնվում էր Մարգարեի հետ Նավու քաղաքում, երբ նա պատրաստվում էր ճամփորդել Քարթեջ, հիշում է.

Ես երբեք չեմ մոռանա այդ տեսարանը, երբ [Մարգարեն] կանգնած էր. . . և նայելով իր շուրջը, ապա քաղաքին և նրա բնակիչներին, ում այդքան սիրում էր, նա ասաց. «Եթե ես չգնամ այնտեղ [Քարթեջ], ապա դրա արդյունքում նրանք կկործանեն այս քաղաքը և դրա բնակիչներին, իսկ ես չեմ կարող մտածել անգամ, որ իմ սիրելի եղբայրները, քույրերը և նրանց երեխաները Նավուում կրում են այն նույն տառապանքները, որոնք կրեցին Միսսուրիում. Ոչ, ավելի լավ է, որ ձեր եղբայր Ջոզեֆը մահանա իր եղբայրների և քույրերի համար, քանի որ ես պատրաստ եմ մահանալ նրանց համար: Իմ աշխատանքը կատարված է»: (Dan Jones, in Ronald D. Dennis, trans., “The Martyrdom of Joseph Smith and His Brother, Hyrum,” *BYU Studies*, vol. 24, no. 1 [1984], 85)

- Մարգարեի խոսքերն ու գործողություններն ի՞նչ են ասում նրա բնավորության մասին:



Կարող եք մատնանշել, որ Ջոզեֆ Սմիթը հետևեց Փրկիչի սիրո օրինակին՝ իր կյանքը պատրաստակամորեն նվիրելով Սրբերին պաշտպանելու համար (տես Հովհաննես 15.13):

Ցուցադրեք Քարթեջի բանտի նկարը: Հրավիրեք ուսանողներին պատմել այն, ինչ նրանք գիտեն 1844 թվականի, հունիսի 27-ին Քարթեջի բանտում տեղի ունեցած իրադարձությունների մասին, երբ սպանվեցին Ջոզեֆը և Հայրումը: (Խրախուսեք ուսանողներին հիշել այն, ինչ նրանք սովորել են նախապատրաստական նյութից):

Բացատրեք, որ Մարգարեի մահվան հայտարարությունը, որն այժմ ընդգրկված է Վարդապետություն և Ուխտեր 135-ում, վերցվել է Երեցներ Ջոն Թեյլորի և Վիլյամ Ռիչարդսի վկայություններից, ովքեր ականատես են եղել այդ իրադարձությանը:

Դասարանի հետ կարդացեք Վարդապետություն և Ուխտերի 135.1–2, 4–6 հատվածները:

- Ի՞նչ մտքեր ու զգացմունքներ են առաջ գալիս, երբ մտածում եք այն զոհաբերության մասին, որը Ջոզեֆ և Հայրում Սմիթները պատրաստ էին կատարել՝ հանուն վերականգնված ավետարանի մասին իրենց վկայությունների:

Հրավիրեք ուսանողներին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 135.3 (սկսելով՝ «Նա ապրեց փառքով . . .») վերջին երկու հատվածները և Վարդապետություն և Ուխտեր 136.39 հատվածները՝ ուշադրություն դարձնելով, թե ինչ ենք մենք սովորում Ջոզեֆի և Հայրումի նահատակությունից:

- Ի՞նչ են այս հատվածներն ուսուցանում մեզ Ջոզեֆի և Հայրումի նահատակության կարևորության մասին: (Ուսանողները կարող են նմանատիպ ճշմարտություն բացահայտել. **Ջոզեֆ և Հայրում Սմիթները վերականգնված ավետարանի մասին իրենց վկայությունը կնքեցին իրենց արյունով**):

Բացատրեք, որ իրենց վկայությունները իրենց արյունով կնքելու այդ արարքը մշտապես հաստատեց նրանց վկայությունները և նրանց աստվածային առաքելություններն ավետարանի վերականգնման մասին:

Որպեսզի օգնեք ուսանողներին ավելի լավ հասկանալ այդ ճշմարտությունը, կարող եք ցուցադրել Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդի «Մորմոնի Գրքի մասին վկայությունը» (4:39) տեսանյութը: Հրավիրեք ուսանողներին մտածել այն անկոտրուկ նվիրվածության մասին, որը Ջոզեֆն ու Հայրումը ցույց տվեցին վերականգնված ավետարանի մասին իրենց վկայություններով, նույնիսկ՝ մահվան վտանգի առաջ:

- Այն փաստը, որ Ջոզեֆ Սմիթն իր կյանքը պատրաստակամորեն տվեց վերականգնված ավետարանի համար, ինչպե՞ս է ամրապնդում՝ որպես Տիրոջ Մարգարե Ջոզեֆ Սմիթի մասին ձեր վկայությունը:

Ջոզեֆ Սմիթի մարգարեական ծառայության միջոցով Աստվածային օրհնությունները հասանելի են դարձել Երկնային Հոր զավակներին:

(Ուսանողներին հրավիրեք կարդալ Վարդապետություն և Ուխտեր 135.3-ի առաջին նախադասությունը, որն ուսուցանում է, որ **Ջոզեֆ Սմիթը ավելի շատ բան արեց այս աշխարհի մարդկանց փրկության համար, քան որևէ այլ մարդ, բացի միայն Հիսուսից**: Դուք կարող եք խրախուսել ուսանողներին նշել այդ ճշմարտությունն իրենց սուրբ գրություններում):

Կարող եք խնդրել, որ ուսանողները պատմեն, թե ինչպես նրանք այս ճշմարտությունը կբացատրեն քրիստոնեական մեկ այլ հավատքի իրենց ընկերոջը:

Հանձնարարեք ուսանողներին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 135.3 հատվածի մնացած մասը և ուշադրություն դարձնել, թե ինչ ներդրում Մարգարե Ջոզեֆ Սմիթն ունեցավ, որ օգնի Երկնային Հոր զավակներին փրկություն ստանալ Թող ուսանողները կիսվեն, թե ինչ հասկացան: Կարող եք նրանց պատասխանները թվարկել գրատախտակին:

- Ուրիշ ի՞նչ կավելացնեք այն ներդրումների ցանկին, որը Մարգարե Ջոզեֆ Սմիթը կատարել է աշխարհի փրկության համար:

Հրավիրեք ուսանողներին ընտրել հետևյալ հարցերից մեկը և պատասխանել դրան: Ժամանակ տրամադրեք ուսանողներին գրել իրենց մտքերը:

- Ի՞նչ փորձառություններ եք դուք ունեցել, որոնք օգնել են ձեզ վկայություն ստանալ Մարգարե Ջոզեֆ Սմիթի մասին:

- Ինչպե՞ս է ձեր կյանքը փոխվել և օրհնվել՝ իր մարգարեական առաքելությունն իրականացնելու Ջոզեֆ Սմիթի շնորհիվ:

Մի քանի ընթացքում ուսանողների խնդրեք դասարանի հետ կիսվել իրենց գրածով: Ավարտեք՝ կիսվելով Մարգարե Ջոզեֆ Սմիթի վերաբերյալ ձեր վկայությամբ:

Հաջորդ անգամ

Խնդրեք ուսանողներին պատկերացնել, թե ինչ կարող են զգալ, երբ կանչվեն առաջնորդելու Եկեղեցին՝ ունենալով քիչ փորձ և բազմաթիվ թույլություններ: Հրավիրեք նրանց խորհել, թե արդյոք նրանք հավատք և վստահություն կունենան առ այն, որ Տերը կօգնի նրանց այդ կոչման մեջ: Խրախուսեք ուսանողներին ուսումնասիրել հաջորդ դասի նախապատրաստական նյութը՝ մտածելով այդ հարցի շուրջ:



ԴԱՍ 24. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Մարգարե Զոգեֆ Սմիթը՝ ընտրյալ տեսանող

Տերը նկարագրել է Մարգարե Զոգեֆ Սմիթին որպես «ընտրյալ տեսանող», ով ժողովրդին կրե-
րի Տիրոջ ուխտի իմացությանը (2 Նեփի 3.7–8): Սակայն Վերականգնման հենց սկզբից Զոգեֆ
Սմիթն ընդունում էր իր անհամապատասխանության զգացումը: Երբ ուսումնասիրեք այս
նյութը, դիտարկեք, թե դուք ինչպես կարող եք արձագանքել Տիրոջ կողմից տրված կոչումնե-
րին, չնայած ձեր թուլություններին: Դիտարկեք, թե դուք ինչպես կարող եք պատասխանել
նրանց, ովքեր կքննադատեն Զոգեֆ Սմիթին՝ նրա թուլության պատճառով:

ԲԱԺԻՆ 1

Ես ի՞նչ կարող եմ սովորել Զոգեֆ
Սմիթից Տիրոջը ծառայելու իմ
սեփական կարողության մասին:

Պատանի Զոգեֆը ճնշված էր զգում Տիրոջից իրեն
տրված կոչման պատճառով: Նա ասում էր ինքն
իրեն.



Ես՝ անկիրթ երիտասարդս, կանգնած էի
միայնակ, որպեսզի մաքառեի աշխարհի
իմաստության դեմ . . . Նոր հայտնությամբ:
(Եկեղեցու Նախագահների Ուսմունքները.
Զոգեֆ Սմիթ [2007], 60)

Ես չճանաչված մի պատանի էի, . . .
և կյանքիս պայմաններն այնպիսին
էին, որ ինձ կարևոր չէին դարձնում

հասարակության մեջ, . . . որը մատնված
էր իր ամենօրյա աշխատանքով խղճուկ
ապրուստ հայթայթելու անհրաժեշտու-
թյան: (Զոգեֆ Սմիթ-Պատմություն 1.22–23)



Ջոզեֆը մտածում էր, թե «որքան տարօրինակ էր», որ արժանանում էր «հեղինակավոր մարդկանց ուշադրությանը, այնքան, որ նրանք հասարակական միտքը լարում էին ընդդեմ ինձ և ծանր հետապնդման մղում» (Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.22–23):

Պատկերացրեք, թե ինչ զգացումներ է ունեցել Ջոզեֆը, երբ թարգմանում էր 2 Նեփի 3-ը Մորմոնի Գրքից և Լեքիից իմացավ, որ Հովսեփը Եգիպտոսում մարգարեացել էր վերջին օրերի «ընտրյալ տեսանողի» մասին:



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Տես 2 Նեփի 3.7, 11, 13:

Հետագա հայտնության մեջ Տերը բացատրեց մի պատճառ, թե Ինքն ինչու էր ընտրել և կանչել Ջոզեֆին՝ որպես Վերականգնման Մարգարե.

Ճշմարիտ, այսպես է ասում Տերը քեզ, իմ ծառա Ջոզեֆ Սմիթ. Ես հավանում եմ քո ընծան, քանզի այս նպատակով եմ ես բարձրացրել քեզ, . . . , որպեսզի ցույց տամ իմ իմաստությունն աշխարհի թույլերի միջոցով: (Վարդապետություն և Ուխտեր 124.1)

Մեկնաբանելով 2 Նեփի 3 գլխի հատվածը, Յոթանասունից Երեց Մարկուս Բ. Նաշը ուսուցանել է.



Գուցե անտրամաբանական թվա, որ Տերը կանչում է թույլերին՝ կատարել վիթխարի աշխատանք: Սակայն նրանք, ովքեր հասկանում են իրենց թուլությունը, կարող են առաջ շարժվել հենց այդ թուլությունով, որպեսզի փնտրեն Տիրոջ զորությունը: Նրանք, ովքեր խոնարհեցնում են իրենց հավատքով, կգորացվեն Նրանով, ով ունի ողջ զորությունը երկնքում և երկրի վրա (տես Մատթեոս 28.18, Մոսիա 4.9):

Պատանեկության տարիներից Ջոզեֆ Սմիթը մոտեցավ Տիրոջը այս պայմաններով: . . .

Ջոզեֆը իրեն նկարագրում է որպես՝ «չճանաչված մի պատանի . . . որը մատնված էր իր ամենօրյա աշխատանքով խղճուկ ապրուստ հայթայթելու անհրաժեշտության» (Ջոզեֆ Սմիթ-Պատմություն 1.23): Նա ծնվել էր ցածր սոցիալական կարգավիճակ ունեցող ընտանիքում և ուներ սահմանափակ պաշտոնական կրթություն: . . .

Ջոզեֆը այնքան լավ էր հասկանում, որ կրթության պակաս ունի, որ մի անգամ նա հառաչեց, որ թակարդված էր «փոքր նեղ բանտում, կարծես [այն] ամբողջովին խավար էր մատիտի և թանաքի և ծուռ, կոտրված, ցրված և անկատար լեզու»: Չնայած սրան, Տերը կանչեց նրան թարգմանելու Մորմոնի Գիրքը՝ դրա բոլոր 588 էջերը, ինչպես ի սկզբանե հրատարակվել է. նա թարգմանեց գիրքը 90 օրում: . . .

Մորմոնի Գրքի թեման և Մարգարե Ջոզեֆի կյանքը. այո, թույլերն են, որ խոնարհաբար փնտրում են Տիրոջը հավատքով, դառնում են ուժեղ, նույնիսկ հզոր՝ Տիրոջ աշխատանքում: Այս հզորացումը տեղի կունենա նույնիսկ թվացյալ փոքր բաներում: . . .

. . . Գոյություն ունի մեկ այլ, ավելի անձնական դաս. եթե մենք, ինչպես Ջոզեֆը, ճանաչենք մեր թուլությունները և հավատքով դիմենք Տիրոջը՝ մեր ողջ սրտով, վճռելով կատարել Նրա կամքը, մեր թուլությունը կդառնա ուժեղ կողմ: Սա հատկապես չի նշանակում, որ թուլությունը ջնջվում է մահկանացու կյանքում, այլ նշանակում է, որ այդպիսի անհատը ուժեղ կդառնա Աստծո միջոցով: (“Joseph Smith: Strength Out of Weakness,” *Ensign*, Dec. 2017, 55–56, 58)



Մտածեք դասին Նախապատրաստվելիս

Ի՞նչ կարող եք սովորել Տիրոջից, ով կանչեց Ջոզեֆ Սմիթին՝ թուլություններ ունեցող մի մահկանացուի, ապա զորացրեց նրան, որ կատարի Իր աշխատանքը:

ԲԱԺԻՆ 2

Զոզեֆի և Նրա բնավորության մասին ի՞նչ էին ասում այն մարդիկ, ովքեր մոտիկից ծանոթ էին նրան:

Տերը հայտարարեց Եգիպտոսի Հովսեփին, որ նրա ժառանգորդները բարձր կգնահատեն Վերականգնման Մարգարեին (տես 2 Նեփի 3.7): Առաջին Նախագահությունից Նախագահ Դալլին Հ. Օուքսը հայտարարել է.



Մարդիկ, ովքեր լավ էին ճանաչում Զոզեֆին և շատ մոտ էին կանգնած նրան՝ որպես Եկեղեցու ղեկավարություն, սիրում և հաստատում էին նրան որպես մարգարե: Նրա եղբայր Հայրումն ընտրեց մահանալ նրա կողքին: Ջոն Թեյլորը, ով նույնպես նրա կողքին էր, երբ նա նահատակվեց, ասել է. «Ես վկայում եմ Աստծո, հրեշտակների և մարդկանց առաջ, որ նա բարի, պատվարժան, և առաքինի մարդ էր . . . և իր բնավորությամբ՝ որպես մասնավոր և հանրային մարդ, նա անբասիր էր, և որ նա ապրեց և մահացավ որպես Աստծո մարդ» (*The Gospel Kingdom* [1987], 355, տես նաև Վ&Ու 135.3): Բրիգամ Ֆանգը հայտարարել է. «Չեմ կարծում, որ աշխարհում ապրում է մի մարդ, ով ավելի լավ էր ճանաչում [Զոզեֆ Սմիթին], քան ես: Եվ ես համարձակ ասում եմ, որ բացի Հիսուս Քրիստոսից, ավելի լավ մարդ երբևէ չի ապրել կամ չի ապրում այս աշխարհում» (in *Journal of Discourses*, 9:332): (Dallin H. Oaks, "Joseph, The Man and the Prophet," *Ensign*, May 1996, 71)

Ջեյն Մնայդեր Ռիչարդսը ասել է Զոզեֆի անձի և բնավորության մասին.



[Զոզեֆ Սմիթը] ամենագրավիչ անձնավորություններից մեկն էր, որին ես բախտեմ ունեցել ճանաչելու: Որպես Տեսանող և Հայտնող, նա անվախ և անկեղծ էր, այնուամենայնիվ խոնարհ, երբեք չհամարելով, որ ինքը ավելի քան խոսնակ էր, ում միջոցով խոսում էր Աստված: Որպես իր ժողովրդի Առաջնորդ, նա եռանդուն էր և առաջադիմական էր, բայց միշտ համեստ և ուշադիր էր իր ժողովրդի և

նրանց դժվարին պայմանների հանդեպ: (Jane Snyder Richards, in "Joseph Smith, the Prophet," *Young Woman's Journal*, Dec. 1905, 550)

Էդվին Հոլդենը պատմում էր, որ Մարգարեն լցված էր Աստծո սիրով, ձգտում էր բարձրացնել և օրհնել ուրիշներին.



1838թ. Զոզեֆը և մի քանի երիտասարդ տղամարդ տարբեր խաղեր էին խաղում դրսում, այդ թվում նաև գնդակով: Որոշ ժամանակ անց նրանք սկսեցին հոգնել: Նա նկատեց դա և հավաքելով նրանց՝ ասաց. «Եկեք փայտե տուն կառուցենք»: Այսպիսով Զոզեֆը և երիտասարդ տղամարդիկ սկսեցին փայտե տուն կառուցել մի այրի կնոջ համար: Այսպիսին էր Զոզեֆը, միշտ աջակցում էր և անում այն ամենը ինչ կարողանում էր: (*The Juvenile Instructor*, Mar. 1, 1892, 153)

Էլիզա Ռ. Մնոուն գրել է Մարգարեի հնազանդության և ազնվության մասին:



Ես ապրում էի Զոզեֆ Սմիթի ընտանիքի հետ և ուսուցանում էի նրա ընտանեկան դպրոցում ու բազմաթիվ հնարավորություններ ունեի նկատելու նրա կենսական ու խոսելաձևը՝ որպես Աստծո մարգարե, և որքան շատ էի ծանոթանում նրա հետ, այնքան ավելի էի գիտակցում, որ նա Աստծո մարգարե էր: . . . Աղոթելիս ու երկրպագելիս նա փոքր երեխայի նման խոնարհ էր: (Eliza R. Snow, "Sketch of My Life," *Relief Society Magazine*, Mar. 1944, 136)

Մերի Ֆրոստ Ադամսը հիշել է Զոզեֆի բարի գործերից մեկը.

Երբ Զոզեֆը Նավուի քաղաքապետն էր, Էնթոնի անունով մի սևամորթ Վերջին Օրերի Սուրբ ձեռքակալվեց Հանգստության օրը խմիչք վաճառելիս, ինչն արգելվում էր օրենքով: Էնթոնին այդպես էր վարվել, որպեսզի գումար հավաքեր իր զավակի համար, ով ստրուկ էր Հարավում: Նա գնել էր իր կնոջ և իր սեփական ազատությունը և հիմա ցանկանում էր իր զավակին միացնել իրենց: Չնայած Էնթոնիի պատճառի արժանահավատությանը, Մարգարեն ասաց. «Ցավում եմ, Էնթոնի, բայց օրենքը պետք է պահպանել, և մենք

ստիպված ենք տուգանել քեզ»: Սակայն «հաջորդ օրը Եղբայր Ջոզեֆը Էնթոնիին մի հրաշալի ձի նվիրեց, ասելով որ նա վաճառի այն և գումարն օգտագործի իր երեխային գնելու համար»: ("Joseph Smith, the Prophet," *Young Woman's Journal*, Dec. 1906, 538)



Մտածեք դասին Նախապատրաստվելիս

Ի՞նչ եք սովորում Ջոզեֆ Սմիթի բնավորության մասին այն մարդկանց պատմություններից, ովքեր ճանաչում էին նրան: Ի՞նչ զգացմունքներ և վկայություն ունեք Մարգարե Ջոզեֆ Սմիթի մասին:

ԲԱԺԻՆ 3

Ես ինչպե՞ս պետք է արձագանքեմ, երբ հանդիպում եմ բացասական տեղեկատվության Մարգարե Ջոզեֆ Սմիթի մասին:

Նույնիսկ այն ժամանակ, երբ Ջոզեֆ Սմիթի կողմից ավետարանի վերականգնման աշխատանքը նոր էր սկսվում, մարգարեությամբ տրվել էր, որ շատ մարդիկ կխոսեն նրա դեմ և կմեղադրեն նրան չար գործերում ու մղումներում: Ջոզեֆ Սմիթը իր պատմության մեջ գրանցել է մի մարգարեություն, որը տրվել էր Մորոնի հրեշտակի կողմից, երբ 1823թ. նա հայտնվեց Ջոզեֆին: Այդ ժամանակ Ջոզեֆն ընդամենը 17 տարեկան էր:



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Ուսումնասիրեք Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.33:

Երեց Նիլ Լ. Մնդերսենը Տասներկու Առաքյալների Քվորումից առաջարկել է եղանակներ, որոնցով Վերջին Օրերի Սրբերը կարող են արձագանքել քննադատությանը Մարգարե Ջոզեֆ Սմիթի դեմ:



Արդյո՞ք մենք պետք է զարմանանք [Ջոզեֆ Սմիթի] դեմ հնչող չարախոսությունների համար: Պողոս Առաքյալին գիժ և մոլորված էին անվանում [տես Գործք 26.24]: Մեր սիրելի Փրկիչին՝ Աստծո Որդուն, պիտակեցին՝ որպես որկրամուլ, գինեմուլ և դեհից բռնված [տես Մատթեոս 11.19, Հովհաննես 10.20]:

Շատերը, ովքեր հերքում են Վերականգնման աշխատանքը, պարզապես չեն հավատում, որ երկնային Եակները խոսում են մարդկանց հետ երկրի վրա: Նրանք ասում են՝ հնարավոր չէ, որ հրեշտակի կողմից ոսկե թիթեղները տրվեին և Աստծո զորությամբ թարգմանվեին: Այդ անհավատության պատճառով նրանք անմիջապես մերժում են Ջոզեֆի վկայությունը, իսկ ոմանք էլ, ցավոք, վարկաբեկում են Մարգարեի կյանքը և զրպարտում նրա բնավորությունը: . . .

Ջոզեֆի բնավորության մասին հարցերին ի պատասխան, կարող ենք ներկայացնել հազարավոր մարդկանց խոսքերը, ովքեր անձնապես ճանաչել են նրան, և ովքեր իրենց կյանքն են տվել այն գործի համար, որ նա օգնում էր հաստատել: . . .

Կարող ենք անկեղծ հետաքրքրվողին հիշեցնել, որ համացանցի տեղեկությունը չունի «ճշմարտության» ֆիլտր: Որոշ տեղեկություններ, անկախ նրանից, թե որքան համոզիչ են, պարզապես ճիշտ չեն: . . .

Մենք կարող ենք հիշեցնել հետաքրքրվողներին, որ Ջոզեֆի մասին որոշ տեղեկություններ՝ լինելով ճշմարիտ, կարող են ներկայացվել իր օրերից և իրավիճակից դուրս՝ լիովին այլ ենթատեքստում: . . .

Յուրաքանչյուր հավատացյալ՝ Մարգարե Ջոզեֆ Սմիթի աստվածային առաքելության և Էության վերաբերյալ հոգևոր հաստատման կարիք ունի: Սա ճիշտ է բոլոր սերունդների համար: Հոգևոր հարցերն արժանի են հոգևոր պատասխանների՝ Աստծո կողմից: . . .

Մարգարե Ջոզեֆ Սմիթի մասին վկայությունը մեզանից յուրաքանչյուրը կարող է տարբեր կերպ ստանալ: Այն կարող է գալ, երբ ծնկի իջնեք ու աղոթեք և խնդրեք Աստծուն, որ հաստատի, որ նա ճշմարիտ մարգարե էր: Այն կարող է գալ, երբ դուք կարդաք Մարգարեի Առաջին Տեսիլքի մասին պատմությունը: Վկայությունը կարող է կաթիլ առ կաթիլ նստել ձեր հոգու վրա, երբ կրկին ու կրկին կարդաք Մորմոնի Գիրքը: . . . Հավատքով և անկեղծ միտումով ձեր վկայությունը Մարգարե Ջոզեֆ Սմիթի մասին կգորանա: (Նիլ L. Անդերսեն, «Ջոզեֆ Սմիթ», *Ensign* կամ *Liahona*, նոյեմբեր 2014, 28–30)



Մտածեք դասին Նախապատրաստվելիս

Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր ներառել հուսալի աղբյուրի ուսումնասիրությունը աղոթքի հետ միասին, երբ պատասխաններ ենք փնտրում հարցերին Ջոզեֆ Սմիթի և Նրա մարգարեական առաքելության վերաբերյալ: Ձեր կարծիքով, այդ հարցերը Ջոզեֆ Սմիթի և Նրա մարգարեական առաքելության մասին ինչո՞ւ են արժանի Աստծուց տրված հոգևոր պատասխանների:

Ցանկանում ես ավելին: (Ոչ պարտադիր)

Որտեղի՞ց կարող եմ ավելին սովորել Ջոզեֆ Սմիթի մարգարեական առաքելության մասին:

Joseph Smith: Prophet of the Restoration (1:09:25)
տեսանյութը պատկերում է Ջոզեֆ Սմիթի կյանքը:



Իր ելույթում՝ «Ջոզեֆ Սմիթ. Թուլությունը փոխակերպելով ուժի» (*Ensign* կամ *Liahona*, դեկտեմբեր 2017, 55–61),
Երեց Մարկուս Բ. Նաշը Յոթանասու-

նից օգտագործել է Մարգարե Ջոզեֆ Սմիթի փորձառությունները, որպեսզի ուսուցանի թուլություններն ուժեղ կողմեր դարձնելու սկզբունքները:

Դուք կարող եք նաև ավելին սովորել Մարգարե Ջոզեֆ Սմիթի և Նրա կյանքի մանրամասների մասին՝ ուսումնասիրելով հետևյալ նյութերը.

- *Saints: The Story of the Church of Jesus Christ in the Latter Days, vol. 1, The Standard of Truth, 1815–1846* (2018)
- Ջոզեֆ Սմիթի թղթերը
- Ջոզեֆ Սմիթ. Վերականգման մարգարե տեսանյութեր

ԴԱՍ 24. ՈՒՍՈՒՑԶԻ ՆՅՈՒԹ

Մարգարե Զոգեֆ Սմիթը՝ ընտրյալ տեսանող

Տերը նկարագրեց Մարգարե Զոգեֆ Սմիթին՝ որպես «ընտրյալ տեսանող», ով «բարձր կգնահատվի» իր ժողովրդի կողմից (2 Նեփի 3.7). Մակայն, չնայած այն ողջ բարիքին, որ Տերը գործեց Զոգեֆ Սմիթի միջոցով, Մարգարեն շատ քննադատներ ունի: Այս դասը կպատրաստի ուսանողներին հավատքով պատասխանել Զոգեֆ Սմիթի դեմ տարվող քննադատությանը և ամրապնդել նրանց համոզմունքը, որ Տերը գորացնում է նրանց, ում կանչում է:

Ուսուցման առաջարկներ

Տերը կանչում է Զոգեֆ Սմիթին իր թուլությունով հանդերձ և զորացնում է նրան՝ ընտրյալ տեսանող դառնալու համար:

Ցուցադրեք երիտասարդ Զոգեֆ Սմիթի հետևյալ նկարը.



Հրավիրեք ուսանողներին կիսվել նախապատրաստական նյութի բաժին 1-ի խոսքերով և արտահայտություններով, որոնք նկարագրում են, թե Զոգեֆն ինչ էր զգում իր սեփական կարողությունների մասին այն ժամանակ, երբ կանչվեց օգնելու վերականգնել Հիսուս Քրիստոսի ավետարանը:

Հանձնարարեք ուսանողներին մտածել այն ժամանակների մասին, երբ նրանք ճնշված կամ անհամապատասխան են զգացել անելու այն, ինչ Տերը կամ Նրա ծառաներն են խնդրել նրանց անել:

Բացատրեք, որ Տիրոջ կանչը Զոգեֆ Սմիթին ուսուցանում է հզոր սկզբունքներ, որոնք կարող են օգնել մեզ, երբ մենք թույլ կամ անհամապատասխան ենք զգում Տիրոջ գործը կատարելիս: Մորմոնի Գրքում Մարգարե Լեքին պատմել է Եգիպտոսի Հովսեփի մարգարեությունը: Դասարանով կարդացեք 2 Նեփի 3.6 -11, 15-ը, փնտրելով բառեր և արտահայտություններ, որոնցով Տերը նկարագրում է ապագա մարգարեին, ով նույնպես կկոչվի Զոգեֆ (Հովսեփ):

- Ի՞նչ բառեր ու արտահայտություններ է Տերը օգտագործել Զոգեֆ Սմիթին և այն աշխատանքը նկարագրելու համար, որը Նա կօգնել նրան իրականացնել:
- Փրկիչն ի՞նչ դեր է խոստացել խաղալ այն աշխատանքում, որը Զոգեֆը պետք է կանչվեր կատարելու:

Դասարանով կարդացեք 2 Նեփի 3.13 և Վարդապետություն և Ուխտեր 124.1, փնտրելով, թե Տերն ինչպես էր նկարագրում Զոգեֆ Սմիթին: Թող ուսանողները զեկուցեն՝ ինչ գտան:

- Ձեր կարծիքով, Տիրոջ իմաստությունն ինչպես է ցուցադրվում, երբ Նա կանչում է «աշխարհի թույլերին»՝ կատարելու Իր աշխատանքը: (Վարդապետություն և Ուխտեր 124.1):

- Ի՞նչ ճշմարտություն կարող ենք սովորել նրանից, որ Տերը կանչեց Ջոզեֆ Սմիթին, չնայած նրա թուլությանը:

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Ա. Մաքսվելի հետևյալ խոսքերը և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



Մեծագույն ուղերձներից մեկը, որը բխում է այն հանգամանքից, որ Տերն օգտագործեց Ջոզեֆ Սմիթին՝ որպես «ընտրյալ տեսանող» վերջին օրերում, այն է, որ իրոք հույս կա մեզանից յուրաքանչյուրի համար: *Տերը կարող է կանչել մեզ, չնայած մեր թուլություններին, և գորացնել մեզ Իր նպատակների համար:* (Neal A. Maxwell, “A Choice Seer,” *Ensign*, Aug. 1986, 14; italics added)

- Այս սկզբունքն ինչպե՞ս կարող է օգնել այն մարդկանց, ովքեր մաքառում են մարդկային թուլությունների դեմ, որոնք նկատում են՝ իրենց մեջ, Եկեղեցու ղեկավարների և այլ անդամների մեջ:
- Ե՞րբ եք զգացել, որ Տերը բազմապատկում է ձեր կարողությունները Իր աշխատանքը կատարելու համար, չնայած ձեր թուլություններին: Երբևէ տեսե՞լ եք, որ Տերը կատարում է սա ուրիշների հետ:
- Ջոզեֆ Սմիթն ի՞նչ արեց Տիրոջ ամրապնդող գործունեությունը ստանալու համար: (Կարող եք հրավիրել ուսանողներին կրկնել Երեց Մարկուս Բ. Նաշի հայտարարությունը նախապատրաստական նյութի բաժին 1-ում:)

Ուսանողներին ժամանակ տվեք աղոթքով խորհել և գրանցել, թե ինչ կարող են անել Տիրոջ գործունեությունը իրենց կյանք հրավիրելու համար, որը կգորացնի նրանց Նրա նպատակների համար:

Ջոզեֆ Սմիթի անունը «որպես բարի և չար, կիմացվի բոլոր ազգերի մեջ»:

Ասեք ուսանողներին, որ չնայած այն բոլոր լավ գործերին, որ Մարգարե Ջոզեֆ Սմիթը կատարում էր, շատերն էին նվաստացնում և քննադատում նրան: Սակայն սա անակնկալ չէր Ջոզեֆի համար:

Երբ Մորոնին առաջին անգամ հայտնվեց 17-ամյա Ջոզեֆին, պատկերացում տվեց նրա ապագայի մասին: Ուսանողներին հանձնարարեք մտքում կարդալ Ջոզեֆ Սմիթ - Պատմություն 1.33-ը, ուշադրություն դարձնելով, թե մարդիկ ինչպես կվերաբերվեին Ջոզեֆին:

- Ի՞նչ կարող ենք սովորել այս հատվածից: (Օգնեք ուսանողներին գտնել հետևյալ ճշմարտությունը. **Ջոզեֆ Սմիթի անունը որպես բարի և չար, կիմացվի բոլոր ազգերի մեջ:**)
- Ի՞նչ եղանակներով է այս մարգարեությունը կատարվում այսօր:

Բացատրեք, որ Տերը մխիթարեց Ջոզեֆին նրա կյանքի ամենադժվար պահերից մեկի ժամանակ, երբ նա բանտարկված էր Լիբերթիի բանտում (Միսսուրի): Ուսանողներին հանձնարարեք կարդալ Վարդապետություն և Ուխտեր 122.1-3, գտնելով, թե Տերը ինչ հավաստիացում տվեց Ջոզեֆին:

- Ի՞նչ կարող ենք սովորել այս հատվածից այն մասին, թե հավաստարիմներն ինչպես կարճա՝ գանքեն Ջոզեֆ Սմիթին և նրա մարգարեական առաքելությանը: (Մինչ ոմանք, գուցե, ծաղրեն Ջոզեֆ Սմիթին, բայց սրտով մաքուրները երես չեն թեքի նրանից, այլ կփնտրեն օրհնությունները, որոնք հասանելի դարձվեցին նրա ծառայության միջոցով:)

Հանձնարարեք ուսանողներին նախապատրաստական նյութի բաժին 2-ից կրկնել այն մարդկանց խոսքերը, ովքեր ճանաչում էին Ջոզեֆ Սմիթին, և կիսվեն նրանով, ինչն առանձնահատուկ էր իրենց համար:

- Ի՞նչ զգացմունքներ և վկայություն ունեք Մարգարե Ջոզեֆ Սմիթի մասին:

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Լ. Անդերսենի հետևյալ խոսքերը և հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.



Մարգարե Ջոզեֆ Սմիթի վերաբերյալ բացասական կարծիքները կշատանան, որքան մոտենանք Փրկիչի Երկրորդ Գալուստին: Կիսաճշմարտությունները և խորամանկ ստերը չեն պակասի: Կլինեն ընտանիքի անդամներ և ընկերներ, ովքեր

ձեր օգնության կարիքը կունենան: (Նիլ
Լ. Սնդերսեն, «Ջոզեֆ Սմիթ», *Ensign* կամ
Լիաժողով, նոյեմբեր 2014, 30–31)

Դասարանով կամ փոքր խմբերով քննարկեք, թե ուսանողներն ինչպես կարող են օգնել ընտանիքի որևէ անդամի կամ ընկերոջ, ով մտահոգված է այն բացասական մեկնաբանություններով, որոնք նրանք լսել կամ կարդացել են Մարգարե Ջոզեֆի մասին: Որպես քննարկման մաս, գուցե խումբը ցանկանա վերանայել Երեց Անդերսենի խոսքերը նախապատրաստական նյութի բաժին 3-ից: Հետևյալ հարցերը նույնպես կարող են օգտակար լինել քննարկման ժամանակ.

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր խրախուսել ինչ-որ մեկին ուսումնասիրել հուսալի աղբյուրները և հրավիրել մարդկանց խորհել ու աղոթել, երբ պատասխաններ են փնտրում Ջոզեֆ Սմիթի և նրա մարգարեական առաքելության մասին:
- Ի՞նչ կխրախուսեիք ինչ-որ մեկին անել, որպեսզի հոգևոր վկայություն ձեռք բերի կամ ամրապնդի իր վկայությունը Ջոզեֆ Սմիթի աստվածային առաքելության մասին:

Եզրափակեք՝ վկայելով Աստծուց հոգևոր վկայություն ստանալու կարևորության մասին, որ Ջոզեֆ Սմիթը Նրա մարգարեն էր, ով, չնայած իր թուլություններին, կանչվել և գորացվել էր Տիրոջով, որպեսզի դառնար Վերականգնման ընտրյալ տեսանողը:

Հաջորդ անգամ

Հարցրեք ուսանողներին՝ արդյոք նրանք երբևէ անհանգստացել և աղոթել են այն որոշումների համար, որոնք ազդում են իրենց ապագայի վրա: Հանձնարարեք նրանց հաջորդ անգամվա համար ուսումնասիրել դասարանի նախապատրաստական նյութը: Նրանք կիմանան այն անորոշության մասին, որ Սրբերը զգում էին Ջոզեֆ Սմիթի մահից հետո և նրանց անսասան հավատքի մասին, երբ անապատում հետևում էին իրենց նոր ղեկավարին: Խնդրեք ուսանողներին պատրաստ գալ դասարան, որպեսզի քննարկեն, թե ինչ սովորեցին Սրբերից այս դժվարին ժամանակի ընթացքում:



ԲՐԻԳԱՍ ՅԱՆԳՆ ԱՌԱՋ Է ՆԱՅՈՒՄ, ԵՐԲ ՍՐԲԵՐԸ շԵՌԱՆՈՒՄ ԵՆ ՆԱԿՈՒԻՑ: ԴԱՍ 25. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Դաճ 25. Իրավահաջորդությունը նախագահությունում և գաղթը դեպի արևմուտք

Ջոզեֆ և Հայրում Սմիթների մահվան մասին հայտարարելուց հետո լրագրային մի հոդված եզրակացրեց՝ «Մա մորմոնիզմի վերջն է» (*Weekly Herald*, July 13, 1844, 220): Մարգարե Ջոզեֆ Սմիթի մահվան պատճառով դրսի շատ դիտորդներ կարծում էին, որ Եկեղեցին կքայքայվի: Իսկ Եկեղեցու անդամները հարցնում էին, թե ով կառաջնորդի իրենց: Այս նյութն ուսումնասիրելիս ուշադրություն դարձրեք, թե Տերն ինչպես է շարունակում առաջնորդել Իր Եկեղեցին մարգարեի մահից հետո:

ԲԱԺԻՆ 1

Ո՞վ է ղեկավարում Տիրոջ
Եկեղեցին, երբ մարգարեն
մահանում է:

Ավարտեք հետևյալ տարբերակներից մեկը այս
բաժնի համար:

1. Դիտեք տեսանյութը՝ «The Succession Crisis after Joseph Smith's Murder» (8:03), ապա ավարտեք այս բաժնի վերջում տրված խորհելու վարժությունը:

1. Ուսումնասիրեք հետևյալ նյութը, իսկ հետո ավարտեք խորհելու վարժությունը:

Բացատրեք, որ Նավուի Սրբերին հուսահատության զգացում էր պատել Ջոզեֆ և Հայրում Սմիթների մահվանից հետո: Ըվտոթության այդ ժամանակաշրջանում որոշ մարդիկ պնդում էին, որ նրանք իրավունք ունեն ղեկավարելու Եկեղեցին: Այդ մարդկանցից մեկը Սիդնի Ռիգդոնն էր:

Ջոզեֆի մահվան ժամանակ Բրիգամ Յանգն ու մյուս Առաքյալները ծառայում էին Միացյալ Նահանգների արևելյան միսիաներում: 1844թ. հուլիսի 16-ին Բրիգամը մի նամակ ստացավ, որում նկարագրվում էր Ջոզեֆ և Հայրում Սմիթների սպանությունները:

Երբ Բրիգամը կարդաց նամակը, շատ ճնշվեց և հուսահատության զգացումը պատեց նրան: Նա երբեք այդքան հուսահատված չէր եղել:

Նրա մտքերն անմիջապես դարձան դեպի քահանայությունը: Ջոզեֆը կրում էր բոլոր բանալիները, որոնք անհրաժեշտ էին Սրբերին օժտելու և հավերժության մեջ նրանց կնքելու համար: Առանց այդ բանալիների Տիրոջ աշխատանքը չէր կարող առաջ շարժվել: Մի պահ Բրիգամը վախեցավ, որ Ջոզեֆը դրանք իր հետ գերեզման էր տարել:

Հետո, հայտնության պահին Բրիգամը հիշեց, որ Ջոզեֆը բանալիները շնորհել էր Տասներկու Առաքյալներին: Ձեռքը ուժեղ խփելով ծնկին, նա ասաց. «Արքայության բանալիները հենց այստեղ են եկեղեցու հետ:» (*Saints: The Story of the Church of Jesus Christ in the Latter Days*, vol. 1, *The Standard of Truth*, 1815–1846 [2018], 559)

1844թ. օգոստոսին Տասներկուսը և Եկեղեցու այլ ղեկավարները հավաքվեցին խորհրդի: Այս ժողովի ժամանակ Միդնի Աիզոնը, ով դժգոհ էր Եկեղեցուց, հայտարարեց, որ քանի որ ինքը նախկինում կանչված և կարգված է եղել որպես Ջոզեֆ Մմիթի խոսնակ (տես Վարդապետություն և Ուխտեր 100.9), ապա նրա պարտավորությունն էր «հսկելու, որ Եկեղեցին կառավարվեր պատշաճ կերպով» (in *History*, 1838–1856 [Manuscript History of the Church], volume F-1, 295, josephsmithpapers.org):

Երբ Միդնի Աիզոնն ավարտեց իր ելույթը, Բրիգամ Յանգը հայտարարեց.



Ջոզեֆը մեզ [վկայակոչելով Տասներկուսի Քվորումը] է շնորհել Առաքյալ լինելու բոլոր բանալիները և իշխանությունը, որը նա կրում էր մինչև մահը: (Brigham Young, in *History*, 1838–1856, volume F-1, 296, josephsmithpapers.org)

Հաջորդ օրը Նավուի Սրբերը հավաքվեցին լսելու Միդնի Աիզոնին, ով պետք է բանավիճեր, որ ինքը պետք է ղեկավարի նրանց: Նրա ելույթից հետո Բրիգամ Յանգը կարճ ելույթ ունեցավ, երաշխավորելով, որ Տասներկուսի Քվորումի անդամները, ովքեր համատեղ կրում էին քահանայության բոլոր բանալիները, որոնք վերականգնվել էին

Մարգարե Ջոզեֆ Մմիթին, առայժմ ղեկավարում են Եկեղեցին:

Երբ Էմիլի [Հոյթը] լսեց Բրիգամ Յանգի ելույթը, նա արագ նայեց նրան, որպեսզի համոզվի՝ արդյոք Ջոզեֆը չէ՞ր խոսում: Նրա դեմքին Ջոզեֆի արտահայտությունն էր, նրա դատողության մեթոդը և նույնիսկ նրա ձայնի հնչյունները: . . .

Յոթ տարի անց Էմիլին գրանցեց իր փորձառությունն այն մասին, թե ինչպես էր հետևում Սրբերին ուղղված Բրիգամի ելույթին, վկայելով, որ բեմին կանգնած արտաքինով և ձայնով նա այնքան նման էր Ջոզեֆին: Հետագա տարիներին տասնյակ Սրբեր նրա վկայությանն ավելացրին իրենցը, նկարագրելով, որ տեսան, թե այդ օրը Ջոզեֆի մարգարեական թիկնոցն ինչպես ընկավ Բրիգամի վրա: (*Սրբեր*, 1:565–66)

Վիլֆորդ Վուդրուֆը գրել է. «Եթե ես չտեսնեի նրան [Բրիգամին] իմ սեփական աչքերով, ոչ ոք ինձ չէր կարող համոզել, որ դա Ջոզեֆ Մմիթը չէր» (in *History of the Church*, 7:236):

Երբ Բրիգամ Յանգը հայտարարեց, որ Ջոզեֆը առաքյալների բանալիներն ու զորությունները, ինչպես նաև Սուրբ Հոգու հաստատող վկայությունը շնորհել է Տասներկուսին, Սրբերը հասկացան Տիրոջ կամքը և հաստատեցին Տասներկու Առաքյալների Քվորումին՝ որպես Հիսուս Քրիստոսի վերականգնված Եկեղեցու ղեկավարներ:



Մտածեք դասին Նախապատրաստվելիս

Քննարկեք, թե Երկնային Հայրը ինչպես հայտնի դարձրեց Իր կամքն ու Իր սերը Սրբերի հանդեպ՝ ցույց տալով նրանց, որ Բրիգամ Յանգն ու Տասներկուսի Առաքյալները պետք է ղեկավարեին Եկեղեցին: Ինչպե՞ս եք հասկացել, որ նրանք, ովքեր ներկայումս ղեկավարում են Եկեղեցին, ընտրված են և կանչված են Աստծո կողմից:

ԲԱԺԻՆ 2

Տերն ինչպե՞ս կարող է առաջնորդել մեզ, երբ ապագան անորոշ է թվում:

1846թ. Սրբերի հանդեպ աճող հալածանքների պայմաններում Տասներկու Առաքյալները ծրագրում են հեռանալ Նավուից և գնալ արևմուտք: 1842թ. Ջոզեֆ Սմիթը մարգարեացել էր, «որ Սրբերը կշարունակեին տառապել դժբախտություններից և կքշվեն դեպի Ռոքի լեռները . . . [և կհիմնեն] բնակավայրեր, կկառուցեն քաղաքներ ու . . . կդառնան հզոր ժողովուրդ Ռոքի լեռներում» (*Եկե-դեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* [2007], 517):



Բրիգամ Յանգը առաջնորդում է Սրբերին Նավուից հեռանալիս:

Մինչ Սրբերը պատրաստվում էին հեռանալ Նավուից, նրանք նաև աշխատում էին ավարտել Նավուի տաճարը: Երբ կառուցումը մոտենում էր ավարտին, հազարավոր Սրբեր գիշեր ու ցերեկ գալիս էին տաճար՝ օժտում և կնքման արարողություններ ստանալու համար: Քույր Սառա Րիչը ասել է.



Եթե չլիներ այն հավատը և գիտելիքը, որը տրվել էր մեզ այդ տաճարում Տիրոջ Հոգու ազդեցության և օգնության շնորհիվ, մեր ճամփորդությունը նման կլիներ խավարի մեջ թռիչք կատարելուն: . . . Բայց մենք հավատում էինք մեր Երկնային Հորը և վստահում էինք Նրան, զգալով, որ մենք Նրա ընտրյալ ժողովուրդն ենք: (Sarah Rich,

in *Daughters in My Kingdom: The History and Work of Relief Society* [2011], 30)

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Ռոբերտ Դ. Հեյլը խոսել է այն Սրբերի մասին, ովքեր Նավուում էին այդ ժամանակ.



Նավուի Տաճարում Տիրոջ հետ կապած նրանց ուխտերը պաշտպանություն էին նրանց համար դեպի արևմուտք կատարած ճամփորդության ժամանակ, ինչպես որ մեզանից յուրաքանչյուրի համար՝ այսօր և մեր ողջ կյանքի ընթացքում: (Robert D. Hales, "Temple Blessings," *New Era*, Feb. 2014, 4)

Երբ հալածանքները սաստկացան, Սրբերը վերջացրին իրենց ծրագրերը, և 1846թ. փետրվարին Սրբերի առաջին մեծ խումբը սկսեց ուղևորությունը Այովայով: Նրանք բախվեցին դաժան ձմեռային եղանակային պայմանների, սննդի պակասի և կազմալուծման խնդիրների հետ: Գարունը իր հետ բերեց մշտական անձրևներ, հորդ առվակներ և ցելս, որոնք սահմանափակում էին Սրբերի ուղևորությունը, հասցնելով ընդամենը 483 կմ 131 օրում: Այս հետաձգումների և պաշարների սպառման արդյունքում Բրիգամ Յանգը դադարեցրեց ճամփորդությունը և հիմնեց ճանապարհային մի կայան, որը կոչվեց Վինթեր Քուորթերս: Մինչև աշուն Վինթեր Քուորթերսի բնակչությունը արագորեն աճեց՝ դառնալով ավելի քան 7000 մարդ:



Շատերը հիվանդացել էին թերսնուցման և վատ եղանակային պայմանների հետևանքով, իսկ ոմանց հավատքը փորձության էր ենթարկվել: Այս

անտանելի հանգամանքները 1846-47թթ. ձմեռը դարձրին Բրիգամ Յանգի կյանքի ամենադժվարին ժամանակաշրջաններից մեկը: Նա իրեն զգում էր «ինչպես մի մեծ ընտանիքի հայր՝ շուրջը հավաքված երեխաներով, իսկ ավելի ուշ վերհիշում էր, որ իր պարտականությունները ճնշում էին իրեն՝ ինչպես «քսանհինգ տոննանոց ծանրություն» (*“This Shall Be Our Covenant,” Revelations in Context* [2016], 307–8; see also *Saints: The Story of the Church of Jesus Christ in the Latter Days*, vol. 2, *No Unhallowed Hand, 1846–1893* [2020], 40–44, 46–51):

Այս բեռի տակ կքած՝ Բրիգամ Յանգը առաջնորդություն էր աղերսում Տիրոջից և հայտնություն ստացավ «Տիրոջ Խոսքը և Կամքն Իսրայելի ճամբարի վերաբերյալ՝ դեպի արևմուտք նրանց ճամփորդելու մասին» (Վարդապետություն և Ուխտեր 136.1): Երբ ուսումնասիրեք այս հայտնության հետևյալ բաժինները, նշեք Սրբերին տված Տիրոջ հրահանգներն ու խոստումները:



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 136.2, 8, 10–11, 21–22:

Առաջին Նախագահությունից Նախագահ Դալլին Հ. Օուքսը հետաքրքիր գաղափար է տվել Վարդապետություն և Ուխտեր 136 գրանցված հայտնության մասին: Նա ասել է.



Հայտնություն ստանալու ցանկացած ջանքի հիմքում ընկած է պարտավորվածությունը՝ անել ամեն բան մեր սեփական ջանքերով և խոհեմությամբ: Սա նշանակում է, որ մենք պետք է ծառայենք և աշխատենք:

Մեր ծառայությամբ և աշխատանքով առաջ գնալը կարևոր եղանակ է հայտնության իրավունք ստանալու համար: Սուրբ գրությունների ուսումնասիրության ընթացքում ես նկատել եմ, որ Աստծո զավակները հայտնության մեծ բաժին ստանում են այն ժամանակ, երբ

շարժման մեջ են, այլ ոչ թե նստած իրենց բնակարաններում սպասում են, թե Տերը երբ է ասելու, թե որն է լինելու նրանց առաջին քայլը:

Օրինակ՝ կարևոր է նշել, որ «Տիրոջ Խոսքը և Կամքն Իսրայելի ճամբարի վերաբերյալ՝ դեպի արևմուտք նրանց ճամփորդելու մասին» հայտնությունը (ՎՁՈւ 136.1) չէր տրվել Նավուում՝ որպես Տասներկուսի Քվորումի ծրագրված մեկնումը Նավուից, . . . ոչ էլ այն տրվել էր Միսիսիպի գետի արևմտյան ափին: . . . Հարթավայրերով Սրբերի շարժը առաջնորդելու հայտնությունը տրվել է 1847թ. հունվարի 14-ին, երբ Սրբերը արդեն անցել էին դեպի լեռների հովիտ տանող ճանապարհի երրորդ մասը: (Dallin H. Oaks, “In His Own Time, in His Own Way,” *Ensign*, Aug. 2013, 22, 24):

Մեկ րոպե մտածեք, թե Նախագահ Օուքսի այս գաղափարը որքանով կիրառելի կլինի ձեր սեփական հարցերի և որոշումների համար, որոնք ազդում են ձեր ապագայի վրա:



1847թ. ապրիլի սկզբին Բրիգամ Յանգը Սրբերի առաջին խմբի հետ հեռացավ Վինթեր Քվորթերսից: Չորս ամսում նրանք ճամփորդեցին ավելի քան 1660 կիլոմետր և Մուլթ Լեյքի հովիտ ժամանեցին 1847 թվականի հուլիսի 24-ին: Վիլֆորդ Վուդրուֆը գրել է, որ երբ Բրիգամ Յանգը տեսավ հովիտը, «մի քանի րոպե նա տարվեց տեսիլքով: Երբ տեսիլքն անցավ, նա ասաց. «Բավական է: Սա է ճիշտ վայրը: Քշեք» (*Teachings of Presidents of the Church: Wilford Woodruff* [2004], 146): Մինչև

հոկտեմբեր մոտ 1700 Սրբեր արդեն բնակություն էին հաստատել Յուտայում: Մակայն մոտ 10000 Սրբեր դեռևս ապրում էին Միսսուրիի գետի ափին՝ Այովայում և Նեբրասկայում, և ճամփորդելու էին արևմուտք հաջորդ հինգ տարիների ընթացքում (see “Sustaining a New First Presidency in 1847,” ChurchofJesusChrist.org):

Ավելի քան երեք տարի Տասներկու Առաքյալները առաջնորդել էին Եկեղեցին Առաջին Նախագահության բացակայության պայմաններում: 1847թ. դեկտեմբերին Առաքյալները հանդիպեցին Քանսլ Բլաֆսում (Այովա), որտեղ դեռևս շատ Սրբեր էին ապրում: Նրանք հավաքվել էին մի փոքր փայտաշեն տանը՝ քննարկելու Առաջին Նախագահության վերակազմավորումը: «Մուրֆ Հոգու հրաշալի դրսևորումը հեղվել էր ներկաների վրա», և Տասներկուսը միաձայն հաստատեցին ավագ Առաքյալ Բրիգամ Յանգին՝ որպես Եկեղեցու Նախագահ (Autobiography of Bathsheba W. Smith, 12, Church History Library, Salt Lake City; spelling standardized; see also *Saints*, 2:87–89, 92–95):



Մտածեք դասին Նախապատրաստվելիս

Մտածեք, թե Տերն ինչպես առաջնորդեց Սրբերին, երբ նրանք ուղևորվում էին դեպի

Սոլթ Լեյքի հովիտ: Ե՞րբ եք զգացել, որ Տերը առաջնորդում է ձեր կյանքը: Ինչի՞ վրա կարող եք կենտրոնանալ, որպեսզի ավելի շատ առաջնորդություն ստանաք Տիրոջից:

Ցանկանում ես ավելին: (Ոչ պարտադիր)

Տերն ի՞նչ խորհուրդ և խոստումներ տվեց Սրբերին դեպի արևմուտք նրանց գաղթի ժամանակ:

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 136 բաժինը, որպեսզի ավելին սովորեք այն մասին, թե Տերը ինչպես կազմակերպեց և ուղղորդեց Սրբերին դեպի Սոլթ Լեյքի հովիտ իրենց գաղթի ճանապարհին:

Տաճարային արարողություններն ու ուխտերը ինչպե՞ս են ամրապնդում ինձ:

Դիտեք «Endowed with Power» (12:17) տեսանյութը, որը պատկերում է Նավու մեկնելուց առաջ տաճարային օրհնություններ ստանալու Սրբերի անկեղծ ցանկությունը:

ԴԱՍ 25. ՈՒՍՈՒՑՉԻ ՆՅՈՒԹ

Իրավահաջորդությունը նախագահությունում և գաղթը դեպի արևմուտք

Ջոզեֆ և Հայրում Սմիթների նահատակությունից հետո շատ Սրբեր ստացան աստվածային վկայություն, որ Բրիգամ Յանգը և Տասներկու Առաքյալները պետք է ղեկավարեին Տիրոջ Եկեղեցին: Նրանց ոգեշնչված առաջնորդության ներքո Սրբերը ճամփորդեցին դեպի Մոլթ Լեյքի Հովիտ: Այս դասը նախատեսված է խորացնելու ուսանողների հավատն առ այն, որ Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալները կրում են այս վերջին տնտեսության քահանայության բոլոր բանալիները: Այս դասը նաև կօգնի ուսանողներին վստահել, որ Տերը կուղղորդի նրանց անձնական կյանքը, երբ նրանք պատվեն իրենց ուխտերը:

Ուսուցման առաջարկներ

Առաքյալները կրում են արքայության բանալիները:

Ցուցադրեք Ջոզեֆ և Հայրում Սմիթների հետևյալ նկարը:



Բացատրեք, որ եղբայրները նահատակվեցին 1844թ. հունիսի 27-ին: Հետևյալ առավոտյան Մարգարեի ընկեր Փորթեր Ռոքուելը իր ձիով հասավ Նավու՝ բացականչելով. «Ջոզեֆը սպանվեց: Ջոզեֆը սպանվեց: Նրանք սպանեցին նրանց»: (Anson Call, *Autobiography and journal*, circa 1856–1889, 12, Church History Library, Salt Lake City, Utah):

- Ձեր կարծիքով, Սրբերն ինչ էին զգում այս նորությունը լսելուց հետո:

Կարող եք հարցնել ուսանողներին՝ արդյո՞ք նրանք երբևէ լսել են որևէ մարգարեի մահվան լուրը, և ի՞նչ են զգացել:

- Ձեր կարծիքով, ի՞նչ հարցեր և մտահոգություններ ունեին վաղ օրերի Սրբերը, երբ լսեցին Ջոզեֆ Սմիթի մահվան լուրը:
- Բրիգամ Յանգը ինչպե՞ս արձագանքեց Ջոզեֆ և Հայրում Սմիթների մահվան լուրին: (Եթե անհրաժեշտ է, հրավիրեք ուսանողներին կրկնել Բրիգամ Յանգի արձագանքը նախապատրաստական նյութի բաժին 1-ից:)
- Չնայած Մարգարեի մահվան պատճառած վշտին, ի՞նչը սփռվեց Բրիգամին:

Ցուցադրեք Բրիգամ Յանգի և Միդնի Ռիզդոնի նկարները:



Հիշեցրեք ուսանողներին, որ Բրիգամ Յանգը ավագ Առաքյալ էր Մարգարեի մահվան ժամանակ:

Միդնի Ռիզոնը ծառայել էր որպես Ջոզեֆ Մմիթի խորհրդական Առաջին Նախագահությունում և համարում էր, որ ինքը պետք է ղեկավարեր Եկեղեցին՝ որպես նրա պահապան: Միդնին հատուկ ժողով գումարեց այն հույսով, որ Եկեղեցու անդամները կհաստատեն ղեկավարության իր պահանջը: Թե՛ Միդնին և թե՛ Բրիգամը դիմեցին Սրբերին:

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Նախագահ Բրիգամ Յանգի հետևյալ խոսքերը, որը գտնվում է նախապատրաստական նյութի բաժին 1-ում:

- Բրիգամ Յանգի հայտարարությունից ի՞նչ ճշմարտություն կարող ենք սովորել Առաքյալներ կարգավածների իշխանության մասին: (Ուսանողների պատասխաններից հետո գրատախտակին գրեք հետևյալ ճշմարտությունը. **Առաքյալները կրում են Եկեղեցին նախագահելու համար անհրաժեշտ քահանայության բոլոր բանալիները:**) [Տես Վարդապետություն և Ուխտեր 27.12–13, 112.30–32:]

Նշեք, որ մեր օրերում, երբ յուրաքանչյուր Առաքյալ կարգվում է, նրան տրվում են քահանայության բոլոր բանալիները, որոնք Տերը վերականգնել է երկրի վրա Ջոզեֆ Մմիթի միջոցով: Մակայն միայն Եկեղեցու Նախագահն է լիազորված գործադրել այս բոլոր բանալիները: Տասներկու Առաքյալների Քվորումի անդամները գործադրում են իրենց քահանայության բանալիները Եկեղեցու նախագահի ղեկավարությամբ:

- Ի՞նչ է տեղի ունենում հիմա, երբ Եկեղեցու Նախագահը մահանում է:

Անհրաժեշտության դեպքում, ցուցադրեք հետևյալ ելույթը և հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.

Երբ Եկեղեցու Նախագահը մահանում է Առաջին Նախագահությունը ինքնաբերաբար լուծարվում է: Տղամարդիկ, ովքեր նախկինում ծառայում էին որպես խորհրդականներ, կրկին ստանում են իրենց տեղերը Տասներկու Առաքյալների Քվորումում, և այդ քվորումը ստանձնում է Եկեղեցու ղեկավարությունը՝ ավագ Առաքյալի նախագահությամբ: . . . Մեր պատմության ամբողջ ընթացքում ավագ Առաքյալը միշտ դառնում է Եկեղեցու Նախագահի իրավահաջորդը: (“A Message from the

First Presidency,” Jan. 16, 2018, ChurchofJesusChrist .org)

Կրկին անդրադարձեք Բրիգամի և Միդնիի նկարներին և հարցրեք.

- Ի՞նչ զգացին շատ Սրբեր, երբ դիտեցին և լսեցին Բրիգամ Յանգի ելույթը: Դա ինչպիսի՞ ազդեցություն ունեցավ նրանց վրա: (Խրախուսեք ուսանողներին վերհիշել իրենց սովորածը նախապատրաստական նյութի բաժին 1-ից:)

Ցուցադրեք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Լ. Անդերսենի հետևյալ խոսքերը. Բացատրեք, որ Երեց Անդերսենը ասաց այս բառերը այն օրը, երբ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը հաստատվում էր որպես Եկեղեցու նոր Նախագահ:



Որպես Վերջին Օրերի Սրբեր, մենք արտոնություն ունենք անձնական վկայություն ստանալու, որ [մարգարեի] կանչն Աստծուց է: («Աստծո մարգարեն», *Ensign* կամ *Լիահոնա*, մայիս, 2018թ, 25-26):

Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել իրենց վկայությամբ, որ ներկայիս մարգարեն կանչված է Աստծո կողմից և, թե ինչպես են նրանք ստացել այդ վկայությունը: Խրախուսեք ուսանողներին փնտրել իրենց սեփական վկայությունը, որ Եկեղեցու ղեկավարները կանչված են ոգեշնչման միջոցով:

Բրիգամ Յանգը և Տասներկու Առաքյալները առաջնորդեցին Սրբերին դեպի Սուրբ Լեյքի Հովիտ:



Ցուցադրեք Նավու Տաճարի նկարը և հարցրեք ուսանողներին, թե Սրբերն ինչու էին այդքան տքնաջան աշխատում, որպեսզի ավարտեն տաճարը, նախքան կհեռանային իրենց տներից և կտեղափոխվեին արևմուտք: (Կարող եք հրավիրել ուսանողներին կարդալ Սառա Բիչի հայտարարությունը նախապատրաստական նյութի բաժին 2-ում:)

Բացատրեք, որ երբ Սրբերը հեռացան Նավուից՝ արևմուտք մեկնելու համար, նրանք չգիտեին, թե ինչ է սպասվում իրենց: Հրավիրեք որևէ ուսանողի կարդալ վաղ շրջանի ռահվիրա, իսկ ավելի ուշ՝ Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ Երեց Էրաստուս Մնոուի հետևյալ խոսքերը.



Երբ ռահվիրաները մեկնեցին [արևմուտք], . . . մենք փնտրում էինք մի երկիր, որը նշվել էր Մարգարե Ջոզեֆ Սմիթի կողմից Ռոքի լեռների մեջ: . . . Ռահվիրաների խումբը մեկնեց, առանց իմանալու, թե ուր էին գնում, գիտեին միայն, . . . որ Աստված պատվիրել էր իրենց գնալ այն երկիրը, որն ինքը ցույց կտար նրանց: Եվ ամեն անգամ, երբ Մարգարե Բրիգամ Յանգին . . . հարցնում էին. «Դուք ու՞ր եք գնում», - միակ պատասխանը, որ նա կարող էր տալ, հետևյալն էր. «Ես ձեզ ցույց կտամ, երբ տեղ հասնենք»: Ռահվիրաների խմբի աղոթքները, որոնցով մենք Աստծուն էինք դիմում գիշեր ու ցերեկ, պետք է առաջնորդեր մեզ, ինչպես նա խոստացել էր՝ դեպի այն երկիրը, որը նա հայտարարել էր, որ կտա մեզ: (*Journal of Discourses*, 16:207)

- Այս խոսքերում ի՞նչ եք նկատում ռահվիրաների հավատքի մասին:

Խնդրեք ուսանողներին մեկ բույս խորհել կյանքի ճամփորդության մասին, որը նրանց առջևում է և, թե ի՞նչ առաջնորդության հույս ունեն երկնքից:

- Ի՞նչ դժվարությունների բախվեցին Սրբերը, երբ հեռացան Նավուից և սկսեցին իրենց ճամփորդությունը դեպի արևմուտք: (Անհրաժեշտության դեպքում, ուսանողներին հանձնարարեք վերանայել նախապատրաստական նյութի բաժին 2-ը:)

Հիշեցրեք ուսանողներին, որ 1846-47թթ. դժվարին ձմռանը, մինչ Սրբերը հավաքված էին ժամանակավոր Վինթեր Քվորթերս բնակավայրում (Նեբրասկա), Բրիգամ Յանգը ստացավ այս հայտնությունը, որը գրանցված է Վարդապետություն և Ուխտեր 136-ում: Հրավիրեք ուսանողներին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 136.22-ը, փնտրելով Տիրոջ խորհուրդը Սրբերին, որը մեզ կարող է ավիֆանք տալ, երբ ձգտում ենք բացահայտել Աստծո կամքը մեր կյանքի համար, և հետևել դրան:

Կարող եք բացատրել, որ «իմ ձեռքը պարզած է վերջին օրերին» արտահայտությունը ներկայացնում է Տիրոջ զորությունն ու առաջնորդությունը, որը տարածվում է Նրա ժողովրդի վրա:

- Ի՞նչ կարող ենք սովորել այս հատվածից այն մասին, թե Տերն ինչ է կամենում անել Իր ժողովրդի համար: (Ուսանողների պատասխանից հետո ցուցադրեք կամ գրատախտակին գրեք հետևյալ ճշմարտությունը. **Տերը ցանկանում է առաջնորդել և օգնել մեզ մեր կյանքում:**)
- Ի՞նչ եղանակներով է Տերը առաջնորդում մեզ մեր կյանքում: Մենք ի՞նչ պիտի անենք այդպիսի առաջնորդություն ստանալու համար: (Ուսանողների հետ կրկնեք Նախագահ Օուքսի խոսքերը նախապատրաստական նյութի բաժին 2-ից:)

Գրեք հետևյալը գրատախտակին. **Ես կարող եմ առաջնորդություն և օգնություն ստանալ Տիրոջից, երբ ես . . .**

Խնդրեք ուսանողներին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 136.2-4, 7-11, 19-24-ը, փնտրելով, թե ինչպիսի մարդիկ պետք է լինեին Սրբերը, որպեսզի Տերն առաջնորդեր նրանց: Հանձնարարեք ուսանողներին իրենց պատասխանները գրել գրատախտակին՝ այս սկզբունքն ավարտելու համար:

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ ենք ստանում Տիրոջ առաջնորդությունն ու օգնությունը, երբ ձգտում ենք նմանվել այս հատվածներում նկարագրված մարդկանց:

Խնդրեք ուսանողներին հիշել, թե Բրիգամ Յանգն ինչ ասաց, երբ առաջին անգամ տեսավ Մոլթ

Լեյքի Հովիտը (տես նախապատրաստական նյութի բաժին 2-ը): Հարցրեք ուսանողներին՝ արդյոք իրենց կյանքում ունեցել են պահեր, երբ Տերը հաստատել է նրանց, որ ճիշտ գործ էին կատարում կամ գտնվում էին ճիշտ վայրում: Հրավիրեք մի քանի ուսանողների կիսվել իրենց փորձառություններով:

Ուսանողներին մի քանի թույլ հատկացրեք, որպեսզի աղոթքով խորհեն հետևյալ հարցերի շուրջ և գրի առնեն իրենց ստացած հուշումները.

- Ձեր կարծիքով, ինչի՞ վրա պետք է կենտրոնանաք, որպեսզի ստանաք Տիրոջ առաջնորդությունը, որի հույսը դուք ունեք:

Եզրափակեք, խրախուսելով ուսանողներին գործել ըստ իրենց ստացած հուշումների և կիսվեք այս դասում ուսուցանած ճշմարտությունների մասին ձեր վկայությամբ:

Հաջորդ անգամ

Բացատրեք ուսանողներին, որ հաջորդ դասի նախապատրաստական նյութից նրանք կուսումնասիրեն Եկեղեցու պատմության ամենատղբերգական իրադարձություններից մեկը՝ Մատինթ Մեդոուսի ջարդը: Խնդրեք նրանց պատրաստված գալ դասարան, որպեսզի քննարկեն դասերը, որոնք կարող ենք սովորել այս փորձառությունից:



ՍՈՒՐԵՐԻ ԼԵՅՔ ՍԻԹԻ ԶԱՐԱԶԻ ՆԿԱՐԸ 1853թ., ԸՍՏ ՖՐԵՂԵՐԻԿ ՓԻՐՍԻՂԱՍ 26. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Եկեղեցին արևմուտքում

Սրբերը, ովքեր հավաքվել էին Սուրբ Լեյքի մեծ հովտում և շրջապատող տարածքներում, տեղ հասնելուց հետո բախվում էին մի շարք դժվարությունների: Դրանք ներառում էին՝ դաժան եղանակային պայմանները, բերքը ուտող ծղրիղները, երաշտն ու սովը: Մական Բրիգամ Յանգը «պակաս մտահոգված էր աճող բերքով և փողով, նա օգնում էր իր ժողովրդին դառնալ սուրբ ժողովուրդ»:

Նա իր փորձից գիտեր, որ նրանք կաճեին, եթե տքնաջան աշխատեին և պարտականություն ստանձնեին: «Սա լավ վայր է Սրբեր դառնալու համար», - ասաց նա Սուրբ Լեյք Սիթիի համայնքի անդամներին 1856թ. (*DNW [Deseret News Weekly]*, 10 Sept. 1856, 5)» (*Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Բրիգամ Յանգ*, [1997], 9): Չնայած այս փորձություններին, Սրբերը հիմնականում մեծ հավատք էին ցուցաբերում Տիրոջ հանդեպ այս վաղ շրջանի տարիներին: Ցավոք, Եկեղեցու պատմության այս ժամանակաշրջանն ընդգրկում է Մաունթ Մեդոուսի ջարդը, որը կարող է մեզ շատ կարևոր դասեր սովորեցնել, որոնք մենք կարող ենք կիրառել մեր օրերում:

ԲԱԺԻՆ 1

Ի՞նչ կարող ենք սովորել վաղ շրջանի ռահվիրա Սրբերից մեր օրերում Տիրոջը ծառայելու և Նրա արքայությունը կառուցելու մասին:

1848-49թթ. ծանր ձմեռվա ընթացքում, երբ եղանակը ցուրտ էր, իսկ սնունդը՝ սակավ, որոշ Սրբեր

ցանկանում էին տեղափոխվել Կալիֆորնիա և ոսկու հանք մշակել: Նախագահ Բրիգամ Յանգը մարգարեացել է.



«Ոմանք ինձ հարցրել են [Կալիֆորնիա] գնալու մասին: Ես ասել եմ նրանց, որ Աստված նշանակել է այս տեղը [Գրեյթ Քեյպին] Իր Սրբերի հավաքման համար, և դուք այստեղ ավելի մեծ հաջողության կհասնեք, քան եթե գնաք ոսկու հանքեր: . . . Աստված ինձ ցույց է տվել, որ սա է այն վայրը, որտեղ պետք է տեղակայել

Իր ժողովրդին, և այստեղ է այն տեղը, որտեղ նրանք կբարգավաճեն, . . . Աստված կմեղմացնի կլիման, և մենք այս վայրում կկառուցենք մի քաղաք ու մի տաճար Ամենաբարձրյալ Աստծո համար: Մենք կընդարձակենք մեր բնակավայրերը դեպի արևելք և արևմուտք, հյուսիս և հարավ, կկառուցենք քաղաքներ, և հարյուր հազարավոր Սրբեր կհավաքվեն այստեղ երկրագնդի բոլոր ազգերից»: (In James S. Brown, *Life of a Pioneer: Being the Autobiography of James S. Brown* [1900], 121–22)

Մինչև 1877 թվականը՝ Բրիգամ Յանգի մահվան տարեթիվը, Վերջին Օրերի Սրբերը տեսել էին այս մարգարեության հրաշագործ իրականացումը: Նրանց հավատը Տիրոջ և Նրա մարգարեի հանդեպ ոգեշնչեց 60-70 հազար ռահվիրա Սրբերի վերաբնակվել Սոլթ Լեյքի հովտում, որտեղ նրանք հիմնադրեցին 350–450 համայնքներ՝ Յուտայում, Արիզոնայում, Կալիֆորնիայում, Այդահոյում, Նեվադայում և Վայոմինգում:

Արտագաղթի Մշտական Ֆոնդը, որը հաստատվեց աղքատ Վերջին Օրերի Սուրբ վտարանդիներին աջակցելու համար, օգնեց ֆինանսավորել 30000 Սրբերի ուղևորությունը Բրիտանական կղզիներից, Սկանդինավիայից, Շվեյցարիայից, Գերմանիայից և Նիդեռլանդներից: Միսիոներները քարոզում էին Հիսուս Քրիստոսի ավետարանը ամբողջ աշխարհում: Սրբերը նվիրաբերում էին իրենց ժամանակը՝ կառուցելով Սոլթ Լեյք Սիթին, Լոգանը և Մենթ Ջորջը: Եվ ամենակարևորը, Սրբերը հավատքի, զոհաբերության և անկոտրում նվիրվածության ժառանգություն թողեցին Հիսուս Քրիստոսի և Նրա վերականգնված ավետարանի գործին: (See “Brigham Young,” Newsroom Topics, newsroom .ChurchofJesusChrist.org.)

Ընտրեք հավատարիմ Սրբերի հետևյալ պատմություններից մեկը, որոնք հավաքվել էին Յուտայում Եկեղեցու վաղ օրերին: Կարդացեք պատմությունը և դասարան եկեք պատրաստված, որպեսզի կիսվեք դասերով և սկզբունքներով, որոնք դուք սովորել եք դրանից՝ Տիրոջը ծառայելու և Նրա արքայությունը մեր օրերում կառուցելու մասին:

Լյուսի Մեզերվ Սմիթ

Կարդացեք Լյուսի Մեզերվ Սմիթի և այլ Վերջին Օրերի Սուրբ կանանց կարեկցանքի մասին, ովքեր օգնում էին ձեռնասայլակներով եկած ռահվիրաներին *Daughters in My Kingdom: The History and Work of Relief Society* [2011], 36–37: Սկսեք այն պարբերությունից, որը սկսվում է հետևյալ խոսքերով՝ «Լյուսի Մեզերվ Սմիթը, օրինակ, ղեկավարում էր մի խումբ . . .» և կարդացեք մինչև գլխի վերջը:

Ջոն Մոյլ

Դիտեր Ֆ. Ուլսդորֆի ելույթում կարդացեք Ջոն Մոյլի ոգեշնչող պատմությունը, ով յուրաքանչյուր շաբաթ ուղևորվում էր Սոլթ Լեյք Սիթի՝ աշխատելու տաճարի վրա, չնայած կորցրել էր ոտքը դժբախտ պատահարի հետևանքով «Բարձրացե՛ք՝ որտեղ կանգնած եք» (*Ensign or Liahona*, նոյեմբեր 2008, 55–56): Կարդացեք հետևյալ վերնագրով բաժինը. «Ջոն Ռոու Մոյլի օրինակը»:

Կամ դիտեք տեսանյութը՝ “Only a Stonecutter” (15:00):

Ջոզեֆ Միլլետ

Կարդացեք Ջոզեֆ Միլլետի պատմությունը, ով պատրաստ էր այլուր տալ մի մարդու, ում Տերը ուղղորդել էր իր մոտ. Բոյդ Կ. Փակեր, «A Tribute to the Rank and File of the Church», *Ensign*, May 1980, 63: Սկսեք պարբերությունից, որը սկսվում է. «Թույլ տվե՛ք մեջքերել Ջոզեֆ Միլլետի օրագրից . . .», և եզրափակեք պարբերությունով, որը սկսվում է. «Տերը ճանաչում էր Ջոզեֆ Միլլետին» խոսքերով:

Կամ դիտեք տեսանյութը՝ «The Joseph Millett Story» (6:14)

Չարլզ Ուոքեր և Չարլզ Ռիչ

Հետևյալ աղբյուրում կարդացեք այս երկու մարդու հավատքի և նրանց ընտանիքների մասին, ովքեր պատասխանեցին Սրբերի հավաքման համար նոր բնակավայր կառուցելու կոչին՝ Մեր ժառանգությունը. Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու համառոտ պատմությունը (1996), 88–89: Կարդացեք էջ 88-ից, որը սկսվում է հետևյալ

պարբերությունից. «Գերագույն համաժողովներին Նախագահ Յանգը . . .» և եզրափակվում է էջ 89-ի հետևյալ պարբերությունով. «Շատ դժվարություններ են եղել . . .»:

ԲԱԺԻՆ 2

Ինչը հանգեցրեց Մաունթ Մեդոուսի ջարդերին:

1850-ականներին տարածայնությունների ու թյուրիմացության արդյունքում լարվածություն էր առաջացել Վերջին Օրերի Սրբերի և Միացյալ Նահանգների կառավարության պաշտոնյաների միջև: Կեղծ հավատալով, որ Սրբերը պատրաստվում են ապստամբության, Միացյալ Նահանգների Նախագահ Ջեյմս Բյուկենենը շուրջ 1500 զորայիններ ուղարկեց Մուլթ Լեյք Սիթի, որպեսզի ճնշի ենթադրյալ ապստամբությունը:

Սրբերին ուղղված իրենց քարոզների ժամանակ Նախագահ Յանգը և Եկեղեցու այլ ղեկավարները մոտեցող զորքերին անվանեցին թշնամիներ: Նրանք վախենում էին, որ զորքերը գուցե Սրբերին դուրս քշեին Յուտայի տարածքից, ինչպես նրանք նախկինում դուրս էին քշվել Օհայո, Միսսուրի և Իլլինոյս նահանգներից: Նախագահ Յանգը հրահանգ տվեց Սրբերին խնայել հացահատիկը, որպեսզի նրանք սնունդ ունենային զորքերից փախչելու ժամանակ: Որպես Յուտա տարածքի նահանգապետ, նա հրահանգեց նաև տարածքի ոստիկաններին նախապատրաստվել տարածքի պաշտպանությանը: Արյունահեղությունից խուսափելու համար Սրբերի մնացած մասը պատրաստվում էր տարհանել իրենց տները և հողերը և ոչնչացնել դրանք, եթե անհրաժեշտություն առաջանա:

Այդ ժամանակ գաղթականների մի կառավարմբ, որն ուղևորվում էր արևմուտք՝ Արկանզասից դեպի Կալիֆորնիա, մտավ Յուտա: Կառավարմբի որոշ անդամներ զայրացան, քանի որ նրանք դժվարությամբ էին գնում այդքան անհրաժեշտ հացահատիկը Սրբերից:

Լարվածությունը սրվեց Մեդար Սիթիում, որը Կալիֆորնիա տանող ճանապարհին Յուտայի վերջին

բնակավայրն էր: Տեղի ունեցավ առճակատում, և կառավարմբի որոշ անդամներ սպառնում էին դուրս գալ Սրբերի դեմ և միանալ կառավարության զորքերին: Երբ կառավարմբը քաղաքից հեռացավ, Մեդար Սիթիի որոշ բնակիչներ և ղեկավարներ ցանկացան հետապնդել ու պատժել այն մարդկանց, ովքեր սպառնացել և վիրավորել էին իրենց:

Իսահակ Հայթը, ով Մեդար Սիթիի քաղաքապետն էր, ինչպես նաև ոստիկանության մայոր էր և ցցի նախագահ, թույլտվություն խնդրեց Վիլյամ Դեյմից, ով մոտակա բնակավայր Պարովանի ոստիկանապետն էր, որ ոստիկանություն կանչի կառավարմբի հանցագործներին դիմակայելու համար: Մակայն Դեյմը մերժեց նրանց խնդրանքը և հրահանգեց նրանց ուշադրություն չդարձնել գաղթականների սպառնալիքներին:

Այդ հրահանգին հետևելու փոխարեն, Իսահակ Հայթը և Մեդար Սիթիի մի շարք ղեկավարներ գաղթականներին պատժելու համար որոշեցին համոզել տեղացի Փայուֆ հնդկացիներին հարձակվել կառավարմբի վրա, գողանալ նրանց անասունները և սպանել մի քանի կամ բոլոր տղամարդկանց: Հայթը խնդրեց Ջոն Դ. Լին, ով Եկեղեցու անդամ և ոստիկանության մայոր էր, առաջնորդել Փայուֆների հարձակումը: Նրանք դավադրաբար ծրագրեցին մեղադրել հնդկացիներին այդ արարքի համար:

Իսահակ Հայթը տեղի Եկեղեցու, համայնքի և ոստիկանության ղեկավարների խորհրդի դատին ներկայացրեց իր ծրագիրը: Խորհրդի որոշ անդամներ կտրականապես մերժեցին Հայթի ծրագիրը և հարցրին՝ արդյոք նա խորհրդակցել էր Նախագահ Բրիգամ Յանգի հետ: Ասելով, որ ինքը չի խորհրդակցել, Հայթը համաձայնեց սուրհանդակ ուղարկել Մուլթ Լեյք Սիթի և մի նամակ ուղարկել նրա հետ՝ բացատրելով իրավիճակը և հարցնելով, թե ինչ պետք է արվի: Կպահանջվեց մոտ մեկ շաբաթ, որպեսզի սուրհանդակը ձիով հասներ Մուլթ Լեյք Սիթի և Նախագահ Յանգի ցուցումներով վերադառնար:

Սուրհանդակի հետ իր նամակն ուղարկելուց քիչ առաջ, Ջոն Դ. Լին և մի խումբ հնդկացիներ Մաունթ Մեդոուս վայրում հարձակվեցին գաղթականների ճամբարի վրա: Լին փորձ էր անում այնպես ներկայացնել, թե միայն տեղացի Փայուֆներն

են ներգրավված: Գաղթականներից ոմանք սպանվեցին կամ վիրավորվեցին, իսկ մնացածը ետ մղեցին իրենց վրա հարձակվողներին՝ ստիպելով Լիին և հնդկացիներին նահանջել: Պաշտպանվելու համար գաղթականները իրենց կառքերով արագ մի նեղ շրջան կազմեցին:

Ինչ-որ մի պահի երկու գաղթականներ տեսան Մեդար Սիթիի ոստիկաններին: Ոստիկանները կրակեցին նրանց վրա և մեկին սպանեցին: Մյուս մարդը փախավ:

Փորձելով կանխել այն լուրերի տարածումը, թե Վերջին Օրերի Սրբերը ներգրավված են եղել կառավարի վրա իրականացված հարձակումներում, Իսահակ Հայթը, Ջոն Դ. Լին, ինչպես նաև Եկեղեցու և ոստիկանության տեղի այլ ղեկավարները ծրագրեցին բացի փոքր երեխաներից սպանել ողջ մնացած բոլոր գաղթականներին: «Նրանք կրկին խնդրեցին Դեյմի թույլտվությունը՝ ոստիկաններ կանչելու համար, և Դեյմը կրկին խորհուրդ . . . հրավիրեց, որը որոշեց, որ տղամարդիկ պետք է օգնեն պաշարված գաղթականներին խաղաղությամբ շարունակել իրենց ճանապարհը: Ավելի ուշ Հայթը ողբում էր. «Ես աշխարհը կտայի, եթե ես ունենայի այն, եթե միայն մենք ենթարկվեինք խորհրդի որոշմանը» (Richard E. Turley Jr., “The Mountain Meadows Massacre,” *Ensign*, Sept. 2007, 18):

Խորհրդի ժողովից հետո Իսահակ Հայթին հաջողվեց համոզել Դեյմին վերանայել խորհրդի որոշումը, և Հայթը հեռացավ՝ կարծելով, թե ինքը թույլտվություն ունի օգտագործել ոստիկանությունը իրենց ծրագիրն իրականացնելու համար: Ջոն Դ. Լին զինադադարի սպիտակ դրոշով մոտեցավ գաղթականներին և ասաց, որ ոստիկանությունը կպաշտպանի նրանց հետագա հարձակումներից և ապահով հետ կողեկցի նրանց դեպի Մեդար Սիթի:

Երբ գաղթականները քայլում էին դեպի Մեդար Սիթի, ոստիկանները շրջվեցին և կրակ բացեցին նրանց վրա: Մի քանի հնդիկներ, համալրելով նորաբնակների շարքերը, առաջ վազեցին թաքստոցներից՝ հարձակմանը միանալու համար: Կառավարի շուրջ 140 գաղթականներից միայն 17 փոքր երեխաներ փրկվեցին:

Ջարդից երկու օր անց տեղ հասավ Նախագահ Յանգի պատասխանը, որտեղ հրահանգվում էր

տեղի ղեկավարներին թույլ տալ, որ կառավարմբը խաղաղությամբ հեռանա: «Երբ Հայթը կարդաց Յանգի խոսքերը, նա մանկան նման հեկեկաց և կարողացավ ասել ընդամենը երկու բառ. «Շա՛տ ուշ է, շա՛տ ուշ» (Richard E. Turley Jr., “The Mountain Meadows Massacre,” *Ensign*, Sept. 2007, 20):

Եկեղեցու որոշ ղեկավարների և հարավային Յուտայի տարածքի որոշ բնակիչների որոշումները հանգեցրին Մաունթ Մեդոուսի ողբերգական ջարդերին: Հակառակ դրան, Եկեղեցու և տարածաշրջանի ղեկավարները Մոլթ Լեյք Սիթիում 1858 թվականին կարգավորեցին Միացյալ Նահանգների կառավարության հետ ունեցած հակամարտությունը՝ խաղաղ բանակցությունների և պայմանների քննարկման միջոցով: Այդ հակամարտության ժամանակ, որը հետագայում կոչվեց Յուտայի պատերազմ, Միացյալ Նահանգների զորքերը և Յուտայի ոստիկանները ներգրավվեցին հարձակման գործողությունների մեջ, բայց ոչ երբեք պատերազմի:



2007թ. սեպտեմբերի 11-ին, Ելույթ ունենալով Մաունթ Մեդոուսի ջարդի հուշահամալիրում, Առաջին Նախագահությունից Նախագահ Հենրի Բ Այրինգն ասաց.



Հիսուս Քրիստոսի ավետարանը, որը մենք ընդունում ենք, չի ներում տղամարդկանց, կանանց և երեխաների սառնասիրտ սպանությունը: Հիրավի, այն քարոզում է խաղաղություն ու ներում: Այն, ինչ արեցին մեր Եկեղեցու անդամները [Մաունթ Մեդոուսում] երկար տարիներ առաջ,

քրիստոնեության ուսմունքների և վարքի շեղում էր: . . . Մենք խորապես ցավում ենք այդ ջարդի համար, որն իրականացվեց այս հովտում . . . և անտեղի ու անսահման տառապանքի համար, որ արտահայտում էին զոհերը այն ժամանակ և նրանց հարազատները հիմա: (Henry B. Eyring, “150th Anniversary of Mountain Meadows Massacre,” newsroom.ChurchofJesusChrist.org):



Մտածեք դասին Նախապատրաստվելիս

Մենք ի՞նչ դասեր կարող ենք սովորել այն սարսափելի ընտրություններից, որոնք հանգեցրեցին Մաունթ Մեդոուսի ջարդին: Կարդացե՛ք Առակաց 28.13 և 3 Նեփի 12.24–25, 43–44-ը և բացահայտե՛ք սկզբունքները, որոնց հետևելով կարելի էր կանխել այս ողբերգությունը: Այս սկզբունքներով ապրելն ինչպե՞ս կարող է կանխել անհարկի սրտի ցավը և ողբերգությունը ձեր կյանքում:

Ցանկանում ես ավելին: (Ոչ պարտադիր)

Որտեղի՞ց կարող եմ ավելին սովորել վաղ օրերի Սրբերի որոշ դրական և հավատարիմ փորձառությունների մասին:



Հետևյալ հոդվածում՝ «Ռահվիրաների հավատքը» (*Ensign*, July 1984, 3–6), Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ուսուցանում է դասեր, որոնք մենք

կարող ենք սովորել վաղ օրերի ռահվիրաներից, ովքեր բնակություն էին հաստատել Սոլթ Լեյքի Հովտում:

Որտեղի՞ց կարող եմ ավելին սովորել Մաունթ Մեդոուսի ջարդի մասին:

Տես հետևյալ նյութերը.

- Richard E. Turley, “The Mountain Meadows Massacre,” *Ensign*, Sept. 2007, 14–21
- *Saints: The Story of the Church of Jesus Christ in the Latter Days*, vol. 2, *No Unhallowed Hand, 1846–1893* [2020], 241–269
- “Peace and Violence among 19th-Century Latter-day Saints,” *Gospel Topics*, topics.ChurchofJesusChrist.org

ԴԱՍ 26. ՈՒՍՈՒՑԶԻ ՆՅՈՒԹ

Եկեղեցին արևմուտքում

Եկեղեցու հաստատումը Միացյալ Նահանգների արևմուտքում հավատքի ուշագրավ պատմություն է: Այս դասը ուսանողներին հնարավորություն կտա դասեր սովորել հավատարիմ Սրբերից, ովքեր իրենց հիմքը կառուցեցին Հիսուս Քրիստոսի վրա և իրենց կյանքը նվիրեցին Նրա արքայության կառուցմանը: Դա կօգնի ուսանողներին ավելի լավ հասկանալ Եկեղեցու պատմության այդ ժամանակաշրջանի մի ողբերգական իրադարձություն, որը ցուցադրում էր, թե մարդիկ ինչպես էին լրջորեն հեռացել Փրկիչի ավետարանից. Մաունթ Մեդոուսի ջարդը:

Ուսուցման առաջարկներ

Սրբերը շարունակում էին կառուցել Տիրոջ թագավորությունը հավատքի և զոհաբերության միջոցով:

Ցուցադրեք ուղեկցող գործերն ի պատկերում կամ ձերը բերեք դասարան: Համոզվեք, որ ուսանողները հասկանում են, որ գործերն ստեղծվում է շատ թելերի բարդ համակցությունների միախառնումով, որը ստեղծում է գեղեցիկ նկար կամ պատկեր:



Հանձնարարեք որևէ ուսանողի կարդալ Յոթանասունից Երեց Սթիվեն Ե. Մնոուի հետևյալ խոսքերը, ով նախկինում ծառայել է որպես Եկեղեցու պատմաբան և մատենագիր:



Եթե կարծում եք, որ Եկեղեցու պատմությունը խճանկար է կամ գործելն, ապա պետք է իմանաք նաև, որ այն ամենահարուստ ու գեղեցիկ բանն է, որը ես երբևէ տեսել եմ: Եթե դուք ուշադիր ուսումնասիրեք այն, ապա այդ գեղեցիկ

խճանկարում կամ գորելենում կգտնեք մի քանի յուրահատուկ թելեր, և եթե դուք դիպչեք կամ կենտրոնանաք այդ թելերի վրա, ապա բաց կթողնեք մեր պատմության հրաշալի ուղերձը: Եթե մի քայլ հետ գնաք և նայեք ամբողջ խճանկարին կամ գորելենին, ապա կտեսնեք, որ այն շատ գեղեցիկ է: (Steven E. Snow, "Start with Faith: A Conversation with Elder Steven E. Snow," *Religious Educator*, no. 3 [2013], 11)

Բացատրեք, որ արևմուտքում եկեղեցու վաղ շրջանի պատմությունից կան հազարավոր պատմություններ հավատարիմ Սրբերի մասին, որոնց ջանքերը՝ հետևել Հիսուս Քրիստոսին և կառուցել Տիրոջ եկեղեցին, ստեղծել են հավատքի մի գեղեցիկ գորելեն:

Պարզեք, թե ո՞ր ուսանողը ո՞ր պատմությունն է կարդում նախապատրաստական նյութի բաժին 1-ից Յուրաքանչյուր պատմության համար հրավիրեք որևէ ուսանողի անել հետևյալը.

1. Ամփոփեք պատմությունը, որը նա կարդաց.
2. Բացատրեք, թե Վերջին Օրերի Մուրբը կամ Սրբերն ինչպես ցուցադրեցին իրենց հավատքը Հիսուս Քրիստոսի և Նրա վերականգնված ավետարանի հանդեպ:
3. Կիսվեք դասերով կամ սկզբունքներով, որոնք նա սովորեց պատմությունից:

Թույլ տվեք, որ մյուս ուսանողները, ովքեր կարդացել են նույն պատմությունը, ավելացնեն իրենց գաղափարները, նախքան հաջորդ պատմությանն անցնելը:

Մի քանի Վերջին Օրերի Սրբեր ծրագրեցին և իրականացրին Մաունթ Մեդոուսի ջարդը:

Ցուցադրեք ուղեկցող պատկերը և բացատրեք ուսանողներին, որ դա Մաունթ Մեդոուսի ջարդի հուշարձանն է, որը կառուցվել է Եկեղեցու կողմից հարավային Յուտայում: Բացատրեք, որ ցավոք Մաունթ Մեդոուսի ողբերգությունը տխրալի թել է՝ հյուսված Սրբերի պատմության մեջ:



Հարցրեք ուսանողներին, թե նրանք ինչ սովորեցին, երբ կարդացին Մաունթ Մեդոուսի ջարդի մասին: Համոզվեք, որ ուսանողները հասկանում են, որ 1857թ. սեպտեմբերի 11-ին մոտ 50-60 տեղական ոստիկաններ հարավային Յուտայից, որոնց աջակցում էին մի քանի ամերիկյան հնդիկ դաշնակիցներ, կոտորեցին մոտ 120 զաղթականների, ովքեր կառքերով ճամփորդում էին դեպի Կալիֆոռնիա: Միայն 17 երեխաների խնայեցին:

- Ի՞նչ իրադարձություններ և ընտրություններ հանգեցրին Մաունթ Մեդոուսի ջարդին: (Անհրաժեշտության դեպքում ուսանողներին մի քանի թույլ տվեք վերանայելու նախապատրաստական նյութի բաժին 2-ը:)

Ուսանողներին խնդրեք սուրբ գրություններից կիսվել սկզբունքներով և ճշմարտություններով, որոնք կարող էին օգնել այս բնակիչներին ուրիշ ընտրություններ կատարել: (Որոշ օրինակներ կարող են ընդգրկել՝ Առակաց 28.13, 3 Նեփի 12.24–25, 43–44, Վարդապետություն և Ուխտեր 64.9–11:)

- Մենք ի՞նչ դասեր կարող ենք սովորել Մաունթ Մեդոուսի ջարդի ողբերգությունից: (Կարող եք ուսանողների պատասխանները գրել զրատախտակին:)

Կարող եք ուսանողներին մի քանի թույլ տալ հատկացնել, որպեսզի գրեն կամ ասեն, թե այս սկզբունքներն ինչպես կարող էին կանխել անհարկի տառապանքներն իրենց կյանքում:

Բացատրեք, որ քանի որ տեղական Եկեղեցու որոշ անդամներ ու ղեկավարներ պատասխանատու էին Մաունթ Մեդոուսի ջարդի կազմակերպման և իրագործման համար, որոշ մարդիկ թույլ տվեցին, որ այդ իրադարձությունը բացասական կերպով անդրադառնա ողջ Եկեղեցու մասին իրենց կարծիքի վրա:

- Ի՞նչ կարող եք ասել ինչ-որ մեկին, ով բացասական կարծիք ունի Եկեղեցու մասին Մաունթ Մեդոուսի ջարդի պատճառով: (Խրախուսեք ուսանողներին օգտագործել իրենց սովորածը նախապատրաստական նյութի բաժին 2-ից :)

Հրավիրեք ուսանողներին կարդալ և գտնել որևէ սկզբունք Հելաման 5.12-ից: Ցուցադրեք հետևյալ խոսքերը. Հրավիրեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ այն և խնդրեք դասարանին փնտրել, թե այն ինչպես է լուսաբանում Հելաման 5.12-ում ուսուցանվող սկզբունքը:

Ջեյմս Մանդերսը Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ է և Նենսի Սաֆրոնա Հաֆի ծոռը, այն երեխաներից մեկը, ով փրկվեց ջարդի ժամանակ: Եղբայր Մանդերսը կիսվել է ջարդի մասին իր զգացմունքներով. «Ես դեռևս ցավ եմ զգում, ես դեռևս բարկություն ու տխրություն եմ զգում, որ այդ ջարդը տեղի է ունեցել: . . . Բայց ես գիտեմ, որ այն մարդիկ, ովքեր արել են դա, պատասխանատու կլինեն Տիրոջ առաջ, և դա ինձ խաղաղություն է բերում»: . . . Եղբայր Մանդերսը ասել է. «Իմացությունը, որ իմ նախնին սպանվել է ջարդերի ժամանակ, չի ազդել իմ հավատքի վրա, քանի որ այն հիմնված է Հիսուս Քրիստոսի վրա, ոչ թե Եկեղեցու որևէ անձնավորության վրա» (in Richard E. Turley Jr., “The Mountain Meadows Massacre,” *Ensign*, Sept. 2007, 21):

- Հելաման 5.12 հատվածում ուսուցանված սկզբունքն ինչպե՞ս է լուսաբանվում Ջեյմս Մանդերսի խոսքերում: (Ուսանողների պատասխաններից հետո գրատախտակին գրեք հետևյալ սկզբունքը. **Կառուցելով մեր հավատքը Հիսուս Քրիստոսի և Նրա ավետարանի հիմքի**

վրա, կարող ենք օգնել մեզ ուժեղ մնալ, չնայած Եկեղեցու անդամների մարդկային թուլություններին:)

- Ինչպե՞ս կարող է Հիսուս Քրիստոսի հանդեպ մեր հավատքն օգնել մեզ, երբ մենք տեսնում կամ սովորում ենք օրինակներ, երբ Եկեղեցու անդամները թերանում են ապրել ավետարանի ուսմունքների համաձայն:
- Ի՞նչն է օգնում ձեզ կառուցել և պահել ձեր հավատքը Հիսուս Քրիստոսի հիմքի վրա:

Ուսանողներին ժամանակ տվեք մտածելու այդ մասին և գրի առնել, թե նրանք ինչ կանեն, որպեսզի պահպանեն և ամրապնդեն իրենց հավատքը Հիսուս Քրիստոսի և Նրա ավետարանի հանդեպ:

Վկայեք Փրկիչի ուսմունքներով ապրելու և մեր հավատքը Նրա և Նրա ավետարանի վրա հիմնելու կարևորության մասին, անկախ Եկեղեցու անդամների մարդկային թերություններից: Երբ այդպես վարվենք, մենք կարող ենք օգնել առաջ տանել Քրիստոսի արքայությունը, ինչպես հավատարիմ ռահվիրա Սրբերն էին անում:

Հաջորդ անգամ

Հարցրեք ուսանողներին, արդյոք նրանց երբևէ հարցրել են, թե Եկեղեցին ինչու որոշ ժամանակով քահանայության իշխանություն և որոշ տաճարային արարողություններ չէր շնորհում աֆրիկական ծագում ունեցող սևամորթ անդամներին: Բացատրեք, որ հաջորդ դասին պատրաստվելիս ուսանողները հնարավորություն կունենան սովորել այս թեմայի մասին և առնչվող հայտնության մասին Պաշտոնական Հայտարարություն 2-ում, որի մասին մարգարեները կանխագուշակել էին երկար տարիների ընթացքում: Խնդրեք ուսանողներին պատրաստ զալ դասարան՝ քննարկելու իրենց սովորածը և այս թեմային վերաբերող իրենց հարցերը:



ԴԱՍ 27. ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Հայտնություն քահանայության վերաբերյալ

Երբևէ հետաքրքրվե՞լ եք կամ ձեզ խնդրե՞լ են բացատրել, թե ինչու աֆրիկական ծագում ունեցող սևամորթ Վերջին Օրերի Սրբերի համար որոշ ժամանակով սահմանափակել են քահանայության կարգումը և տաճարային արարողությունների ստացումը: Երբ ուսումնասիրեք, պարզեք, թե մենք ինչ գիտենք և չգիտենք քահանայության և տաճարային սահմանափակումների մասին: Փնտրեք ճշմարտություններ, որոնք կարող են օգնել ձեզ ավելի լավ հասկանալ այս թեման և բացատրել այն ուրիշներին՝ ճշգրիտ և հավատարիմ եղանակով:

ԲԱԺԻՆ 1

Մենք ի՞նչ գիտենք քահանայության և տաճարային սահմանափակումների մասին:

«Մորմոնի Գիրքը սովորեցնում է, որ «բոլորը նույնն են Աստծո համար», այդ թվում՝ «սև և սպիտակ, ստրուկ և ազատ, այր թե կին» (2 Նեփի 26.33): Եկեղեցու պատմության մեջ յուրաքանչյուր ցեղի և ազգության տեր մարդիկ տարբեր երկրներում

մկրտվել և ապրել են՝ որպես Եկեղեցու հավատարիմ անդամներ: Զոզեֆ Մմիթի կյանքի ընթացքում Եկեղեցու մի քանի սևամորթ անդամներ են կարգվել քահանայության: Իր պատմության սկզբում Եկեղեցու ղեկավարները քահանայություն չէին շնորհում աֆրիկական ծագում ունեցող սևամորթ անդամներին: Եկեղեցու գրառումներում որևէ պարզ գաղափար տրված չէ այս կիրառության սկզբնաղբյուրների մասին» (Պաշտոնական Հայտարարություն 2-ի նախաբանը):



Ելաջա էլըլ այն մի քանի սևամորթ մարդկանցից մեկն էր, ով Եկեղեցու վաղ շրջանի պատմության մեջ քահանայության էր կարգվել:

Այդ ժամանակ սևամորթ տղամարդկանց և կանանց համար սահմանափակված էր նաև տաճարային արարողությունների ստացումը, սակայն նրանց դեռևս թույլատրվում էր մկրտվել և ստանալ Սուրբ Հոգու պարգևը: Չնայած քիչ բան է հայտնի քահանայության և տաճարային սահմանափակումների մասին, Վերջին Օրերի մարգարեները, ներառյալ Բրիգամ Յանգը, Դեյվիդ Օ. ՄակՔեյը և Հարոլդ Բ. Լին ուսուցանում էին, որ կգա ժամանակը, երբ Եկեղեցու բոլոր արժանավոր անդամները, անկախ ռասայից, կկարողանան ստանալ ավետարանի բոլոր օրհնությունները (տես “The Long-Promised Day,” *Ensign*, June 2018, 34):

Տարիների ընթացքում Եկեղեցու որոշ ղեկավարներ և անդամներ պատճառներ էին առաջարկում, թե ինչու էին սահմանվել քահանայության և տաճարային սահմանափակումները: Մակայն այդ հայտարարությունները տրվեցին որպես կարծիքներ և չէին ներկայացնում Եկեղեցու վարդապետությունը:

Նախագահ Դավիթ Հ. Օուքսը Առաջին Նախագահությունից, ով դեռևս առաքյալ չէր, երբ

քահանայության և տաճարային սահմանափակումները հանվեցին, խոսել է իր զգացմունքների մասին, որոնք ուներ հայտնությունից առաջ, որով հանվեցին սահմանափակումները:



Ես նկատել եմ այն մարդկանց ցավն ու հուսահատությունը, ովքեր տառապում էին այդ սահմանափակումների պատճառով, և նրանց, ովքեր . . . պատճառներ էին փնտրում [դրանց համար]: Ես ուսումնասիրեցի պատճառները, որոնք այդ ժամանակ տրվել էին, և չկարողացա զգալ դրանցից ոչ մեկի հաստատումը: Աղոթքով ուսումնասիրելով՝ ես իմացա, որ, ընդհանուր առմամբ, Տերը հազվադեպ է բացատրում այն պատվիրանների և հրահանգների պատճառները, որոնք տալիս է իր ծառաներին: Ես վճռեցի հավատարիմ մնալ մեր մարգարեական ղեկավարներին և աղոթել, ինչպես խոստացվել էր այս սահմանափակումների սկզբից, որ կգա այն օրը, երբ բոլորը կվայելեն քահանայության և տաճարային օրհնությունները: (“President Oaks Remarks at Worldwide Priesthood Celebration,” Be One—A Celebration of the Revelation on the Priesthood, June 1, 2018, newsroom .ChurchofJesusChrist.org)

ԲԱԺԻՆ 2

Ի՞նչ հանգամանքներ հանգեցրին Տիրոջ հայտնությանը, որով քահանայությունը տարածվում էր Եկեղեցու բոլոր արժանավոր տղամարդկանց վրա և տաճարային օրհնությունները՝ բոլոր արժանավոր անդամների վրա:

1964թ. Ջոզեֆ Վիլյամ Բիլլի Ջոնսոնը Քեյվի Քոստից (Գանա) վկայություն ստացավ վերականգնված ավետարանի մասին, երբ կարդաց Մորմոնի Գիրքը և Եկեղեցու մյուս գրքերը, որոնք տրվել էին նրան:

Եղբայր Զոնսոնը և մյուսները, ովքեր միացան Եկեղեցուն, նամակ ուղարկեցին Նախագահ Դեյվիդ Օ. ՄակՔեյին՝ խնդրելով, որ միախոններն ուղարկվեն Աֆրիկա՝ մկրտելու իրեն և մյուսներին, ում հետ նա կիսվել էր ավետարանով: Նախագահ ՄակՔեյը պատասխանեց, որ միախոններն կուղարկվեն «Տիրոջ ուրույն ժամանակին», բայց մինչ այդ եղբայր Զոնսոնը պետք է շարունակի ուսումնասիրել ավետարանը և օգնել իր հավատակից ընկերներին (in E. Dale LeBaron, “Steadfast African Pioneer,” *Ensign*, Dec. 1999, 45–49):

Զնայած այդ ժամանակ եղբայր Զոնսոնը հնարավորություն չուներ մկրտվելու, նա և մի քանի ուրիշ մարդիկ երկար տարիներ ջանասիրաբար տարածում էին ավետարանը Գանայում: Եղբայր Զոնսոնը կազմավորեց հավատացյալների մի քանի համայնքներ և ղեկավարում էր նրանց կանոնավոր ծովի ընթացքում, որոնց ժամանակ նրանք աղերսում էին, որ միախոնները գան իրենց երկիր և Եկեղեցի հիմնեն այնտեղ ‘A People Prepared’: West African Pioneer Preached the Gospel before Missionaries», history.ChurchofJesusChrist.org):

Գանայի հավատացյալների նման աֆրիկյան ծագումով հազարավոր այլ սևամորթներ վկայություններ ձեռք բերեցին վերականգնված ավետարանի մասին, երբ միախոններական աշխատանքը տարածվում էր երկրի վրա 20-րդ դարի ընթացքում: Եկեղեցու ղեկավարները ոգեշնչված էին այս մարդկանց հավատքով և ցանկանում էին նրանց վրա տարածել քահանայության և տաճարային օրհնությունները (տես Պաշտոնական Հայտարարություն 2):

Իր նախագահության ընթացքում Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը հատկապես մեծ ցանկություն էր զգում անդրադառնալ քահանայության և տաճարային սահմանափակումներին: Նա հիշում էր.



Ես գիտեի, որ կար ինչ-որ բան, ինչը չափազանց կարևոր էր Աստծո շատ զավակների համար: . . . Օրեր շարունակ ես առանձնանում էի տաճարի վերնատանը մեծ հանդիսավորությամբ և լրջությամբ, այնտեղ բացում էի իմ հոգին և առաջարկում իմ ջանքերը՝ ծրագիրը առաջ տանելու համար: Ես ցանկանում

էի անել այն, ինչ նա էր ցանկանում: Ես խոսեցի նրա հետ այդ մասին և ասացի. «Տեր, ես ցանկանում եմ միայն այն, ինչը ճիշտ է: . . . Մենք ցանկանում ենք միայն այն, ինչ դու ես ցանկանում, և մենք ցանկանում ենք դա, երբ դու ես ցանկանում դա և ոչ շուտ»: Տերը հստակ ցույց տվեց ինձ, թե ինչ պետք է արվեր: (Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Սպենսեր Վ. Քիմբալ (2006), 238–39)

Ինչպես գրանցված է Վարդապետություն և Ույտերում, «Հայտնությունը ստացավ Եկեղեցու Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը և հաստատվեց Եկեղեցու մյուս ղեկավարներին Մոլթ Լեյք Տաճարում 1978թ. հունիսի 1-ին» (Պաշտոնական Հայտարարություն 2-ի նախաբանը):

Հայտնության հանրային հայտարարության ժամանակ Առաջին Նախագահությունը հայտարարեց.



Մենք երկար ու լրջմտորեն աղերսում էինք մեր այս հավատարիմ եղբայրների համար, բազում ժամեր անցկացնելով Տաճարի Վերնատանը՝ աղաչելով Տիրոջն աստվածային առաջնորդության համար:

Նա լսեց մեր աղոթքները և հայտնությամբ հաստատեց, որ վաղուց խոստացված օրը եկել է, երբ Եկեղեցու յուրաքանչյուր հավատարիմ, արժանի տղամարդ կարող է ստանալ սուրբ քահանայությունը, դրա աստվածային իշխանությունը գործադրելու զորությամբ, և իր սիրեցյալների հետ վայելելու յուրաքանչյուր օրհնություն, որը գալիս է դրանից՝ տաճարային օրհնությունները ներառյալ: (Պաշտոնական Հայտարարություն 2)

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին, ով Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ էր, երբ հայտնությունը ստացվեց, վկայել է, թե ինչ է զգացել այդ օրը՝ գտնվելով տաճարում:



Մենք միասին աղոթեցինք այդ սրբազան միջավայրում: Նախագահ Քիմբլը ասաց աղոթքը: . . . Մի սուրբ ու սրբագործված մթնոլորտ էր տիրում սենյակում: Ես այնպիսի զգացողություն ունեցա, ասես երկնային գահի և իր Եղբայրների հետ միացած, ծնկաչոք աղերսող Աստծո մարգարեի միջև մի ուղի էր բացվել: Աստծո Հոգին այնտեղ էր: Եվ Սուրբ Հոգու զորությամբ մարգարեն հավաստիացում ստացավ, որ այն ինչի համար նա աղոթում էր, ճիշտ էր: . . .

Մենք բոլորս էլ գիտեինք, որ եկել էր փոփոխության ժամանակը և որ որոշումը եկել էր երկինքներից: Պատասխանը հստակ էր: Մենք կատարելապես միասնական էինք մեր փորձառության և հասկացողության մեջ: (“Priesthood Restoration,” *Ensign*, Oct. 1988, 69–70)



Գրի առեք ձեր մտքերը

Ե՞րբ եք տեսել, որ Տերը ղեկավարում է իր եկեղեցին իր մարգարեների միջոցով տրված հայտնությամբ: Ի՞նչ փոփոխություններ է Տերը կատարել ձեր կյանքում այն եղանակով, որով Նրա Եկեղեցին կատարում է իր

առաքելությունը: Հնարավորության դեպքում, դիտեք տեսանյութը՝ 1978թ. քահանայության վերաբերյալ հայտնության հայտարարությունը գերագույն համաժողովին և գրանցեք ձեր զգացողությունները:

ԲԱԺԻՆ 3

Այս հայտնությունն ի՞նչ ազդեցություն ունեցավ Եկեղեցու և մարդկանց վրա ամբողջ աշխարհում:

Եղբայր Բիլլի Ջոնսոնը մի դժվարին օրվա վերջում կեսգիշերին միացրեց ռադիոն՝ նախքան անկողին մտնելը: Հանկարծ նա լսեց նորությունը, որ քահանայության սահմանափակումը հանվել է: Նա հիշում է. «Ես ցատկեցի տեղիցս և սկսեցի լաց լինել ու հրճվել Տիրոջով, որ հիմա այն ժամանակն է, որ Տերը միսիոներներ ուղարկի Գանա և Աֆրիկայի այլ մասեր՝ ընդունելու քահանայությունը: . . . Ես իրոք երջանիկ էի»: Երբ միսիոներները հասան Գանա, նրանք գտան մի խումբ մարդկանց, ովքեր արդեն ընդունել էին վերականգնված ավետարանը: Եղբայր Ջոնսոնը և իր համայնքի 600 անդամները մկրտվեցին: «Որպես Քեյվի Քոուսթ ճյուղի առաջին նախագահ ծառայելուց հետո, Եղբայր Ջոնսոնը ծառայեց որպես շրջանի նախագահ, լիաժամկետ միսիոներ և որպես Քեյվի Քոուսթ Գանա ggի նախագահ» (see Elizabeth Maki, “A People Prepared”: West African Pioneer Preached the Gospel before Missionaries,” history.ChurchofJesusChrist.org):

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիտել տեսանյութը՝ “Long-Promised Day” (8:40), որը պատկերում է այն ուրախությունը, որը Բիլլի Ջոնսոնը զգաց, երբ իմացավ հայտնության մասին, որը քահանայություն էր շնորհում բոլոր արժանավոր տղամարդկանց:



Երեց Եղվին Թ. «Թեր» Թենոն Կրոստերը մկրտում է Նիգերիացի նորադարձների խմբին:

Քահանայության և տաճարային սահմանափակումներին վերջ դնող հայտնության արդյունքում այսօր միսիոներները քարոզում են ավետարանը Աֆրիկայի շատ երկրներում, այդ ժամանակից ի վեր տաճարներ են կառուցվում այդ մայրցամաքում, հարյուր հազարավոր աֆրիկական ծագումով սևամորթներ ստացել են ավետարանի արարողությունները իրենց համար և իրենց մահացած նախնիների համար: Այսօր Եկեղեցու աֆրիկական ծագումով սևամորթ անդամները անգնահատելի ներդրում են կատարում Եկեղեցում ամբողջ աշխարհում, երբ նրանք միավորվում են իրենց ընկերակից Սրբերի հետ և ձգտում են դառնալ «մեկ Հիսուս Քրիստոսում» (Գաղատացիս 3.28):



Մտածեք դասին Նախապատրաստվելիս

Ի՞նչ կարող եք սովորել Եղբայր Ջոնսոնի՝ վերականգնված ավետարանն ընդունելու և դրանով ապրելու պատրաստակամությունից, չնայած նրան որոշ ժամանակով մերժեցին քահանայությունն ու տաճարային օրհնությունները:

Ցանկանում ես ավելին: (Ոչ պարտադիր)

Ես ինչպե՞ս կարող եմ պատասխանել քահանայությանը և տաճարային սահմանափակումներին վերաբերող հարցերին:



Կարդացեք Եղբայր Սիմադ Զորբիթի «Till We All Come in the Unity of the Faith: A Personal Essay on Race and the Priesthood, Part 4» (history

.ChurchofJesusChrist.org) և փնտրեք, թե նա ինչպես կարողացավ լուծել իր մտահոգությունները՝ կապված քահանայության և տաճարային սահմանափակումների հետ:

Որտեղի՞ց կարող եմ սովորել վաղ շրջանի Վերջին Օրերի որոշ սևամորթ Սրբերի մասին:

Կարդացեք վաղ շրջանի Վերջին Օրերի երկու սևամորթ Սրբերի՝ Էլայջա Էյբլի և Ջեյն Մանինգ Ջեյմսի հավատարմության մասին:



Եկեղեցին ինչպե՞ս էր առաջ ընթանում քահանայության մասին հայտնությունից հետո:

2018թ. հունիսին Առաջին Նախագահությունը նշեց քահանայության մասին հայտնության 40-րդ տարեդարձը: Դիտեք *Be One—A Celebration of the Revelation on the Priesthood* (1:35:07), և փնտրեք, թե Եկեղեցու անդամներն ինչպես են առաջ ընթացել քահանայության վերաբերյալ հայտնությունից հետո: Ժամանակի միջակայքը 1:06:55–1:09:14 պարունակում է հատուկ տեսանյութ, որտեղ Վերջին Օրերի սևամորթ Սրբերը նկարագրում են, թե քահանայությունն ինչպես է օրհնել իրենց կյանքը:

ԴԱՍ 27. ՈՒՍՈՒՑՁԻ ՆՅՈՒԹ

Հայտնություն քահանայության վերաբերյալ

1978թ. հունիսին Նախագահ Մպենսեր Վ. Քիմբալը հայտնություն ստացավ Տիրոջից, որով հանվեցին սահմանափակումները քահանայության կարգումների և տաճարային արարողությունների վերաբերյալ աֆրիկական ծագում ունեցող Եկեղեցու սկսած անդամների համար: Այս դասը կօգնի ուսանողներին բացատրել այս հայտնությանն առնչվող հանգամանքներն ու ճշմարտությունները, գործել հավատքով, երբ բախվում են դժվար հարցերի և իրավիճակների, և ձեռք բերել ավելի մեծ հասկացողություն, որ Աստված ղեկավարում է Իր Եկեղեցին՝ հայտնություններ տալով Իր ապրող մարգարեների միջոցով:

Ուսուցման առաջարկներ

Քահանայության և տաճարային սահմանափակումների վերաբերյալ հարցերին մենք կարող ենք մոտենալ հավատքի հեռանկարից:

ԲԱՐԵԼԱՎԵԼ ՄԵՐ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Պատմությունները կարող են ամրացնել հավատքը: «Պատմությունները կարող են օգնել կառուցել ուսանողների հավատքը Հիսուս Քրիստոսի ավետարանի հանդեպ: Դրանք կարող են հետաքրքրություն առաջացնել և օգնել ուսանողներին հասկանալ ավետարանը այլ մարդկանց փորձառությունների շնորհիվ: Պատմությունները կարող են հատկապես արդյունավետորեն օգնել ուսանողներին հասկանալ ավետարանի սկզբունքները, որոնք բացահայտվել են սուրբ գրություններում: Ժամանակակից համատեքստում կամ սուրբ գրությունների համատեքստում ավետարանի սկզբունքները լուսաբանելով, պատմությունները կարող են օգնել ուսանողներին հասկանալ, թե ինչպես են այդ սկզբունքներն առնչվում իրենց կյանքին և նրանց մոտ ցանկություն առաջացնում կիրառել դրանք» (*Gospel Teaching and Learning Handbook* [2012], 5.5):

Ցուցադրեք Եղբայր Ջորջ Ռիքֆորդի ուղեկցող նկարը:



Հանձնարարեք որևէ ուսանողի կարդալ Ջորջ Ռիքֆորդ անունով մարդու հետևյալ պատմությունը:

1969թ. Ջորջ Ռիքֆորդը՝ մի չափահաս երիտասարդ, ով ապրում էր Լեստերում (Մեզիկա), հանդիպեց Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Մրբերի Եկեղեցու միսիոներներին: Ջորջը սկզբում մերժեց նրանց ուղերձը, բայց, ի վերջո, սկսեց հանդիպել միսիոներներին: Երեք ամիսների եռանդուն դասերից հետո Ջորջը մի առավոտ արթնացավ համոզմունքով, որ Եկեղեցին ճշմարիտ է:

Ջորջը անհամբեր էր իր նոր վկայությամբ կիսվելու երեցների հետ, բայց նախքան կկարողանար անել այդ, երեցները տեղեկացրին, որ նա չի կարողանալու ստանալ քահանայություն, եթե պետք է միանար Եկեղեցուն իր խառն ռասայական ժառանգությունով, որը ներառում էր աֆրիկական սևամորթ ծագումը:

Այդ նորությունը հուսահատեցրեց Ջորջին: Նա հիշում էր. «Իմ արձագանքը թշնամական էր»: Ես շատ հարձակողական էի տրամադրված և թեժ քննարկումից հետո ես ստիպեցի նրանց հեռանալ: Ես իրոք հանդիմանեցի նրանց խտրականության և ռասիզմի դրսևորման մեջ:

Երբ միսիոներները հեռացան, Ջորջը արտասպեց: (Ես Elizabeth Maki, “I Will Take It In Faith,” history .ChurchofJesusChrist.org:)

Ուսանողների ուշադրությունը հրավիրեք նախապատրաստական նյութի բաժին 1-ի վրա: Տվեք նրանց հետևյալ հարցը, թույլ տալով նրանց որոշ ժամանակ մտածել, թե ինչպես կպատասխանեն:

- Եթե ինչ-որ մեկը հարցներ ձեզ, թե ինչու գոյություն ունեն քահանայության և տաճարային սահմանափակումները, ո՞ր կարևոր կետերը կցանկանալիք քննարկել: (Կարող եք ուսանողների պատասխանները գրել գրատախտակին:)

Հրավիրեք ուսանողներին անդրադառնալ հարցերին, որ նրանք ունեն քահանայության և տաճարային սահմանափակումների վերաբերյալ: Խրախուսեք նրանց մտածել այդ հարցերի շուրջ և ուշադրություն դարձնել Մուրբ հոգու քննարկումներին ու ոգեշնչմանը, որը կարող է օգնել պատասխանել այդ հարցերին:

Ցուցադրեք հետևյալ հայտարարությունը և հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ այն.

Այսօր Եկեղեցին ժխտում է այս հարցի շուրջ նախկինում առաջադրված տեսակետներն առ այն, որ սև մաշկը Աստծո շնորհից զրկված լինելու կամ անեծքի նշան է, սև մաշկը վկայում է Նախաերկրային կյանքի անարդար արարքների մասին, տարբեր ռասաների միջև ամուսնությունը մեղք է, և սևամորթները կամ որևէ այլ ռասա կամ ազգություն ինչ-որ կերպ ավելի ցածր դիրք են գրավում, քան մեկ ուրիշը: Եկեղեցու ղեկավարներն այսօր միաձայն դատապարտում են ռասիզմի բոլոր դրսևորումները, որոնք եղել են նախկինում և կան այսօր: (“Race and the Priesthood,” Gospel Topics, topics .ChurchofJesusChrist.org)

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր խուսափել նախկինում տրված պատճառները շահարկելուց, թե ինչու են գոյություն ունեցել քահանայության և տաճարային սահմանափակումները:

Խնդրեք ուսանողներին պատմել, թե նրանք ինչ գիտեն այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրին Տիրոջ հայտնությանը, որով հանվեցին քահանայության և տաճարային սահմանափակումները:

Բացատրեք, որ Պաշտոնական Հայտարարություն 2-ը պարունակում է պաշտոնական հայտարարություն հայտնության մասին, որը ստացել էր Նախագահ Մպեմսեր Վ. Քիմբալը, և ընդունվել ու հաստատվել էր Առաջին Նախագահության նրա Խորհրդականների և Տասներկու Առաքյալների Քվորումի տասը անդամների կողմից 1978թ.:

Հրավիրեք որևէ ուսանողի մոքում կարդալ Պաշտոնական Հայտարարություն 2-ի «Թանկագին Եղբայրներ» բաժնի ներքո գտնվող առաջին երկու պարբերությունները: Խնդրեք նրանց փնտրել, թե Եկեղեցու ղեկավարներն ինչի վկան էին եղել և հաղորդել իրենց գրածի մասին:

Ապա՝ ուսանողներին հրավիրեք նախապատրաստական նյութի բաժին 2-ից պատմել Եղբայր Բիլի Ջոնսոնի և Գանայի նրա համայնքի մասին պատմությունը:

- Այս անհատներն ինչպե՞ս էին օրինակ ծառայում «այն մարդկանց հավատարմության, որոնցից քահանայությունը հետ էր պահվել»:

Ուսանողներից մեկին խնդրեք ավելին կարդալ Ջորջ Ռիքֆորդի պատմությունից և հրավիրեք դասարանին ուշադրություն դարձնել, թե Ջորջն ինչպես ընտրեց գործել հավատքով, երբ իմացավ քահանայության սահմանափակման մասին:

Մի օր Ջորջը իր մոտ ընկերոջ հետ խոսում էր միսիոներների հետ ունեցած իր փորձառության մասին և սկսեց ուսուցանել իր ընկերոջը Մարգարե Ջոզեֆ Սմիթի մասին: Նա հիշում է. «Երբ ես պատմում էի այդ պատմությունը, ես ավելի էի ոգևորվում, ապա ինչ-որ բան սկսվեց ու ես պարզապես ճառագայթում էի»:

Այդ փորձառությունը հաստատեց Ջորջի վկայությունը, բայց նրա մտահոգությունները քահանայության սահմանափակման մասին դեռևս մնում էին: Երբ նա աղոթեց լրացուցիչ հասկացողություն ստանալու համար, ստացավ հետևյալ ուղերձը. «Դու պարտավոր չես հասկանալ ամեն ինչ իմ ավետարանի մասին, նախքան դու պարտավորություններով կկապվես դրա հետ: Ինչո՞ւ դու ցույց չես տալիս քո հավատքը՝ ընդունելով այն, ինչ լսել ես, և մնացած ամեն բան իմ ձեռքը հանձնելով»:

Ուղերձը հանգստություն բերեց Ջորջին, և նա աղոթքով պատասխանեց. «Այո, Տե՛ր, ես կընդունեմ: Ես *կընդունեմ* այն հավատքով: Ի դեպ, շնորհակալություն»: Երկու ամիս անց Ջորջը մկրտվեց և դարձավ Եկեղեցու հավատարիմ անդամ:

1975թ. (քահանայության վերաբերյալ հայտնությունից երեք տարի առաջ) Ջորջը գրել է, որ ինքն ընդունել է «քահանայության արգելքը հավատքով, առանց վերապահության» և արտահայտել է իր համոզմունքն առ այն, որ անկախ այն ժամանակ իր վիճակից, Աստված արդար էր: Ես պարզապես երախտապարտ եմ, որ Տիրոջ քահանայությունը կրկին երկրի վրա է՝ իր բոլոր ուղեկցող օրհնություններով, իշխանությամբ և պարտականություններով հանդերձ: Ինձ համար քիչ նշանակություն ունի, թե ով ունի այն և ով չունի, այլ, թե ինչպես է այն օգտագործվում»: (In Maki, "I Will Take It in Faith," history.ChurchofJesusChrist.org)

- Ի՞նչ կարող ենք սովորել Ջորջ Ռիքֆորդի օրինակից, որը կարող է օգնել մեզ, երբ մենք անպատասխան հարցեր ունենք ավետարանի վերաբերյալ: (Երբ ուսանողները կիսվեն պատասխաններով, գրատախտակին գրեք հետևյալ սկզբունքը. **Երբ մենք անպատասխան հարցեր ունենք, մենք կարող ենք առաջ ընթանալ հավատքով, մինչ ապավինում ենք լույսին և գիտելիքներին, որոնք Աստված է տվել մեզ:**)

- Ինչպե՞ս կարող է այս ճշմարտությունն օգնել ինչ-որ մեկին, ով մաքառումների մեջ է իր հավատքի հետ՝ ավետարանի մասին անպատասխան հարցերի պատճառով:

Հանձնարարեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Նիլ Լ. Անդերսենի հետևյալ հայտարարությունը.



Հավատքը երբեք բոլոր հարցերին պատասխան չի պահանջում, այլ հաստատում ու քաջություն է փնտրում՝ առաջ շարժվելու, երբեմն ընդունելով. «Ես չգիտեմ ամեն բան, սակայն գիտեմ բավականաչափ, որպեսզի առաջ գնամ աշակերտության ճանապարհով»: (Նիլ Լ Անդերսեն, «Հավատքը պատահականության արդյունք չէ, այլ՝ ընտրության», *Ensign* կամ *Liahona*, նոյեմբեր 2015, 66)

- Աստծո տված լույսն ու գիտելիքը ինչպե՞ս է օգնել ձեզ առաջ ընթանալ հավատքով, երբ դուք բախվում եք անպատասխան հարցերի կամ անորոշ իրավիճակների:
- Ինչպե՞ս կարող ենք օգնել ինչ-որ մեկին, ով մաքառում է անպատասխան հարցերի հետ՝ հավատքով առաջ գնալու համար:

Ժամանակ տվեք ուսանողներին խորհել, թե նրանք ինչպես կարող են կիրառել հավատքով գործելու սկզբունքն իրենց կյանքում կամ օգտագործեն այն՝ օգնելով իրենց ծանոթներից մեկին: Հանձնարարեք ուսանողներին իրենց օրագրերում գրանցել իրենց ծրագիրը:

Քահանայությունը և տաճարային օրհնությունները տարածվել են Եկեղեցու յուրաքանչյուր արժանավոր անդամի վրա

Հրավիրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ Պաշտոնական Հայտարարություն 2-ի երրորդ և չորրորդ պարբերությունները «Թանկագին Եղբայրներ» խոսքերի ներքո, որոնք սկսվում են «Նա լսեց մեր աղոթքները» բառերով:

- Այս պարբերություններից ինչ ենք սովորում այն մասին, թե Տերն ինչպե՞ս է ուղղորդում Իր Եկեղեցին: (Ուսանողների պատասխաններից հետո)

գրատախտակին գրեք հետևյալ ճշմարտությունը. **Տերը ղեկավարում է Եկեղեցին Իր մարգարեներին տրված հայտնության միջոցով:**

- Ձեր կյանքում ե՞րբ եք տեսել, որ Տերը ուղղորդում է Իր Եկեղեցին Իր մարգարեներին տրված հայտնության միջոցով:

Բացատրեք, որ քահանայության վերաբերյալ հայտնության ընդունման հաջորդ օրը Ջորջ Ռիքֆորդը քահանա կարգվեց Ահարոնյան Քահանայությունում և շուտով ստացավ Մելքիսեդեկյան Քահանայություն: 1978թ. հոկտեմբերին Ջորջը և նրա կինը՝ Ջունը, իրենց չորս երեխաների հետ միասին կնքվեցին հավերժական ընտանիքում Լոնդոն Անգլիա տաճարում (see Maki, “I Will Take It in Faith,” history.ChurchofJesusChrist.org):

- Ի՞նչ ազդեցություն ունեցավ այդ հայտնությունը Եկեղեցու, նրա անդամների և մարդկանց վրա աշխարհում:

Ցուցադրեք հետևյալ ելույթը և հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ այն.

Հիսուս Քրիստոսի ավետարանը բոլորի համար է: Մորմոնի Գիրքն ասում է, «բոլորը նույնն են Աստծո համար, . . . սև և սպիտակ, ստրուկ և ազատ, այր թե կին» (2 Նեփի 26.33): Սա է Եկեղեցու

պաշտոնական ուսմունքը: (“Race and the Church: All Are Alike Unto God,” Feb. 29, 2012, newsroom.ChurchofJesusChrist.org)

Եզրափակեք դասը՝ հրավիրելով ուսանողներին քննարկել (կամ կիրառել), թե, ըստ իրենց սովորածի, ինչ պատասխան կարող են տալ, երբ նրանց հարցնեն, թե ինչու Եկեղեցին որոշ ժամանակ աֆրիկական ծագում ունեցող տղամարդկանց չէր կարգում որպես քահանա: Շեշտեք, որ տեղին է մյուսներին ասել, որ մենք չգիտենք, թե ինչու սկսվեց քահանայության սահմանափակումը: Սակայն դուք կարող եք կիսվել և վկայել այն ճշմարտությունների մասին, որոնք դուք գիտեք, ինչպես օրինակ՝ այս դասի ժամանակ սովորած ճշմարտությունները:

Հաջորդ անգամ

Բացատրեք ուսանողներին, որ հաջորդ դասին պատրաստվելիս նրանք կուսումնասիրեն, թե հին ու նոր մարգարեներն ինչ են ուսուցանել Հիսուս Քրիստոս Վերջին Օրերի Մրբերի Եկեղեցու ճակատագրի մասին: Խրախուսեք ուսանողներին պատրաստված գալ՝ քննարկելու, թե ինչ եղանակներով կարող են օգնել Տիրոջ փրկության աշխատանքին վերջին օրերում:



ՀԱՍ 28. ՀԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Տերն արագացնում է Իր աշխատանքը

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն ուսուցանել է. «Մենք ապրում ենք ոգևորիչ ժամանակներում: Տերն արագացնում է Իր աշխատանքը մեր աչքերի առաջ: Այն ոգեշնչող է: Այն մեծ ջանքեր է պահանջում: Յուրաքանչյուրիցս ավելին է պահանջվում՝ ավելի, քան երբևէ: Եվ ավելին տրվում է» («A Personal Invitation to Participate in Seminary and Institute,” Feb. 4, 2019, ChurchofJesusChrist.org): Այս նյութն ուսումնասիրելիս ուղիներ փնտրեք, որոնցով դուք կարող եք մասնակցել, երբ Տերն արագացնում է Իր աշխատանքը՝ Իր Երկրորդ Գալուստին պատրաստվելու համար:

ԲԱԺԻՆ 1

Ի՞նչ ճակատագիր ունի Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին:

1830թ. ապրիլի 6-ին, երեքշաբթի օրը մոտ 50 հոգի խմբվել էին Նյու Յորքի Ֆայեթ քաղաքում գտնվող Պիտեր Ուիթմերի փայտաշեն տանը և դրա շուրջը: Այնտեղ, Զոգեֆ Սմիթը Հիսուս Քրիստոսի ղեկավարությամբ, կրկին կազմավորում էր Տիրոջ Եկեղեցին երկրի վրա: Չնայած Եկեղեցին սկզբում փոքր էր, նրա ճակատագիրն այն է, որ այն կաճի և կլցնի ողջ աշխարհը:



Հին Կոտլարանի ժամանակներում բաբելոնական թագավոր Նաբուգոդոնոսորը երազում տեսավ,

«որ սարիցը մի քար կտրուեցաւ առանց ձեռքի» (Դանիել 2.45) Այդ քարը մեծացաւ չափերով, մինչև այն դարձաւ «մեծ սար եղաւ և լցրեց բոլոր երկիրը» (Դանիել 2.35): Թագավորի երազի իր մեկնաբանության մեջ Դանիել մարգարեն կանխագուշակեց, որ վերջին օրերում Աստված կհիմնի թագավորություն, որը երբեք չի քանդվի, այլ կկանգնի ընդմիշտ (տես Դանիել 2.28, 44):

Տերը կրկնեց Դանիելի մարգարեությունը Մարգարե Ջոզեֆ Սմիթին Եկեղեցու կազմավորումից մեկ ու կես տարի անց, այն ժամանակ, երբ ընդամենը 600 Վերջին Օրերի Սրբեր էին երկրի վրա: Վարդապետություն և Ուխտեր 65.2-ում կարդում ենք. «Աստծո արքայության բանալիները վստահված են մարդուն երկրի վրա, և այնտեղից ավետարանը կգլորվի մինչև աշխարհի ծայրերը, ինչպես քարը, որը կտրվել է սարից՝ առանց ձեռքի, կգլորվի մինչև որ լցնի ողջ երկիրը»:

Երկուս ու կես տարի անց Կիրթլենդում (Օհայո) Մարգարե Ջոզեֆ Սմիթը Եկեղեցու ճակատագրի մասին մի ուշագրավ մարգարեություն հայտնեց մի խումբ քահանայություն կրողների:

Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆը, ով մասնակցում էր այդ ժողովին, հիշել է.



Մարգարեն բոլոր քահանայություն կրողներին խնդրեց հավաքվել փոքրիկ փայտե դպրոցում: Դա փոքրիկ տնակ էր, մոտ 14 ֆուտ քառակուսի: Սակայն այն տեղավորեց Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու ողջ քահանայությունը, որն այդ ժամանակ Կիրթլենդ քաղաքում էր: . . . Մարգարեն ասաց. «Եղբայրներ, . . . ես ուզում եմ ասել ձեզ Տիրոջ առաջին, որ դուք ավելի շատ բան չգիտեք այս Եկեղեցու և թագավորության ճակատագրի մասին, քան իր մոր գրկում եղող մանկիկը: Դուք չեք ըմբռնում այն»: Ես զարմացած էի: Նա ասաց. «Միայն մի բուռ քահանայություն եք տեսնում այստեղ, բայց այս Եկեղեցին կլցնի Հյուսիսային և Հարավային Ամերիկան՝ այն կլցնի ողջ աշխարհը»: (Վիլֆորդ Վուդրուֆ, *Եկեղեցու*

Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ [2007], 137

Դիտեք տեսանյութը «The Gospel Shall Roll Forth» (2:47) և խորհեք, թե վերականգնված Եկեղեցու աճն ինչպե՞ս է վկայություն հանդիսանում, որ Երկնային Հայրը ցանկանում է օրհնել ողջ աշխարհը:

Ավելի քան 160 տարի անց, երբ Եկեղեցու անդամների թիվը հասավ 11 միլիոնի և տարածվեց աշխարհի մեծ մասում, Նախագահ Գորդոն Բ Հինքլին ուսուցանեց.



Ի՛մ եղբայրներ և քույրեր, արդյո՞ք գիտակցում եք, թե ինչ ունենք մենք: Դուք հասկանո՞ւ՞մ եք, թե մենք ինչ տեղ ենք զբաղեցնում մարդկության պատմության մեծ թատերաբեմում: Սա նախկինում տեղի ունեցածներից ամենակարևորն է: Սա վերականգնման շրջանն է: Սրանք վերականգնման օրերն են: Սա բոլոր ժամանակների գագաթնակետն է՝ սկսած Քրիստոսի ծննդից մինչև այս ներկա և հրաշալի օրը»: (Gordon B. Hinckley, “At the Summit of the Ages,” *Ensign*, Nov. 1999, 74)

Իսկ մոտ մեկ տասնամյակ անց, Նախագահ Հինքլին հայտարարեց.



Մի մեծ հրաշք է տեղի ունենում հենց մեր աչքերի առաջ: . . .

Եվ սա միայն սկիզբն է: Այս աշխատանքը կշարունակի աճել ու ծաղկել և տեղավորվել ամբողջ երկրագնդով մեկ: (Գորդոն Բ. Հինքլի, «Սարից մի քար կտրվեց», *Ensign* կամ *Liahona*, նոյեմբեր 2007, 83–84)



Մտածեք դասին Նախապատրաստվելիս

Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ է կարևոր հասկանալ և վկայություն ունենալ Տիրոջ Եկեղեցու մասին:

ԲԱԺԻՆ 2

Ինչպե՞ս է Տերը արագացնում Իր գործն այսօր:

Խոսելով Տիրոջ Եկեղեցու արագացված աճի և ազդեցության մասին, Նախագահ Թոմաս Մ. Մոնսոնն ուսուցանել է.



Պատճառը, որ Եկեղեցին աճում է այսօր, այն է, որ Տերը վկայել է, որ այդպես կլինի: Վարդապետություն և Ուխտերում Նա ասել է. «Ահա, ես կարագացնեմ իմ աշխատանքն իր ժամանակին» [ՎևՈւ 88.73]:

Մենք՝ որպես մեր Երկնային Հոր հոգևոր զավակներ, ուղարկվել ենք Երկիր այս ժամանակահատվածում, որպեսզի մասնակցենք այս հիանալի աշխատանքի արագացմանը: (Thomas S. Monson, "Hastening the Work," *Ensign*, June 2014, 4)

Հետևյալ օրինակները մի քանիսն են այն եղանակներից, որոնցով Տերը և Իր ծառաները հրավիրել են ձեզ մասնակցել փրկության աշխատանքի արագացմանը: Նշեք սկզբունքներից և գաղափարներից ցանկացածը, որն առանձնանում է ձեզ համար, և պատրաստ եղեք դասարանում կիսվել դրանց մասին ձեր խոհերով:

Իսրայելի հավաքումը



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 29.4, 7, որոնք հանդիսանում են վաղ հայտնության մասեր, որոնք Տերը տվեց Եկեղեցու երեցներին:

Այս հավաքման մասին խոսելիս Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն ուսուցանել է.



Իմ սիրելի՝ երիտասարդ եղբայրներ և քույրեր, այժմ անշուշտ վերջին օրերն են, և Տերն արագացնում է Իսրայելի հավաքման Իր աշխատանքը: Այդ հավաքումն

այսօր Երկրի վրա տեղի ունեցող ամենակարևոր իրադարձությունն է: Ոչինչ չի համեմատվի դրա հետ մեծությամբ, կարևորությամբ և փառահեղությամբ: . . .

Երբ մենք խոսում ենք *հավաքման* մասին, մենք պարզապես ասում ենք այս հիմնարար ճշմարտությունը. մեր Երկնային Հոր զավակներից յուրաքանչյուրը վարագույրի երկու կողմերում արժանի է լսել Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի ուղերձը: Նրանք իրենք են որոշում՝ արդյոք կցանկանան ավելին իմանալ: (Russell M. Nelson, "Hope of Israel" [worldwide youth devotional, June 3, 2018], supplement to the *Ensign* and *New Era*, 8, ChurchofJesusChrist.org; italics in original)

Կիսվել Ավետարանով



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 123.12-ը, փնտրելով, թե Տերն ինչ ուսուցանեց Մարգարե Ջոզեֆ Սմիթին այն շատերի մասին, որոնք կույր են դարձվել «մարդկանց ճարպիկ խաբեությամբ»:

Մտածեք այս հատվածում տեղ գտած ուսմունքի մասին, երբ անդրադառնաք Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարի այս հրավերին, որը խրախուսում է մեզ նոր եղանակներով օգնել փրկության աշխատանքին.



Տերն արագացնում է Իր աշխատանքը և պատահական չէ, որ . . . կապի այդ գործը նորարարություններն ու հայտնագործություններն ի հայտ են գալիս ժամանակների լրության տնտեսության ժամանակ: Սոցիալական լրատվամիջոցները համաշխարհային գործիքներ են, որոնք կարող են անհատապես և դրական ազդեցություն ունենալ մեծ թվով անհատների և ընտանիքների վրա: Եվ ես կարծում եմ, որ եկել է ժամանակը, երբ մենք՝

որպես Քրիստոսի աշակերտներ, պետք է պատշաճ ձևով օգտվենք այդ ոգեշնչված գործիքներից և ավելի արդյունավետ վկայենք Աստծո՝ Հավերժական Հոր, Իր զավակների հանդեպ Նրա երջանկության ծրագրի և որպես աշխարհի Փրկիչ Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի մասին, հոչակենք այս վերջին օրերում ավետարանի վերականգնման մասին և իրականացնենք Տիրոջ աշխատանքը: (David A. Bednar, "To Sweep the Earth as with a Flood" [Brigham Young University Education Week devotional, Aug. 19, 2014], ChurchofJesusChrist.org)

Սպասավորություն

Իր մահկանացու ծառայության ընթացքում Փրկիչն ուսուցանեց Իր աշակերտներին, որ ինքը «չեկավ, որ իրեն ծառայեն, այլ նա ծառայե» (Մատթեոս 20:28): Նա ծառայում էր, երբ «ման եկաւ բարի անելով» (Գործք 10:38): Զոգե՛ք Սմիթին տրված հայտնության մեջ Տերը հրավիրեց Ֆրեդերիկ Գ. Վիլյամսին՝ ծառայել ուրիշներին:



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 81.5:

Մենք նմանապես կանչվել ենք ծառայելու: Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Զեֆրի Ռ. Հոլլանդն ուսուցանել է.



Ես բերում եմ իմ վկայությունը, որ այս հարմարեցումները [տնային և այցելող ուսուցումից մինչև սպասավորություն] . . . լրացուցիչ վկայություն են, որ Տերն արագացնում է Իր աշխատանքը Իր ժամանակին: . . .

. . . Եկեք աշխատենք կողք կողքի՝ այգու [տես Հակոբ 5.70–72] Տիրոջ հետ, տալով Աստծուն և մեր Հորը մեր օգնող ձեռքը՝ Նրա փայլուն հանձնարարության մեջ՝

պատասխանել աղոթքներին, մխիթարել, սրբել արցունքները և ամրապնդել թուլացած ծնկները [տես Վարդապետություն և Ուխտեր 81.5]: Եթե այդպես անենք, ավելի նման կլինենք Քրիստոսի ճշմարիտ աշակերտներին, ինչպիսին պիտի լինենք: (Զեֆրի Ռ. Հոլլանդ, «Եղեք նրանց հետ, ամրացրեք նրանց», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2018, 101, 103)

Քույր Լինդա Ք. Բրոթեր, Սփոփող Միության նախկին գերագույն նախագահը, ասել է.



Պատկերացրեք, թե ես ունեմ ինձ հետ փրկության աշխատանքի հետ կապված «պահանջվում է օգնություն» վերնագրով հոգևոր ցուցանակներ:

- Պահանջվում է օգնություն ծնողներից՝ դաստիարակելու իրենց երեխաներին լույսի և ճշմարտության մեջ:
- Պահանջվում է օգնություն՝ դուստրերից և որդիներից, քույրերից և եղբայրներից, հորաքույրերից և հորեղբայրներից, զարմիկներից, տատիկներից ու պապիկներից, և ճշմարիտ ընկերներից՝ ծառայելու որպես խորհրդատուներ և օգնող ձեռք առաջարկելու ուխտի արահետով ընթանալիս:
- Պահանջվում է օգնություն՝ նրանցից, ովքեր լսում են Սուրբ Հոգու հուշումները և գործում՝ ստացած հուշումներին համաձայն:
- Պահանջվում է օգնություն՝ նրանցից, ովքեր ապրում են ավետարանով ամեն օր փոքր ու հասարակ ուղիներով:
- Պահանջվում է օգնություն՝ ընտանեկան պատմության և տաճարային աշխատողներից՝ ընտանիքները հավերժորեն կապելու համար:
- Պահանջվում է օգնություն՝ միսիոներներից և անդամներից՝ տարածելու «բարի լուրը»՝ Հիսուս Քրիստոսի ավետարանը:
- Պահանջվում է օգնություն՝ փրկողներից՝ գտնելու նրանց, ովքեր կորցրել են իրենց ճանապարհը:

- Պահանջվում է օգնություն՝ ուխտը պահողներից՝ ամուր կանգնելու ճշմարտության համար:
 - Պահանջվում է օգնություն՝ Տեր Հիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտներից. . .
- . . . Նշանակություն չունի, որ մենք դեռ կատարյալ ու ամբողջական չենք. . . Մենք կարող ենք քայլել որպես մեկ, որպես աշակերտներ՝ պատրաստակամ սրտերով և ձեռքերով ծառաներ՝ արագացնելու համար փրկության աշխատանքը: Երբ այդպես վարվենք, մենք կնմանվենք Փրկիչին: Լինդա Կ. Բըրթըն, «Պահանջվում են ձեռքեր և սրտեր աշխատանքն արագացնելու համար», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2014, 124)

training satellite broadcast, Aug. 4, 2015], ChurchofJesusChrist.org)



Գրի առեք ձեր մտքերը

Ի՞նչ լրացուցիչ ապացույցներ եք տեսել, որ Տերն արագացնում է Իր աշխատանքը մեր օրերում: Ի՞նչ հատուկ եղանակներով կկամենայիք նպաստել Տիրոջ աշխատանքի արագացմանը: Գրի առեք ձեր մտքերը օրագրում կամ ստորև հատկացված տողերում:

Պատվել Հանգստության օրը



Ուսումնասիրեք դասին Նախապատրաստվելիս

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 59.9-10 և սովորեք, թե Տերն ինչ ուսուցանեց Իր Սրբերին՝ Հանգստության օրը սուրբ պահելու մասին:

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Մ. Ռասսել Բալլարդը ուսուցանել է հետևյալը Հանգստության օրը սուրբ պահելու գործության մասին.



Բացի կազմակերպչական և քաղաքականության փոփոխություններից կամ վարդապետական ուսուցումից, որոնք կարող ենք արագացնել փրկության աշխատանքը, այս անգամ մենք որոշել ենք, որ մեծացնելով Հանգստության օրվա հոգևոր բնույթը և գործությունը, մեծապես կօգնենք անդամներին և ընտանիքներին մոտենալ Տեր Հիսուս Քրիստոսին: (M. Russell Ballard, in Chad H. Webb, "The Sabbath Day" [Seminaries and Institutes

Ցանկանում ես ավելին: (Ոչ պարտադիր)

Որտեղի՞ց կարող եմ ավելին սովորել Եկեղեցու ճակատագրի մասին:

Այստեղ կարող եք ավելի շատ տեղեկություններ գտնել Եկեղեցու ճակատագրի մասին.



Մ Ռասսել Բալլարդ, «Աստծո ճշմարտությունն առաջ կընթանա», *Ensign* կամ *Liahona*, նոյեմբեր 2008, 81-84:.



Նիլ Լ. Անդերսեն, «Նախապատրաստել աշխարհը Երկրորդ Գալուստին», *Ensign* կամ *Liahona*, մայիս 2011, 49-52:

Ինչպե՞ս կարող եմ օգնել Տիրոջ արագացնել Իր աշխատանքը:

Այցելեք Եկեղեցու Hastening the Work of Salvation վեբ կայքը գաղափարներ և նյութեր գտնելու համար:

ԴԱՍ 28. ՈՒՍՈՒՑՉԻ ՆՅՈՒԹ

Տերն արագացնում է Իր աշխատանքը

Մենք ապրում ենք այնպիսի ժամանակներում, երբ Տերն արագացնում է Իր փրկության աշխատանքը (տես Վարդապետություն և Ուխտեր 88.73): Այս դասը նախատեսված է ամրապնդելու ուսանողների հավատքն առ այն, որ Տիրոջ աշխատանքը առաջ կընթանա՝ չնայած ընդդիմությանը, և կօգնի ուսանողներին ստեղծել ծրագիր, որով ջանասիրաբար կաջակցեն Տիրոջ աշխատանքը արագացնելու գործին:

Ուսուցման առաջարկներ

Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է, որ Տիրոջ աշխատանքը առաջ կընթանա՝ չնայած ընդդիմությանը:

Ուսանողներին ցույց տվեք Պիտեր Ուիթմեր Ավագի փայտաշեն տունը (տես նախապատրաստական նյութը) և խնդրեք նրանց կիսվել, թե ինչ գիտեն Տիրոջ վերականգնված Եկեղեցու աճի մասին՝ 1830 թվականին դրա կազմավորումից սկսած: (Ուսանողները գուցե ցանկանան անդրադառնալ նախապատրաստական նյութի բաժին 1-ին):

- Մարգարեներն ի՞նչ են ասել Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու ապագայի մասին: Ձեր կարծիքով ինչո՞ւ է կարևոր հասկանալ Տիրոջ Եկեղեցու ճակատագիրը:

Բացատրեք, որ 1842թ. Ջոզեֆ Սմիթը նկարագրեց Տիրոջ ավետարանի և Նրա Եկեղեցու ճակատագիրը, երբ նա նամակով պատասխանեց Չիկագոյի (Իլինոյս) թերթի խմբագիր Ջոն Վենտվորթի հարցումին Եկեղեցու համոզմունքների մասին: Նամակում Մարգարեն նկարագրեց «Վերջին Օրերի Սրբերի առաջացման, առաջընթացի, հալածանքի և հավատքի մասին» (*Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* [2007], 437):

Ցուցադրեք նամակի հետևյալ մասը և խնդրեք որևէ ուսանողի բարձրաձայն կարդալ այն.

Ճշմարտության Դրոշը վեր է խոյացած. ոչ մի անսուրբ ձեռք չի կարող կանգնեցնել աշխատանքի առաջընթացը, հալածանքները կարող են մոլեգնել, խուժանը կարող է միավորվել, զորքեր կարող են հավաքվել, զրպարտությունները կարող են արատավորել, բայց Աստծո ճշմարտությունն առաջ

կգնա համարձակ, ազնիվ, անկախ, մինչև այն ներթափանցի յուրաքանչյուր մայրցամաք, այցելի ամեն երկիր, անցնի ամեն պետություն և հնչի յուրաքանչյուրի ականջում, մինչև Աստծո նպատակներն իրականացվեն, և Մեծ Եհովան ասի՝ աշխատանքը կատարված է: (*Ուսմունքները, Ջոզեֆ Սմիթ*, 472)

Անհրաժեշտության դեպքում բացատրեք, որ զրպարտությունն բառը վերաբերում է կեղծ հայտարարություններին, որոնք նախատեսված են վնասելու ինչ-որ մեկի համբավը:

- Ջոզեֆ Սմիթի հայտարարությունից ի՞նչ ճշմարտություններ կարող ենք սովորել Աստծո աշխատանքի մասին և ի՞նչ ուսումնասիրեցիք նախապատրաստական նյութում: (Ուսանողների պատասխաններից հետո ցուցադրեք հետևյալ ճշմարտությունը. **Չնայած ընդդիմությանը, Աստծո աշխատանքը առաջ կընթանա, մինչև Նրա նպատակներն իրականանան:**)

Բացատրեք, որ Տասներկու Առաքյալների Քվորումի Նախագահ Մ. Ռասսել Բալլարդը վկայել է, որ Ջոզեֆ Սմիթի մարգարեությունը շարունակվում է իրականանալ մեր օրերում: Ցուցադրեք հետևյալ հայտարարությունը և հանձնարարեք մի ուսանողի բարձրաձայն կարդալ այն:



Մոլեգնում էին հալածանքները: Զրպարտությունը, սուտն ու խեղաթյուրումը փորձ էին անում անվանարկել: Բայց Վերականգնումից սկսած, յուրաքանչյուր տասնամյակ Աստծո ճշմարտությունը «առաջ կգնա համարձակ, ազնիվ, անկախ»: Փոքրիկ Եկեղեցին, որը սկսվեց 1830թ. ընդամենը մի քանի անդամներով, այժմ աճել

Է [միլիոնավոր] Վերջին Օրերի Սրբերի՝ աշխարհի շատ տարբեր ազգերից, և մենք մեծ առաջընթաց ունենք՝ ներթափանցելով յուրաքանչյուր մայրցամաք, այցելելով ամեն երկիր, անցնելով ամեն պետություն և հնչելով յուրաքանչյուր ականջում:

Սա Աստծո աշխատանքն է և չի կարող խափանվել: (Մ. Ռասսել Բալլարդ, «Աստծո ճշմարտությունը պետք է առաջ գնա», *Ensign* կամ *Liahona*, նոյեմբեր 2008, 83)

Ցուցադրեք հետևյալ հարցերը և ուսանողներին մեկ րոպե տվեք խորհելու դրանց շուրջ՝ նախքան պատասխանելը.

- Եկեղեցու պատմությունից կամ ներկայիս ժամանակից ի՞նչ օրինակներ կան, որոնք ցույց են տալիս, որ չնայած ընդդիմությանը, Աստծո աշխատանքը շարունակում է առաջ ընթանալ:
- Իմանալով, որ Աստծո աշխատանքը չի կարող կանգնեցվել, ինչպե՞ս կարող եք պատրաստվել դիմակայել ձեր համոզմունքների դեմ տարվող ընդդիմությանը:

Տերն արագացնում է Իր աշխատանքը

Ցուցադրեք Նախագահ Դիտեր Ֆ. Ուիլսոնի այս հայտարարությունը, որը նա արել է, մինչ ծառայում էր որպես Առաջին Նախագահության Երկրորդ խորհրդական.



Երբեմն մենք մտածում ենք ավետարանի Վերականգնման մասին որպես մի երևույթի, որն ավարտվել է, արդեն իսկ իրականացել է. Ջոզեֆ Սմիթը թարգմանել է Մորմոնի Գիրքը, նա ստացել է քահանայության բանալիները, Եկեղեցին կազմավորվել է: Իրականում վերականգնումը շարունակվող գործընթաց է. մենք ապրում ենք դրանում հենց հիմա: (Դիտեր Ֆ. Ուիլսոն, «Դուք քնա՞ծ եք Վերականգնման ընթացքում» *Ensign* կամ *Liahona*, մայիս 2014, 59)

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է կարևոր հասկանալ, որ Վերականգնումը շարունակվում է:

Բացատրեք, որ 1832թ. դեկտեմբերի վերջին Տերը պատվիրեց Կիրթլենդի (Օհայո) երեցներին՝

«պատրաստվել առաջ գնալու հեթանոսների մեջ, վերջին անգամ» (Վարդապետություն և Ուխտեր 88.84):

Ուսանողների հետ կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 88.73–74, 80–81-ը և հանձնարարեք նրանց նշել Տիրոջ խոստումը և առնչվող պատվիրանները:

Որպեսզի օգնեք ուսանողներին հասկանալ այդ խոստումը, հանձնարարեք նրանց կարդալ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի հետևյալ խոսքերը այս դասի նախապատրաստական նյութի նախաբանում.



Սրանք ոգևորիչ օրերն են: Տերն արագացնում է Իր աշխատանքը հենց մեր աչքերի առաջ: Այն ոգեշնչող է: Այն մեծ ջանքեր է պահանջում: Ցուրաքանչյուրիցս ավելին է պահանջվում՝ ավելի, քան երբևէ: Եվ ավելի շատ է տրվում: (Russell M. Nelson, “Personal Invitation,” *Church of Jesus Christ .org*)

- Ի՞նչ կարող ենք սովորել Վարդապետություն և Ուխտեր 88 բաժնի այս հատվածներից և Նախագահ Նելսոնի հայտարարությունից Տիրոջ աշխատանքն արագացնելու գործում մեր դերի մասին: (Ուսանողները կարող են կիսվել նմանատիպ ճշմարտությամբ. **Մենք պարտականություն ունենք մասնակցելու Տիրոջ գործը արագացնելու աշխատանքին:**)

Հրավիրեք ուսանողներին մտածել Տիրոջ փրկության աշխատանքի այն ոլորտների մասին, որոնց մասին նրանք սովորել են այս դասընթացում: Կարող եք կրկնել դասընթացի ծրագիրը կամ դասերի վերնագրերի ցուցակը, որպեսզի օգնեք ուսանողներին հիշել կարևոր թեմաները: Կարող եք նաև խնդրել ուսանողներին կիսվել նախապատրաստական նյութի բաժին 2-ի սուրբգրային հատվածների մասին ստացած իրենց տպավորություններով և Եկեղեցու ղեկավարների հրավերներով:

- Տիրոջ փրկության աշխատանքի ո՞ր ուղղություններում մենք պարտականություն ունենք մասնակցելու: (Ուսանողների պատասխանները գրեք գրատախտակին Դրանք կարող են ներառել՝ Իսրայելի հավաքումը, ավետարանի

հռչակումը, մահացածների փրկագնումը, մարգարեներին հետևելը, ուրիշների համար զոհաբերություն կատարելը, ծառայությունը, կարիքավորներին օգնելը, տաճարային երկրպագությունը և Հանգստության օրը սուրբ պահելը:)

- Ըստ ձեզ, Տերն ի՞նչ հատուկ եղանակներով է արագացնում Իր աշխատանքը մեր թվարկած ոլորտներում:

Ուսանողներին մի քանի բոլոր ժամանակ տվեք աղոթքով խորհելու, թե Տերն ինչ եղանակով կցանկանա, որ նրանք մասնակցեն Իր աշխատանքը արագացնելու գործին: Նրանց ժամանակ տվեք գրել ծրագիր այն մասին, թե ինչ կանեն Տիրոջն աջակցելու համար: Երբ նրանք կազմեն իրենց ծրագրերը, կարող եք առաջարկել, որ հատուկ տեղեկություն ընդգրկեն այն մասին, թե երբ և ինչպես կգործեն:

Դասից առաջ կազմեք ձեր սեփական ծրագիրը, որում նկարագրեք որոշ գործեր, որ կանեք (կամ կշարունակեք անել), որպեսզի մասնակցեք Տիրոջ աշխատանքի արագացմանը: Նախքան ուսանողները կգրեն իրենց ծրագիրը, կիսվեք ձեր ծրագրով՝ որպես օրինակ:

Բավարար ժամանակից հետո հրավիրեք ուսանողներին վկայել, թե ինչ սովորեցին և զգացին, երբ մասնակցում էին այս դասընթացին: Ուսանողների հետ համառոտ կիսվեք ձեր վկայությամբ և օրհնությունների հավաստիացումով, որոնք ուսանողները կստանան, երբ շարունակեն եռանդուն մասնակցել լինել Տիրոջ աշխատանքի արագացման գործին:

ԲԱՐԵԼԱՎԵԼ ՄԵՐ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Խրախուսեք ուսանողներին շարունակել ինստիտուտի ավարտման ուղղությամբ:
Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը ասել է. «Ավարտելով ինստիտուտը . . . դուք կմեծացնեք ձեր ընդունակությունը գերազանցելու կարողությունը այն ամենակարևոր բաներում, որոնք երբևէ կանեք ձեր կյանքում» (“A Personal Invitation to Participate in Seminary and Institute,” Feb. 4, 2019, ChurchofJesusChrist.org): Խրախուսեք ուսանողներին ավարտել դասընթացի պահանջները: Խրախուսեք նրանց շարունակել անդամագրվել ինստիտուտին:

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՁԻՆ ՕՐԵՌԻ ՄՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՅԻ

